- թմրամիջոցների բուժման ծառայություններ
- վերականգնման ծառայություններ
- խնամքի համակարգում

Բացի վերը թվարկված ծառայություններից, Դուք կարող եք օգտվել կամավոր ստացիոնար դետոքսիկացիայի ծառայություններից, եթե համապատասխանում եք չափանիշներին:

Վարքագծային առողջության ծառայությունների առկայություն

Ձեզ հասանելի է համապարփակ ծառայությունների ամբողջական տեսականի: Դուք կարող եք ինքնուրույն դիմել պայմանագրային մատակարարի, և կարող եք նաև ուղղորդվել Ձեր PCP-ի, ընտանիքի անդամի և այլնի կողմից: Ծառայություններ մուտք գործելու մեջ «սխալ դուռ չկա»: Դուք կարող եք կապվել հետևյալի հետ՝ ծառայությունների ձեռքբերման հարցում օգնության համար.

- Վարչաշրջանի ճգնաժամային և ուղղորդման գիծ (տե՛ս այս ձեռնարկի Գլուխ 2, Բաժին K՝ հեռախոսահամարի և աշխատանքի ժամերի համար)
- LA վարչաշրջանի հանրային առողջապահության, թմրամիջոցների չարաշահման կանխարգելման և վերահսկման վարչություն (խնդրում ենք զանգահարել 888-742-7900 (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր)
- San Diego վարչաշրջանի Վարքագծային առողջության ծառայություններ, թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայություն (խնդրում ենք զանգահարել 888-724-7240 (TTY՝ 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր):

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



- Blue Shield TotalDual Plan-ի Վարքագծային առողջության գիծ (հեռախոսահամարի և աշխատանքի ժամերի համար տե՛ս այս տեղեկագրքի Գլուխ 2-ի Բաժին D-ն)
- Blue Shield TotalDual Plan-ի Հաճախորդների սպասարկման բաժին (հեռախոսահամարը և աշխատանքի ժամերը տպված են այս էջի ներքևում)

Անհրաժեշտ բժշկական ծառայությունների որոշման գործընթաց

Բժշկական անհրաժեշտությունը որոշվում է համապատասխան լիցենզավորված Մատակարարի կողմից: Բժշկական անհրաժեշտության չափանիշներն օգտագործվում են ինչպես Blue Shield TotalDual Plan-ի, այնպես էլ Վարչաշրջանի կողմից, մշակվել են վարքագծային առողջության փորձագետների և այլ շահագրգիռ կողմերի կողմից և համապատասխանում են կանոնակարգող պահանջներին:

Ուղղորդման գործընթաց Blue Shield TotalDual Plan-ի և վարչաշրջանի միջև

Եթե Դուք ծառայություններ եք ստանում Blue Shield TotalDual Plan-ից կամ վարչաշրջանից, Ձեզ կարող են ուղղորդել Ձեր կարիքներին համապատասխան այլ կազմակերպության: Blue Shield TotalDual Plan-ը կամ վարչաշրջանը կարող են ուղղորդել Ձեզ՝ զանգահարելով այն կազմակերպությանը, որին ուղարկվում է ուղղորդումը: Նաև ուղղորդման ձևաթուղթ պետք է լրացվի ուղղորդող Մատակարարի կողմից և ուղարկվի այն կազմակերպությանը, որին Դուք հղում եք կատարում:

Խնդրի լուծման գործընթաց

Եթե Ձեր և վարչաշրջանի կամ Blue Shield TotalDual Plan-ի միջև վեճ լինի, Դուք կշարունակեք ստանալ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ վարքագծային խնամք, ներառյալ դեղատոմսով դեղերը, մինչև վեճը լուծվի: Blue Shield TotalDual Plan-ն աշխատել է վարչաշրջանի հետ՝ մշակելու լուծման գործընթացներ, որոնք ժամանակին են և բացասաբար չեն ազդում այն ծառայությունների վրա, որոնք Դուք ստանալու կարիք ունեք: Դուք կարող եք նաև օգտագործել Blue Shield TotalDual Plan-ի կամ վարչաշրջանի բողոքարկման գործընթացը՝ կախված այն կազմակերպությունից, որի հետ Դուք վեճ ունեք:

G. Փոխադրման ծառայություններ

G1. Ոչ արտակարգ իրավիճակների բժշկական փոխադրում

Դուք ոչ արտակարգ բժշկական փոխադրման իրավունք ունեք, եթե ունեք այնպիսի բժշկական կարիքներ, որոնք թույլ չեն տալիս Ձեր այցերի համար մեքենա, ավտոբուս կամ տաքսի օգտագործել: Ոչ արտակարգ բժշկական փոխադրումը կարող է տրամադրվել ապահովագրված ծառայությունների համար, ինչպիսիք են բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջությունը, թմրանյութերի օգտագործումը և դեղատան ժամադրությունները: Եթե Ձեզ անհրաժեշտ է ոչ արտակարգ բժշկական փոխադրում, կարող եք անմիջապես կապվել Call The Care-ի հետ 1-877-433-2178 (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր կամ օգտագործեք CTC Go բջջային հավելվածը՝ ամրագրումները պլանավորելու, խմբագրելու, հետևելու և չեղարկելու համար: Ոչ արտակարգ հանդիպումները և ամրագրումները պետք է կատարվեն Ձեր հանդիպումից 24 ժամ առաջ: Ձեր մատակարարը կամ մեր փոխադրման մատակարարը՝ Call The Car-ը, կարող են օգնել Ձեզ որոշել փոխադրման լավագույն տեսակը՝ Ձեր կարիքները բավարարելու համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



Ոչ արտակարգ բժշկական փոխադրումը շտապ օգնության մեքենա, զուգարանով օժտված միկրոավտոբուս, անվասայլակով միկրոավտոբուս կամ օդային փոխադրում է: Blue Shield TotalDual Plan թույլ է տալիս նվազագույն ծախսերով սպահովված փոխադրման եղանակը և ամենահամապատասխան ոչ արտակարգ բժշկական փոխադրումը Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ անհրաժեշտ է ուղևորություն դեպի Ձեր տեսակցության վայր: Օրինակ, եթե ֆիզիկապես կամ բժշկական տեսանկյունից կարող եք անվասայլակով միկրոավտոբուսով փոխադրվել, Blue Shield TotalDual Plan-ը չի վճարի շտապօգնության մեքենայի համար: Դուք օդային փոխադրման իրավունք ունեք միայն այն դեպքում, եթե Ձեր բժշկական վիճակն անհնար է դարձնում որևէ տեսակի ցամաքային փոխադրում:

Ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրումը պետք է օգտագործվի, երբ.

- Դա Ձեզ ֆիզիկապես կամ բժշկական առումով անհրաժեշտ է, ինչպես որոշվում է Ձեր մյուս մատակարարի գրավոր թույլտվությամբ, քանի որ Դուք չեք կարող օգտվել ավտոբուսից, տաքսիից, մեքենայից կամ միկրոավտոբուսից Ձեր ժամադրությանը գնալու համար:
- Ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության պատճառով Ձեզ անհրաժեշտ է վարորդի օգնությունը՝ դեպի Ձեր տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար:

Բժշկական փոխադրում խնդրելու համար, որը Ձեր բժիշկը նշանակել է ոչ հրատապ **սովորական այցերի** համար, խնդրում ենք զանգահարել Call The Car 1-877-433-2178 (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր կամ օգտագործեք CTC Go բջջային հավելվածը՝ ամրագրումները պլանավորելու, խմբագրելու, հետևելու և չեղարկելու համար: Ոչ արտակարգ սովորական հանդիպումների ամրագրումները պետք է կատարվեն Ձեր հանդիպումից 24 ժամ առաջ: **Արտակարգ հանդիպումների համար** զանգահարեք որքան հնարավոր է շուտ: Ձեր Անդամի նույնականացման քարտը պատրաստ պահեք, երբ զանգահարեք: Լրացուցիչ տեղեկությունների դեպքում նույնպես կարող եք զանգահարել:

Բժշկական փոխադրման սահմանափակումներ

Blue Shield TotalDual Plan-ը տրամադրում է ամենաէժան բժշկական փոխադրումը, որը բավարարում է Ձեր բժշկական կարիքները Ձեզ ամենամոտ գտնվող մատակարարին, որտեղ հնարավոր է ժամադրություն նշանակել: Բժշկական փոխադրում չի տրամադրվի, եթե Medicare-ը կամ Medi-Cal-ը չեն ծածկում ծառայությունը: Եթե ժամադրության տեսակն սպահովագրվում է Medi-Cal-ի, բայց ոչ առողջապահական ծրագրի կողմից, Blue Shield TotalDual Plan-ը կօգնի Ձեզ պլանավորել Ձեր փոխադրումը: Սպահովագրված ծառայությունների ցանկը ներկայացված է այս տեղեկագրի 4-րդ գլխում: Փոխադրումը չի սպահովագրվում Blue Shield TotalDual Plan-ի ցանցից կամ սպասարկման տարածքից դուրս, եթե նախապես լիազորված չէ:

G2. Ոչ-բժշկական փոխադրում

Ոչ բժշկական փոխադրումների նպաստները ներառում են Ձեր մատակարարի կողմից լիազորված ծառայության համար Ձեր տեսակցություններին ճանապարհորդելը և վերադառնալը: Դուք կարող եք անվճար ուղևորություն ստանալ, երբ Դուք

- ճանապարհորդում եք դեպի և վերադառնում Ձեր մատակարարի կողմից լիազորված ծառայության վայրից, կամ
- վերցնում եք դեղատոմսով տրված դեղեր և բժշկական պաշարներ:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 57



Blue Shield TotalDual Plan-ը թույլ է տալիս օգտագործել մեքենա, տաքսի, ավտոբուս կամ այլ հանրային/մասնավոր միջոց Ձեր մատակարարի կողմից լիազորված ծառայությունների համար Ձեր ոչ բժշկական տեսակցության հասնելու նպատակով: Blue Shield TotalDual Plan-ն օգտագործում է Call The Car-ը ոչ բժշկական փոխադրումներ կազմակերպելու համար: Մենք ծածկում ենք ամենացածր ծախսերը, ոչ բժշկական փոխադրման տեսակը, որը համապատասխանում է Ձեր կարիքներին:

Երբեմն, Ձեզ կարող են փոխհատուցել Ձեր կողմից կազմակերպված մասնավոր տրանսպորտային միջոցի երթևեկության համար: Blue Shield TotalDual Plan-ը պետք է հաստատի սա **նախքան** երթևեկելը, և Դուք պետք է մեզ ասեք, թե ինչու չեք կարող երթևեկել այլ ձևով, օրինակ՝ ավտոբուսով: Դուք կարող եք մեզ հայտնել՝ զանգահարելով կամ էլեկտրոնային նամակ ուղարկելով կամ անձամբ: **Ձեզ չեն կարող փոխհատուցել, եթե վարողը Դուք եք:**

Ուղևորության արժեքը փոխհատուցելու համար պահանջվում են հետևյալ բոլորը.

- Վարորդի վարորդական իրավունքը:
- Վարորդի փոխադրամիջոցի գրանցումը:
- Վարորդի համար մեքենայի ապահովագրության վկայագիր:

Լիազորված ծառայությունների համար ուղևորություն խնդրելու համար զանգահարեք Call The Car 1-877-433-2178 (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր, Ձեր հանդիպումից առնվազն քսանչորս (24) ժամ առաջ (երկուշաբթիից ուրբաթ): **Հրատապ ժամադրությունների համար** զանգահարեք որքան հնարավոր է շուտ: Ձեր Անդամի նույնականացման քարտը պատրաստ պահեք, երբ զանգահարեք: Լրացուցիչ տեղեկությունների դեպքում նույնպես կարող եք զանգահարել:

Նշում. Ամերիկացի հնդկացիները կարող են կապ հաստատել իրենց տեղական Հնդկացիների առողջապահական կլինիկայի հետ՝ ոչ-բժշկական փոխադրում խնդրելու համար:

Ոչ բժշկական փոխադրման սահմանափակումներ

Blue Shield TotalDual Plan-ը տրամադրում է ամենաէժան ոչ-բժշկական փոխադրումը, որը բավարարում է Ձեր բժշկական կարիքները Ձեզ ամենամոտ գտնվող մատակարարին, որտեղ հնարավոր է ժամադրություն նշանակել: **Դուք չեք կարող ինքներդ մեքենա վարել կամ ուղղակիորեն փոխհատուցվել:**

Ոչ բժշկական փոխադրումը չի կիրառվում, եթե՝

- Շտապօգնության մեքենա, զուգարանով միկրոավտոբուս, անվասայլակով միկրոավտոբուս կամ ոչ- արտակարգ բժշկական փոխադրման ուրիշ տեսակ է անհրաժեշտ Medi-Cal-ի ապահովագրված ծառայությանը գնալու համար:
- Ֆիզիկական կամ առողջական խնդրի պատճառով Ձեզ անհրաժեշտ է վարորդի օգնությունը՝ դեպի տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար:
- Դուք անվասայլակ եք օգտագործում և ի վիճակի չեք տեղափոխվել և դուրս գալ մեքենայից՝ առանց վարորդի օգնության:
- Ծառայությունը չի ապահովագրվում Medicare-ի կամ Medi-Cal-ի կողմից:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



Կ. Ապահովագրված ծառայություններ արտակարգ իրավիճակներում, շտապ անհրաժեշտության դեպքում կամ աղետի ժամանակ

Կ1. Խնամք շտապ բժշկական օգնության դեպքում

Բժշկական շտապ օգնությունը բժշկական վիճակ է, որն ունի այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են ուժեղ ցավը կամ լուրջ վնասվածքը: Վիճակն այնքան լուրջ է, որ եթե դրան անմիջապես բժշկական միջամտություն չցուցաբերվի, ապա Դուք կամ առողջապահական և բժշկական միջին մակարդակի գիտելիքների տեր որևէ անձ կարող է ենթադրել, որ այն

- Ձեր կամ Ձեր չճնված երեխայի առողջությանը լուրջ վտանգի կենթարկի, **կամ**
- մարմնի գործառույթի լուրջ վնասի կհանգեցնի **կամ**
- մարմնի որևէ օրգանի կամ մասի գործունեության լուրջ խանգարման պատճառ կդառնա **կամ**
- Հղի կնոջ դեպքում ակտիվ ծննդաբերության, երբ.
 - մինչև ծննդաբերությունը բավարար ժամանակ չկա, որպեսզի Ձեզ անվտանգ կերպով տեղափոխեն մեկ այլ հիվանդանոց:
 - Այլ հիվանդանոց փոխադրումը կարող է Ձեր կամ Ձեր չճնված երեխայի առողջության կամ անվտանգության համար սպառնալիք ներկայացնել:

Եթե Դուք ունեք շտապ բժշկական օգնության կարիք.

- **Օգնություն ստացեք որքան հնարավոր է արագ:** Չանգահարեք 911 կամ օգտվեք մոտակա շտապօգնության բաժանմունքից կամ հիվանդանոցից: Անհրաժեշտության դեպքում շտապ օգնություն կանչեք: Ձեր PCP-ի կողմից հաստատման կամ ուղղորդման կարիք **չկա:** Ձեզ հարկավոր չէ ցանցի մատակարարից օգտվել: Դուք կարող եք շտապ բժշկական օգնություն ստանալ, երբ դրա կարիքը ունենաք, ԱՄՆ-ում կամ նրա տարածքներում կամ ամբողջ աշխարհում ցանկացած վայրում, համապատասխան պետական լիցենզիա ունեցող ցանկացած մատակարարից:
- **Ինչքան հնարավոր է շուտ, տեղեկացրեք մեր ծրագրին Ձեր արտակարգ իրավիճակների մասին:** Մենք հետևում ենք Ձեր շտապ օգնությանը: Սովորաբար 48 ժամվա ընթացքում Դուք կամ մեկ ուրիշը պետք է զանգահարեք՝ մեզ տեղեկացնելու Ձեր շտապ օգնության կարիքի մասին: Սակայն, Դուք չեք վճարի շտապ օգնության ծառայությունների համար, եթե հետաձգեք մեզ տեղեկացնելը: Չանգահարեք Blue Shield TotalDual Plan-ի Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հաճախորդների սպասարկման մեր հեռախոսահամարը նշված է Ձեր անդամության նույնականացման քարտի վրա:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



Ապահովագրված ծառայություններ շտապ բժշկական օգնության դեպքում

2024 թվականին Blue Shield TotalDual Plan-ը մեր անդամներին կառաջարկի շտապ բժշկական ապահովագրություն, երբ դա Ձեզ անհրաժեշտ լինի, աշխարհի ցանկացած կետում: Ամեն տարի ԱՄՆ-ից դուրս արտակարգ/հրատապ ծառայությունների համար ծրագրի ծածկույթի սահմանափակում չկա: Հավելյալ տեղեկություններ ստանալու համար տե՛ս Գլուխ 4-ի Բաժին D-ի Նպաստների աղյուսակը:

Եթե շտապօգնության կայան հասնելու համար Ձեզ անհրաժեշտ է շտապօգնություն մեքենա, մեր ծրագիրն ընդգրկում է դա: Մենք ապահովագրում ենք նաև բժշկական ծառայությունները արտակարգ իրավիճակների ժամանակ: Հավելյալ տեղեկություններ ստանալու համար ուսումնասիրեք *Ձեր Անդամի տեղեկագրքի Գլուխ 4-ի* Նպաստների աղյուսակը:

Մատակարարները, ովքեր Ձեզ շտապ օգնություն են ցուցաբերում, որոշում են, թե երբ է Ձեր վիճակը կայուն, և երբ է ավարտվել բժշկական շտապ օգնությունը: Նրանք կշարունակեն Ձեզ բուժել և կկապվեն մեզ հետ՝ պլաններ կազմելու, եթե Դուք հետբուժական խնամքի կարիք ունենաք՝ ապաքինվելու համար:

Մեր ծրագիրը ներառում է Ձեր հետբուժական խնամքը: Եթե Դուք ստանում եք Ձեր շտապ օգնությունը ցանցից դուրս մատակարարներից, մենք կփորձենք ստիպել ցանցի մատակարարներին, որպեսզի հնարավորինս շուտ ստանձնեն Ձեր խնամքը:

Շտապ օգնություն ստանալը, եթե դա արտակարգ իրավիճակ չէր

Երբեմն կարող է դժվար լինել հասկանալ, արդյոք Դուք բժշկական կամ վարքագծային առողջության արտակարգ իրավիճակ ունեք: Դուք կարող եք շտապ օգնության դիմել, իսկ բժիշկն ասի, որ դա իրականում արտակարգ դեպք չէր: Քանի դեռ Դուք ողջամտորեն կարծում էիք, որ Ձեր առողջությունը լուրջ վտանգի տակ է, մենք ապահովագրում ենք Ձեր խնամքը:

Այն բանից հետո, երբ բժիշկն ասում է, որ դա արտակարգ դեպք չէ, մենք ապահովագրում ենք Ձեր լրացուցիչ խնամքը միայն այն դեպքում, եթե.

- Դուք օգտագործում եք ցանցի մատակարար **կամ**
- Ձեր ստացած լրացուցիչ խնամքը համարվում է «հրատապ անհրաժեշտ խնամք» և Դուք հետևում եք այն ստանալու կանոններին: Տե՛ս հաջորդ բաժինը:

H2. Հրատապ անհրաժեշտ խնամք

Հրատապ անհրաժեշտ խնամքը այն խնամքն է, որը Դուք ստանում եք մի իրավիճակի համար, որը արտակարգ իրավիճակ չէ, բայց անհապաղ խնամքի կարիք ունի: Օրինակ, Դուք կարող եք ունենալ առկա առողջական խնդրի բռնկում կամ ուժեղ կոկորդի ցավ, որը տեղի է ունենում հանգստյան օրերին և բուժման կարիք ունի:

Հրատապ անհրաժեշտ խնամք մեր ծրագրի սպասարկման տարածքում

Շատ դեպքերում մենք ապահովագրում ենք հրատապ անհրաժեշտ խնամքը միայն այն դեպքում, եթե.

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 60



- Դուք ստանում եք այս խնամքը ցանցի մատակարարից և
- Դուք հետևում եք այս գլխում նկարագրված կանոններին:

Եթե հնարավոր չէ կամ ողջամիտ չէ հասնել ցանցի մատակարարին, մենք ապահովագրում ենք շտապ անհրաժեշտ խնամքը, որը Դուք ստանում եք ցանցից դուրս մատակարարից: Ձեր բժիշկների խմբին փոխկապակցված հրատապ խնամքի կենտրոնների թարմացված ցանկի համար խնդրում ենք կապվել Ձեր PCP-ի հետ: Դուք կարող եք նաև փնտրել շտապ օգնության կենտրոններ Ձեր տարածքում՝ այցելելով bluesieldca.com/find-a-doctor:

Հրատապ անհրաժեշտ խնամք մեր ծրագրի սպասարկման տարածքից դուրս

Երբ Դուք գտնվում եք մեր ծրագրի սպասարկման տարածքից դուրս, հնարավոր է, չկարողանաք օգնություն ստանալ ցանցի մատակարարից: Այդ դեպքում մեր ծրագիրն ապահովագրում է շտապ անհրաժեշտ խնամքը, որը Դուք ստանում եք ցանկացած մատակարարից:

Մեր ծրագիրը չի ապահովագրում շտապ անհրաժեշտ խնամքը կամ որևէ այլ ոչ շտապ խնամք, որը Դուք ստանում եք Միացյալ Նահանգներից դուրս:

Մեր ծրագիրն ապահովագրում է համաշխարհային շտապ և հրատապ անհրաժեշտ խնամքի ծառայությունները Միացյալ Նահանգներից և նրա տարածքներից դուրս՝ հետևյալ հանգամանքներում՝ առանց համատեղ տարեկան սահմանաչափի: Հավելյալ տեղեկություններ ստանալու համար տե՛ս *Շտապ օգնություն* և *հրատապ անհրաժեշտ խնամք* Բժշկական նպաստների աղյուսակում՝ Գլուխ 4, Բաժին D:

Եթե Դուք շտապ օգնության կարիք ունեք, երբ գտնվում եք Միացյալ Նահանգներից և նրա տարածքներից դուրս, զանգահարեք Blue Shield Global հիմնական ծառայությունների կենտրոնի անվճար՝ (800) 810-2583 հեռախոսահամարով կամ զանգահարեք (804) 673-1177 համարով, օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր: Արտակարգ իրավիճակների դեպքում անմիջապես գնացեք մոտակա հիվանդանոց: Դուք նաև պետք է զանգահարեք Ձեր անդամի նույնականացման քարտի հետևի մասում գտնվող Հաճախորդների սպասարկման համարին: Որպես այս ծառայության մաս, ստացիոնար հիվանդանոցային խնամքի համար Դուք կարող եք կապվել Blue Shield Global Core Services Center-ի հետ՝ անկանխիկ մուտքի հնարավորությունը կազմակերպելու համար: Եթե Դուք կազմակերպում եք անկանխիկ մուտքի հնարավորություն, Դուք պատասխանատու եք Ձեր գրպանից սովորական ծախսերի համար, ինչպիսիք են չճածկվող վճարները և համավճարները: Եթե Դուք չեք կազմակերպում անկանխիկ մուտքի հնարավորություն, Դուք ստիպված կլինեք վճարել Ձեր բժշկական օգնության ամբողջ հաշիվը և փոխհատուցման խնդրանք ներկայացնել:

H3. Խնամք աղետի ժամանակ

Եթե Կալիֆոռնիայի նահանգապետը, ԱՄՆ Առողջապահության և մարդկային ծառայությունների նախարարը կամ Միացյալ Նահանգների նախագահը աղետ կամ արտակարգ դրություն հայտարարեն Ձեր աշխարհագրական տարածքում, Դուք դեռ իրավունք կունենաք մեր ծրագրի խնամքից օգտվելու համար:

Հայտարարված աղետի ժամանակ Ձեզ անհրաժեշտ խնամք ստանալու մասին տեղեկությունների համար այցելեք մեր կայքը՝ blueshieldca.com/medicare:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



Հայտարարված աղետի ժամանակ, եթե չեք կարող օգտվել ցանցի մատակարարից, կարող եք օգնություն ստանալ ցանցից դուրս մատակարարներից՝ ցանցային ծախսերի բաշխման դրույքաչափով: Եթե հայտարարված աղետի ժամանակ չեք կարող օգտագործել ցանցային դեղատուն, կարող եք լրացնել Ձեր դեղատոմսով դեղերը ցանցից դուրս գտնվող դեղատանը: Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք *Անդամի տեղեկագրքի Գլուխ 5-ը*:

I. Ինչ անել, եթե Ձեզ ուղղակիորեն հաշիվ են ներկայացնում մեր ծրագրի ներքո ապահովագրվող ծառայությունների համար

Եթե մատակարարը Ձեզ հաշիվ է ուղարկում մեր ծրագրին ուղարկելու փոխարեն, Դուք պետք է խնդրեք մեզ վճարել հաշվի մեր բաժինը:

Դուք չպետք է վճարեք հաշիվը: Եթե դա անեք, մենք հնարավոր է չկարողանանք Ձեզ փոխհատուցել:

Եթե ապահովագրված ծառայությունների համար վճարել եք ավելին, քան Ձեր ծրագրի ծախսերի բաշխումը կամ եթե հաշիվ եք ստացել ապահովագրված բժշկական ծառայությունների ամբողջական արժեքի համար, ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 7-ը*՝ պարզելու, թե ինչ պետք է անել:

1I. Ինչ անել, եթե մեր ծրագիրը չի ծածկում ծառայությունները

Մեր ծրագիրն ապահովագրում է այն բոլոր ծառայությունները՝

- որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են, և
- որոնք նշված են մեր ծրագրի Նպաստների աղյուսակում (ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 4-ը*), և
- որոնք Դուք ստանում եք՝ հետևելով ծրագրի կանոններին:

Եթե Դուք ծառայություններ եք ստանում, որոնք մեր ծրագիրը չի ծածկում, **Դուք ինքներդ եք վճարում ամբողջ ծախսերը**, բացառությամբ այն դեպքերի, եթե այն ապահովագրված չէ մեր ծրագրից դուրս Medi-Cal-ի մեկ այլ ծրագրի կողմից:

Եթե Դուք ցանկանում եք տեղեկանալ, թե արդյոք մենք վճարում ենք որևէ բժշկական ծառայության կամ խնամքի համար, Դուք իրավունք ունեք հարցնելու մեզ: Դուք նաև իրավունք ունեք այդ մասին գրավոր հարցնել: Եթե մենք ասենք, որ չենք վճարելու Ձեր ծառայությունների համար, Դուք իրավունք ունեք բողոքարկել մեր որոշումը:

Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 9-ը* բացատրում է, թե ինչ անել, եթե ցանկանում եք, որ մենք ապահովագրենք բժշկական ծառայությունը կամ ապրանքը: Այն նաև բացատրում է, թե ինչպես բողոքարկել մեր ապահովագրության որոշումը: Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ Ձեր բողոքարկման իրավունքների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար:

Մենք վճարում ենք որոշ ծառայությունների համար մինչև որոշակի սահմանաչափ: Եթե Դուք գերազանցում եք սահմանաչափը, Դուք վճարում եք ամբողջ արժեքը՝ այդ տեսակի ծառայություններից ավելի շատ ստանալու համար: Ուսումնասիրեք *Գլուխ 4-ը*՝ հատուկ նպաստների սահմանաչափերի համար: Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ պարզելու, թե որոնք են նպաստների սահմանաչափերը և որքան եք օգտագործել Ձեր նպաստները:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



J. Առողջական խնամքի ծառայությունների ապահովագրումը կլինիկական գիտական հետազոտության ժամանակ

J1. Կլինիկական գիտական հետազոտության սահմանում

Կլինիկական գիտական հետազոտությունը (նաև կոչվում է կլինիկական գիտափորձ) եղանակ է, երբ բժիշկները փորձարկում են առողջության խնամքի կամ դեղերի նոր տեսակներ: Medicare-ի կողմից հաստատված կլինիկական գիտական հետազոտությունը սովորաբար խնդրում է, որ կամավորներ լինեն հետազոտության մեջ:

Երբ Medicare-ը հաստատում է ուսումնասիրությունը, որում ցանկանում եք մասնակցել, և Դուք հետաքրքրություն եք հայտնում, ուսումնասիրության վրա աշխատող մեկը կապվում է Ձեզ հետ: Այդ անձը պատմում է Ձեզ ուսումնասիրության մասին և պարզում, թե արդյոք Դուք համապատասխանում եք դրան: Դուք կարող եք լինել ուսումնասիրության մեջ, քանի դեռ բավարարում եք պահանջվող պայմանները: Դուք պետք է հասկանաք և ընդունեք այն, ինչ պետք է անեք ուսումնասիրության ընթացքում:

Մինչ Դուք ուսումնասիրության մեջ եք, Դուք կարող եք գրանցված մնալ մեր ծրագրում: Այդ կերպ մեր ծրագիրը շարունակում է ապահովագրել Ձեզ այն ծառայությունների և խնամքի համար, որոնք կապված չեն ուսումնասիրության հետ:

Եթե Դուք ցանկանում եք մասնակցել Medicare-ի կողմից հաստատված որևէ կլինիկական գիտական հետազոտության, Ձեզ անհրաժեշտ չէ մեզ տեղեկացնել կամ հաստատում ստանալ մեզնից կամ Ձեր առաջնային խնամքի մատակարարից: Մատակարարները, որոնք Ձեզ խնամք են տրամադրում որպես ուսումնասիրության մաս, պետք չէ, որ ցանցի մատակարարներ լինեն: Խնդրում ենք նկատի ունենալ, որ սա չի ներառում այն նպաստները, որոնց համար պատասխանատու է մեր ծրագիրը, որոնք, որպես բաղադրիչ, ներառում են կլինիկական փորձարկում կամ գրանցամատյան՝ նպաստը գնահատելու համար: Դրանք ներառում են որոշակի նպաստներ, որոնք նշված են ծածկույթի ազգային որոշումների (NCDs) և հետազոտական սարքերի փորձարկումների (IDE) շրջանակներում և կարող են ենթակա լինել նախնական լիազորության և ծրագրի այլ կանոնների:

Մենք խրախուսում ենք Ձեզ տեղեկացնել մեզ՝ նախքան կլինիկական գիտական հետազոտության մասնակցելը:

Եթե Դուք նախատեսում եք մասնակցել Original Medicare-ի կողմից անդամագրվածների համար նախատեսված կլինիկական գիտական հետազոտության, մենք Ձեզ կամ Ձեր խնամքի համակարգողին խրախուսում ենք կապվել Հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ մեզ տեղեկացնելով, որ Դուք մասնակցելու եք կլինիկական գիտափորձին:

J2. Ծառայությունների վճարում, երբ Դուք մասնակցում եք կլինիկական գիտական հետազոտության

Եթե Դուք կամավոր մասնակցում եք կլինիկական գիտական հետազոտության, որը Medicare-ը հաստատում է, Դուք ոչինչ չեք վճարում ուսումնասիրության ներքո ապահովագրված ծառայությունների համար: Medicare-ը վճարում է ուսումնասիրության շրջանակներում ապահովագրված ծառայությունների, ինչպես

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



նաև Ձեր խնամքի հետ կապված սովորական ծախսերի համար: Երբ Դուք միանում եք Medicare-ի կողմից հաստատված կլինիկական գիտական հետազոտությանը, Դուք ապահովագրված եք ծառայությունների և ապրանքների մեծ մասի համար, որոնք ստանում եք որպես ուսումնասիրության մի մաս: Մրանք ընդգրկում են՝

- սենյակ և սնունդ հիվանդանոցում մնալու համար, որոնց համար Medicare-ը կվճարեր, նույնիսկ եթե Դուք ուսումնասիրության մեջ չլինեիք
- վիրահատություն կամ այլ բժշկական բուժգործողություն, որը հետազոտական ուսումնասիրության մաս է
- նոր բուժումից առաջացած ցանկացած կողմնակի ազդեցության և բարդության բուժում

Եթե Դուք մասնակցում եք ուսումնասիրության, որը Medicare-ը չի հաստատել, Դուք վճարում եք ուսումնասիրությանը մասնակցելու համար ցանկացած ծախս:

J3. Հավելյալ տեղեկություններ կլինիկական գիտական հետազոտությունների մասին

Դուք կարող եք հավելյալ տեղեկություններ ստանալ կլինիկական գիտական հետազոտությանը մասնակցելու մասին՝ կարդալով «Medicare և կլինիկական գիտական հետազոտություններ (www.medicare.gov/Pubs/pdf/02226-Medicare-and-Clinical): -Research-Studies.pdf) կայքում: Կարող եք նաև զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Կ. Ինչպես են ապահովագրվում Ձեր առողջապահական ծառայությունները կրոնական ոչ բժշկական առողջապահական հաստատությունում

K1. Կրոնական ոչ բժշկական առողջապահական հաստատության սահմանում

Կրոնական ոչ բժշկական առողջապահական հաստատությունը այն վայրն է, որը տրամադրում է խնամք, որը Դուք սովորաբար կստանաք հիվանդանոցում կամ հմուտ բուժքույրական հաստատությունում: Եթե հիվանդանոցում կամ հմուտ բուժքույրական հաստատությունում խնամք ստանալը հակասում է Ձեր կրոնական համոզմունքներին, մենք ապահովագրում ենք խնամքը կրոնական ոչ բժշկական առողջապահական հաստատությունում:

Այս նպաստը նախատեսված է միայն Medicare Part A-ի ստացիոնար ծառայությունների համար (ոչ բժշկական առողջապահական ծառայություններ):

K2. Խնամք կրոնական ոչ բժշկական առողջապահական հաստատությունից

Կրոնական ոչ բժշկական առողջապահական հաստատությունից օգնություն ստանալու համար Դուք պետք է ստորագրեք իրավական փաստաթուղթ, որտեղ ասվում է, որ Դուք դեմ եք «չբացառվող» բժշկական օգնություն ստանալուն:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



- «Չբացառված» բժշկական բուժումը ցանկացած խնամք է, որը **կամավոր է և չի պահանջվում** որևէ դաշնային, նահանգային կամ տեղական օրենքով:
- «Բացառված» բժշկական բուժումը ցանկացած խնամք է, որը **կամավոր չէ և պահանջվում է** համաձայն դաշնային, նահանգային կամ տեղական օրենսդրության:

Մեր ծրագրով ապահովագրվելու համար կրոնական ոչ բժշկական առողջապահական հաստատությունից ստացված խնամքը պետք է համապատասխանի հետևյալ պայմաններին.

- Խնամք տրամադրող հաստատությունը պետք է վավերացված լինի Medicare-ի կողմից:
- Մեր ծրագրի ծառայությունների ծածկույթը սահմանափակվում է խնամքի ոչ կրոնական ասպեկտներով:
- Եթե Դուք այս հաստատությունից ծառայություններ եք ստանում, որոնք Ձեզ տրամադրվում են հաստատությունում.
 - Դուք պետք է ունենաք այնպիսի բժշկական վիճակ, որը թույլ կտա Ձեզ ստանալ ապահովագրված ծառայություններ ստացիոնար հիվանդանոցային խնամքի կամ հմուտ բուժքույրական հաստատության խնամքի համար:
 - Դուք պետք է մեզնից հաստատում ստանաք նախքան հաստատություն ընդունվելը, այլապես Ձեր մնալը **չի** ապահովագրվի:

Հիվանդանոցում յուրաքանչյուր անգամ գտնվելու համար ապահովագրված օրերի քանակի սահմանափակում չկա: Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս Գլուխ 4-ի Բաժին D-ի Նպաստների աղյուսակը:

L. Տեսական օգտագործման բժշկական սարքեր (DME)

L1. DME որպես մեր ծրագրի անդամ

DME-ն ներառում է մատակարարի կողմից պատվիրված որոշ բժշկական անհրաժեշտ իրեր, ինչպիսիք են հաշմանդամի սայլակները, հենակները, էլեկտրական ներքնակների համակարգերը, դիաբետիկ պարագաները, մատակարարի կողմից պատվիրված հիվանդանոցային մահճակալները տանը օգտագործելու համար, ներերակային (IV) ներարկման պոմպեր, խոսք առաջացնող սարքեր, թթվածնի սարքավորումներ և պարագաներ, հեղուկացրիչներ և քայլակներ:

Դուք միշտ որոշակի իրեր ունեք, որպես սեփականություն, օրինակ՝ պրոթեզներ:

Այս բաժնում մենք քննարկում ենք Ձեր վարձակալած DME-ն: Որպես մեր ծրագրի անդամ, Դուք սովորաբար **չեք** լինի DME-ի սեփականատեր, անկախ նրանից, թե որքան ժամանակ եք այն վարձակալում:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



Որոշակի սահմանափակ իրավիճակներում Blue Shield TotalDual Plan-ը կարող է փոխանցել Ձեզ DME ապրանքի սեփականությունը՝ կախված նրանից, թե Դուք համապատասխանում եք հետևյալ չափանիշներից մեկին կամ բոլորին.

- Դուք շարունակական բժշկական կարիք ունեք 150 դոլարից պակաս արժողությամբ ապրանքների և/կամ պարենտերալ/ներարկման պոմպերի համար
- Բժշկի հավաստագրում
- Եթե սարքը կամ սարքավորումը պատրաստված է Ձեզ հարմարեցվելու համար

Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ իմանալու պահանջների և փաստաթղթերի մասին, որոնք Դուք պետք է ներկայացնեք:

Նույնիսկ եթե Դուք ունեցել եք DME մինչև 12 ամիս անընդմեջ Medicare-ի ներքո՝ նախքան մեր ծրագրին միանալը, Դուք **չեք** լինի սարքավորման սեփականատեր:

L2. DME-ի սեփականությունը, եթե անցնեք Original Medicare-ին

Original Medicare ծրագրում մարդիկ, ովքեր վարձակալում են DME-ի որոշակի տեսակներ, դրա սեփականատերն են դառնում 13 ամիս հետո: Medicare Advantage (MA) ծրագրում ծրագրի կարող է սահմանել այն ամիսների քանակը, որոնց մարդիկ պետք է վարձակալեն DME-ի որոշակի տեսակներ՝ նախքան այն ունենալը:

Նշում. Դուք կարող եք գտնել Original Medicare-ի և MA ծրագրերի սահմանումները 12-րդ գլխում: Դրանց մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել նաև *Medicare և Դուք 2024* տեղեկագրում: Եթե չունեք այս գրքույկի օրինակը, կարող եք գտնել այն Medicare-ի կայքում (www.medicare.gov/medicare-and-you) կամ զանգահարելով 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Եթե Medi-Cal-ը չընտրվի, Դուք պետք է կատարեք 13 անընդմեջ վճարում Original Medicare-ի ներքո, կամ պետք է կատարեք MA ծրագրով սահմանված անընդմեջ վճարումները, որպեսզի ունենաք DME ապրանքը, եթե.

- Դուք չեք դարձել DME ապրանքի սեփականատեր, մինչև մեր ծրագրում էիք, և
- Դուք դուրս եք գալիս մեր ծրագրից և ստանում եք Ձեր Medicare-ի նպաստները Առողջապահական որևէ ծրագրից դուրս Original Medicare ծրագրում կամ MA ծրագրում:

Եթե Դուք վճարումներ եք կատարել DME ապրանքի համար Original Medicare-ի կամ MA ծրագրի շրջանակներում, նախքան մեր ծրագրին միանալը, **Medicare-ի կամ MA ծրագրի այդ վճարումները չեն հաշվվում այն վճարումների մեջ, որոնք Դուք պետք է կատարեք մեր ծրագրից դուրս գալուց հետո:**

- Դուք ստիպված կլինեք անընդմեջ կատարել 13 նոր վճարում Original Medicare-ի շրջանակներում կամ մի շաբթ նոր վճարումներ անընդմեջ, որոնք սահմանված են MA ծրագրի կողմից DME ապրանքի սեփականատեր լինելու համար:
- Մրանից բացառություններ չկան, երբ վերադառնում եք Original Medicare կամ MA ծրագրի:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



L3. Թթվածնային սարքավորումների նպաստներ՝ որպես մեր ծրագրի անդամ

Եթե Դուք համապատասխանում եք Medicare-ի կողմից փոխհատուցվող թթվածնային սարքավորմանը և մեր ծրագրի անդամ եք, մենք ապահովագրում ենք.

- թթվածնային սարքավորումների վարձույթ
- թթվածնի և թթվածնի պարունակության մատակարարում
- խողովակներ և հարակից պարագաներ թթվածնի և թթվածնի պարունակության մատակարարման համար
- թթվածնային սարքավորումների սպասարկում և վերանորոգում

Թթվածնային սարքավորումը պետք է վերադարձվի, երբ այն այլևս Ձեզ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չէ կամ եթե Դուք լքեք մեր ծրագիրը:

L4. Թթվածնային սարքավորում, երբ Դուք անցնում եք Original Medicare կամ Medicare Advantage-ի (MA) մեկ այլ ծրագրի

Երբ թթվածնային սարքավորումը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, և Դուք դուրս եք գալիս մեր ծրագրից և անցնում Original Medicare-ին, Դուք այն վարձակալում եք մատակարարից 36 ամսով: Ձեր ամսական վարձավճարները ծածկում են թթվածնային սարքավորումները և վերը թվարկված պաշարներն ու ծառայությունները:

Եթե թթվածնային սարքավորումը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է **այն 36 ամսով վարձակալելուց հետո**, Ձեր մատակարարը պետք է տրամադրի.

- թթվածնային սարքավորումներ, պաշարներ և ծառայություններ ևս 24 ամսով
- Բժշկական անհրաժեշտության դեպքում թթվածնային սարքավորումներ և պաշարներ մինչև 5 տարի ժամկետով

Եթե թթվածնային սարքավորումը դեռևս բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է **5 տարվա ժամկետի վերջում**.

- Ձեր մատակարարն այլևս ստիպված չէ տրամադրել այն, և Դուք կարող եք ընտրել փոխարինող սարքավորում գնել ցանկացած մատակարարից:
- Սկսվում է նոր 5-ամյա շրջան:
- Դուք վարձակալում եք մատակարարից 36 ամսով:
- Այնուհետև Ձեր մատակարարը տրամադրում է թթվածնի սարքավորումները, պաշարները և ծառայությունները ևս 24 ամսով:
- Նոր ցիկլը սկսվում է յուրաքանչյուր 5 տարին մեկ, քանի դեռ թթվածնային սարքավորումները բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



Երբ թթվածնային սարքավորումը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, իսկ **Դուք դուրս եք գալիս մեր ծրագրից և անցնում մեկ այլ MA ծրագրի**, ծրագիրը կծածկի առնվազն այն, ինչ փոխհատուցում է Original Medicare-ը: Դուք կարող եք Ձեր նոր MA ծրագրից հարցնել, թե ինչ թթվածնային սարքավորումներ և պաշարներ են այն ապահովագրում, և որքա՞ն կլինեն Ձեր ծախսերը:



Գլուխ 4. Նպաստների աղյուսակ

Ներածություն

Այս գլուխը բացատրում է Ձեզ այն ծառայությունների մասին, որոնք ապահովագրում է մեր ծրագիրը և այդ ծառայությունների ցանկացած սահմանափակման մասին, և թե որքան էք Դուք վճարում յուրաքանչյուր ծառայության համար: Այն նաև պատմում է այն նպաստների մասին, որոնք ապահովագրված չեն մեր ծրագրի շրջանակներում: Հիմնական եզրույթները և դրանց սահմանումները ներկայացված են այբբենական կարգով՝ *Անդամի տեղեկագրքի* վերջին գլխում:

Blue Shield TotalDual Plan-ի նոր անդամներ. շատ դեպքերում Դուք կանդամագրվեք Blue Shield TotalDual Plan-ում Ձեր Medicare-ի նպաստների համար Blue Shield TotalDual Plan-ում անդամագրվելու խնդրանքից հետո ամսվա 1-ին օրը: Դուք դեռ կարող եք ևս մեկ ամիս ստանալ Ձեր Medi-Cal ծառայությունները Ձեր նախկին Medi-Cal առողջապահական ծրագրից: Դրանից հետո Դուք կստանաք Ձեր Medi-Cal ծառայությունները Blue Shield Promise Medi-Cal Plan-ի միջոցով: Ձեր Medi-Cal ծածկություն ոչ մի բաց չի լինի: Հարցեր ունենալու դեպքում խնդրում ենք զանգահարել մեզ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով:



Բովանդակություն

A. Ձեր ապահովագրված ծառայությունները և Ձեր գրպանից արվող ծախսերը	71
B. Կանոններ, որոնք արգելում են մատակարարներին Ձեզնից գումար գանձել ծառայությունների համար	71
C. Մեր ծրագրի նպաստների աղյուսակի մասին	71
D. Մեր ծրագրի նպաստների աղյուսակը	76
E. Նպաստներ, որոնք ծածկված են մեր ծրագրից դուրս	151
E1. California Community Transitions (CCT)	151
E2. Medi-Cal Dental Program	152
E3. Հոսփիսի (անբուժելի հիվանդների) խնամք	152
E4. Տնային աջակցության ծառայություններ (In-Home Supportive Services (IHSS))	153
E5. 1915(c) Տնային և համայնքահեն ծառայություններից (HCBS) հրաժարվելու ծրագրեր	154
F. Նպաստներ, որոնք չեն ծածկվում մեր ծրագրով, Medicare-ով կամ Medi-Cal-ով	157



A. Ձեր ապահովագրված ծառայությունները և Ձեր գրպանից արվող ծախսերը

Այս գլուխը բացատրում է Ձեզ այն ծառայությունների մասին, որոնք ապահովագրում է մեր ծրագիրը և թե որքան եք վճարում յուրաքանչյուր ծառայության համար: Դուք կարող եք նաև իմանալ ծառայությունների մասին, որոնք ապահովագրված չեն: Դեղերի նպաստների մասին տեղեկությունները ներկայացված են Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 5*-ում: Այս գլուխը նաև բացատրում է որոշ ծառայությունների սահմանափակումները:

Որոշ ծառայությունների համար Ձեզնից գանձվում է մի գումար, որը կոչվում է համավճար: Սա ֆիքսված գումար է (օրինակ՝ \$5), որը Դուք վճարում եք ամեն անգամ, երբ ստանում եք այդ ծառայությունը: Դուք վճարում եք համավճարը բժշկական ծառայություն ստանալու պահին:

Եթե օգնության կարիք ունեք՝ հասկանալու, թե որ ծառայություններն են ապահովագրված, զանգահարեք Ձեր խնամքի համակարգողին և/կամ Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով:

B. Կանոններ, որոնք արգելում են մատակարարներին Ձեզնից գումար գանձել ծառայությունների համար

Մենք թույլ չենք տալիս մեր մատակարարներին Ձեզ հաշիվ ներկայացնել ցանցային ապահովագրված ծառայությունների համար: Մենք ուղղակիորեն վճարում ենք մեր մատակարարներին և պաշտպանում ենք Ձեզ ցանկացած վճարից: Սա ճշմարիտ է, նույնիսկ եթե մենք մատակարարին վճարում ենք ավելի քիչ, քան մատակարարի վճարները ծառայության համար:

Դուք երբեք չպետք է հաշիվ ստանաք մատակարարից ապահովագրված ծառայությունների համար: Եթե ստանում եք, ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 7*-ը կամ զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին:

C. Մեր ծրագրի նպաստների աղյուսակի մասին

Նպաստների աղյուսակը պատմում է Ձեզ այն ծառայությունների մասին, որոնց համար վճարում է մեր ծրագիրը: Այն այբբենական կարգով թվարկում է ապահովագրված ծառայությունները և բացատրում դրանք:

Մենք վճարում ենք Նպաստների աղյուսակում թվարկված ծառայությունների համար, երբ պահպանվում են հետևյալ կանոնները:

- Մենք տրամադրում ենք Medicare-ի և Medi-Cal-ի ապահովագրված ծառայություններ՝ համաձայն Medicare-ի և Medi-Cal-ի կողմից սահմանված կանոնների:
- Ծառայությունները՝ ներառյալ բժշկական խնամքը, վարքագծային առողջության և թմրանյութերի օգտագործման ծառայությունները, երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը, պարագաները, սարքավորումները և դեղերը պետք է լինեն «բժշկական առումով անհրաժեշտ»:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



Բժշկական առումով անհրաժեշտությունը նկարագրում է ծառայությունները, պարագաները կամ դեղերը, որոնք անհրաժեշտ են կանխարգելելու, ախտորոշելու կամ բուժելու կամ Ձեր ընթացիկ առողջական վիճակը պահպանելու համար: Սա ներառում է խնամք, որը Ձեզ հետ է պահում հիվանդանոց կամ ծերանոց գնալուց: Դա նաև նշանակում է, որ ծառայությունները, պարագաները կամ դեղերը համապատասխանում են բժշկական պրակտիկայի ընդունված չափանիշներին: Ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, երբ այն հիմնավորված և անհրաժեշտ է կյանքը պաշտպանելու, կարևոր հիվանդությունները կամ կարևոր հաշմանդամությունը կանխելու կամ ծանր ցավը մեղմելու համար:

- Դուք ստանում եք Ձեր խնամքը ցանցի մատակարարից: Ցանցի մատակարարն այն մատակարարն է, ով աշխատում է մեզ հետ: Շատ դեպքերում, այն խնամքը, որը Դուք ստանում եք ցանցից դուրս մատակարարից, չի ապահովագրվի, եթե դա արտակարգ կամ շտապ անհրաժեշտ խնամք չէ, կամ եթե Ձեր ծրագիրը կամ ցանցի մատակարարը Ձեզ ուղեգիր չի տվել: Ձեր Անդամի տեղեկագրքի **3-րդ գլուխը** լրացուցիչ տեղեկություններ է պարունակում ցանցային և ցանցից դուրս մատակարարներից օգտվելու մասին:
- Դուք ունեք առաջնային խնամքի մատակարար (PCP) կամ խնամքի թիմ, որը տրամադրում և ղեկավարում է Ձեր խնամքը: Շատ դեպքերում, Ձեր PCP-ն պետք է Ձեզ հաստատում տա, նախքան Դուք կարող եք օգտվել մատակարարից, որը Ձեր PCP-ն չէ կամ օգտվել այլ մատակարարներից ծրագրի ցանցում: Սա կոչվում է ուղեգիր: Ձեր Անդամի տեղեկագրքի **3-րդ գլուխը** լրացուցիչ տեղեկություններ է պարունակում ուղեգիր ստանալու և այն մասին, թե երբ դրա կարիքը **չունեք**:
- Մենք ծածկում ենք Նպաստների աղյուսակում թվարկված որոշ ծառայություններ միայն այն դեպքում, եթե Ձեր բժիշկը կամ ցանցի այլ մատակարար նախ ստանում է մեր հաստատումը: Սա կոչվում է «նախնական լիազորում»: Նպաստների աղյուսակում ապահովագրված ծառայությունները մենք նշում ենք շեղ տառատեսակով, որոնց համար անհրաժեշտ է PA:
- Բոլոր կանխարգելիչ ծառայություններն անվճար են: Դուք կգտնեք այս խնձորը , կանխարգելիչ ծառայությունների կոդքին, նպաստների աղյուսակում:
- Համայնքային օժանդակություններ. համայնքային օժանդակությունները կարող են հասանելի լինել Ձեր Անհատականացված խնամքի ծրագրի շրջանակներում: Համայնքային օժանդակությունները վերաբերում են բժշկական առումով ընդունելի և ծախսարդյունավետ այլընտրանքային ծառայություններին կամ պայմաններին: Անդամների համար այս ծառայությունները պարտադիր չեն: Եթե Դուք որակավորվում եք, այս ծառայությունները կարող են օգնել Ձեզ ավելի անկախ ապրել: Դրանք չեն փոխարինում այն նպաստներին, որոնք Դուք արդեն ստանում եք Medi-Cal-ի շրջանակներում: Օժանդակությունների օրինակները, որոնք մենք առաջարկում ենք, ներառում են բժշկական օժանդակ սնունդ և կերակուրներ կամ բժշկական առումով հարմարեցված կերակուրներ, օգնություն Ձեր կամ Ձեր խնամակալի համար, կամ ցնցուղի բռնակներ և թեքահարթակներ: Համայնքային օժանդակությունների ծառայությունների օրինակներ, որոնք Blue Shield TotalDual Plan-ը նախկինում առաջարկել է, ներառում են. Partners in Care Foundation` դեպքերի կառավարման, գնահատումների և տնային և համայնքահեն ծառայությունների համար, և LifeSpring`

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 72



տուն առաքվող սննդի համար: Եթե օգնության կարիք ունեք կամ ցանկանում եք պարզել, թե որ Համայնքային օժանդակությունները կարող են հասանելի լինել Ձեզ, զանգահարեք (800) 452-4413 (TTY՝711) կամ զանգահարեք Ձեր առողջապահական ծառայությունների մատակարարին: Համայնքային օժանդակությունները կամրնտիր ծառայություններ են (ոչ նպաստներ), որոնք Blue Shield Promise-ն առաջարկում է Medi-Cal-ի իրավունակ անդամներին: Այս ծառայությունները անդամներին օժանդակություն են տրամադրում երկարաժամկետ խնամքի աջակցության ծառայություններից (LTSS) դուրս՝ անդամների խնամքը բարելավելու և աջակցելու համար: Այս ծառայությունները կտարբերվեն ելնելով անդամի կարիքներից և Blue Shield Promise Health Plan-ի իրավասության չափանիշներից: Պահանջվում է նախնական լիազորում:

- Blue Shield Promise Health Plan-ն առաջարկում է Համայնքային Աջակցություն Los Angeles և San Diego վարչաշրջանների իրավասու անդամներին.

Ասթմայի բուժում	Անհատի տնային միջավայրի ֆիզիկական փոփոխություններ, որոնք ապահովում են առողջություն, բարեկեցություն և անվտանգություն կամ հնարավորություն են տալիս գործել տանը, եթե ասթմայի սուր նոպաները կարող են հանգեցնել հոսպիտալացման կամ շտապ օգնության ծառայություններ փնտրելու:
Համայնքային անցումային ծառայություններ/ծե րանոցից անցում դեպի տուն	Սա օգնում է անդամներին ապրել համայնքում և խուսափել հետագա մասնագիտացված հաստատություններից:
Ցերեկային արիլիտացիոն ծրագրեր	Սա օգնում է Medi-Cal-ի անդամներին ոչ հաստատության պայմաններում զարգացնել ինքնօգնության, սոցիալականացման և հարմարվողականության հմտություններ, որոնք անհրաժեշտ են իրենց տնային միջավայրում հաջողության հասնելու համար:
Շրջակա միջավայրի մատչելիության հարմարեցումներ (տան փոփոխություններ)	Ֆիզիկական հարմարեցումներ տանը՝ ապահովելու անհատի առողջությունը, բարեկեցությունը և անվտանգությունը և թույլ տալու անդամներին, ում այլ կերպ մասնագիտացված հաստատություն կպահանջվեր, մնալ իրենց տներում:
Բնակարանային ավանդներ	Անդամները ստանում են օգնություն՝ գտնելու, համակարգելու, ապահովելու կամ ֆինանսավորելու միանվագ ծառայություններ, որոնք անհրաժեշտ են հիմնական տնային տնտեսություն ստեղծելու համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



Բնակարանային անցումային ծառայություններ	Անդամներն օգնություն են ստանում բնակարան ձեռք բերելու հարցում:
Բնակարանների վարձակալության և պահպանման ծառայություններ	Անդամները բնակարան գտնելուց հետո ստանում են անվտանգ և կայուն վարձակալության աջակցություն:
Բժշկական առումով հարմարեցված սնունդ/Բժշկական օժանդակ սնունդ	Մուցման աջակցություն անդամներին, հատկապես քրոնիկական հիվանդություններ ունեցողներին, երբ սննդառության նպատակներին հասնելը կարևոր է առողջ լինելու և առողջ մնալու համար:
Ծերանոցի անցում/անցում աջակցվող բնակության հաստատություններ	Սա օգնում է անդամներին ապրել համայնքում և խուսափել հետագա մասնագիտացված հաստատություն ընդունվելուց:
Անձնական խնամքի և տնային տնտեսության ծառայություններ	Անդամները ստանում են օգնություն առօրյա կենսագործունեության (ADLs) առնչությամբ, ինչպիսիք են լողանալը, հագնվելը, զուգարան գնալը, տեղափոխվելը կամ կերակրելը, և անձնական խնամքի ծառայություններ, ինչպիսիք են ճաշի պատրաստումը, մթերային գնումները և դրամի կառավարումը այն անդամների համար, ովքեր այլ կերպ չէին կարող մնալ իրենց տներում առանց այս աջակցության:
Վերականգնողական խնամք (բժշկական տնային խնամքի ժամանակավոր թեթևացում)	Կարճաժամկետ բնակության վայրում խնամք նրանց համար, ովքեր այլևս հոսպիտալացման կարիք չունեն, բայց դեռ պետք է ապաքինվեն վնասվածքից կամ հիվանդությունից, ներառյալ հոգեկան առողջության խնդիրը, որը կարող է վատթարանալ անկայուն կենսամիջավայրում:




<p>Տնային խնամքի ժամանակավոր թերևացման ծառայություններ Medi-Cal-ի անդամների խնամողների համար</p>	<p>Կարճաժամկետ, ոչ բժշկական օգնություն խնամակալության պարտականություններից նրանց համար, ովքեր խնամում են Medi-Cal-ի անդամներին, ովքեր ընդհատվող ժամանակավոր հսկողություն են պահանջում:</p>
<p>Կարճաժամկետ հետհիվանդանոցային բնակարան</p>	<p>Բնակության վայր բժշկական կամ վարքագծային բարձր կարիքներ ունեցող անդամների համար, ովքեր բնակավայր չունեն, որպեսզի շարունակեն ապաքինվել անմիջապես հիվանդանոցից կամ բնակելի հաստատությունից դուրս գալուց հետո:</p>
<p>Մթափեցնող կենտրոններ</p>	<p>Ապահով, աջակցող վայրեր, որպեսզի անհատները սթափվեն ակոհոլի կամ թմրամիջոցների պատճառով հրապարակայնորեն հարբած հայտնաբերված լինելուց և օգնություն անօթևանության կամ անկայուն կենսապայմաններ ունեցող անհատների համար, ովքեր այլ կերպ կուղարկվեն շտապօգնության բաժանմունք կամ բանտ:</p>

Տեղեկություններ անդամների համար

- Զանգահարեք Blue Shield Promise Health Plan-ի հաճախորդների սպասարկման Ձեր տարածքային բաժին՝ աշխատանքային օրերին՝ 8:00-ից 18:00: Los Angeles. (800) 605-2556 / San Diego. (855) 699-5557
- Զանգահարեք Health Care Options (HCO)՝ (800) 430-4263 (TTY (800) 430-7077)
- Այցելեք Առողջապահական խնամքի ծառայությունների բաժին՝ լրացուցիչ տեղեկությունների համար՝ <https://www.dhcs.ca.gov/Pages/ECMandILOS.aspx>



D. Մեր ծրագրի նպաստների աղյուսակը

Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ինչ պետք է վճարեք
 <p>Որովայնային առրտայի աներիզմայի սքրինինգ</p> <p>Մենք վճարում ենք ռիսկային խմբի մեկանգամյա ուլտրաձայնային զննման համար: Ծրագիրն ապահովագրում է այս զննումը միայն այն դեպքում, եթե Դուք ունեք որոշակի ռիսկային գործոններ և եթե դրա համար ուղեգիր եք ստանում Ձեր բժշկից, բժշկի օգնականից, բուժքույրից կամ կլինիկական բուժքույրից:</p>	<p>\$0</p>


Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ասեղնաբուժություն</p> <p>Մենք վճարում ենք մինչև երկու ամբուլատոր ասեղնաբուժական ծառայությունների համար մեկ օրացուցային ամսում, կամ ավելի հաճախ, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են:</p> <p>Մենք նաև վճարում ենք մինչև 12 ասեղնաբուժությամբ այցելությունների համար 90 օրվա ընթացքում, եթե Դուք ունեք մեջքի քրոնիկական ցավ, որը սահմանվում է որպես.</p> <ul style="list-style-type: none"> • տևում է 12 շաբաթ կամ ավելի, • ոչ սպեցիֆիկ է (չունի համակարգային պատճառ, որը կարող է բացահայտվել, օրինակ՝ կապված չէ մետաստատիկ, բորբոքային կամ վարակիչ հիվանդության հետ), • կապված չէ վիրահատության հետ և • կապված չէ հղիության հետ: <p>Բացի այդ, մենք վճարում ենք ասեղնաբուժության հավելյալ ութ սեանս՝ մեջքի քրոնիկական ցավի համար, եթե Դուք բարելավում ունեք: Դուք չեք կարող տարեկան ավելի քան 20 ասեղնաբուժական բուժում ստանալ մեջքի քրոնիկական ցավի համար:</p> <p>Ասեղնաբուժությամբ բուժումը պետք է դադարեցվի, եթե Դուք չեք լավանում կամ Ձեր վիճակը վատթարանում է:</p> <p>Նպաստները տրամադրվում են American Specialty Health Plans of California, Inc.-ի հետ պայմանագրի միջոցով: (ASH Plans): Լրացուցիչ տեղեկությունների կամ ASH Plans-ի հետ համագործակցող մատակարարներին գտնելու համար կարող եք զանգահարել ASH Plans՝ (800) 678-9133 հեռախոսահամարով, TTY՝ (877) 710-2746, երկուշաբթիից ուրբաթ, 5:00-ից մինչև 18:00: Կարող եք նաև զանգահարել Blue Shield TotalDual Plan-ի հաճախորդների սպասարկման բաժին կամ այցելել blueshieldca.com/find-a-doctor՝ ASH ծրագրերի մասնակից մատակարարին գտնելու համար:</p>	<p>\$0</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 77





<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Լրացուցիչ հեռաառողջապահական ծառայություններ</p> <p>Teladoc-ը տրամադրում է Բժիշկների խորհրդատվություն հեռախոսով կամ տեսազանգով ողջ տարվա ընթացքում, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (24/7/365): Teladoc-ի բժիշկները կարող են ախտորոշել և բուժել հիմնական առողջական խնդիրները, ինչպես նաև կարող են նշանակել որոշակի դեղամիջոցներ: Teladoc-ը ծառայություն է, որը նախատեսված չէ փոխարինելու Ձեր առաջնային խնամքի բժշկի լրացուցիչ խնամքին: Խնդրում ենք մուտք գործել blueshieldca.com/teladoc կամ Blue Shield of California-ի հավելված՝ այցելություն խնդրելու համար: Հարցերի դեպքում կարող եք կապվել Teladoc-ի հետ հեռախոսով 1-800-Teladoc (1-800-835-2362) [TTY: 711] հեծախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, տարին 365 օր:</p> <p>*Ծառայությունները չեն վերաբերում ծրագրի՝ Ձեր գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p>	<p>\$0</p>
<p> Ալկոհոլի չարաշահմանն առնչվող սրբինինգ և խորհրդատվություն</p> <p>Մենք վճարում ենք ալկոհոլի չարաշահման մեկ սրբինինգի համար (SABIRT) այն չափահասներին, ովքեր չարաշահում են ալկոհոլը, բայց ալկոհոլից կախվածություն չունեն: Մա ներառում է հղի կանանց:</p> <p>Եթե ալկոհոլի չարաշահման զննման արդյունքները դրական են, կարող եք ամեն տարի ստանալ մինչև չորս կարճ, անձնական խորհրդատվություն (եթե կարող եք և զգոն եք խորհրդատվության ընթացքում) որակավորված առաջնային խնամքի մատակարարի (PCP) կամ պրակտիկա անցնող մասնագետի հետ առաջնային խնամքի միջավայրում:</p>	<p>\$0</p>





Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ինչ պետք է վճարեք
<p>Շտապ օգնության ծառայություններ</p> <p>Շտապօգնության ապահովագրված ծառայությունները ներառում են ցամաքային և օդային (ինքնաթիռ և ուղղաթիռ): Շտապօգնությունը Ձեզ կտեղափոխի մոտակա վայրը, որտեղ կարող են Ձեզ բուժել:</p> <p>Ձեր վիճակը պետք է այնքան լուրջ լինի, որ խնամքի վայր հասնելու այլ եղանակները կարող են վտանգել Ձեր առողջությունը կամ կյանքը:</p> <p>Այլ դեպքերի համար (ոչ հրատապ) շտապօգնության ծառայություններ պետք է հաստատվեն մեր կողմից: Այն դեպքերում, որոնք արտակարգ իրավիճակներ չեն, մենք կարող ենք վճարել շտապօգնության համար: Ձեր վիճակը պետք է այնքան լուրջ լինի, որ խնամքի վայր հասնելու այլ եղանակներ կարող են վտանգել Ձեր կյանքը կամ առողջությունը:</p>	\$0
<p>Տարեկան ֆիզիկական զննում</p> <p>Դուք ապահովագրված եք յուրաքանչյուր 12 ամիսը մեկ սովորական ֆիզիկական զննման համար՝ ի լրումն առողջության այցի: Այս այցը ներառում է Ձեր բժշկական և ընտանեկան պատմության համապարփակ վերանայում, ոտքից գլուխ մանրամասն զննահատում և այլ ծառայություններ, ուղղորդումներ և առաջարկություններ, որոնք կարող են տեղին լինել:</p>	\$0





<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> Բարեկեցության ամենամյա այցելություն</p> <p>Դուք կարող եք տարեկան ստուգում անցնել: Սա նախատեսված է Ձեր ընթացիկ ռիսկի գործոնների հիման վրա կանխարգելման պլան կազմելու կամ թարմացնելու համար: Մենք վճարում ենք դրա համար 12 ամիսը մեկ անգամ:</p> <p>Նշում. Ձեր առողջության առաջին տարեկան այցը չի կարող տեղի ունենալ Ձեր Բարի գալուստ Medicare այցից հետո 12 ամսվա ընթացքում: Սակայն, Ձեզ հարկավոր չէ ունենալ Բարի գալուստ Medicare այցելություն՝ 12 ամիս Part B-ն ընդունելուց հետո տարեկան առողջական այցելություններ ստանալու համար:</p>	<p>\$0</p>
<p>Ասթմայի կանխարգելման ծառայություններ</p> <p>Դուք կարող եք ստանալ ասթմային վերաբերող կրթություն և տնային միջավայրի գնահատում՝ վատ վերահսկվող ասթմա ունեցող մարդկանց տանը սովորաբար հայտնաբերված խթանիչների համար:</p>	<p>\$0</p>
<p> Ոսկրի խտության գանգվածի չափում</p> <p>Մենք վճարում ենք որոշակի բուժգործողությունների համար այն անդամներին, ովքեր համապատասխանում են որակավորմանը (սովորաբար, ոսկրային խտության գանգվածը կորցնելու կամ օստեոպորոզի վտանգի տակ գտնվող որևէ մեկը): Այս բուժգործողությունները բացահայտում են ոսկրային գանգվածը, հայտնաբերում ոսկրային կորուստ կամ պարզում ոսկրի որակը:</p> <p>Մենք վճարում ենք ծառայությունների համար 24 ամիսը մեկ կամ ավելի հաճախ, եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Մենք նաև վճարում ենք բժշկին՝ արդյունքները նայելու և մեկնաբանելու համար:</p>	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> Կրծքագեղձի քաղցկեղի սրբինինգ (մամոգրաֆիա)</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> • մեկ բազային մամոգրաֆիա 35-ից 39 տարեկանում • մեկ սրբինինգային մամոգրաֆիա յուրաքանչյուր 12 ամիսը մեկ 40 և ավելի տարեկան կանանց համար • կրծքագեղձի կլինիկական հետազոտություն 24 ամիսը մեկ անգամ 	<p>\$0</p>
<p>Սրտային (սրտի) վերականգնողական ծառայություններ</p> <p>Մենք վճարում ենք սրտի վերականգնողական ծառայությունների համար, ինչպիսիք են վարժությունները, կրթությունը և խորհրդատվությունը: Անդամները պետք է բավարարեն որոշակի պայմաններ և ունենան բժշկի ուղեգիր:</p> <p>Մենք նաև ապահովագրում ենք սրտի վերականգնողական ինտենսիվ ծրագրերը, որոնք ավելի ինտենսիվ են, քան սրտի վերականգնողական ծրագրերը:</p>	<p>\$0</p>
<p> Սրտանոթային (սրտի) հիվանդության ռիսկի նվազեցման այց (սրտի հիվանդության թերապիա)</p> <p>Մենք վճարում ենք տարեկան մեկ այցելության համար կամ ավելի շատ, եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, Ձեր առաջնային խնամքի մատակարարի (PCP) հետ՝ օգնելու նվազեցնել սրտի հիվանդության ռիսկը: Այցի ընթացքում Ձեր բժիշկը կարող է.</p> <ul style="list-style-type: none"> • քննարկել ասպիրինի օգտագործումը, • ստուգել Ձեր արյան ճնշումը, և/կամ • Ձեզ խորհուրդներ տա՝ համոզվելու, որ լավ եք սնվում: 	<p>\$0</p>




Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ինչ պետք է վճարեք
 <p>Սրտանոթային (սրտի) հիվանդության թեստավորում</p> <p>Մենք վճարում ենք արյան անալիզների համար, որպեսզի ստուգենք սրտանոթային հիվանդությունների առկայությունը հինգ տարին մեկ անգամ (60 ամիս): Արյան այս թեստերը նաև ստուգում են սրտի հիվանդության բարձր ռիսկի պատճառով թերությունները:</p>	\$0
 <p>Արգանդի վզիկի և հեշտոցի քաղցկեղի սքրինինգ</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> • բոլոր կանանց համար՝ Պապ թեստ և կոնքի հետազոտություն 24 ամիսը մեկ անգամ • այն կանանց համար, ովքեր ունեն արգանդի վզիկի կամ հեշտոցի քաղցկեղի բարձր ռիսկ՝ 12 ամիսը մեկ՝ մեկ Պապ թեստ • այն կանանց համար, ովքեր վերջին երեք տարվա ընթացքում նորմալից շեղվող Պապ թեստի արդյունքներ են ունեցել և վերարտադրողական տարիքի են՝ 12 ամիսը մեկ՝ մեկ Պապ թեստ • 30-65 տարեկան կանանց համար՝ մարդու պապիլոմավիրուսի (HPV) թեստավորում կամ Pap plus HPV թեստավորում 5 տարին մեկ անգամ 	\$0
<p>Ոսկրահարդարման ծառայություններ (ծածկված է Medicare-ի կողմից)</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> • ողնաշարի ձեռքով մանիպուլյացիա՝ ենթատեղահանումը շտկելու համար 	\$0



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ոսկրահարդարման ծառայություններ (ծածկված չէ Medicare-ի կողմից)</p> <p>Ապահովագրված ծառայություններն ընդգրկում են՝</p> <ul style="list-style-type: none"> • նախնական և հետագա քննությունները • այցելություններ ընդունարան և ոսկրահարդարման ճշգրտումներ • օժանդակ թերապիաներ • ռենտգեն (միայն ոսկրահարդարում) <p>Նպաստները տրամադրվում են American Specialty Health Plans of California, Inc.-ի հետ պայմանագրի միջոցով: (ASH Plans): Լրացուցիչ տեղեկությունների կամ ASH Plans-ի հետ համագործակցող մատակարարներին գտնելու համար կարող եք զանգահարել ASH Plans՝ (800) 678-9133 հեռախոսահամարով, TTY՝ (877) 710-2746], երկուշաբթիից ուրբաթ, ժամը 5:00-ից 18:00: Կարող եք նաև զանգահարել Blue Shield TotalDual Plan-ի հաճախորդների սպասարկման բաժին կամ այցելել blueshieldca.com/find-a-doctor՝ ASH ծրագրերի մասնակից մատակարարին գտնելու համար:</p> <p>*Ծառայությունները չեն վերաբերում ծրագրի՝ գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին: Հաճախորդների սպասարկում</p>	<p>\$0 (ծածկույթը սահմանափակվում է տարեկան մինչև 12 այցելությամբ ոչ Medicare-ի ապահովագրված ծառայությունների համար):</p>



Շատախոսություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ինչ պետք է վճարեք
<p> Կոլոնոսկոպիա քաղցկեղի գնում</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> Կոլոնոսկոպիան չունի նվազագույն կամ առավելագույն տարիքային սահմանափակում և փոխհատուցվում է 120 ամիսը մեկ (10 տարի) անգամ՝ ոչ բարձր ռիսկային հիվանդների համար, կամ նախորդ ճկուն սիզմոնոսկոպիայից 48 ամիս անց այն հիվանդների համար, ովքեր կոլոնոսկոպիա քաղցկեղի բարձր ռիսկի տակ չեն, և 24 ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի հիվանդների համար՝ նախորդ սրբինինգային կոլոնոսկոպիայից կամ բարիումի հոգնայից հետո: Ճկուն սիզմոնոսկոպիա 45 տարեկան և բարձր տարիքի հիվանդների համար: Յուրաքանչյուր 120 ամիսը մեկ անգամ՝ ոչ բարձր ռիսկային հիվանդների համար՝ հիվանդի սրբինինգային կոլոնոսկոպիայից հետո: 48 ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկային հիվանդների համար վերջին ճկուն սիզմոնոսկոպիայի կամ բարիումի հոգնայից հետո: 45 տարեկան և բարձր տարիքի հիվանդների մոտ թաքնված արյան համար կղանքի սրբինինգային հետազոտություններ: 12 ամիսը մեկ անգամ: Կղանքի բազմաթիրախային ԴՆԹ 45-ից 85 տարեկան հիվանդների համար, որոնք չեն համապատասխանում բարձր ռիսկի չափանիշներին: 3 տարին մեկ անգամ: Արյան վրա հիմնված կենսաբանական ցուցիչների թեստեր 45-ից 85 տարեկան հիվանդների համար և նրանց համար, ովքեր չեն համապատասխանում բարձր ռիսկային չափանիշներին: 3 տարին մեկ անգամ: Բարիումով հոգա՝ որպես կոլոնոսկոպիայի այլընտրանք բարձր ռիսկային հիվանդների համար և բարիումի վերջին սրբինինգից կամ վերջին գնման կոլոնոսկոպիայից 24 ամիս անց: Բարիումով հոգնա՝ որպես ճկուն սիզմոնոսկոպիայի այլընտրանք ոչ բարձր ռիսկային խմբի և 45 տարեկանից բարձր հիվանդների համար: Բարիումով հոգնայի վերջին գնումից կամ ճկուն սիզմոնոսկոպիայից հետո առնվազն 48 ամիս անց: <p>2023 թվականի հունվարի 1-ից կոլոնոսկոպիա քաղցկեղի սրբինինգային թեստերը ներառում են հետագա սրբինինգային կոլոնոսկոպիա այն բանից հետո, երբ Medicare-ով ծածկված, ոչ ինվազիվ, կղանքի վրա հիմնված կոլոնոսկոպիա քաղցկեղի սրբինինգ թեստի դրական արդյունք է ստացվում:</p>	<p>\$0</p>





<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Չափահասների համայնքահեն ծառայություններ (Community-Based Adult Services, CBAS)</p> <p>CBAS-ը ամբուլատոր, հաստատությունների վրա հիմնված սպասարկման ծրագիր է, որտեղ մարդիկ հաճախում են ըստ ժամանակացույցի: Ամբուլատոր, հաստատությունում տրամադրվող ծառայություններ հմուտ բուժքույրական խնամքի համար, սոցիալական ծառայություններ, թերապիաներ, անձնական խնամք, ընտանիքի անդամի և խնամակալի վերապատրաստում և աջակցություն, սննդային ծառայություններ, փոխադրումներ և այլ ծառայություններ իրավասու անդամների համար: Մենք վճարում ենք CBAS-ի համար, եթե Դուք համապատասխանում եք իրավունակության չափանիշներին:</p> <p>Նշում. եթե CBAS-ի հաստատությունը հասանելի չէ, մենք կարող ենք այդ ծառայությունները տրամադրել առանձին:</p>	<p>\$0</p>




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ատամնաբուժական ծառայություններ</p> <p>Մենք վճարում ենք որոշակի ատամնաբուժական ծառայությունների համար, ներառելով, բայց չսահմանափակելով մաքրումները, լիցքերը և պրոթեզները: Այն, ինչ մենք չենք ծածկում, հասանելի է Medi-Cal Dental ծրագրի միջոցով, որը նկարագրված է ստորև F2-ում:</p> <p>Մենք վճարում ենք որոշ ատամնաբուժական ծառայությունների համար, երբ ծառայությունը հանդիսանում է շահառուի առաջնային առողջական խնդրի հատուկ բուժման անբաժանելի մասը: Որոշ օրինակներ ներառում են ծնոտի վերականգնումը կոտրվածքից կամ վնասվածքից հետո, ատամի հանումը, որն արվել է ծնոտի քաղցկեղի ճառագայթային բուժման համար նախապատրաստվելու նպատակով, կամ երիկամների փոխպատվաստմանը նախորդող բերանի հետազոտություն:</p> <p>Որոշ ատամնաբուժական ծառայություններ, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում մաքրումներով, լիցքերով և պրոթեզներով, հասանելի են Medi-Cal Dental Program-ի կամ Fee-for-Service (վճարում ծառայության դիմաց, FFS) Medi-Cal-ի միջոցով:</p> <p>Ընդհանուր առմամբ, կանխարգելիչ ատամնաբուժական ծառայությունները (օրինակ մաքրումը, սովորական ատամնաբուժական հետազոտությունները և ատամնաբուժական ռենտգենյան հետազոտությունները) չեն ապահովագրվում Original Medicare-ի կողմից: Մենք ծածկում ենք սովորական և համապարփակ ատամնաբուժական ծառայություններ:</p> <p>Ապահովագրված ատամնաբուժական բուժգործողությունների ցանկի համար տե՛ս Բժշկական նպաստների աղյուսակի վերջում գտնվող սովորական ատամնաբուժական նպաստների աղյուսակը այս ծառայություններից օգտվելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:</p> <p>Ատամնաբուժական նպաստների բուժգործողությունների աղյուսակում թվարկված համավճարները վերաբերում են ծառայություններին միայն այն դեպքում, երբ դրանք նշանակված են ցանցային ատամնաբույժի կողմից որպես Ձեր ատամնաբուժական խնդրի համար անհրաժեշտ, համարժեք և համապատասխան բուժգործողություն:</p> <p>Ոչ բոլոր առավելությունները կարող են հարմար լինել բոլորի համար: Ձեզ համար համապատասխան խնամքը որոշելու համար Դուք պետք է ապավինեք Ձեր ցանցային ատամնաբույժին: Ատամնաբուժական մատակարարների ցանցը միայն ընդհանուր ատամնաբուժական ցանց է. ցանցում մասնագետներ չկան:</p> <p>*Ծառայությունները չեն կիրառվում ծրագրի առավելագույն սահմանաչափի նկատմամբ:</p>	<p>Տե՛ս Բժշկական նպաստների աղյուսակի վերջում գտնվող Ատամնաբուժական նպաստների բուժգործողությունների աղյուսակը՝ ապահովագրված ատամնաբուժական բուժգործողությունների ցանկի և Ձեր վճարած գումարների համար:</p>



Շառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ինչ պետք է վճարեք
 <p>Դեպրեսիայի սքրինինգ</p> <p>Մենք տարեկան վճարում ենք դեպրեսիայի մեկ սքրինինգի համար: Սքրինինգը պետք է կատարվի առաջնային խնամքի միջավայրում, որը կարող է ապահովել հետագա բուժում և/կամ ուղեգրեր:</p>	\$0
 <p>Շաքարախտի սքրինինգ</p> <p>Մենք վճարում ենք այս գնման համար (ներառյալ՝ առավոտյան առանց ուտելու գլյուկոզայի ստուգման թեստերը), եթե ունեք հետևյալ ռիսկային գործոններից որևէ մեկը.</p> <ul style="list-style-type: none"> • արյան բարձր ճնշում (հիպերտոնիա) • խոլեստերինի և տրիգլիցերիդների նորմայից շեղվող մակարդակների պատմություն (դիսլիպիդեմիա) • ճարպակալում • արյան մեջ շաքարի բարձր մակարդակների (գլյուկոզա) պատմություն <p>Թեստերը կարող են ապահովագրվել որոշ այլ դեպքերում, օրինակ, եթե Դուք ավելորդ քաշ և շաքարախտի ընտանեկան պատմություն ունեք:</p> <p>Կախված թեստի արդյունքներից, Դուք կարող եք յուրաքանչյուր 12 ամիսը մեկ շաքարախտի մինչև երկու ստուգման իրավունք ունենալ:</p>	\$0



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> Շաքարախտով հիվանդների ինքնակառավարման ուսուցում, ծառայություններ և պարագաներ</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար բոլոր այն մարդկանց, ովքեր շաքարախտ ունեն (անկախ նրանից նրանք օգտագործում են ինսուլին, թե՛ ոչ)։</p> <ul style="list-style-type: none"> • Ձեր արյան գլյուկոզայի մակարդակը վերահսկելու համար նախատեսված պարագաները, ներառյալ հետևյալը. <ul style="list-style-type: none"> ○ արյան գլյուկոզայի մոնիտոր ○ արյան գլյուկոզայի ստուգման երիզներ ○ նշտար սարքեր և նշտարներ ○ գլյուկոզայի վերահսկման լուծույթներ ստուգման երիզների և մոնիտորների ճշգրտությունը ստուգելու համար • Շաքարախտով հիվանդ մարդկանց համար, ովքեր ունեն ծանր դիաբետիկ ոտնաթաթի հիվանդություն, մենք վճարում ենք հետևյալի համար. <ul style="list-style-type: none"> ○ մեկ գույգ թերապևտիկ հատուկ ձևավորված կոշիկ (ներառյալ ներդիրները), ներառյալ հարմարեցումները, և երկու լրացուցիչ գույգ ներդիր յուրաքանչյուր օրացուցային տարի, կամ ○ մեկ գույգ խորը կոշիկ, ներառյալ հարմարեցումները, և երեք գույգ ներդիր ամեն տարի (չհաշված նման կոշիկների հետ տրամադրվող ոչ հարմարեցված շարժական ներդիրները) • Որոշ դեպքերում մենք վճարում ենք վերապատրաստման համար՝ օգնելու Ձեզ կառավարել Ձեր շաքարախտը: Հավելյալ տեղեկությունների համար դիմեք Հաճախորդների սպասարկման բաժնի: <p>Ստուգման երիզների և արյան գլյուկոզայի մոնիտորների համար նախընտրելի արտադրողը Abbott-ն է: FreeStyle® (պատրաստված Abbott-ի կողմից) ստուգման երիզները ու արյան գլյուկոզայի մոնիտորները չեն պահանջում Ձեր բժշկին նախօրոք հաստատում ստանալ (երբեմն կոչվում է «նախնական լիազորում») ծրագրից: Բոլոր մյուս արտադրողների ստուգման երիզները և արյան գլյուկոզայի մոնիտորները Ձեր բժշկից կպահանջեն նախօրոք հաստատել ծրագրից (երբեմն կոչվում է «նախնական լիազորում»)։</p>	<p>\$0</p> <p>Արյան գլյուկոզայի մոնիտորների համար տե՛ս ստորև բերված «Տեսական օգտագործման բժշկական սարքավորումներ (DME) և հարակից պարագաներ» բաժինը:</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Դուլայի ծառայություններ</p> <p>Այն անհատների համար, ովքեր հղի են, մենք վճարում ենք ինը այցի համար դուլայի հետ նախաձեռնողյան և հետձեռնողյան շրջանում, ինչպես նաև աջակցության համար ծննդաբերության ժամանակ և հետձեռնաբերական շրջանում:</p>	<p>\$0</p>
<p>Տնական օգտագործման բժշկական սարքեր (DME) և հարակից պարագաներ</p> <p>«Տնական օգտագործման բժշկական սարքավորումների (DME)» սահմանման համար ուսումնասիրեք <i>Անդամի տեղեկագրքի Գլուխ 12</i>-ը:</p> <p>Մենք ապահովագրում ենք հետևյալ պարագաները.</p> <ul style="list-style-type: none"> • անվասայլակներ, ներառյալ էլեկտրական սայլակները • հենակներ • սնուցվող ներքնակների համակարգեր • չոր ճնշման տակդիր ներքնակի համար • դիաբետիկ պարագաներ • հիվանդանոցային մահճակալներ՝ պատվիրված մատակարարի կողմից՝ տանը օգտագործելու համար • ներերակային (IV) ներարկման պոմպեր և բևեռներ • խոսքի ստեղծման սարքեր • թթվածնի սարքավորումներ և պաշարներ • հեղուկացրիչներ (Nebulizers) • քայլակներ • ստանդարտ կոր բռնակ կամ քառակուսի ձեռնափայտ և փոխարինող պարագաներ • պարանոցի հատվածը պահելու սարք (դռան վրայով) • ոսկորների խթանիչ • դիալիզի խնամքի սարքավորումներ <p>Այլ ապրանքներ կարող են ծածկվել:</p> <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում</p>	<p>\$0</p> <p>Արյան գլյուկոզայի մոնիտորներ.</p> <p>\$0 FreeStyle® արյան գլյուկոզայի մոնիտորների համար և 20% համաապահովագրություն արյան գլյուկոզայի մոնիտորների համար բոլոր մյուս արտադրողներից:</p> <p>Medicare-ի թթվածնային սարքավորումների ծածկույթի Ձեր ծախսերի բաշխումը \$0 է ամեն անգամ, երբ Դուք ստանում եք ծածկված թթվածնային սարքավորում:</p>



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ինչ պետք է վճարեք
<p>Տնական օգտագործման բժշկական սարքեր (DME) և հարակից պարագաներ (շարունակություն)</p> <p>Մենք վճարում ենք բժշկական առումով անհրաժեշտ բոլոր DME-ի համար, որոնց համար սովորաբար վճարում են Medicare-ը և Medi-Cal-ը: Եթե Ձեր տարածքում գտնվող մեր մատակարարը չունենա որոշակի ապրանքանիշ կամ արտադրող, Դուք կարող եք հարցնել նրանց, արդյոք նրանք կարող են հատուկ պատվիրել այն Ձեզ համար:</p>	



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Շտապ օգնություն</p> <p>Շտապ օգնություն նշանակում է ծառայություններ, որոնք.</p> <ul style="list-style-type: none"> • մատուցվում են մատակարարի կողմից, որը վերապատրաստվել է շտապ օգնության ծառայություններ մատուցելու համար, և • անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակի բուժման համար: <p>Բժշկական շտապ օգնությունը բժշկական վիճակ է, որն ունի ուժեղ ցավ կամ լուրջ վնասվածք: Վիճակը այնքան լուրջ է, որ եթե դրան անմիջապես բժշկական միջամտություն չցուցաբերվի, առողջապահական և բժշկական միջին մակարդակի գիտելիքների տեր որևէ անձ կարող է ենթադրել, որ այն կհանգեցնի</p> <ul style="list-style-type: none"> • լուրջ վտանգի Ձեր առողջության համար կամ Ձեր չձնված երեխայի առողջության համար, կամ • մարմնի գործառույթի լուրջ վնասի, կամ • մարմնի որևէ օրգանի կամ մասի գործունեության լուրջ խանգարման: • Հղի կնոջ դեպքում ակտիվ ծննդաբերության, երբ. <ul style="list-style-type: none"> ○ մինչև ծննդաբերությունը բավարար ժամանակ չկա, որպեսզի Ձեզ անվտանգ կերպով տեղափոխեն մեկ այլ հիվանդանոց: ○ Այլ հիվանդանոց փոխադրումը կարող է Ձեր կամ Ձեր չձնված երեխայի առողջության կամ անվտանգության համար սպառնալիք ներկայացնել: <p>*Համաշխարհային ապահովագրությունը</p> <p>Դուք ամեն տարվա համար չունեք տարեկան սահմանափակում շտապ օգնության կամ հրատապ անհրաժեշտ ծառայությունների համար Միացյալ Նահանգներից դուրս:</p> <p>*Ծառայությունները Միացյալ Նահանգներից և նրա տարածքներից դուրս չեն վերաբերում ծրագրի գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p>	<p>\$0</p> <p>Եթե Դուք շտապ օգնություն եք ստանում ցանցից դուրս գտնվող հիվանդանոցում և շտապ օգնության կայունացումից հետո ստացիոնար բուժման կարիք ունեք, Դուք պետք է վերադառնաք ցանցային հիվանդանոց, որպեսզի Ձեր խնամքի համար վճարումը շարունակվի: Դուք կարող եք մնալ ցանցից դուրս հիվանդանոցում Ձեր ստացիոնար խնամքի համար միայն այն դեպքում, եթե մեր ծրագիրը հաստատի Ձեր մնալը:</p> <p>20%</p> <p>համաապահովագրություն ամբողջ աշխարհում շտապ օգնության ծածկույթի համար (համաապահովագրությունը չի կիրառվում նույն առողջական խնդրով մեկօրյա հոսպիտալացման համար)</p>




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ընտանիքի պլանավորման ծառայությունները</p> <p>Օրենքը թույլ է տալիս ընտրել ցանկացած մատակարար՝ լինի դա ցանցի մատակարար, թե ցանցից դուրս մատակարար, ընտանիքի պլանավորման որոշակի ծառայությունների համար: Մա նշանակում է ցանկացած բժիշկ, կլինիկա, հիվանդանոց, դեղատուն կամ ընտանիքի պլանավորման ընդունարան:</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> • ընտանիքի պլանավորման հետազոտություն և բժշկական բուժում • ընտանիքի պլանավորման լաբորատոր և ախտորոշիչ թեստեր • ընտանիքի պլանավորման մեթոդներ (IUC/IUD, իմպլանտներ, ներարկումներ, հակաբեղմնավորիչ հաբեր, սպեղանի կամ օղակ) • ընտանիքի պլանավորման պարագաներ դեղատոմսով (պահպանակ, սպունգ, փրփուր, թաղանթ, դիֆրագմ, կափարիչ) • անպտղության խորհրդատվություն և ախտորոշում և հարակից ծառայություններ • սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STIs) խորհրդատվություն, թեստավորում և բուժում • ՄԻԱՎ-ի և ՉԻԱՀ-ի և ՄԻԱՎ-ի հետ կապված այլ առողջական խնդիրների խորհրդատվություն և թեստավորում • մշտական հակաբեղմնավորում (ընտանիքի պլանավորման այս մեթոդն ընտրելու համար Դուք պետք է լինեք 21 տարեկան կամ ավելի: Դուք պետք է ստորագրեք դաշնային ստերիլիզացման համաձայնության ձևը առնվազն 30 օր, բայց ոչ ավելի, քան վիրահատության օրվանից 180 օր առաջ): • գենետիկական խորհրդատվություն <p>Մենք նաև վճարում ենք ընտանիքի պլանավորման որոշ այլ ծառայությունների համար: Մակայն, Դուք պետք է օգտվեք մեր մատակարարների ցանցի մատակարարից հետևյալ ծառայությունների համար.</p> <ul style="list-style-type: none"> • անպտղության խնդիրների բուժում (Այս ծառայությունը չի ներառում հղիանալու արհեստական եղանակներ): • ՉԻԱՀ-ին և ՄԻԱՎ-ին առնչվող այլ խնդիրների բուժում • գենետիկական հետազոտություն 	<p>\$0</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> Առողջության և քաջառողջության կրթական ծրագրեր</p> <p>Մենք առաջարկում ենք բազմաթիվ ծրագրեր, որոնք կենտրոնանում են որոշակի առողջական վիճակների վրա: Մրանք ներառում են</p> <ul style="list-style-type: none"> • Առողջապահական կրթության դասընթացները, • Սննդառության կրթության դասընթացները, • Ծխելու և ծխախոտի օգտագործման դադարեցում և • Բուժքույրական թեժ գիծ <p>Ծրագրեր, որոնք կօգնեն Ձեզ առողջ մնալ: Ապահովագրված ծառայություններն ընդգրկում են</p> <p><input type="checkbox"/> Գրավոր առողջապահական կրթական նյութեր, ներառյալ տեղեկագրեր</p> <p><input type="checkbox"/> Կրթական ծրագրեր</p> <p>Կրթական ծրագրեր, որոնք ուղղված են առողջական խնդիրներին, ինչպիսիք են.</p> <ul style="list-style-type: none"> • Արյան բարձր ճնշումը • Խոլեստերինը • Ասթման • Հատուկ սննդակարգը <p>Ձեր առողջությունն ու ապրելակերպը հարստացնելու համար նախատեսված կրթական ծրագրեր, ներառյալ</p> <ul style="list-style-type: none"> • Քաշի կառավարում • Ֆիթնես • Մթերեսի կառավարում <p>Բուժքույրական խնամք 24/7</p> <p>Կարող եք ունենալ գաղտնի առցանց զրույց գրանցված բուժքրոջ հետ՝ օրը 24 ժամ: Երբ Դուք ունեք բժշկական խնդիր, մեկ զանգ կատարելով մեր անվճար թեժ գծին՝ Դուք կկարողանաք կապվել գրանցված բուժքրոջ հետ, որը կլսի Ձեր մտահոգությունները և կօգնի Ձեզ լուծում գտնել:</p> <p>Զանգահարեք 1-877-304-0504 (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:</p> <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում</p>	<p>\$0</p>



<p>Օտարություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Առողջության և քաջառողջության կրթական ծրագրեր (շարունակություն)</p> <p>SilverSneakers Ֆիթնես</p> <p>SilverSneakers-ը կարող է օգնել Ձեզ ավելի առողջ, ակտիվ կյանք վարել ֆիթնեսի և սոցիալական կապի միջոցով: Դուք ապահովագրված եք ֆիթնեսի նպաստ ստանալու համար SilverSneakers-ի միջոցով մասնակից վայրերում¹: Դուք մուտք ունեք հրահանգիչներին, ովքեր վարում են հատուկ նախագծված խմբակային վարժությունների դասեր²: Մասնակից վայրերում ամբողջ երկրում¹, դուք կարող եք մասնակցել դասերին², ինչպես նաև օգտագործել մարզասարքեր և այլ հարմարություններ: Բացի այդ, SilverSneakers FLEX®-ը հնարավորություն է տալիս ակտիվանալ ավանդական մարզասարհներից դուրս (օրինակ՝ հանգստի կենտրոններ, առևտրի կենտրոններ և գրասայգիներ): SilverSneakers-ը նաև կապակցում է Ձեզ աջակցող ցանցին և վիրտուալ դասերին SilverSneakers LIVE™, SilverSneakers On-Demand™ տեսանյութերի և մեր բջջային հավելվածի՝ SilverSneakers GO™ միջոցով: Դուք նաև մուտք եք ստանում Stitch³ տարեցների առցանց սոցիալական կայք, որտեղ կարող եք միանալ անձամբ և առցանց գործողություններին և միջոցառումներին: Սկսելու համար Ձեզ անհրաժեշտ է միայն Ձեր անձնական SilverSneakers նույնականացման (ID) համարը: Այցելեք SilverSneakers.com՝ Ձեր նպաստի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու կամ զանգահարեք 1-888-423-4632 [TTY: 711] հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 20:00 ET:</p> <p>Միշտ խոսեք Ձեր բժշկի հետ նախքան վարժությունների ծրագիր սկսելը:</p> <p>¹Մասնակից վայրերը (Participating locations, «PL») չեն պատկանում կամ շահագործվում Tivity Health, Inc.-ի կողմից: PL շինությունները և հարմարությունների օգտագործումը սահմանափակվում է PL հիմնական անդամակցության ժամկետներով և պայմաններով: Շինություններն ու հարմարությունները տարբերվում են ըստ PL-ի:</p> <p>²Անդամակցությունը ներառում է SilverSneakers-ի հրահանգչի ղեկավարությամբ խմբային ֆիթնես դասեր: Որոշ վայրեր առաջարկում են անդամների լրացուցիչ դասընթացներ: Դասերը տարբերվում են ըստ գտնվելու վայրի:</p> <p>Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում</p>	

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Առողջության և քաջառողջության կրթական ծրագրեր (շարունակություն)</p> <p>³Stitch-ը երրորդ կողմի մատակարար է և չի պատկանում կամ չի շահագործվում Tivity Health-ի կամ նրա դուստր ձեռնարկությունների կողմից: SilverSneakers-ի անդամները պետք է ունենան ինտերնետ ծառայություն Stitch ծառայությունից օգտվելու համար: Ինտերնետ ծառայության վճարները SilverSneakers-ի անդամի պատասխանատվությունն են:</p> <p>Արտակարգ իրավիճակների արձագանքման անձնական համակարգը (Personal Emergency Response System, PERS) բժշկական ասիստանտների մոնիտորինգի համակարգ է, որն ապահովում է օգնության հասանելիություն 24/7 ժամվա ընթացքում՝ ընդամենը մեկ կոճակի սեղմումով: Ձեր PERS նպաստները տրամադրվում են LifeStation®-ի կողմից և ներառում են:</p> <ul style="list-style-type: none"> • Արտակարգ իրավիճակների արձագանքման մեկ անձնական համակարգ • Տան համակարգին կամ շարժական սարքին GPS/Wi-Fi-ով միանալու ընտրություն՝ անկման հայտնաբերմամբ □ Ամսական մոնիտորինգ □ Անհրաժեշտ լիցքավորիչներ և լարեր <p>PERS-ը և ծառայություններ ստանալը սկսելու համար գանգահարեք LifeStation-ի թիմին 24/7՝ 1-855-672-3269 (TTY՝711) հեռախոսահամարով կամ այցելեք blueshieldca.com/PERS:</p> <p>*Ծառայությունները չեն վերաբերում ծրագրի՝ գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p>	



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Լսողական ծառայություններ</p> <p>Մենք վճարում ենք Ձեր մատակարարի կողմից կատարված լսողության և հավասարակշռության թեստերի համար: Այս թեստերը ցույց են տալիս, թե արդյոք Դուք բժշկական բուժման կարիք ունեք: Դրանք ապահովագրվում են որպես ամբուլատոր խնամք, երբ դրանք ստանում եք բժշկից, աուդիոլոգից կամ այլ որակավորված մատակարարից:</p> <ul style="list-style-type: none"> • Լսողության և հավասարակշռության ախտորոշիչ գնահատումները, որոնք իրականացվում են Ձեր PCP-ի կողմից որոշելու, թե արդյոք Ձեզ բժշկական բուժում է հարկավոր, ապահովագրված են որպես ամբուլատոր խնամք, երբ տրամադրվում է բժշկի, աուդիոլոգի կամ այլ որակավորված մատակարարի կողմից: • Լսողության սովորական (Medicare-ի կողմից չապահովագրված) հետազոտություններ • Լսողական սարքեր* <p>Եթե Դուք հղի եք կամ բնակվում եք ծերանոցում, մենք վճարում ենք նաև լսողական սարքերի համար, ներառյալ՝</p> <ul style="list-style-type: none"> • կադապարներ, պարագաներ և ներդիրներ • վերանորոգումներ, որոնք արժեն ավելի քան \$25 մեկ վերանորոգման համար • մարտկոցների նախնական հավաքածու • վեց այցելություն՝ ուսուցման, ճշգրտումների և տեղադրման համար նույն վաճառողի հետ լսողական սարքը ստանալուց հետո • լսողական սարքերի փորձաշրջանի վարձույթ • օժանդակ լսողական սարքեր, ոսկրային մակերեսային հաղորդունակությամբ լսողական սարքեր • լսողական սարքի հետ կապված լսողական և հետզնահատման ծառայություններ <p>*Ծառայությունները չեն վերաբերում ծրագրի Ձեր գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p>	<ul style="list-style-type: none"> • \$0 Medicare-ի կողմից ապահովագրված լսողության յուրաքանչյուր ախտորոշիչ քննության համար • \$0 լսողության յուրաքանչյուր սովորական (Medicare-ի կողմից չապահովագրված) հետազոտության համար • Ձեզ ամեն տարի կփոխհատուցվի մինչև \$2000 գումար երկու լսողական սարքերի և երկու լսողական սարքերի տեղադրման և գնահատման համար (կիրառվում է երկու ականջի համար միասին): <p>*Լսողական սարքերի ծախսերը չեն տարածվում ծրագրի առավելագույն սահմանաչափի վրա:</p> <p>Դուք կարող եք ձեռք բերել լսողական սարքեր Ձեր ընտրած մատակարարից:</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> ՄԻԱՎ-ի սքրինինգ</p> <p>Մենք վճարում ենք յուրաքանչյուր 12 ամիսը ՄԻԱՎ-ի մեկ հետազոտության նպատակով այն մարդկանց համար, ովքեր.</p> <ul style="list-style-type: none"> • խնդրում են ՄԻԱՎ-ի սքրինինգ թեստ, կամ • ՄԻԱՎ վարակի բարձր ռիսկի տակ են: <p>Հղի կանանց համար մենք վճարում ենք հղիության ընթացքում ՄԻԱՎ-ի մինչև երեք սքրինինգային թեստի համար:</p> <p>Մենք նաև վճարում ենք ՄԻԱՎ-ի լրացուցիչ ստուգման(ստուգումների) համար, երբ առաջարկվում է Ձեր մատակարարի կողմից:</p>	<p>\$0</p>
<p>Տնային առողջապահական գործակալության խնամք</p> <p>Նախքան տնային առողջապահական ծառայություններ ստանալը, բժիշկը պետք է մեզ ասի, որ դրանք Ձեզ անհրաժեշտ են, և դրանք պետք է տրամադրվեն տնային առողջապահական գործակալության կողմից: Դուք պետք է տան հետ կապված լինեք, ինչը նշանակում է, որ տնից հեռանալը մեծ ջանք է:</p> <p>Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար, և, հնարավոր է, նաև ստորև չնշված այլ ծառայությունների համար.</p> <ul style="list-style-type: none"> • Մասնաժամկետ կամ ընդհատվող հմուտ բուժքույրական և տնային առողջության աջակցության ծառայություններ (Տնային առողջության պահպանման նպաստի տակ ապահովագրվելու համար Ձեր հմուտ բուժքույրական և տնային առողջության օգնականի ծառայությունները միասին պետք է օրական 8 ժամից պակաս և շաբաթական 35 ժամ տևեն): • ֆիզիկական թերապիա, օկուպացիոն թերապիա և լոգոպեդիա • բժշկական և սոցիալական ծառայություններ • բժշկական սարքավորումներ և պարագաներ 	<p>\$0 յուրաքանչյուր ապահովագրված տնային առողջության այցելության համար</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Տնային ներարկման թերապիա</p> <p>Մեր ծրագիրը վճարում է տնային ներարկման թերապիայի համար, որը սահմանվում է որպես դեղամիջոցներ կամ կենսաբանական նյութեր, որոնք ներարկվում են երակի մեջ կամ կիրառվում են մաշկի տակ և տրամադրվում Ձեր տանը: Տնային ներարկում իրականացնելու համար անհրաժեշտ են հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> • դեղը կամ կենսաբանական նյութը, ինչպիսին է հակավիրուսային նյութը կամ իմունագլոբուլինը, • սարքավորումներ, ինչպիսիք են պոմպը, և • պարագաներ, ինչպիսիք են խողովակը կամ կաթետերը: <p>Մեր ծրագիրը ներառում է տնային ներարկման ծառայություններ, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> • մասնագիտական ծառայություններ, ներառյալ բուժքույրական ծառայություններ, որոնք տրամադրվում են Ձեր խնամքի ծրագրին համապատասխան. • անդամի վերապատրաստում և կրթություն, որոնք արդեն ներառված չեն DME նպաստում. • հեռավար մոնիտորինգ և • մոնիտորինգի ծառայություններ տնային ներարկման թերապիայի և տնային ներարկման դեղամիջոցների տրամադրման համար, որոնք տրամադրվում են տնային ներարկման թերապիայի որակավորված մատակարարի կողմից: 	<p>\$0 յուրաքանչյուր ծածկված տնային ներարկման թերապիայի այցելության համար</p>




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Մննդի առաքում տուն</p> <p>Մտացիոնար հիվանդանոցից կամ մասնագիտացված բուժքույրական հաստատությունից դուրս գրվելուց հետո մենք ծածկում ենք հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> • 22 սնունդ և 10 նախուտեստ մեկ դուրսգրման համար • Ճաշերն ու նախուտեստներն ըստ անհրաժեշտության կրաժանվեն մինչև երեք առանձին առաքումների • Ծածկույթը ներառում է միայն տարեկան երկու դուրսգրում: <p>Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Blue Shield TotalDual Plan-ի հաճախորդների սպասարկում (հեռախոսահամարները տպված են այս փաստաթղթի հետևի շապիկին):</p> <p>*Ծառայությունները չեն կիրառվում ծրագրի՝ Ձեր գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափի նկատմամբ:</p>	<p>\$0 յուրաքանչյուր ծածկված ճաշի տուն առաքման համար</p>
<p>Հոսփիսի (անբուժելի հիվանդությունների) խնամք</p> <p>Դուք իրավունք ունեք ընտրելու հոսփիս, եթե Ձեր մատակարարը և հոսփիսի բժշկական տնօրենը որոշեն, որ Դուք անբուժելի կանխատեսում ունեք: Սա նշանակում է, որ Դուք ունեք մահացու հիվանդություն և ակնկալվում է, որ Դուք կունենաք 6 ամիս կամ ավելի քիչ ապրելու համար: Դուք կարող եք բուժօգնություն ստանալ Medicare-ի կողմից վավերացված ցանկացած հոսփիս ծրագրից: Մեր ծրագիրը պետք է օգնի Ձեզ գտնել Medicare-ի կողմից հավաստագրված հոսպիսիսի ծրագրեր ծրագրի սպասարկման տարածքում: Ձեր հոսփիսի բժիշկը կարող է լինել ցանցի մատակարար կամ ցանցից դուրս մատակարար:</p> <p>Ապահովագրությամբ ծածկվող ծառայությունները ներառում են</p> <ul style="list-style-type: none"> • դեղորայք՝ ախտանշանները և ցավը բուժելու համար • կարճաժամկետ բժշկական տնային խնամքի ժամանակավոր թեթևացում • տանը մատուցվող խնամք <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում</p>	



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Հոսփիսի (անբուժելի հիվանդների) խնամք (շարունակություն)</p> <p>Հոսփիսի ծառայությունները և այն ծառայությունները, որոնք ապահովագրված են Medicare Part A-ով կամ Medicare Part B-ով, որոնք վերաբերում են Ձեր մահացու կանխատեսմանը, վճարվում են Medicare-ին:</p> <ul style="list-style-type: none"> • Լրացուցիչ տեղեկությունների համար տես այս գլխի Բաժին F-ը: <p>Ծառայությունների համար, որոնք ծածկված են մեր ծրագրով, բայց չեն փոխհատուցվում Medicare Part A-ով կամ Medicare Part B-ով.</p> <ul style="list-style-type: none"> • Մեր ծրագիրն ընդգրկում է ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Medicare Part A-ով կամ Medicare Part B-ով: Մենք ապահովագրում ենք ծառայությունները՝ անկախ այն բանից, որ դրանք վերաբերում են Ձեր մահացու կանխատեսմանը, թե ոչ: Դուք ոչինչ չեք վճարում այս ծառայությունների համար: <p>Դեղերի համար, որոնք կարող են ապահովագրվել մեր ծրագրի Medicare Part D-ի նպաստով.</p> <ul style="list-style-type: none"> • Դեղերը երբեք միաժամանակ չեն ապահովագրվում և՛ հոսփիսի և՛ մեր ծրագրի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք Անդամի տեղեկագրքի Գլուխ 5-ը: <p>Նշում. Եթե Ձեզ անհրաժեշտ է ոչ հոսփիսային խնամք, զանգահարեք Ձեր խնամքի համակարգողին և/կամ Հաճախորդների սպասարկման բաժին՝ ծառայությունները կազմակերպելու համար: Ոչ հոսփիսային խնամքն այն խնամքն է, որը կապված չէ Ձեր մահացու կանխատեսման հետ:</p> <p>Մեր ծրագիրը ներառում է հոսփիսի խորհրդատվական ծառայությունները (միայն մեկ անգամ) մահացու հիվանդ անդամի համար, ով չի ընտրել հոսփիսի նպաստը:</p>	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> Պատվաստումներ</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> • թոքաբորբի պատվաստանյութ • գրիպի դեմ պատվաստումներ, գրիպի յուրաքանչյուր սեզոնը մեկ անգամ աշնանը և ձմռանը, բժշկական անհրաժեշտության դեպքում գրիպի դեմ լրացուցիչ պատվաստումներ • հեպատիտ B-ի դեմ պատվաստում, եթե Դուք ունեք հեպատիտ B-ով հիվանդանալու բարձր կամ միջանկյալ ռիսկ • COVID-19-ի դեմ պատվաստանյութեր • այլ պատվաստանյութեր, եթե Դուք վտանգի տակ եք, և դրանք համապատասխանում են Medicare Part B-ի ծածկույթի կանոններին <p>Մենք վճարում ենք այլ պատվաստանյութերի համար, որոնք համապատասխանում են Medicare Part D-ի ծածկույթի կանոններին: Տե՛ս ձեր <i>Անդամի տեղեկագրքի</i> Գլուխ 6-ը՝ հավելյալ տեղեկություններ ստանալու համար:</p> <p>Մենք նաև վճարում ենք մեծահասակների համար նախատեսված բոլոր պատվաստումների համար, ինչպես առաջարկվում է Իմունականիսարգելման պրակտիկայի խորհրդատվական կոմիտեի (ACIP) կողմից:</p>	<p>\$0 Medicare Part B-ով ծածկված պատվաստումների համար</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ստացիոնար հիվանդանոցային խնամք</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների և այլ բժշկական անհրաժեշտ ծառայությունների համար, որոնք նշված չեն այստեղ.</p> <ul style="list-style-type: none"> • կիսաանձնական սենյակ (կամ բժշկական անհրաժեշտության դեպքում առանձնասենյակ) • սնունդ, ներառյալ հատուկ սննդակարգեր • կանոնավոր բուժքույրական ծառայություններ • հատուկ խնամքի բաժանմունքների ծախսերը, ինչպիսիք են ինտենսիվ խնամքը կամ կորոնար խնամքի բաժանմունքները • դեղորայք և դեղամիջոցներ • լաբորատոր թեստեր • ռենտգենյան ճառագայթներ և այլ ռադիոլոգիական ծառայություններ • անհրաժեշտ վիրաբուժական և բժշկական պարագաներ • սարքեր, ինչպիսիք են հաշմանդամի սայլակները • վիրաբուժական և վերականգնման սենյակի ծառայություններ • ֆիզիկական, մասնագիտական և խոսքի թերապիա • թմրամիջոցների չարաշահման ստացիոնար ծառայություններ • որոշ դեպքերում փոխպատվաստման հետևյալ տեսակները. եղջերաթաղանթ, երիկամ, երիկամ/ենթաստամոքսային գեղձ, սիրտ, լյարդ, թոքեր, սիրտ/թոքեր, ոսկրածուծ, ցողունային բջիջ և աղիքային/մուլտիվիսցերալ: <p>Եթե փոխպատվաստման կարիք ունեք, Medicare-ի կողմից հաստատված փոխպատվաստման կենտրոնը կվերանայի Ձեր գործը և կորոշի, արդյոք Դուք փոխպատվաստման թեկնածու եք: Տրանսպլանտների մատակարարները կարող են լինել տեղական կամ սպասարկման տարածքից դուրս: Եթե տեղական փոխպատվաստման մատակարարները պատրաստ են ընդունել Medicare-ի դրույքաչափը, ապա Դուք կարող եք ստանալ Ձեր</p> <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում</p>	<p>\$0</p> <p>Դուք պետք է հաստատում ստանաք մեր ծրագրից՝ ստացիոնար բուժօգնություն ստանալու համար ցանցից դուրս գտնվող հիվանդանոցում, երբ Ձեր արտակարգ իրավիճակները կայունացվեն:</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ստացիոնար հիվանդանոցային խնամք</p> <p>փոխպատվաստման ծառայությունները տեղական կամ Ձեր համայնքի խնամքի օրինակից դուրս: Եթե մեր ծրագիրը տրամադրում է փոխպատվաստման ծառայություններ մեր համայնքի խնամքի օրինակից դուրս, և Դուք ընտրում եք Ձեր փոխպատվաստումն այնտեղ իրականացնել, մենք կազմակերպում ենք կամ վճարում ենք Ձեր և մեկ այլ անձի բնակության և ճանապարհորդության ծախսերը: †</p> <ul style="list-style-type: none"> • արյուն, ներառյալ պահեստավորում և օգտագործում • բժշկի ծառայություններ <p>Նշում. ստացիոնար հիվանդ լինելու համար Ձեր մատակարարը պետք է հրաման գրի Ձեզ պաշտոնապես որպես հիվանդանոցի ստացիոնար հիվանդ ընդունելու համար: Նույնիսկ եթե գիշերը մնաք հիվանդանոցում, Դուք դեռ կարող եք համարվել «ամբուլատոր հիվանդ»: Եթե վստահ չեք, արդյոք ստացիոնար կամ ամբուլատոր հիվանդ եք, պետք է հարցնեք հիվանդանոցի անձնակազմին:</p> <p>Դուք կարող եք նաև լրացուցիչ տեղեկություններ գտնել Medicare-ի տեղեկատվական թերթիկում, որը կոչվում է «Դուք հիվանդանոցի ստացիոնար կամ ամբուլատոր հիվանդ եք: Եթե ունեք Medicare, հարցրե՛ք»: Այս տեղեկատվական թերթիկը հասանելի է համացանցում www.medicare.gov/sites/default/files/2021-10/11435-Inpatient-or-Outpatient.pdf կամ զանգահարելով 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով: Այս հեռախոսահամարներով կարող եք զանգահարել անվճար՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:</p> <p>†Փոխպատվաստումները ապահովագրվում են միայն այն դեպքում, եթե Ձեր բժիշկը կամ ցանցի այլ մատակարարը նախապես հաստատում է մեզնից (երբեմն կոչվում է «նախնական լիազորում»):</p>	



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ստացիոնար ծառայություններ հոգեբուժարանում</p> <p>Մենք վճարում ենք հոգեկան առողջության պահպանման ծառայությունների համար, որոնք պահանջում են հիվանդանոցում մնալ:</p> <ul style="list-style-type: none"> • Եթե Ձեզ անհրաժեշտ է ստացիոնար ծառայություններ անկախ հոգեբուժարանում, մենք վճարում ենք առաջին 190 օրվա համար: Դրանից հետո տեղական վարչաշրջանի հոգեկան առողջության գործակալությունը վճարում է բժշկական առումով անհրաժեշտ ստացիոնար հոգեբուժական ծառայությունների համար: 190 օրից ավելի խնամքի թույլտվությունը համաձայնեցվում է շրջանի հոգեկան առողջության տեղական գործակալության հետ: <ul style="list-style-type: none"> ○ 190-օրյա սահմանաչափը չի տարածվում ընդհանուր հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում մատուցվող հոգեկան առողջության ստացիոնար ծառայությունների վրա: • Եթե Դուք 65 տարեկան կամ ավելի բարձր եք, մենք վճարում ենք հոգեկան հիվանդությունների ինստիտուտում (IMD) ստացած ծառայությունների համար: 	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Հիվանդանոցում մնալը. Ապահովագրված ծառայություններ հիվանդանոցում կամ հնուտ բուժքույրական հաստատությունում (SNF) ոչ ապահովագրված ստացիոնարում գտնվելու ընթացքում</p> <p>Մենք չենք վճարում Ձեր ստացիոնարում մնալու համար, եթե Դուք օգտագործել եք Ձեր ամբողջ ստացիոնար նպաստը կամ եթե մնալը ողջամիտ և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չէ:</p> <p>Սակայն, որոշ իրավիճակներում, երբ ստացիոնար ինամքը ապահովագրված չէ, մենք կարող ենք վճարել այն ծառայությունների համար, որոնք Դուք ստանում եք հիվանդանոցում կամ բուժքույրական հաստատությունում գտնվելու ժամանակ: Հավելյալ տեղեկությունների համար դիմեք Հաճախորդների սպասարկման բաժին:</p> <p>Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար, և, հնարավոր է, նաև ստորև չնշված այլ ծառայությունների համար.</p> <ul style="list-style-type: none"> • բժշկի ծառայություններ • ախտորոշիչ թեստեր, ինչպիսիք են լաբորատոր թեստերը • ռենտգեն, ռադիում և իզոտոպային թերապիա, ներառյալ տեխնիկական նյութերը և ծառայությունները • վիրաբուժական վիրակապեր • բեկակալներ, գիպսային վիրակապ և այլ սարքեր, որոնք օգտագործվում են կոտրվածքների և տեղահանումների համար: • պրոթեզավորում և օրթեզային սարքեր, բացառությամբ ատամնաբուժական, ներառյալ նման սարքերի փոխարինումը կամ վերանորոգումը: Մրանք սարքեր են, որոնք փոխարինում են բոլորը կամ դրանց մի մասը. <ul style="list-style-type: none"> ○ մարմնի ներքին օրգան (ներառյալ հարակից հյուսվածք), կամ ○ մարմնի չաշխատող կամ վնասված ներքին օրգանի ֆունկցիան: • ոտքերի, ձեռքերի, մեջքի և պարանոցի բրեկետներ, հիմքեր և արհեստական ոտքեր, ձեռքեր և աչքեր: Սա ներառում է ճշգրտումներ, վերանորոգումներ և փոխարինումներ, որոնք անհրաժեշտ են կոտրվելու, մաշվածության, կորստի կամ Ձեր առողջական խնդրի փոփոխության պատճառով • ֆիզիոթերապիա լոզոպեդիա և օկուպացիոն թերապիա 	<p>\$0</p>



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Երիկամային հիվանդության ծառայություններ և պարագաներ</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> • Երիկամային հիվանդությունների կրթական ծառայություններ՝ երիկամների խնամք սովորեցնելու և Ձեր խնամքի վերաբերյալ լավ որոշումներ կայացնելու համար: Դուք պետք է ունենաք երիկամների քրոնիկական հիվանդություն IV փուլ, և Ձեր բժիշկը պետք է ուղղորդի Ձեզ: Մենք ծածկում ենք երիկամների հիվանդության կրթական ծառայությունների մինչև վեց սեանս: • Ամբուլատոր դիալիզի բուժում, ներառյալ դիալիզի բուժումը, երբ ժամանակավորապես դուրս եք գալիս ծառայության տարածքից, ինչպես բացատրված է Ձեր <i>Անդամի տեղեկագրի 3-րդ գլխում</i>, կամ երբ այս ծառայության Ձեր մատակարարը ժամանակավորապես անհասանելի է կամ մատչելի չէ: • Ստացիոնար դիալիզի բուժում, եթե Դուք որպես ստացիոնար ընդունված եք հիվանդանոց հատուկ խնամքի համար: • Ինքնադիալիզի ուսուցում, ներառյալ ուսուցում Ձեր և բոլոր նրանց համար, ովքեր Ձեզ օգնում են Ձեր տնային դիալիզի բուժման հարցում: • Տնային դիալիզի սարքավորումներ և պարագաներ: • Որոշ տնային աջակցության ծառայություններ, ինչպես օրինակ՝ դիալիզի վերապատրաստված աշխատողների կողմից անհրաժեշտ այցելությունները՝ Ձեր տնային դիալիզի ընթացքը ստուգելու, արտակարգ իրավիճակներում օգնելու և Ձեր դիալիզի սարքավորումներն ու ջրամատակարարումը ստուգելու համար: <p>Ձեր Medicare Part B-ի դեղերի նպաստը վճարում է դիալիզի որոշ դեղերի համար: Տեղեկությունների համար ուսումնասիրեք «Medicare Part B-ի դեղատոմսով դեղերն» այս աղյուսակում:</p>	<p>\$0</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> Թոքերի քաղցկեղի սքրինինգ</p> <p>Մեր ծրագիրը վճարում է թոքերի քաղցկեղի գննման համար յուրաքանչյուր 12 ամիսը մեկ, եթե Դուք՝</p> <ul style="list-style-type: none"> • 50-77 տարեկան եք, և • ունեք խորհրդատվություն և որոշումներ կայացնելու ընդհանուր այցելություն Ձեր բժշկի կամ այլ որակավորված մատակարարի հետ, և • ծխել եք օրական առնվազն 1 տուփ 20 տարի շարունակ՝ առանց թոքերի քաղցկեղի նշանների կամ ախտանիշների, կամ այժմ ծխում եք կամ թողել եք ծխելը վերջին 15 տարվա ընթացքում: <p>Առաջին գննումից հետո մեր ծրագիրը յուրաքանչյուր տարի վճարում է հերթական գննության համար Ձեր բժշկի կամ այլ որակավորված մատակարարի գրավոր հրահանգով:</p>	<p>\$0</p>
<p> Բժշկական սննդառության թերապիա</p> <p>Այս նպաստը նախատեսված է առանց դիալիզի շաքարախտի կամ երիկամների հիվանդություն ունեցող մարդկանց համար: Այն նաև նախատեսված է երիկամի փոխպատվաստումից հետո, երբ ուղղորդված է Ձեր բժշկի կողմից:</p> <p>Մենք վճարում ենք երեք ժամ անհատական խորհրդատվական ծառայությունների համար Ձեր առաջին տարվա ընթացքում, երբ Դուք ստանում եք բժշկական սննդառության թերապիայի ծառայություններ Medicare-ի շրջանակներում: Բժշկական տեսանկյունից անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք հաստատել լրացուցիչ ծառայություններ:</p> <p>Դրանից հետո ամեն տարի մենք վճարում ենք անհատական խորհրդատվական ծառայությունների երկու ժամ: Եթե Ձեր առողջական խնդիրը, բուժումը կամ ախտորոշումը փոխվի, Դուք կարող եք ավելի շատ ժամեր ստանալ բժշկի ուղղորդմամբ: Բժիշկը պետք է նշանակի այս ծառայությունները և յուրաքանչյուր տարի թարմացնի ուղեգիրը , եթե հաջորդ օրացուցային տարում բուժման կարիք ունեք: Բժշկական տեսանկյունից անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք հաստատել լրացուցիչ ծառայություններ:</p>	<p>\$0</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> Medicare-ի շաքարախտի կանխարգելման ծրագիր (MDPP)</p> <p>Մեր ծրագիրը վճարում է MDPP ծառայությունների համար: MDPP ծրագիրը նախատեսված է օգնելու Ձեզ բարելավել առողջ վարքագիծը: Այն տրամադրում է գործնական ուսուցում հետևյալում.</p> <ul style="list-style-type: none"> • երկարաժամկետ սննդակարգի փոփոխություն, և • ֆիզիկական ակտիվության բարձրացում, և • քաշի կորստի և առողջ ապրելակերպի պահպանման ուղիներ. 	<p>\$0</p>
<p>Medicare Part B-ում ներառված դեղատոմսով դեղեր</p> <p>Այս դեղերը ապահովագրված են Medicare-ի Part B-ի ներքո: Մեր ծրագիրը վճարում է հետևյալ դեղերի համար՝</p> <ul style="list-style-type: none"> • դեղեր, որոնք սովորաբար ինքներդ չեք ընդունում և դրանք ներարկվում կամ սրսկվում են, մինչ Դուք ստանում եք բժշկի, հիվանդանոցի ամբուլատոր կամ ամբուլատոր վիրաբուժության կենտրոնի ծառայությունները • ինսուլին, որը ներարկվում է երկարատև օգտագործման բժշկական սարքավորումների միջոցով (օրինակ բժշկական առումով անհրաժեշտ ինսուլինի պոմպը) • այլ դեղամիջոցներ, որոնք Դուք ընդունում եք՝ օգտագործելով երկարատև բժշկական սարքավորումները (օրինակ՝ հեղուկացրիչները), որոնք թույլատրելի է մեր ծրագիրը • մակարդման գործոններ, որոնք Դուք ինքներդ Ձեզ տալիս եք ներարկման միջոցով, եթե ունեք հեմոֆիլիա • իմունոսուպրեսիվ դեղամիջոցներ, եթե Դուք անդամագրված եք եղել Medicare Part A-ին օրգանի փոխապատվաստման ժամանակ • օստեոպորոզի դեղամիջոցներ, որոնք ներարկվում են: Մենք վճարում ենք այս դեղերի համար, եթե Դուք տանն եք, ունեք ոսկորների կոտրվածք, որը բժիշկը հավաստում է, որ կապված է հետաշտանադադարի օստեոպորոզի հետ և չեք կարող ինքներդ ներարկել դեղը: • հակազեներ • որոշ բերանով ընդունվող հակաքաղցկեղային և հակաարտիստոնոցային դեղամիջոցներ <p>Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում</p>	<p>\$0 (Խնդրում ենք Ձեր բժշկին կամ դեղատանը տրամադրել և՛ Ձեր Blue Shield TotalDual Plan-ի նույնականացման քարտը, և՛ Ձեր Medi-Cal նպաստների նույնականացման քարտը:)</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Medicare Part B-ում ներառված դեղատոմսով դեղեր (շարունակություն)</p> <ul style="list-style-type: none"> • որոշ դեղամիջոցներ տնային դիալիզի համար, ներառյալ հեպարինը, հեպարինի հակաթույնը (եթե բժշկական անհրաժեշտություն կա), տեղային անզգայացնող միջոցները և էրիթրոպոետը խթանող միջոցները (օրինակ՝ Epogen®, Procrit®, Epoetin Alfa, Aranesp® կամ Darbepoetin Alfa) • IV իմունագլոբուլին առաջնային իմունային անբավարարության հիվանդությունների տնային բուժման համար <p>Մենք նաև ապահովագրում ենք որոշ պատվաստանյութեր՝ մեր Medicare Part B-ի և Medicare Part D-ի դեղատոմսով դեղերի նպաստների ներքո:</p> <p><i>Ձեր Անդամի տեղեկագրքի Գլուխ 5-ը</i> բացատրում է մեր ամբուլատոր դեղատոմսով դեղերի նպաստը: Այն բացատրում է կանոնները, որոնց պետք է հետևեք, որպեսզի դեղատոմսերը ապահովագրվեն:</p> <p><i>Ձեր Անդամի տեղեկագրքի Գլուխ 6-ը</i> բացատրում է, թե ինչ եք վճարում Ձեր ամբուլատոր դեղատոմսով դեղերի համար մեր ծրագրի միջոցով:</p>	



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ծերանոցի խնամք</p> <p>Ծերանոցն (NF) այն վայրն է, որը խնամք է տրամադրում այն մարդկանց, ովքեր չեն կարող տանը խնամք ստանալ, բայց հիվանդանոցում գտնվելու կարիք չունեն:</p> <p>Ծառայությունները, որոնց համար մենք վճարում ենք, ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> • կիսաանձնական սենյակ (կամ բժշկական անհրաժեշտության դեպքում առանձնասենյակ) • սնունդ, ներառյալ հատուկ սննդակարգեր • բուժքույրական ծառայություններ • ֆիզիկական թերապիա, օկուպացիոն թերապիա և լոգոպեդիա • շնչուղիների բուժում • դեղեր, որոնք Ձեզ տրվել են որպես Ձեր խնամքի ծրագրի մաս: (Մա ներառում է այնպիսի նյութեր, որոնք բնականաբար առկա են մարմնում, ինչպիսիք են արյան մակարդման գործոնները): • արյուն, ներառյալ պահեստավորում և օգտագործում • բժշկական և վիրաբուժական պարագաներ, որոնք սովորաբար տրվում են բուժքույրական հաստատությունների կողմից • լաբորատոր թեստեր, որոնք սովորաբար տրվում են բուժքույրական հաստատությունների կողմից • ռենտգենյան ճառագայթները և ռադիոլոգիայի այլ ծառայությունները սովորաբար մատուցվում են ծերանոցների կողմից • սարքերի օգտագործումը, ինչպիսիք են հաշմանդամի սայլակները, որոնք սովորաբար տրամադրվում են ծերանոցների կողմից • բժիշկ/գործնական մասնագետի ծառայություններ • տևական օգտագործման բժշկական սարքեր • ատամնաբուժական ծառայություններ, ներառյալ պրոթեզները • տեսողության նպաստներ <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում</p>	<p>\$0</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ծերանոցի խնամք (շարունակություն)</p> <ul style="list-style-type: none"> • լսողության հետազոտություններ • խիրոպրակտիկ խնամք • օրթոպեդիկ ծառայություններ <p>Դուք սովորաբար ստանում եք Ձեր խնամքը ցանցային հաստատություններից: Սակայն, Դուք կարող եք Ձեր խնամքը ստանալ մեր ցանցում չգտնվող հաստատությունից: Դուք կարող եք խնամք ստանալ հետևյալ վայրերից, եթե նրանք ընդունեն մեր ծրագրի վճարման գումարները.</p> <ul style="list-style-type: none"> • ծերանոց կամ շարունակական խնամքի կենսաթոշակային համայնք, որտեղ Դուք ապրում էիք հիվանդանոց գնալուց անմիջապես առաջ (քանի դեռ այն տրամադրում է ծերանոցի խնամք): • Ծերանոց, որտեղ Ձեր ամուսինը/կինը կամ գուգրնկերն ապրում է այն պահին, երբ Դուք հեռանում եք հիվանդանոցից: 	
<p> Ճարպակալության սքրինինգ և թերապիա՝ քաշը ցածր պահելու համար</p> <p>Եթե Ձեր մարմնի զանգվածի ինդեքսը 30 կամ ավելի է, մենք վճարում ենք խորհրդատվության համար, որը կօգնի Ձեզ նիհարել: Դուք պետք է խորհրդատվություն ստանաք առաջնային խնամքի միջավայրում: Այդ կերպ այն կարելի է կառավարել Ձեր ամբողջական կանխարգելման ծրագրով: Զրուցեք Ձեր առաջնային խնամքի մատակարարի հետ՝ հավելյալ տեղեկություններ ստանալու համար:</p>	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Օփիոիդների բուժման ծրագրի (OTP) ծառայություններ</p> <p>Մեր ծրագիրը վճարում է հետևյալ ծառայությունների համար՝ օփիոիդների օգտագործման խանգարումը բուժելու համար (OUD).</p> <ul style="list-style-type: none"> • ընդունման գործունեություն • պարբերական գնահատականներ • FDA-ի կողմից հաստատված դեղամիջոցներ և, եթե կիրառելի է, կառավարել և Ձեզ տրամադրել այդ դեղերը • թմրանյութերի օգտագործման խորհրդատվություն • անհատական և խմբակային թերապիա • Ձեր օրգանիզմում թմրամիջոցների կամ քիմիական նյութերի հայտնաբերման ստուգում (տոքսիկոլոգիական ստուգում) 	<p>\$0</p>
<p>Ամբուլատոր ախտորոշիչ թեստեր և թերապևտիկ ծառայություններ և պարագաներ</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների և այլ բժշկական անհրաժեշտ ծառայությունների համար, որոնք նշված չեն այստեղ.</p> <ul style="list-style-type: none"> • ռենտգեններ • ճառագայթային (ռադիումի և իզոտոպի) թերապիա, ներառյալ տեխնիկական նյութերը և պարագաները • վիրաբուժական պարագաներ, ինչպիսիք են վիրակապերը • բեկակալներ, գիպսային վիրակապ և այլ սարքեր, որոնք օգտագործվում են կոտրվածքների և հոդախախտումների համար: • լաբորատոր թեստեր • արյուն, ներառյալ պահեստավորում և օգտագործում • այլ ամբուլատոր ախտորոշիչ թեստեր <p>Ծառայությունների համար կարող են կիրառվել թույլտվության կանոններ:</p> <p>Դուք պետք է խոսեք Ձեր մատակարարի հետ և ուղեգիր ստանաք:</p>	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Հիվանդանոցային ամբուլատոր ծառայություններ</p> <p>Մենք վճարում ենք բժշկական անհրաժեշտ ծառայությունների համար, որոնք Դուք ստանում եք հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքում հիվանդության կամ վնասվածքի ախտորոշման կամ բուժման համար, ինչպիսիք են</p> <ul style="list-style-type: none"> • Ծառայություններ շտապ օգնության բաժանմունքում կամ ամբուլատոր կլինիկայում, ինչպիսիք են ամբուլատոր վիրաբուժությունը կամ հսկման ծառայությունները <ul style="list-style-type: none"> ○ Հսկման ծառայություններն օգնում են Ձեր բժշկին իմանալ, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է հիվանդանոց ընդունվել որպես «ստացիոնար»: ○ Երբեմն Դուք կարող եք գիշերը հիվանդանոցում լինել և դեռ «ամբուլատոր» համարվել: ○ Դուք կարող եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ ստացիոնար կամ ամբուլատոր լինելու մասին այս տեղեկատվական թերթիկում. www.medicare.gov/sites/default/files/2021-10/11435-Inpatient-or-Outpatient.pdf: • Լաբորատոր և ախտորոշիչ թեստեր, որոնք վճարվում են հիվանդանոցի կողմից • Հոգեկան առողջության խնամք, ներառյալ խնամքը մասնակի հոսպիտալացման ծրագրում, եթե բժիշկը հավաստի, որ առանց դրա ստացիոնար բուժումը անհրաժեշտ կլինի • Ռենտգենյան ճառագայթներ և ռադիոլոգիայի այլ ծառայություններ, որոնք վճարվում են հիվանդանոցի կողմից • Բժշկական պարագաներ, ինչպիսիք են բեկակալները և գիպսերը • Կանխարգելիչ գնումներ և ծառայություններ, որոնք թվարկված են նպաստների աղյուսակում • Որոշ դեղեր, որոնք Դուք ինքներդ Ձեզ չեք կարող տալ 	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ամբուլատոր հոգեկան առողջության խնամք</p> <p>Մենք վճարում ենք հոգեկան առողջության ծառայությունների համար, որոնք տրամադրվում են հետևյալի կողմից</p> <ul style="list-style-type: none"> • նահանգի կողմից արտոնագրված հոգեբույժ կամ բժիշկ • կլինիկական հոգեբան • կլինիկական սոցիալական աշխատող • կլինիկական բուժքույր մասնագետ • լիցենզավորված պրոֆեսիոնալ խորհրդատու (LPC) • ամուսնության և ընտանեկան լիցենզավորված թերապևտ (LMFT) • գրանցված բուժքույր՝ ընդլայնված պրակտիկայով (NP) • բժշկի օգնական (PA) • Medicare-ի որակավորում ունեցող հոգեկան առողջության խնամքի ցանկացած այլ մասնագետ, ինչպես թույլատրվում է նահանգային գործող օրենքներով <p>Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար, և, հնարավոր է, նաև ստորև չնշված այլ ծառայությունների համար.</p> <ul style="list-style-type: none"> • Կլինիկական ծառայություններ • Ցերեկային բուժում • Հոգեւոցիալական վերականգնողական ծառայություններ • Մասնակի հոսպիտալացում կամ ինտենսիվ ամբուլատոր ծրագրեր • Անհատական և խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում • Հոգեբանական ստուգում՝ հոգեկան առողջության վիճակի գնահատման համար, երբ կլինիկական տեսանկյունից ախտորոշվել է • Ամբուլատոր ծառայություններ, որոնք նպատակ ունեն հսկել դեղով բուժումը • Ամբուլատոր լաբորատոր անալիզներ, դեղեր, պաշարներ և հավելումներ • Հոգեբուժական խորհրդատվություն 	<p>\$0</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Ամբուլատոր վերականգնողական ծառայություններ</p> <p>Մենք վճարում ենք ֆիզիոթերապիայի, օկուպացիոն թերապիայի և լոգոպեդիայի համար:</p> <p>Դուք կարող եք ստանալ ամբուլատոր վերականգնողական ծառայություններ հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքներից, անկախ թերապևտի ընդունարաններից, համապարփակ ամբուլատոր վերականգնողական հաստատություններից (CORFs) և այլ հաստատություններից:</p>	<p>\$0</p>
<p>Թմրամիջոցների չարաշահման ամբուլատոր ծառայություններ</p> <p>Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար, և, հնարավոր է, նաև ստորև չնշված այլ ծառայությունների համար.</p> <ul style="list-style-type: none"> • ալկոհոլի չարաշահման հետ կապված սքրինինգ և խորհրդատվություն • թմրամիջոցների չարաշահման հետ կապված բուժում • խմբային կամ անհատական խորհրդատվություն որակավորված կլինիկայի կողմից • միջին սրության դետոքսիկացիա թմրամոլության ստացիոնար բուժման ծրագրի ընթացքում • ալկոհոլի և/կամ թմրանյութերի հետ կապված բուժման ծառայություններ ինտենսիվ ամբուլատոր բուժման կենտրոնում • բուժում՝ երկարատև արձակման դեղամիջոց Naltrexone (vivitrol)-ով 	<p>\$0 յուրաքանչյուր անհատական կամ խմբակային թերապիայի այցելության համար</p>
<p>Ամբուլատոր վիրահատություն</p> <p>Մենք վճարում ենք ամբուլատոր վիրաբուժության և ծառայությունների համար հիվանդանոցային ամբուլատոր հաստատություններում և ամբուլատոր վիրաբուժական կենտրոններում:</p>	<p>\$0 ամբուլատոր վիրաբուժական կենտրոն կամ ամբուլատոր հիվանդանոցային հաստատություն յուրաքանչյուր այցելության համար:</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Առանց դեղատոմսի վաճառվող (Over-the-Counter, OTC) պարագաներ</p> <p>Դուք \$210 գումարի չափով եռամսյակային նպաստ ստանալու իրավունք ունեք՝ OTC դեղերի և պարագաների համար, որոնք նշված են OTC կատալոգում: Այս նպաստի տակ են մտնում են, օրինակ, ասպիրինը, վիտամինները, մրսածության և հազի պատրաստուկները և վիրակապերը: Այնպիսի պարագաներ, ինչպիսիք են կոսմետիկան և սննդային հավելումները, չեն ներառվում այս նպաստի մեջ:</p> <p>OTC կատալոգը և պատվիրման հրահանգները հասանելի են առցանց՝ blueshieldca.com/medicareOTC կայքում: Դուք կարող եք ապրանքներ պատվիրել հեռախոսով (888) 628-2770 [TTY՝ 711] հեռախոսահամարով, Երկուշաբթիից ուրբաթ, 9:00-ից 17:00 կամ առցանց՝ blueshieldca.com/medicareOTC կայքում: Պատվերները Ձեզ կառաքվեն առանց հավելավճարի: Առաքման համար խնդրում ենք նախատեսել մոտ 14 աշխատանքային օր:</p> <p>Այս նպաստն ուժի մեջ է մտնում յուրաքանչյուր եռամսյակի առաջին օրը (հունվարի 1, ապրիլի 1, հուլիսի 1 և հոկտեմբերի 1): Դուք կարող եք կատարել երկու պատվեր յուրաքանչյուր եռամսյակում և չեք կարող Ձեր չօգտագործված նպաստը տեղափոխել հաջորդ եռամսյակ: Որոշ սահմանափակումներ են կիրառվում: Լրացուցիչ տեղեկությունները կարող եք գտնել OTC կատալոգի ցանկում:</p> <p>*Ծառայությունները չեն վերաբերում ծրագրի՝ Ձեր գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p>	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Մասնակի հոսպիտալացման ծառայություններ</p> <p>Մասնակի հոսպիտալացումը ակտիվ հոգեբուժական բուժման համակարգված ծրագիր է: Այն առաջարկվում է որպես հիվանդանոցային ամբուլատոր ծառայություն կամ համայնքային հոգեկան առողջության կենտրոնի կողմից: Դա ավելի ինտենսիվ է, քան այն խնամքը, որը Դուք ստանում եք Ձեր բժշկի կամ թերապևտի ընդունարանում: Դա կարող է օգնել Ձեզ խուսափել հիվանդանոցում մնալուց:</p> <p>Ինտենսիվ ամբուլատոր ծառայությունը վարքագծային (հոգեկան) առողջության ակտիվ բուժման կառուցվածքային ծրագիր է, որը տրամադրվում է որպես հիվանդանոցային ամբուլատոր ծառայություն, հոգեկան առողջության համայնքային կենտրոն, դաշնային որակավորված առողջապահան կենտրոն կամ քաղաքային առողջապահական կլինիկա, որն ավելի ինտենսիվ է, քան այն խնամքը, որը Դուք ստանում եք Ձեր բժշկի կամ թերապևտի ընդունարանում, բայց ավելի քիչ ինտենսիվ է, քան մասնակի հոսպիտալացումը:</p> <p>Նշում. քանի որ մեր ցանցում չկան համայնքային հոգեկան առողջության կենտրոններ, մենք մասնակի հոսպիտալացումը ծածկում ենք միայն որպես հիվանդանոցային ամբուլատոր ծառայություն:</p>	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Բժշկի/մատակարարի ծառայություններ, ներառյալ այցելություններ բժշկի ընդունարան</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> • բժշկական առումով անհրաժեշտ առողջապահական կամ վիրաբուժական ծառայություններ, որոնք տրամադրվում են այնպիսի վայրերում, ինչպիսիք են. • բժշկի ընդունարան • հավաստագրված ամբուլատոր վիրաբուժական կենտրոն • հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունք • խորհրդատվություն, ախտորոշում և բուժում մասնագետի կողմից • Հիմնական լսողության և հավասարակշռության քննություններ, որոնք տրվում են Ձեր առաջնային խնամքի մատակարարի կողմից, եթե Ձեր բժիշկը հանձնարարել է նրանց պարզել, թե արդյոք բուժման կարիք ունեք • Որոշ հեռաառողջապահական ծառայություններ, ներառյալ բժիշկների ծառայությունները ոչ արտակարգ իրավիճակների բուժման համար, ինչպիսիք են մրսաձուրթի և գրիպի ախտանիշները, ակերգիաները, բրոնխիտը, շնչառական վարակները, սինուսների հետ կապված խնդիրներ, ցան, աչքի վարակ, միգրեն և այլն: <ul style="list-style-type: none"> ○ Դուք ունեք այս ծառայությունները ստանալու հնարավորություն՝ անձամբ այցելության կամ հեռաառողջապահության միջոցով: Եթե Դուք ընտրում եք ստանալ այս ծառայություններից մեկը հեռաառողջության միջոցով, Դուք պետք է օգտագործեք ցանցի մատակարար, որն առաջարկում է ծառայությունը հեռաառողջության միջոցով: ○ Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք «Լրացուցիչ հեռաառողջապահական ծառայություններ» բաժինը Բժշկական նպաստների աղյուսակում: <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում</p>	<p>\$0</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Բժշկի/մատակարարի ծառայություններ, ներառյալ այցելությունները բժշկի ընդունարան (շարունակություն)</p> <ul style="list-style-type: none"> • Հեռաառողջապահական ծառայություններ երիկամային հիվանդության վերջնական փուլի (ESRD) ամսական այցերի համար տնային դիալիզի անդամների համար հիվանդանոցային կամ կրիտիկական հասանելիության հիվանդանոցում գործող երիկամային դիալիզի կենտրոնում, երիկամային դիալիզի հաստատությունում կամ տանը: • հեռաառողջապահական ծառայություններ՝ ինսուլինի ախտանիշները ախտորոշելու, գնահատելու կամ բուժելու համար • հեռաառողջապահական ծառայություններ թմրամիջոցների օգտագործման խանգարումներով կամ հոգեկան առողջության հետ կապված խանգարումներով անդամների համար • Հեռաառողջապահական ծառայություններ հոգեկան առողջության խանգարումների ախտորոշման, գնահատման և բուժման համար, եթե <ul style="list-style-type: none"> ○ Դուք անձամբ այցելում եք Ձեր առաջին հեռաառողջապահական այցից 6 ամսվա ընթացքում ○ Դուք անձամբ այցելում եք 12 ամիսը մեկ՝ ստանալով այս հեռաառողջապահական ծառայությունները ○ Որոշակի հանգամանքների համար վերոնշյալից կարող են բացառություններ արվել • Հեռաառողջապահական ծառայություններ հոգեկան առողջության այցերի համար, որոնք տրամադրվում են Գյուղական առողջապահական կլինիկաների և Դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոնների կողմից: • վիրտուալ ստուգումներ (օրինակ՝ հեռախոսով կամ տեսազրույցով) Ձեր բժշկի հետ 5-10 րոպե, եթե <ul style="list-style-type: none"> ○ Դուք նոր հիվանդ չեք, և ○ ստուգումը կապված չէ վերջին 7 օրվա ընդունարան այցելության հետ և ○ ստուգումը չի հանգեցնում ընդունարան այցելության 24 ժամվա ընթացքում կամ շուտափույթ հասանելի հանդիպման <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում</p>	



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Բժշկի/մատակարարի ծառայություններ, ներառյալ այցելությունները բժշկի ընդունարան (շարունակություն)</p> <ul style="list-style-type: none"> • Տեսանյութերի և/կամ պատկերների գնահատում, որոնք ուղարկում եք Ձեր բժշկին, ինչպես նաև մեկնաբանում և հետևում Ձեր բժշկի կողմից 24 ժամվա ընթացքում, եթե. <ul style="list-style-type: none"> ○ Դուք նոր հիվանդ չեք, և ○ գնահատումը կապված չէ վերջին 7 օրվա ընդունարան այցելության հետ և ○ գնահատումը չի հանգեցնում ընդունարան այցելության 24 ժամվա ընթացքում կամ շուտափույթ հասանելի հանդիպման • Ձեր բժշկի խորհրդատվությունը այլ բժիշկների հետ հեռախոսով, ինտերնետով կամ էլեկտրոնային առողջապահական գրառման միջոցով, եթե Դուք նոր հիվանդ չեք • Երկրորդ կարծիքը ցանցային այլ մատակարարի կողմից մինչ վիրահատությունը • Ոչ սովորական ատամնաբուժական խնամք. Ապահովագրված ծառայությունները սահմանափակվում են հետևյալով. <ul style="list-style-type: none"> ○ ծնոտի կամ նման կառուցվածքների վիրահատություն ○ ծնոտի կամ դեմքի ոսկորների կոտրվածքներ ○ ատամները հանում նորագոյացությունների քաղցկեղի ճառագայթային բուժումից առաջ ○ ծառայություններ, որոնք ապահովագրված կլինեն բժշկի կողմից 	




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Օրթոպեդիկ ծառայություններ</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> • ոտնաթաթի վնասվածքների և հիվանդությունների ախտորոշում և բժշկական կամ վիրաբուժական բուժում (օրինակ՝ ոտնաթաթի մատների մուրճանման դեֆորմացիան կամ կրունկի կոշկախթան) • Ոտքերի սովորական խնամք ոտքերի վրա ազդող առողջական խնդիրներ ունեցող անդամների համար, ինչպիսին է շաքարախտը • սովորական (Medicare-ի կողմից չապահովագրված) ոտքերի խնամք: Ծածկույթը ներառում է. <ul style="list-style-type: none"> ○ Կոշտուկների կտրում կամ հեռացում ○ Էղունգները հավասարեցնելը, կտրելը, ախտահանումը 	<p>\$0</p>
<p> Շագանակագեղձի քաղցկեղի սքրինինգային ստուգումներ</p> <p>50 և ավելի տարեկան տղամարդկանց համար մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար 12 ամիսը մեկ անգամ՝</p> <ul style="list-style-type: none"> • ուղիղ աղիքի թվային հետազոտություն • շագանակագեղձի հատուկ հակագենի (PSA) թեստ 	<p>\$0</p>



Օտաայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ինչ պետք է վճարեք
<p>Պրոթեզային սարքեր և հարակից պարագաներ</p> <p>Պրոթեզային սարքերը փոխարինում են մարմնի կամ ֆունկցիայի ամբողջը կամ մի մասը: Մենք վճարում ենք հետևյալ պրոթեզային սարքերի և միգուցե այստեղ չնշված այլ սարքերի համար.</p> <ul style="list-style-type: none"> • կոլոստոմիայի պարկեր և կոլոստոմիայի խնամքի հետ կապված պարագաներ • էնտերալ (բերանի միջոցով) և պարենտերալ (արյան մեջ ներմուծված) սնուցում, ներառյալ կերակրման պարագաներ, ներարկման պոմպ, խողովակ և ադապտեր, լուծույթներ և ինքնակառավարվող ներարկումների պարագաներ • սրտի զարկատու սարքեր • բրեկետներ • պրոթեզային կոշիկներ • արհեստական ձեռքեր և ոտքեր • կրծքի պրոթեզներ (ներառյալ մաստէկտոմիայից հետո վիրաբուժական կրծկալ) • պրոթեզներ՝ փոխարինելու դեմքի արտաքին մասի ամբողջը կամ մի մասը, որը հեռացվել կամ վնասվել է հիվանդության, վնասվածքի կամ բնածին արատների հետևանքով • անմիզապահության քսուք և տակդիրներ <p>Մենք վճարում ենք պրոթեզային սարքերի հետ կապված որոշ պարագաների համար: Մենք վճարում ենք նաև պրոթեզային սարքերի վերանորոգման կամ փոխարինման համար:</p> <p>Մենք առաջարկում ենք որոշակի ծածկույթ կատարակտի հեռացումից կամ կատարակտի վիրահատությունից հետո: Մանրամասների համար ուսումնասիրեք «Տեսողության խնամք» բաժինը այս աղյուսակում:</p>	<p>\$0</p>




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Թոքերի վերականգնողական ծառայություններ</p> <p>Մենք վճարում ենք թոքերի վերականգնողական ծրագրերի համար այն անդամներին, ովքեր ունեն թոքերի միջին և շատ ծանր քրոնիկական օբստրուկտիվ հիվանդություն (COPD): Դուք պետք է ուղեգիր ունենաք թոքերի վերականգնման համար բժշկի կամ մատակարարից, որը բուժում է COPD-ը:</p>	<p>\$0</p>
<p> Մեռական ճանապարհով փոխանցվող վարակների (Sexually transmitted infection, STI) սքրինինգ և խորհրդատվություն</p> <p>Մենք վճարում ենք քլամիդիայի, գոնորեայի, սիֆիլիսի և հեպատիտ B-ի սքրինինգների համար: Այս գնումները ապահովագրված են հղի կանանց և որոշ մարդկանց համար, ովքեր ունեն սեռավարակով վարակվելու մեծ ռիսկ: Առաջնային խնամքի մատակարարը պետք է պատվիրի թեստերը: Մենք ծածկում ենք այս թեստերը 12 ամիսը մեկ կամ հղիության ընթացքում որոշակի ժամանակահատվածներում:</p> <p>Մենք նաև վճարում ենք մինչև երկու դեմ առ դեմ, բարձր ինտենսիվության վարքագծային խորհրդատվության համար ամեն տարի սեռական ակտիվ չափահասների համար, ովքեր ունեն սեռավարակներով վարակվելու մեծ ռիսկ: Յուրաքանչյուր սեանս կարող է տևել 20-ից 30 րոպե: Մենք վճարում ենք այս խորհրդատվական սեանսների համար որպես կանխարգելիչ ծառայություն միայն այն դեպքում, եթե տրամադրվում է առաջնային խնամքի մատակարարի կողմից: Սեանսները պետք է անցկացվեն առաջնային խնամքի պայմաններում, օրինակ՝ բժշկի ընդունարանում:</p>	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Հնուտ բուժքույրական հաստատության (SNF) խնամք</p> <p>Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար, և, հնարավոր է, նաև ստորև չնշված այլ ծառայությունների համար.</p> <ul style="list-style-type: none"> • կիսաանձնական սենյակ (կամ բժշկական անհրաժեշտության դեպքում առանձնասենյակ) • սնունդ, ներառյալ հատուկ սննդակարգեր • բուժքույրական ծառայություններ • ֆիզիոթերապիա օկուպացիոն թերապիա և լոգոպեդիա • դեղեր, որոնք Դուք ստանում եք որպես Ձեր խնամքի ծրագրի մաս, ներառյալ նյութերը, որոնք բնականաբար գտնվում են մարմնում, ինչպիսիք են արյան մակարդման գործոնները • արյուն, ներառյալ պահեստավորում և օգտագործում • բժշկական և վիրաբուժական պարագաներ, որոնք սովորաբար տրվում են ծերանոցների կողմից • լաբորատոր թեստեր, որոնք տրվում են ծերանոցների կողմից • ռենտգենյան ճառագայթներ և ռադիոլոգիայի այլ ծառայություններ, որոնք տրվում են ծերանոցների կողմից • սարքեր, ինչպիսիք են անվասայլակները, որոնք սովորաբար տրամադրվում են ծերանոցների կողմից • բժշկի/մատակարարի ծառայություններ <p>Դուք սովորաբար ստանում եք Ձեր խնամքը ցանցային հաստատություններից: Սակայն, Դուք կարող եք Ձեր խնամքը ստանալ մեր ցանցում չգտնվող հաստատությունից: Դուք կարող եք խնամք ստանալ հետևյալ վայրերից, եթե նրանք ընդունեն մեր ծրագրի վճարման գումարները.</p> <ul style="list-style-type: none"> • ծերանոց կամ շարունակական խնամքի կենսաթոշակային համայնք, որտեղ Դուք ապրում էիք նախքան հիվանդանոց գնալը (եթե այն տրամադրում է ծերանոցի խնամք) • ծերանոց, որտեղ Ձեր ամուսինը/կինը կամ զուգընկերն ապրում է այն պահին, երբ Դուք հեռանում եք հիվանդանոցից 	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> Ծխելու և ծխախոտի օգտագործման դադարեցում</p> <p>Եթե ծխախոտ եք օգտագործում, չունեք ծխախոտի հետ կապված հիվանդության նշաններ կամ ախտանիշներ, և ցանկանում եք կամ պետք է թողնեք ծխելը.</p> <ul style="list-style-type: none"> • Մենք վճարում ենք 12 ամսվա ընթացքում դադարեցնելու երկու փորձի համար՝ որպես կանխարգելիչ ծառայություն: Այս ծառայությունն անվճար է Ձեզ համար: Հրաժարվելու յուրաքանչյուր փորձ ներառում է մինչև չորս դեմ առ դեմ խորհրդատվական այցելություն: <p>Եթե Դուք ծխախոտ եք օգտագործում և Ձեզ մոտ ախտորոշվել է ծխախոտի հետ կապված հիվանդություն կամ ընդունում եք դեղամիջոցներ, որոնց վրա կարող է ազդել ծխախոտը.</p> <ul style="list-style-type: none"> • Մենք վճարում ենք 12 ամսվա ընթացքում երկու խորհրդատվական հրաժարման փորձերի համար: Խորհրդատվության յուրաքանչյուր փորձ ներառում է մինչև չորս դեմ առ դեմ այցելություն: 	<p>\$0</p>



<p>Օտարություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Վերահսկվող վարժությունների թերապիա (SET)</p> <p>Մենք վճարում ենք SET-ի համար պերիֆերալ զարկերակների ախտանշանային հիվանդություն (PAD) ունեցող անդամների համար, ովքեր ունեն PAD-ի ուղեգիր PAD-ի բուժման համար պատասխանատու բժշկի կողմից:</p> <p>Մեր ծրագիրը վճարում է.</p> <ul style="list-style-type: none"> • մինչև 36 սեանս 12 շաբաթվա ընթացքում, եթե SET-ի բոլոր պահանջները բավարարված են • լրացուցիչ 36 սեանս ժամանակի ընթացքում, եթե բուժաշխատողի կողմից համարվում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ <p>SET ծրագիրը պետք է լինի.</p> <ul style="list-style-type: none"> • 30-ից 60 բուժական ստուգումներ թերապիայի վարժություն-մարզման ծրագիր PAD-ի համար՝ ոտքերի ջղաձգություն ունեցող անդամների արյան վատ հոսքի պատճառով (կլաուդիկացիա) • հիվանդանոցային ամբուլատոր պայմաններում կամ բժշկի ընդունարանում • տրամադրվի որակավորված անձնակազմի կողմից, որը համոզված է, որ օգուտը գերազանցում է վնասը, և ովքեր վերապատրաստված են PAD-ի վարժություն թերապիայի համար • բժշկի, բժշկի օգնականի կամ բուժքույրի/կլինիկական բուժքույրի անմիջական հսկողության ներքո, որը վերապատրաստված է ինչպես հիմնական, այնպես էլ առաջադեմ կենսաապահովման մեթոդներով 	<p>\$0</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Փոխադրություն. ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրում</p> <p>Այս նպաստը թույլ է տալիս փոխադրումներ իրականացնել, որն ամենաարդյունավետն է և մատչելի: Մա կարող է ներառել շտապ օգնության մեքենա, գուգարանով օժտված միկրոավտոբուս, անվասայլակի համար նախատեսված բժշկական միկրոավտոբուս կամ պարափոխադրումների հետ համակարգում:</p> <p>Փոխադրման ձևերը թույլատրվում են, երբ.</p> <ul style="list-style-type: none"> • Ձեր բժշկական և/կամ ֆիզիկական վիճակը թույլ չի տալիս Ձեզ ճանապարհորդել ավտոբուսով, մարդատար մեքենայով, տաքսիով կամ հանրային կամ մասնավոր տրանսպորտի այլ ձևով, և <p>Կախված ծառայությունից՝ կարող է պահանջվել նախնական լիազորում:</p>	<p>\$0</p>




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Փոխադրություն. ոչ-բժշկական փոխադրում</p> <p>Այս նպաստը թույլ է տալիս բժշկական հաստատություններ հասնել մեքենայով, տաքսիով կամ հանրային/մասնավոր տրանսպորտի այլ ձևերով:</p> <p>Պահանջվում է տրանսպորտ՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու համար, ներառյալ ատամնաբուժական տեսակցությունների մեկնելը և դեղատոմսով դեղեր վերցնելը:</p> <p>Այս նպաստը չի սահմանափակում Ձեր ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրման նպաստը:</p> <p>Նշում. տրանսպորտի հետ կապված պայմանավորվածություններն իրականացնում է Call The Car-ը: Անդամները պետք է կապ հաստատեն Call The Car հետ (855) 200-7544 [TTY՝ 711] հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր: Փոխադրման պայմանավորվածությունները պետք է կատարվեն առնվազն 24 ժամ առաջ:</p> <p>Call The Car-ն առաջարկում է բջջային հավելված (CTC-Go), որը կարող է օգտագործվել Blue Shield TotalDual Plan-ի անդամների կողմից՝ առողջապահական փոխադրումները համակարգելու համար: CTC-Go-ն թույլ է տալիս վերանայել գալիք կամ անցյալ ամրագրումները, գնահատել Ձեր երթուղին, հետևել Ձեր վարորդին, չեղարկել առկա ամրագրումը և պլանավորել նոր ամրագրում: CTC-Go-ն հասանելի է iOS և Android համակարգերում: «CTC'Go»-ն որոնեք Ձեր հավելվածների խանութում և ներբեռնեք հավելվածը:</p> <p>*Ծառայությունները չեն վերաբերում ծրագրի՝ Ձեր գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p> <p>Կարող են կիրառվել հաստատման վերաբերյալ կանոններ:</p>	<p>\$0 (սահմանափակվում է տարեկան 48 միակողմանի ուղևորությամբ)</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Հրատապ անհրաժեշտ խնամք</p> <p>Հրատապ անհրաժեշտ խնամքը բուժում է.</p> <ul style="list-style-type: none"> • ոչ արտակարգ առողջական խնդիր, որը պահանջում է անհապաղ բժշկական օգնություն, կամ • հանկարծակի բժշկական հիվանդություն, կամ • վնասվածք, կամ • պայման, որն անհապաղ խնամքի կարիք ունի: <p>Եթե Դուք հրատապ անհրաժեշտ խնամքի կարիք ունեք, նախ պետք է փորձեք այն ստանալ ցանցի մատակարարից: Սակայն, Դուք կարող եք օգտվել արտացանցային մատակարարից, երբ Դուք չեք կարող կապվել ցանցի մատակարարին, քանի որ հաշվի առնելով Ձեր հանգամանքները, հնարավոր չէ կամ անհիմն է ծառայություններ ստանալ ցանցի մատակարարներից (օրինակ՝ երբ Դուք գտնվում եք ծրագրի սպասարկման տարածքից դուրս և Ձեզ անհրաժեշտ է բժշկական անհապաղ ծառայություններ ոչ-տեսանելի առողջական խնդրի համար, բայց դա բժշկական արտակարգ իրավիճակ չէ):</p> <p>*Համաշխարհային ապահովագրություն.</p> <p>Դուք չունեք Միացյալ Նահանգներից և նրա տարածքներից դուրս շտապ օգնության կամ հրատապ կերպով անհրաժեշտ ծառայությունների համար տարեկան սահմանաչափ: Ծառայությունները Միացյալ Նահանգներից և նրա տարածքներից դուրս չեն վերաբերում ծրագրի՝ գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p> <p>Ծառայությունները չեն վերաբերում ծրագրի՝ գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p>	<p>\$0</p> <p>20% համաապահովագրություն ամբողջ աշխարհում շտապ ապահովագրության համար (համաապահովագրությունը չեղյալ է հայտարարվում, եթե նույն պայմանով մեկ օրվա ընթացքում ընդունվում է հիվանդանոց)</p>



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p> Տեսողության խնամք (Medicare-ի ապահովագրություն)</p> <p>Մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար`</p> <ul style="list-style-type: none"> • աչքի մեկ սովորական հետազոտություն յուրաքանչյուր տարի և • մինչև \$100 ակնոցների համար (շրջանակներ և ոսպնյակներ) կամ մինչև \$100 կոնտակտային ոսպնյակների համար յուրաքանչյուր երկու տարին մեկ <p>Մենք վճարում ենք բժշկի ամբուլատոր ծառայությունների համար` աչքի հիվանդությունների և վնասվածքների ախտորոշման և բուժման համար: Օրինակ, սա ներառում է աչքի ամենամյա զննում դիաբետիկ ռետինոպաթիայի համար շաքարախտով հիվանդ մարդկանց մոտ և տարիքային մակուլյար դեգեներացիայի բուժում:</p> <p>Գլաուկոմայի բարձր ռիսկ ունեցող մարդկանց համար մենք տարեկան վճարում ենք գլաուկոմայի հայտնաբերման համար նախատեսված մեկ սքրինինգի համար: Գլաուկոմայի բարձր ռիսկ ունեցող խմբերն են.</p> <ul style="list-style-type: none"> • գլաուկոմայի ընտանեկան պատմություն ունեցող մարդիկ • շաքարախտ ունեցող մարդիկ • աֆրոամերիկացիներ, որոնք 50 և ավելի տարեկան են • իսպանախոս ամերիկացիներ, որոնք 65 և ավելի տարեկան են <p>Մենք վճարում ենք մեկ գույգ ակնոցի կամ կոնտակտային ոսպնյակի համար կատարակտի յուրաքանչյուր վիրահատությունից հետո, երբ բժիշկը տեղադրի ներակնային ոսպնյակ:</p> <p>Եթե կատարակտի երկու առանձին վիրահատություն տանեք, ապա յուրաքանչյուր վիրահատությունից հետո պետք է մեկ գույգ ակնոց ստանաք: Երկրորդ վիրահատությունից հետո չեք կարող ստանալ երկու գույգ ակնոց, նույնիսկ եթե առաջին վիրահատությունից հետո ակնոց չեք ստացել:</p>	<p>\$0 Medicare-ով փոխհատուցված յուրաքանչյուր աչքի հետազոտության համար:</p> <p>\$0 համավճար</p> <p>\$0 համավճար</p> <p>\$0 համավճար</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Տեսողության խնամք, ոչ Medicare-ի ապահովագրություն (ստացված ցանցի մատակարարից)*</p> <p>Նախնական լիազորում (նախապես հաստատում) ՉԻ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ: Օգտագործեք Vision Directory կամ այցելեք blueshieldca.com/find-a-doctor` գտնելու Vision Service Plan (VSP) (Blue Shield Vision Plan Administrator) ցանցին մասնակցող մատակարարին:</p> <p>Ապահովագրված ծառայություններն ընդգրկում են՝</p> <ul style="list-style-type: none"> • Աչքի սովորական հետազոտություն, ներառյալ ռեֆրակցիան և ակնոցի ուսանյակների դեղատոմսը: Եթե մատակարարը առաջարկում է լրացուցիչ բուժգործողություններ, Դուք պատասխանատու եք լրացուցիչ ծախսերի վճարման համար: Կոնտակտային ուսանյակների հետազոտությունները պահանջում են լրացուցիչ վճարներ: Դուք պատասխանատու եք հավելյալ ծախսերի վճարման համար: • Ակնոցի շրջանակներ և ակնոցի ուսանյակներ (ներառյալ առանձին երեսպատված երկֆոկալ, երեսպատված եռաֆոկալ և տեսողությունը շտկող ուսանյակներ) կամ կոնտակտային ուսանյակներ <p>* Ծառայությունները չեն վերաբերում ծրագրի՝ գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p>	<p>Դուք վճարում եք \$0 մեկ գնման համար յուրաքանչյուր 12 ամիսը մեկ, երբ օգտվում եք ցանցի մատակարարից:</p> <p>Դուք վճարում եք \$0 ակնոցների շրջանակների համար (մինչև \$375 սովորական մանրածախ արժեքը) յուրաքանչյուր 24 ամիսը մեկ, երբ օգտվում եք ցանցային մատակարարից: Եթե Դուք ընտրում եք ակնոցների շրջանակներ, որոնց արժեքը գերազանցում է \$375-ը, ապա պատասխանատու եք տարբերության համար:</p> <p>Դուք վճարում եք \$0 մեկ գույգ դեղատոմսով ակնոցների համար (անկախ չափից և հզորությունից) ԿԱՄ կոնտակտային ուսանյակների համար (մինչև \$375 կոնտակտային ուսանյակների ծառայությունների և նյութերի համար) յուրաքանչյուր 12 ամիսը մեկ, երբ օգտվում եք ցանցային մատակարարից: Եթե ծառայության և նյութերի արժեքը գերազանցում է \$375-ը, Դուք պատասխանատու եք տարբերության համար:</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:




<p>Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը</p>	<p>Ինչ պետք է վճարեք</p>
<p>Տեսողության խնամք, որը չի ապահովագրվում Medicare-ից (ձեռք է բերվում ցանցից դուրս մատակարարի կողմից)*</p> <p>Եթե ընտրեք, կարող եք այցելել ակնաբույժի կամ ակնոց պատրաստողի մոտ, որը Blue Shield TotalDual Plan-ի ցանցային մատակարար չէ: Սակայն, Դուք չեք կարող ստանալ նույն ծառայությունները և՛ ցանցային և՛ ոչ ցանցային մատակարարից: Եթե Դուք ընտրում եք ոչ ցանցային մատակարար, Դուք իրավասու եք մասնակի փոխհատուցում ստանալ մատուցված ծառայությունների համար, եթե արդեն չեք հասել Ձեզ անհրաժեշտ տեսողության ծառայության Ձեր նպաստների սահմանաչափին: Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ փոխհատուցման ձևաթուղթ պահանջելու և փոխհատուցում պահանջելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար: Նախնական լիազորում ՉԻ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ:</p> <ul style="list-style-type: none"> • Աչքի սովորական հետազոտություն, ռեֆրակցիա և ակնոցի ոսպնյակների դեղատոմսը: • Ակնոցի շրջանակներ և ակնոցի ոսպնյակներ (ներառյալ եզակի, երկֆոկալ, եռաֆոկալ և տեսողությունը շտկող ոսպնյակներ) կամ կոնտակտային ոսպնյակներ: <p>* Ծառայությունները չեն վերաբերում ծրագրի՝ գրպանից ծախսվող առավելագույն սահմանաչափին:</p>	<p>Յուրաքանչյուր 12 ամիսը մեկ գնման համար Ձեզ փոխհատուցվում է մինչև \$30:</p> <p>Յուրաքանչյուր 24 ամիսը մեկ ակնոցի մեկ շրջանակի համար Ձեզ փոխհատուցվում է մինչև \$35:</p> <p>Դուք փոխհատուցվում եք մինչև \$35 կամ մեկ դեղատոմսով տրվող ակնոցի ոսպնյակների համար (անկախ չափից և հզորությունից) ԿԱՄ կոնտակտային ոսպնյակների համար՝ յուրաքանչյուր 12 ամիսը մեկ:</p>

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ինչ պետք է վճարեք
<p> «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այց</p> <p>Մենք ծածկում ենք «Բարի գալուստ Medicare» մեկանգամյա կանխարգելիչ այցը: Այցը ներառում է.</p> <ul style="list-style-type: none"> • Ձեր առողջության հետազոտություն, • գիտելիք և խորհրդատվություն՝ Ձեզ անհրաժեշտ կանխարգելիչ ծառայությունների վերաբերյալ (ներառյալ զննումները և պատվաստումները), և • ուղեգրում այլ տեսակի խնամքի, եթե դրա կարիքը ունեք: <p>Նշում. մենք ծածկում ենք «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այցը միայն առաջին 12 ամսվա ընթացքում, երբ Դուք ունեք Medicare Part B: Երբ նշանակեք Ձեր հանդիպումը, տեղյակ պահեք Ձեր բժշկի ընդունարանին, որ ցանկանում եք ամրագրել Ձեր «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այցը:</p>	<p>\$0</p>

Ատամնաբուժական նպաստների ընթացակարգի սովորական աղյուսակ

Սովորական ատամնաբուժական նպաստները ներառված են այս ծրագրի բոլոր անդամների համար:

Ստորև բերված **Ատամնաբուժական նպաստների ընթացակարգի աղյուսակը** ցույց է տալիս ատամնաբուժական հատուկ բուժգործողությունները, որոնք փոխհատուցվում են սովորական ատամնաբուժական նպաստով, և թե ինչ եք վճարելու այդ բուժգործողությունների համար: Թվարկված ծառայությունները ապահովագրված արտոնություններ են, երբ տրամադրվում են ներցանցային, լիցենզավորված ատամնաբույժի կողմից և ըստ անհրաժեշտության և սովորաբար ինչպես սահմանված է ատամնաբուժական պրակտիկայի ընդունված չափանիշներով:

Կարևոր. խնդրում ենք նկատի ունենալ, որ թվարկված բուժգործողությունները չեն փոխհատուցվում:

Կարևոր. որոշ ատամնաբուժական ծառայություններ ոչ մի պայմանով չեն ապահովագրվում (նաև հայտնի են որպես Բացառություններ) և որոշ ատամնաբուժական ծառայություններ ապահովագրվում են միայն հատուկ պայմաններով (նաև հայտնի են որպես Սահմանափակումներ): Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք ուսումնասիրել «Ընդհանուր սահմանափակումները» և «Ընդհանուր բացառությունները», որոնք նշված են այս նպաստների աղյուսակից հետո:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 133



Նպաստները կտրամադրվեն հատուկ ատամնաբուժական բուժօգործողությունների համար, որոնք անհրաժեշտ են նշված շտապ, ցավոտ կամ վարակիչ սուր ատամնաբուժական խնդիրների բուժման համար, կամ երբ տրամադրվում են որևէ ձևով, որը մասնագիտորեն ճանաչված խնամքի չափանիշներին համապատասխան է: Ծրագիրն իրեն իրավունք է վերապահում ծածկույթի որոշման համար վարչական վերանայման ենթարկել վերոնշյալ առողջական խնդիրների փաստաթղթերը՝ ծրագրի ատամնաբուժական տնօրենի կողմից:

Առողջական խնդիրները , որոնք բնութագրվում են սուր ցավով կամ վարակով, ներառում են հետևյալը.

- Սուր ցավ, որն ատամարմատի խողովակի անհապաղ բուժում է պահանջում.
- Սուր ցավ, որը ատամի հեռացում կամ հեռացում և/կամ կտրվածք և դրենաժ է պահանջում.
- Սուր պարոդոնտալ թարախակույտ, որը շտապ պարոդոնտալ բուժօգործողություններ է պահանջում:

Արտակարգ վերականգնողական պայմանները ներառում են հետևյալը.

- Ատամը, որը վերականգնման փուլում է, և որն սկսվել է որպես (հիմնական վերականգնող) լիցքավորում, սակայն վերականգնման ընթացքում հայտնաբերված կարիեսի/կոտրվածքի աստիճանի պատճառով այժմ պահանջվում է (գլխավոր վերականգնող) կադապարից պսակի տեղադրում:

Ծառայությունները թվարկված են Ամերիկյան ատամնաբուժական ասոցիացիայի (ADA) բուժօգործողությունների ծածկագրով՝ հիմնված ներկայիս ատամնաբուժական տերմինաբանության վրա: Դաշնային օրենքը պահանջում է օգտագործել ADA ծածկագիրը՝ ատամնաբուժական բուժօգործողությունների մասին գեկուցելու համար: Բուժօգործողության ծածկագրերը կարող են ժամանակ առ ժամանակ վերանայվել ADA-ի կողմից: Հետևաբար, ծրագիրը կարող է վերանայել այս ծածկագրերի ցանկը, ինչպես պահանջվում է օրենքով: Դուք կարող եք ձեռք բերել ADA ծածկագրերի թարմացված ցանկը՝ կապվելով Dental Plan Administrator-ի (DPA) հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ **(866) 247-2486 [TTY՝ 711] հեռախոսահամարով**, 8:00-ից 20:00, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը և աշխատանքային օրերին՝ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը:

ADA Ծածկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
Ախտորոշիչ ծառայություններ		
D0150	Բերանի համապարփակ գնահատում. նոր կամ հաստատված հիվանդ	\$0
D0171	Վերագնահատում, հետվիրահատական այցելություն ընդունարան	\$0
D0190	Հիվանդի սրբինինգ	\$0
D0191	Հիվանդի գնահատում	\$0
D0251	Արտաբերանային հետին ատամնաբուժական ռադիոգրաֆիկ պատկեր	\$0

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



ADA Օաձկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
D0415	Միկրոօրգանիզմների հավաքում՝ մանրէաբանական և զգայունության հետազոտության համար	\$0
D0425	Կարիեսի դյուրագրգացության թեստ	\$0
D0460	Պուլպայի (միջուկի) կենսունակության թեստեր	\$0
D0470	Ախտորոշիչ գիպսեր	\$0
D0472	Հյուսվածքի միացում, համախառն հետազոտություն, գրավոր զեկույցի պատրաստում և փոխանցում	\$0
D0473	Հյուսվածքի միացում, համախառն և մանրադիտակային հետազոտություն, գրավոր զեկույցի պատրաստում և փոխանցում	\$0
D0474	Հյուսվածքի միացում, համախառն և մանրադիտակային հետազոտություն, ներառյալ հիվանդության առկայության համար վիրաբուժական եզրերի գնահատում, գրավոր զեկույցի պատրաստում և փոխանցում	\$0
Կանխարգելիչ ծառայություններ		
D1110	Պրոֆիլակտիկա. չափահասներ	\$0
D1206	Ֆտորային լաքի տեղային կիրառում	\$0
D1208	Ֆտորի տեղային կիրառություն՝ բացառությամբ լաքի	\$0
D1353	Հերմետիկի վերանորոգում՝ մեկ ատամի համար	\$10
D1520	Տարածքի պահպանիչ, շարժական, միակողմանի՝ մեկ քառորդի համար	\$70
Վերականգնողական ծառայություններ		
D2140	Ամալգամներ, մեկ մակերես, առաջնային կամ մշտական	\$0
D2510	Ներդիր, մետաղական, մեկ մակերես	\$170
D2520	Ներդիր, մետաղական, երկու մակերես	\$180
D2530	Ատամի ներսի հատվածն ընդգրկող, մետաղական, երեք կամ ավելի մակերես	\$190
D2542	Ատամի ներսի և վերին հատվածն ընդգրկող, մետաղական, երկու մակերես	\$185
D2543	Ատամի ներսի և վերին հատվածն ընդգրկող, մետաղական, երեք մակերես	\$195
D2544	Ատամի ներսի և վերին հատվածն ընդգրկող, մետաղական, չորս կամ ավելի մակերես	\$215
D2610	Ատամի ներսի հատվածն ընդգրկող, ճենապակյա/կերամիկա, մեկ մակերես	\$295

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413
(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:
Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



ADA Օածկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
D2620	Ատամի ներսի հատվածն ընդգրկող, ճենապակյա/կերամիկա, երկու մակերես	\$330
D2630	Ատամի ներսի հատվածն ընդգրկող, ճենապակյա/կերամիկա, երեք կամ ավելի մակերես	\$350
D2642	Ատամի ներսի և վերին հատվածն ընդգրկող, ճենապակյա/կերամիկա, երկու մակերես	\$325
D2643	Ատամի ներսի և վերին հատվածն ընդգրկող, ճենապակյա/կերամիկա, երեք մակերես	\$360
D2644	Ատամի ներսի և վերին հատվածն ընդգրկող, ճենապակյա/կերամիկա, չորս կամ ավելի մակերես	\$380
D2650	Ատամի ներսի հատվածն ընդգրկող, կոմպոզիտ/խեժ, մեկ մակերես	\$195
D2651	Ատամի ներսի հատվածն ընդգրկող, կոմպոզիտ/խեժ, երկու մակերես	\$220
D2652	Ատամի ներսի հատվածն ընդգրկող, կոմպոզիտ/խեժ, երեք կամ ավելի մակերես	\$255
D2662	Ատամի ներսի և վերին հատվածն ընդգրկող, կոմպոզիտ/խեժ, երկու մակերես	\$250
D2663	Ատամի ներսի և վերին հատվածն ընդգրկող, կոմպոզիտ/խեժ, երեք մակերես	\$275
D2664	Ատամի ներսի և վերին հատվածն ընդգրկող, կոմպոզիտ/խեժ, չորս կամ ավելի մակերես	\$320
D2720	Պսակ, խեժ բարձրակարգ ազնիվ մետաղով	\$320
D2722	Պսակ, խեժ ազնիվ մետաղով	\$260
D2750	Պսակ, ճենապակյա միաձուլված բարձրակարգ ազնիվ մետաղի հետ	\$380
D2752	Պսակ, ճենապակյա միաձուլված ազնիվ մետաղի հետ	\$320
D2753	Պսակ, ճենապակյա միաձուլված տիտանի և տիտանի համաձուլվածքների հետ	\$380
D2780	Պսակ, 3/4 ձուլված բարձրակարգ ազնիվ մետաղ	\$380
D2782	Պսակ, 3/4 ձուլված ազնիվ մետաղ	\$320
D2790	Պսակ, ամբողջությամբ ձուլված բարձրակարգ ազնիվ մետաղ	\$380
D2792	Պսակ, ամբողջությամբ ձուլված ազնիվ մետաղ	\$320
D2794	Պսակ, տիտան	\$380
D2921	Ատամի բեկորի, կտրող եզրի կամ գազաթի վերամիացում	\$50

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



ADA Ծածկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
D2929	Հավաքովի ձենապակյա/կերամիկական պսակ, առաջնային ատամ, առջևի	\$75
D2940	Պաշտպանական վերականգնում	\$0
D2981	Ատամի ներսի հատվածի վերանորոգում, որն անհրաժեշտ է վերականգնողական նյութի խափանումների պատճառով	\$25
D2982	Ատամի ներսի և վերին հատվածի վերանորոգում, որն անհրաժեշտ է վերականգնողական նյութի խափանումների պատճառով	\$25
D2983	Ատամի ամենավերին շերտի վերանորոգում, որն անհրաժեշտ է վերականգնողական նյութի խափանումների պատճառով	\$25
Էնդոդոնտիկ ծառայություններ		
D3110	Պուլպայի (միջուկի) գլխարկ՝ ուղղակի (բացառությամբ վերջնական վերականգնման)	\$0
D3331	Ատամարմատի խողովակի խցանման բուժում, ոչ վիրահատական մուտք	\$0
D3333	Ատամի ներսի մասի նախագոյացման արատների վերականգնում	\$50
D3346	Նախկին ատամարմատի խողովակի թերապիայի վերաբուժում, առջևի	\$0
D3348	Նախկին ատամարմատի խողովակի թերապիայի վերաբուժում, սեղանատամ	\$0
D3353	Ապերսիֆիկացիա/վերակալցիացում, վերջնական այցելություն (ներառում է ավարտված ատամարմատի խողովակի թերապիա, պերֆորացիաների գազաթային փակում/կալցիֆիկ վերականգնում, արմատների ռեգորբցիա և այլն)	\$80
D3450	Արմատային անդամահատում, մեկ արմատի համար	\$85
D3920	Հեմիսեկցիա (ներառյալ ցանկացած արմատի հեռացում), ներառված չէ ատամարմատի խողովակի բուժումը	\$150
Պարիոդոնտիկ ծառայություններ		
D4212	Գինգիվեկտոմիա կամ գինգիվոպլաստիկա՝ թույլ տալու մուտք գործել վերականգնման բուժգործողություն՝ յուրաքանչյուր ատամի համար	\$85
D4240	Լնդերի եզրերի բուժգործողություն, ներառյալ արմատի պլանավորումը՝ չորս կամ ավելի հարակից	\$150

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 137



ADA Ծածկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
	ատամներ կամ ատամի սահմանափակ տարածություններ մեկ քառորդում	
D4241	Լնդերի եզրերի բուժգործողություն, ներառյալ արմատի պլանավորումը, ներառյալ արմատի հարթեցումը, մեկից երեք հարակից ատամներ կամ ատամի սահմանափակ տարածություններ մեկ քառորդում	\$225
D4245	Գագաթային մասում դիրքավորված եզր	\$75
D4260	Ոսկրային վիրահատություն (ներառյալ եզրերից մուտքը և փակումը), չորս կամ ավելի հարակից ատամներ կամ ատամի սահմանափակ տարածություններ մեկ քառորդում	\$0
D4263	Ոսկրային փոխարինող փոխպատվաստում, պահպանված բնական ատամ, առաջին տեղամասը քառորդում	\$225
D4264	Ոսկրային փոխարինող փոխպատվաստում, պահպանված բնական ատամ, յուրաքանչյուր լրացուցիչ տեղ քառորդում	\$80
D4270	Ցողունիկի փափուկ հյուսվածքների փոխպատվաստման բուժգործողություն	\$225
D4274	Մեսիալ/դիստալ սեպային բուժգործողություն մեկ ատամ (երբ չի կատարվում նույն անատոմիական տարածքում վիրահատական միջամտությունների հետ համատեղ)	\$225
D4277	Փափուկ հյուսվածքների պատվաստման անվճար բուժգործողություն (ներառյալ ստացողի և դոնորի վիրահատության հատվածները) առաջին ատամը, իմպլանտը կամ անատամ ատամը	\$295
D4278	Փափուկ հյուսվածքների փոխպատվաստման անվճար բուժգործողություն (ներառյալ ստացողի և դոնորի վիրահատության հատվածները) յուրաքանչյուր լրացուցիչ հարակից ատամ, իմպլանտ կամ անատամ ատամների դիրքը նույն պատվաստման տեղում	\$295
D4921	Լնդերի ողողում, բուժիչ նյութով մեկ քառորդում	\$0
Ատամնաբուժական ծառայություններ (շարժական)		
D5110	Ամբողջական պրոթեզ՝ դիմաձնոտային	\$0
D5221	Ուղղակի վերնաձնոտային մասնակի պրոթեզ՝ խեժային հիմքով	\$365
D5222	Ուղղակի ձնոտային մասնակի պրոթեզ՝ խեժային հիմքով	\$365

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413
(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:
Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



ADA Օածկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
D5223	Ուղղակի դիմաձևոտային մասնակի պրոթեզ ձուլածո մետաղական շրջանակ՝ խեժային ատամնաշարի հիմքերով	\$415
D5224	Ուղղակի ստորին ծնոտի մասնակի պրոթեզից ձուլված մետաղական շրջանակ՝ խեժային ատամնաշարի հիմքերով	\$415
D5225	Դիմաձևոտային մասնակի պրոթեզ՝ ճկուն հիմքով (ներառյալ պահող/կպչող նյութեր, հենարաններ և ատամներ)	\$180
D5226	Ստորին ծնոտի մասնակի պրոթեզ՝ ճկուն հիմքով (ներառյալ պահող/կպչող նյութեր, հենարաններ և ատամներ)	\$180
D5670	Փոխարինել բոլոր ատամները և ակրիլը ձուլածո մետաղական շրջանակի վրա (դիմաձևոտ)	\$100
D5671	Փոխարինել բոլոր ատամները և ակրիլը ձուլածո մետաղական շրջանակի վրա (ստորին ծնոտ)	\$100
D5710	Ամբողջական դիմաձևոտային պրոթեզի հիմքի փոխարինում	\$100
D5711	Ամբողջական ծնոտային պրոթեզի հիմքի փոխարինում	\$100
D5720	Դիմաձևոտային մասնակի պրոթեզի հիմքի փոխարինում	\$100
D5721	Ստորին ծնոտի մասնակի պրոթեզի հիմքի փոխարինում	\$110
D5820	Միջանկյալ մասնակի պրոթեզ (ներառյալ պահող/կպչող նյութեր, նեցուկներ և ատամներ), դիմաձևոտային պրոթեզ Ներառում է ցանկացած անհրաժեշտ սեղմիչներ և նեցուկներ:	\$380
D5821	Միջանկյալ մասնակի պրոթեզ (ներառյալ պահող/կպչող նյութեր, նեցուկներ և ատամներ), ստորին ծնոտի պրոթեզ Ներառում է ցանկացած անհրաժեշտ սեղմիչներ և նեցուկներ:	\$320
Ատամնաբուժական պրոթեզավորման ծառայություններ (հաստատված)		
D6210	Արհեստական ատամ կամբջում, ձուլված բարձրակարգ ազնիվ մետաղ	\$380
D6212	Արհեստական ատամ կամբջում, ձուլված ազնիվ մետաղ	\$320
D6240	Արհեստական ատամ կամբջում, ճենապակյա՝ միաձուլված բարձրակարգ ազնիվ մետաղի հետ	\$320

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



ADA Ծածկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
D6242	Արհեստական ատամ կամրջում, ճենապակյա՝ միաձուլված ազնիվ մետաղի հետ	\$320
D6243	Արհեստական ատամ կամրջում, ճենապակյա՝ միաձուլված տիտանի և տիտանի համաձուլվածքների հետ	\$260
D6250	Արհեստական ատամ կամրջում, խեժ բարձրակարգ ազնիվ մետաղով	\$330
D6252	Արհեստական ատամ կամրջում, խեժ՝ ազնիվ մետաղով	\$350
D6600	Ատամի ներսի հատվածի պահպանիչ, ճենապակյա/կերամիկա, երկու մակերեսով	\$280
D6601	Ատամի ներսի հատվածի պահպանիչ, ճենապակյա/կերամիկա, երեք և ավելի մակերեսներ	\$290
D6602	Ատամի ներսի հատվածի պահպանիչ, ձուլածո բարձրակարգ ազնիվ մետաղ, երկու մակերեսով	\$180
D6603	Ատամի ներսի հատվածի պահպանիչ, ձուլված բարձրակարգ ազնիվ մետաղ, երեք և ավելի մակերեսով	\$190
D6604	Ատամի ներսի հատվածի պահպանիչ, ձուլված հիմնականում հիմնային մետաղից, երկու մակերեսով	\$210
D6605	Ատամի ներսի հատվածի պահպանիչ, ձուլված հիմնականում հիմնային մետաղից, երեք կամ ավելի մակերեսով	\$220
D6606	Ատամի ներսի հատվածի պահպանիչ, ձուլածո ազնիվ մետաղ, երկու մակերեսով	\$325
D6607	Ատամի ներսի հատվածի պահպանիչ, ձուլված ազնիվ մետաղ, երեք և ավելի մակերեսով	\$360
D6608	Ատամի ներսի և վերին հատվածի պահպանիչ, ճենապակյա/կերամիկական, երկու մակերեսով	\$285
D6609	Ատամի ներսի և վերին հատվածի պահպանիչ, ճենապակյա/կերամիկական, երեք կամ ավելի մակերես	\$295
D6610	Ատամի ներսի և վերին հատվածի պահպանիչ, ձուլածո բարձր ազնիվ մետաղ, երկու մակերեսով	\$185
D6611	Ատամի ներսի և վերին հատվածի պահպանիչ, ձուլված բարձր ազնիվ մետաղ, երեք և ավելի մակերեսով	\$195

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413
(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:
Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



ADA Օածկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
D6612	Ատամի ներսի և վերին հատվածի պահպանիչ, ձուլված հիմնականում հիմնային մետաղից, երկու մակերեսով	\$205
D6613	Ատամի ներսի և վերին հատվածի պահպանիչ, ձուլված հիմնականում հիմնային մետաղից, երեք կամ ավելի մակերեսով	\$225
D6614	Ատամի ներսի և վերին հատվածի պահպանիչ, ձուլածո ազնիվ մետաղ, երկու մակերեսով	\$320
D6615	Ատամի ներսի և վերին հատվածի պահպանիչ, ձուլված ազնիվ մետաղ, երեք և ավելի մակերեսով	\$260
D6720	Պահող պսակ, խեժ բարձրակարգ ազնիվ մետաղով	\$380
D6722	Պահող պսակ, խեժ ազնիվ մետաղով	\$320
D6750	Պահող պսակ, ճենապակյա՝ միաձուլված բարձրակարգ ազնիվ մետաղի հետ	\$380
D6752	Պահող պսակ, ճենապակյա՝ միաձուլված ազնիվ մետաղի հետ	\$380
D6753	Պահող պսակ, ճենապակյա՝ միաձուլված տիտանի և տիտանի համաձուլվածքների հետ	\$320
D6780	Պահող պսակ, 3/4 ձուլված բարձրակարգ ազնիվ մետաղ	\$380
D6782	Պահող պսակ, 3/4 ձուլված ազնիվ մետաղ	\$380
D6784	Պահող պսակ 3/4, ճենապակյա՝ միաձուլված տիտանի և տիտանի համաձուլվածքների հետ	\$320
D6790	Պահող պսակ, ամբողջովին ձուլված բարձրակարգ ազնիվ մետաղ	\$45
D6792	Պահող պսակ, ամբողջովին ձուլված ազնիվ մետաղ	\$320
D6940	Պրոթեզի ճնշումը նվազեցնող սարք	\$45
Քերանի և դիմաձնտային վիրաբուժական ծառայություններ		
D7111	Հեռացում, պսակի մնացորդներ՝ առաջնային ատամ	\$0
D7140	Հեռացում, դուրս եկած ատամ կամ բաց արմատ (բարձրացում և/կամ ատամնաբուժական արքանի հեռացում)	\$0
D7210	Հեռացում, դուրս եկած ատամ, որը պահանջում է ոսկորների հեռացում, ատամի կտրում և ներառյալ մուկոպերիոստեալ շերտի բարձրացում	\$0
D7220	Ախտահարված ատամի հեռացում՝ փափուկ հյուսվածք	\$0

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



ADA Շածկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
D7241	Ախտահարված ատամի հեռացում, ամբողջովին ոսկրային մաս, անսովոր վիրաբուժական միջամտությամբ	\$0
D7251	Իմաստության ատամի հեռացման հատուկ մեթոդ (կորոնէկտոմիա), ատամի գիտակցված մասնակի հեռացում, միայն ախտահարված ատամներ	\$130
D7282	Դուրս եկած կամ սխալ դիրքավորված ատամի մոբիլիզացում՝ դուրս գալուն նպաստելու համար	\$90
D7509	Օդոնտոգեն կիստիայի մարսուպիլիզացիա	\$0
D7510	Թարախակույտի կտրվածք և դրենաժ՝ ներբերանային փափուկ հյուսվածք	\$0
Օրթոդոնտիկ ծառայություններ		
D8010	Առաջնային ատամնաշարի սահմանափակ օրթոդոնտիկ բուժում	\$1.150
D8040	Սահմանափակ օրթոդոնտիկ բուժում չափահասների ատամնաշարի համար, չափահասներ	\$1.350
D8090	Չափահասների ատամնաշարի համալիր օրթոդոնտիկ բուժում, չափահասներ	\$2.100
Լրացուցիչ ընդհանուր ծառայություններ		
D9311	Խորհրդատվություն բժշկական առողջապահական մասնագետի հետ	\$0
D9450	Դեպքի ներկայացում, որին հետևում է բուժման մանրամասն և ծավալուն պլանավորում	\$0
D9932	Շարժական ամբողջական պրոթեզի մաքրում և զննում, դիմաձնտային հատված	\$0
D9933	Շարժական ամբողջական պրոթեզի մաքրում և զննում, ստորին ձնտի հատված	\$0
D9934	Շարժական մասնակի պրոթեզի մաքրում և զննում, դիմաձնտային հատված	\$0
D9935	Շարժական մասնակի պրոթեզի մաքրում և զննում, ստորին ձնտի հատված	\$0
D9943	Օկլյուզալ կարգավորում	\$10
D9944	Օկլյուզալ պաշտպանիչ մաս, կոշտ հարմարանք, ամբողջական կամար	\$100
D9945	Օկլյուզալ պաշտպանիչ մաս, փափուկ հարմարանք, ամբողջական կամար	\$100
D9946	Օկլյուզալ պաշտպանիչ մաս, կոշտ հարմարանք, մասնակի կամար	\$100

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



ADA Օածկագիր	ADA-ի ապահովագրված ծառայությունների նկարագրությունը Ձեզ համար:	Ինչ պետք է վճարեք
D9975	Արտաքին սպիտակեցում տնային կիրառման համար, մեկ կամ արդեն ներառում է նյութեր և հատուկ կապպաների պատրաստում, որը սահմանափակվում է մեկ սպիտակեցնող կապպայով և գելով երկու շաբաթվա ինքնաբուժման համար	\$125
D9986	Բաց թողած ժամադրություն	\$10
D9987	Չեղարկված ժամադրություն	\$10

ՆՇՈՒՄ. Եթե Ձեզ անհրաժեշտ չեն Medicare-ի կողմից ապահովագրված շտապ ատամնաբուժական ծառայություններ, թվարկվածներից Անդամների ծախսերի բաշխման գումարները կիրառվում են միայն այն դեպքում, եթե Դուք ստանում եք ատամնաբուժական ծառայություններ ներգանցային ատամնաբուժից (Տե ս «Ոչ Medicare-ով ապահովագրված շտապ ատամնաբուժական օգնություն»):

ՆՇՈՒՄ. քանի որ Blue Shield-ը պայմանագիր է կնքում Medicare-ի հետ ամեն տարի, այս սովորական ատամնաբուժական նպաստները կարող են հասանելի չլինել հաջորդ տարի:

Սովորական ատամնաբուժական խնամքի ստացում

Ներածություն

Blue Shield-ի ատամնաբուժական ծրագիրը կառավարվում է պայմանագրային Dental Plan Administrator-ի (DPA) կողմից, կազմակերպություն, որը պայմանագիր է կնքում Blue Shield-ի հետ՝ ատամնաբուժական ծառայությունների տրամադրումը պայմանագրային ատամնաբույժների ցանցի միջոցով կառավարելու համար: Եթե հարցեր ունեք այս ատամնաբուժական բաժնում առկա տեղեկատվության առնչությամբ, օգնության կարիք ունեք կամ որևէ խնդիր ունեք, կարող եք կապվել DPA հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ **(866) 247-2486 [TTY 711]** հեռախոսահամարով, առավոտյան 8:00-ից 20:00, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը և աշխատանքային օրերին՝ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը:

Նախքան սովորական ատամնաբուժական ծառայությունների ստանալը

Դուք պատասխանատվություն եք կրում վստահեցնելու, որ Ձեր ընտրած ատամնաբույժը ցանցային ատամնաբույժ է:

ՆՇՈՒՄ. ներգանցային ատամնաբույժի կարգավիճակը կարող է փոխվել: Ձեր պարտականությունն է ստուգել, թե արդյոք Ձեր ատամնաբույժը ներկայումս ցանցային ատամնաբույժ է, եթե պայմանագրային ատամնաբույժների ցանկում փոփոխություններ են եղել: Ձեր տարածքում գտնվող ներգանցային ատամնաբույժների ցանկը կարելի է ստանալ կապվելով DPA-ի հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ **(866) 247-2486 [TTY 711]** հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը և աշխատանքային օրերին՝ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



Այցելություն Ձեր ատամնաբույժին

Գրանցվելուց կարճ ժամանակ անց Դուք կստանաք անդամակցության փաթեթ DPA-ից, որը Ձեզ կտեղեկացնի Ձեր նպաստների ուժի մեջ մտնելու ամսաթիվը, ինչպես նաև Ձեր ներցանցային ատամնաբույժի կամ առաջնային խնամքի ատամնաբույժի (PCD) հասցեն և հեռախոսահամարը: Ձեր անդամակցության փաթեթը ուժի մեջ մտնելուց հետո Դուք կարող եք ձեռք բերել ապահովագրված ատամնաբուժական ծառայություններ: Ժամադրություն նշանակելու համար պարզապես զանգահարեք Ձեր PCD-ի հաստատություն և հաստատեք Ձեր ինքնությունը՝ որպես Blue Shield TotalDual Plan-ի անդամ: Նախնական հանդիպումները պետք է նշանակվեն չորս շաբաթվա ընթացքում, եթե կոնկրետ ժամանակ չի պահանջվել: Հանդիպումների առկայության և ատամնաբույժների հասանելիության վերաբերյալ հարցումները պետք է ուղղվեն DPA-ի հաճախորդների սպասարկման բաժին՝ **(866) 247-2486 [TTY՝ 711]** հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը 7 օր, (բացառությամբ տոն օրերի) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը և աշխատանքային օրերին՝ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը:

ՆՇՈՒՄ. յուրաքանչյուր անդամ պետք է գնա իր նշանակված PCD՝ ապահովագրված ծառայություններ ստանալու, բացառությամբ DPA-ի կողմից գրավոր լիազորված մասնագետի կողմից մատուցվող ծառայությունների կամ Medicare-ի կողմից ապահովագրված շտապ ատամնաբուժական ծառայությունների համար: Ցանկացած այլ բուժում չի ապահովագրվում Blue Shield TotalDual Plan-ի ներքո: Դուք պետք է դիմեք Ձեր PCD-ին ատամնաբուժական խնամքի բոլոր կարիքների համար, ներառյալ կանխարգելիչ ծառայությունները, սովորական ատամնաբուժական խնդիրները, ծրագրի մասնագետների հետ խորհրդակցելը և շտապ օգնության ծառայությունները (հնարավորության դեպքում): PCD-ն պատասխանատու է ընդհանուր ատամնաբուժական ծառայությունների մատուցման և ծրագրի այլ անհրաժեշտ մասնագետների ուղեգրման համակարգման կամ կազմակերպման համար: Ծրագիրը պետք է լիազորի նման ուղղորդումները:

Միայն ցանցային այս ատամնաբուժական ծրագիրը նպաստներ չի վճարում ցանցից դուրս գտնվող ատամնաբույժներին: Ցանցից դուրս գտնվող ատամնաբույժից ստացված ծառայությունները չեն փոխհատուցվի, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ատամնաբուժական շտապ օգնություն: Երբ Դուք ծառայություններ եք ստանում ցանցից դուրս գտնվող ատամնաբույժից, Դուք պատասխանատու կլինեք վճարելու ատամնաբույժին՝ ուղղակիորեն ատամնաբույժի կողմից գանձված ողջ գումարի համար:

ՆՇՈՒՄ. անդամները, ովքեր չեն հետևել իրենց սովորական ատամնաբուժական այցելություններին (6 ամիսը մեկ անգամ), կարող են պարզել, որ իրենց անհրաժեշտ են ծառայություններ, որոնք ներառում են պարողոնտալ ատամնաքարերի խորը մաքրում և արմատի մակերեսի հարթեցում և վարակված ատամի կառուցվածքի հեռացում՝ նախքան սովորական խնամքը, ինչպիսին է կանոնավոր մաքրումը, որը կարող է տրամադրվել կամ կտրամադրվի:

Անդամների համավճարներ

Նախքան Ձեր բուժումն սկսելը, Ձեր ատամնաբույժը կմշակի բուժման ծրագիր, որը կբավարարի Ձեր անհատական կարիքները: Լավագույնն այն է, որ նախքան բուժումն սկսելը, Ձեր ատամնաբույժի հետ քննարկեք Ձեր բուժման ծրագիրը և ֆինանսական պարտականությունները:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



Համավճարները կատարվում են և վճարման ենթակա են՝ ծառայության կամ խնամքի սկզբի պահին:

Եթե Ձեր բուժման ծրագրի մասին տեղեկություններ ստանալու համար լրացուցիչ աջակցության կարիք ունեք, կամ եթե հարցեր ունեք այն համավճարների վերաբերյալ, որոնք Ձեզնից գանձվում են ապահովագրված ատամնաբուժական բուժօգնությունների համար, կարող եք կապվել DPA հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ **(866) 247-2486 [TTY՝ 711] հեռախոսահամարով**, 8:00-ից 20:00, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը և աշխատանքային օրերին՝ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը:

Առաջնային խնամքի ատամնաբույժի ընտրություն

Գրանցվելու պահին Դուք պետք է ընտրեք ցանցային ատամնաբույժ, որը կլինի Ձեր PCD-ն: Եթե Դուք չկարողանաք ընտրել ներցանցային ատամնաբույժի կամ ընտրված ներցանցային ատամնաբույժն անհասանելի դառնա, DPA-ը կպահանջի ընտրել մեկ այլ ներցանցային ատամնաբույժ կամ Ձեզ կնշանակի ներցանցային որևէ ատամնաբույժի:

Դուք կարող եք փոխել Ձեզ նշանակված ներցանցային ատամնաբույժին՝ կապվելով DPA հաճախորդների սպասարկման բաժնի հետ **(866) 247-2486 [TTY՝ 711] հեռախոսահամարով**, 8:00-ից 20:00, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը և աշխատանքային օրերին՝ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը: Երաշխավորելու, որ Ձեր ներցանցային ատամնաբույժը տեղեկացված է և DPA-ի իրավունակության ցուցակները ճիշտ են, ցանցային ատամնաբույժների փոփոխությունները պետք է պահանջվեն մինչև ամսվա 21-ը, որպեսզի փոփոխություններն ուժի մեջ լինեն հաջորդ ամսվա առաջին օրը:

Եթե Ձեր ատամնաբույժն այլևս պայմանագիր չունի Blue Shield TotalDual Plan DPA-ի հետ

Եթե Ձեր ընտրած ներցանցային ատամնաբույժը չի կարողանում շարունակել DPA-ի հետ կնքած պայմանագրով, որովհետև ի վիճակի չէ կատարել կամ խախտել է պայմանագիրը, կամ եթե DPA-ը չեղարկել է պայմանագիրը, ապա DPA-ը Ձեզ կտեղեկացնի ատամնաբույժի աշխատանքի դադարեցման օրվանից առնվազն 30 օր առաջ, որպեսզի Դուք կարողանաք ընտրել մեկ այլ ատամնաբույժ:

Եթե Դուք ծանուցվում եք DPA-ի կողմից այս պատճառով այլ ատամնաբույժ ընտրելու անհրաժեշտության մասին, ապա ռենտգենյան ճառագայթների կամ այլ գրառումների կրկնօրինակման և փոխանցման համար վճարները հանվում են: Բացի այդ, ցանցային ատամնաբույժը (ա) կավարտի մասնակի կամ ամբողջական պրոթեզը, որի համար վերցվել են վերջնական դրոշմները, և (բ) բոլոր աշխատանքները յուրաքանչյուր ատամի վրա, որի վրա սկսել է աշխատելը (օրինակ՝ ընթացքի մեջ գտնվող ատամնաբուժարմատի խողովակների ավարտը և պսակների տրամադրումը, երբ ատամները պատրաստվել են):

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք գանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



Ոչ-Medicare ապահովագրված շտապ ատամնաբուժական խնամք

Ոչ-Medicare ապահովագրված շտապ օգնության ծառայությունները նշանակում են ատամնաբույժի կողմից տրամադրվող խնամք՝ ատամնաբուժական խնդրի համար, որը դրսևորվում է բավարար ծանրության ախտանիշով, ներառյալ ուժեղ ցավ, այնպիսին, որ անդամի կողմից անհապաղ ուշադրության բացակայությունը կարող է ողջամտորեն ակնկալել, որ կհանգեցնի հետևյալից որևէ մեկին. (i) լուրջ վտանգի տակ կդնի անդամի ատամների առողջությունը, կամ (ii) ատամնաբուժական գործառույթների լուրջ խանգարում կառաջացնի:

Տարածքում ոչ- Medicare ապահովագրված շտապ ատամնաբուժական խնամք

Եթե կարծում եք, որ Ձեզ անհրաժեշտ է Medicare-ի կողմից չապահովագրված շտապ ատամնաբուժական օգնություն և գտնվում եք Blue Shield TotalDual Plan-ի սպասարկման տարածքում, անմիջապես զանգահարեք Ձեզ նշանակված ցանցի ատամնաբույժին: Ատամնաբուժական ընդունարանի աշխատակիցները Ձեզ խորհուրդ կտան, թե ինչ անել:

Տարածքից դուրս, ոչ-Medicare ապահովագրված շտապ ատամնաբուժական խնամք

Եթե Դուք Blue Shield TotalDual Plan սպասարկման տարածքից դուրս եք և պահանջում եք ոչ-Medicare-ի ապահովագրված շտապ ատամնաբուժական խնամք, Դուք կարող եք բուժում ստանալ ցանկացած լիցենզավորված ատամնաբույժից: Այս ծառայությունները, որոնք Դուք ստանում եք տարածքից դուրս գտնվող ատամնաբույժից, ապահովագրվում են մինչև \$100 (բացառությամբ ցանկացած կիրառելի անդամների համավճարներ), քանի դեռ ցանցի մատակարարին փոխանցումը Ձեզ համար առողջապահական վտանգ է:

Տարածքից դուրս, ոչ-Medicare ապահովագրված շտապ ատամնաբուժական օգնության փոխհատուցում.

Ձեզ կփոխհատուցվի մինչև \$100 գումար (բացառությամբ անդամների ցանկացած կիրառելի համավճարները) ապահովագրված տարածքից դուրս ոչ-Medicare ապահովագրված արտակարգ իրավիճակի ատամնաբուժական ծառայությունների արժեքը: Հնարավորության դեպքում Դուք պետք է խնդրեք Ձեր ատամնաբույժին հաշիվն ուղղակիորեն ուղարկել Blue Shield-ի ստորև նշված հասցեով:

Փոխհատուցում ստանալու համար ներկայացրեք Ձեր փոխհատուցման հարցումը, վճարման անդորրագիրը և մատուցված ծառայությունների գրավոր նկարագրությունը.

Blue Shield of California
Claims Department
P.O. Box 1803
Alpharetta, GA 30023

Հայցերը ներկայացնելու ժամանակային սահմանափակումներ կան: Ընդհանուր առմամբ, ծառայությունների համար հաշիվները պետք է ներկայացվեն Blue Shield-ին՝ ծառայության օրվանից սկսած մեկ տարվա ընթացքում, եթե ավելի ուշ ներկայացնելու պատճառ չկա:

Մեր DPA-ն կվերանայի Medicare-ի կողմից ապահովագրված շտապ ատամնաբուժական ծառայությունը, որը Դուք ստացել եք և կտեղեկացնի Ձեզ հայցը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, եթե Դուք իրավասու եք փոխհատուցման համար: Բացառությամբ ոչ-Medicare ապահովագրված շտապ ատամնաբուժական ծառայությունների, Դուք պատասխանատու կլինեք ատամնաբուժական ծառայությունների ամբողջական վճարման համար, որոնք ստանում եք Կալիֆորնիայից դուրս:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



Հատուցման պահանջի մերժում տարածքից դուրս ոչ-Medicare ապահովագրված արտակարգ իրավիճակների ատամնաբուժական խնամքի համար

Եթե տարածքից դուրս ոչ-Medicare ապահովագրված արտակարգ իրավիճակի ատամնաբուժական խնամքի Ձեր հայցը մասամբ կամ ամբողջությամբ մերժվել է, DPA-ը Ձեզ գրավոր կտեղեկացնի որոշման մասին: Ծանուցումը կներառի մերժման կոնկրետ պատճառը և կտեղեկացնի Ձեզ, որ Դուք կարող եք պահանջել մերժման վերանայում:

Մերժման կամ մասնակի մերժման վերանայման պահանջի համար գրավոր ծանուցում ներկայացրեք Blue Shield TotalDual Plan-ին մերժման մասին գրավոր ծանուցման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում: Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 9-ը*:

Ատամների խնամքի համար երկրորդ կարծիքի ստացում

Դուք կարող եք երկրորդ կարծիք պահանջել, եթե համաձայն չեք կամ կասկածի տակ եք դնում ախտորոշումը և/կամ Ձեր ցանցային ատամնաբույժի կողմից կատարված բուժման պլանի որոշումը: DPA-ն նույնպես կարող է պահանջել, որ Դուք երկրորդ կարծիք ստանաք ստուգելու ատամնաբուժական բուժման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը կամ նպաստների կիրառումը:

Երկրորդ կարծիքը ժամանակին կտրամադրվի լիցենզավորված ատամնաբույժի կողմից՝ Ձեր առողջական խնդրի բնույթին համապատասխան: Առողջության անմիջական և լուրջ վտանգի դեպքերին առնչվող հարցումները կարագացվեն (լիազորումը կհաստատվի կամ մերժվի հարցումն ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում, հնարավորության դեպքում): Բուժգործողությունների կամ երկրորդ կարծիքի թույլտվությունների ժամկետների վերաբերյալ աջակցության կամ լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարեք DPA-ի հաճախորդների սպասարկման բաժին **866-247-2486 [TTY՝ 711]** հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր (բացի տոն օրերից) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը, աշխատանքային օրերին՝ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը կամ գրեք DPA-ին:

Երկրորդ կարծիքը կտրամադրվի մեկ այլ ներցանցային ատամնաբույժի հաստատությունում, եթե DPA-ի կողմից լիազորված այլ բան չկա: DPA-ն կթույլատրի երկրորդ կարծիքը ցանցից դուրս մատակարարի կողմից, եթե հասանելի չէ համապատասխան որակավորում ունեցող ներցանցային ատամնաբույժ: DPA-ն կվճարի միայն երկրորդ կարծիքի համար, որը DPA-ը հաստատել կամ լիազորել է: Ձեզ գրավոր կուղարկվի ծանուցում, եթե DPA-ն որոշի չթույլատրել երկրորդ կարծիքը: Եթե համաձայն չեք այս որոշման հետ, Դուք կարող եք բողոքարկում ներկայացնել Blue Shield TotalDual Plan-ին: Ուսումնասիրեք *Բողոքների և Բողոքարկումների* բաժինը՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

Նպաստների համակարգում՝

Սույն ծրագիրը տրամադրում է նպաստներ՝ հաշվի չառնելով որևէ այլ խմբային ապահովագրության քաղաքականությամբ կամ որևէ այլ խմբային առողջապահական նպաստներով ծրագրի ծածկույթը, եթե մյուս քաղաքականությունը կամ ծրագիրը ներառում է ծառայություններ կամ ծախսեր, բացի ատամնաբուժական խնամքից: Հակառակ դեպքում մասնագետների կամ ցանցից դուրս գտնվող ատամնաբույժների կողմից սույն ծրագրով նախատեսված արտոնությունները համաձայնեցվում են խմբային ատամնաբուժական ապահովագրության այլ քաղաքականությունների կամ ատամնաբուժական նպաստների որևէ խմբային ծրագրի հետ: Քաղաքականության կամ ծրագրի առաջնային լինելը որոշելը պետք է կարգավորվի պայմանագրում նշված կանոններով:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 147



Եթե այս ծրագիրը երկրորդական է, ապա այն կվճարի նվազագույնը.

- Այն գումարը, որը կվճարեր որևէ այլ ատամնաբուժական նպաստի բացակայության դեպքում, կամ
- Անդամի ընդհանուր, գրպանից վճարված ծախսը, որը վճարվում է առաջնային ատամնաբուժական նպաստների ծրագրի շրջանակներում այնքան ժամանակ, քանի դեռ արտոնությունները ծածկված են սույն ծրագրի ներքո:

Անդամը պետք է DPA-ին տրամադրի, իսկ DPA-ն կարող է հրատարակել կամ որևէ ապահովագրական ընկերությունից կամ այլ կազմակերպությունից ձեռք բերել անդամի մասին ցանկացած տեղեկատվություն, որն անհրաժեշտ է կառավարելու նպաստների համակարգումը: DPA-ն, իր իսկ հայեցողությամբ, պետք է որոշի, թե արդյոք ապահովագրական ընկերությանը կամ այլ կազմակերպությանը որևէ փոխհատուցում երաշխավորվում է սույն հոդվածում նկարագրված նպաստների դրույթների համակարգման ներքո և ցանկացած նմանատիպ վճարված փոխհատուցում պետք է համարվի սույն պայմանագրով նախատեսված նպաստ: DPA-ն իրավունք կունենա ատամնաբույժից, անդամից, ապահովագրական ընկերությունից կամ այլ կազմակերպությունից, ինչպես կընտրի DPA-ը, վերականգնել DPA-ի կողմից վճարված ցանկացած նպաստի գումար, որը գերազանցում է սույն հոդվածում նկարագրված նպաստների դրույթների համաձայնեցման ներքո ստանձնած պարտավորությունները:

Բողոքարկման և բողոքների գործընթաց

Մեր հանձնառությունն է ապահովել ոչ միայն խնամքի որակը, այլ նաև որակը բուժման գործընթացում: Բուժման այս որակը տարածվում է ցանցային ատամնաբույժների կողմից մատուցվող մասնագիտական ծառայություններից մինչև մեր հեռախոսային ներկայացուցիչների կողմից Ձեզ տրամադրված քաղաքավարությունը: Եթե ունեք որևէ հարց կամ բողոք իրավունակության, ատամնաբուժական ծառայությունների կամ հայցերի մերժման, DPA-ի քաղաքականությունների, ընթացակարգերի կամ գործողությունների կամ ներցանցային ատամնաբույժի կողմից իրականացվող ատամնաբուժական ծառայությունների որակի վերաբերյալ, Դուք իրավունք ունեք բողոք ներկայացնել կամ բողոքարկել Blue Shield TotalDual Plan-ին: Խնդրում ենք մուտք գործել Ձեր *Անդամի տեղեկագրի Գլուխ 9*՝ բողոք կամ բողոքարկում ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար: Հարցեր ունենալու դեպքում զանգահարեք DPA՝ **(866) 247-2486 [TTY՝ 711] հեռախոսահամարով**, 8:00-ից 20:00, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը և աշխատանքային օրերին՝ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը: Կարող եք նաև կապ հաստատել Blue Shield TotalDual Plan-ի հաճախորդների սպասարկման բաժնի հետ (հեռախոսահամարները տպված են այս փաստաթղթի հետևի շապիկին):

Ընդհանուր սահմանափակումներ սովորական ատամնաբուժական HMO Plan-ի համար

1. Բերանի ստուգումները սահմանափակվում են մեկ (1) այցելությամբ՝ յուրաքանչյուր երեք (3) օրացուցային տարին մեկ՝ ըստ մատակարարի կամ գտնվելու վայրի (D0150):
2. Պրոֆիլակտիկական կամ ատամնաքարերի մաքրումը սահմանափակվում է երկու (2) այցելությամբ՝ օրացուցային տարվա ընթացքում (D1110):
3. Ֆտորի տեղային կիրառումը (բացառությամբ լաքի) սահմանափակվում է երկու (2) այցելությամբ՝ օրացուցային տարվա ընթացքում (D1208):

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 148



4. Պսակ. ազնիվ մետաղի հետ միաձուլված ճենապակին սահմանափակվում է 2-ով՝ օրացուցային տարվա ընթացքում (D2750):

5. Ատամների պրոթեզ. անմիջական դիմաձևտային մասնակի ատամնաշար, ձուլածո մետաղական շրջանակ խեժային պրոթեզով հիմքեր (ներառյալ պահող/կպչող նյութեր, նեցուկներ և ատամներ) 1 հատ յուրաքանչյուր 5 օրացուցային տարին մեկ, յուրաքանչյուր հիվանդի համար մեկ կամարով (D5223):

6. Պարոդոնտիկա. լնդային եզրի բուժգործողություն, ներառյալ արմատների մաքրում քարերից, մեկից երեք հարող ատամներ կամ ատամների սահմանափակ տարածություններ մեկ քառորդում 1, մեկ քառորդում՝ յուրաքանչյուր 3 օրացուցային տարին մեկ (D4241):

7. Ատամների մասնակի պրոթեզները սահմանափակվում են մեկով (1)՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա համար (D5820 և D5821):

8. Ծախսը, որը կառաջանա օրթոդոնտիկ բուժում ստացող անդամի համար, որի ծածկույթը չեղարկվել կամ կամ որևէ պատճառով դադարեցվել է, հիմնված կլինի ներցանցային օրթոդոնտի կողմից բուժման ծրագրի համար նախատեսված սովորական վճարի վրա: Ներցանցային օրթոդոնտը համեմատականորեն կրաշիսի գումարի չափը բուժման ավարտին մնացած ամիսների վրա: Անդամը վճարում է ուղղակիորեն ներցանցային օրթոդոնտին, ինչպես նախատեսված է:

Ընդհանուր բացառումներ սովորական ատամնաբուժական HMO Plan-ի համար

1. Ցանկացած բուժգործողություն, որը հատուկ նշված չէ *Ատամնաբուժական նպաստների սովորական ընթացակարգերի աղյուսակում*:

2. Ցանկացած բուժգործողություն, որը ներցանցային ատամնաբույժի մասնագիտական կարծիքով.

- a. ունի հաջող արդյունքի վատ կանխատեսում և հիմնավորված երկարակեցություն՝ հիմնվելով ատամի կամ ատամների և/կամ հարակից կառուցվածքների վիճակից, կամ
- b. անհամապատասխան է ատամնաբուժության ընդհանուր ընդունված չափանիշներին:

3. Ծառայություններ բացառապես կոսմետիկ նպատակներով կամ այն առողջական խնդիրների համար, որոնք ժառանգական կամ զարգացող արատների արդյունք են, ինչպիսիք են քիմքի ճեղքվածքը, վերին և ստորին ծնոտի արատները, բնածին բացակայող ատամները և գունաթափված կամ էմալը բացակայող ատամները:

4. Կորցրած կամ գողացված սարքեր, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում ամբողջական կամ ատամների մասնակի պրոթեզներով, տարածություն պահպանողներով, պսակներով և ատամների ֆիքսված մասնակի պրոթեզներով (կամուրջներով):

5. Բուժգործողություններ, սարքեր կամ վերականգնում, եթե նպատակը ուղղահայաց չափը փոխելը կամ կրծոսկր-անրակային հոդի անոմալ խնդիրներն ախտորոշելը կամ բուժելն է:



6. Թանկարժեք մետաղ շարժական սարքերի համար, մետաղական կամ մշտական փափուկ հիմքեր ամբողջովին արհեստական ատամնաշարի, ճենապակյա արհեստական ատամնաշարի ատամների, շարժական մասնակի կամ ֆիքսված մասնակի արհեստական ատամնաշարերի ամրության նեցուկներ (ծածկույթներ, իմպլանտներ և դրանց հետ կապված սարքեր), ինչպես նաև ամբողջական և մասնակի արհեստական ատամնաշարերի անհատականացում և բնութագրում:
7. Իմպլանտների վրա հիմնված ատամնաբուժական սարքեր և կցորդներ, իմպլանտների տեղադրում, սպասարկում, հեռացում և բոլոր այլ ծառայությունները, որոնք կապված են ատամնաբուժական իմպլանտի հետ:
8. Խորհրդատվություն չճածկվող նպաստների համար:
9. Ատամնաբուժական ծառայություններ, որոնք ստացվել են ցանկացած ատամնաբուժական հաստատությունից, բացի նշանակված ներցանցային ատամնաբույժից, նախապես լիազորված ստոմատոլոգից կամ ներցանցային օրթոդոնտից, բացառությամբ հրատապ ատամնաբուժական խնամքի ծառայություններից, ինչպես նկարագրված է Ապահովագրության ապացույցում:
10. Հիվանդանոցում, ամբուլատոր վիրաբուժության կենտրոնում, ընդլայնված խնամքի հաստատությունում կամ այլ նմանատիպ խնամքի հաստատությունում ընդունվելուն, ծառայություններից օգտվելուն կամ մնալուն առնչվող բոլոր վճարները:
11. Դեղատոմսով դեղեր:
12. Ցանկացած ատամնաբուժական կամ օրթոդոնտիկ բուժգործողություններին առնչվող ատամնաբուժական ծախսերը՝ նախքան անդամի՝ Blue Shield TotalDual Plan-ում իրավունակությունն սկսելը: Օրինակները ներառում են՝ ատամներ՝ պատրաստված պսակների, բուժման ընթացքի մեջ եղող արմատախողովակների, ամբողջական կամ մասնակի արհեստական ատամնաշարերի համար, որոնց համար դրոշմվածք և օրթոդոնտիա է արվել:
13. Փոփոխություններ օրթոդոնտիկ բուժման մեջ, որոնք անհրաժեշտ են ցանկացած տեսակի պատահարների դեպքում:
14. Միֆունկցիոնալ և պարաֆունկցիոնալ սարքեր և/կամ թերապիաներ:
15. Կոմպոզիտային կամ կերամիկական բրեկետներ, օրթոդոնտիկ ժապավենների լեզվական հարմարեցում և այլ մասնագիտացված կամ կոսմետիկ այլընտրանքներ ստանդարտ ֆիքսված և շարժական օրթոդոնտիկ սարքերին:
16. Ատամների հեռացում, երբ ատամներն ասիմպտոմատիկ/ոչ պաթոլոգիական են (առանց պաթոլոգիայի կամ վարակի որևէ նշանի կամ ախտանիշի), որը ներառում, բայց չի սահմանափակվում երրորդ սեղանատամների հեռացմամբ և օրթոդոնտիկ հեռացումներով:
17. Ատամների միջանկյալ մասնակի պրոթեզները (մասնակի ատամնաշար)՝ ֆիքսված կամ շարժական սարքերի հետ համատեղ, սահմանափակվում են չափահասների համար հանված առջևի ատամների փոխարինմամբ ապաքինման ժամանակահատվածում, երբ ատամները չեն կարող ավելացվել գոյություն ունեցող մասնակի ատամնաշարին:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



18. Փափուկ հյուսվածքների կառավարման ծրագրի նպաստները սահմանափակվում են այն հատվածներով, որոնք նշված են *Ատամնաբուժական նպաստների սովորական ընթացակարգերի աղյուսակի* ապահովագրված ծառայություններում: Եթե անդամը հրաժարվում է փափուկ հյուսվածքների կառավարման ծրագրի շրջանակներում չապահովագրվող ծառայություններից, այն չի վերացնում կամ փոփոխում այլ ապահովագրված նպաստները:

19. Բուժում կամ սարքավորումներ, որոնք տրամադրվում են ատամնաբույժի կողմից, որի պրակտիկան մասնագիտացած է պրոթեզավորման ծառայությունների մեջ:

20. Օրթոդոնտիկ բուժումը պետք է իրականացվի լիցենզավորված ատամնաբույժի կողմից: Ինքնակառավարվող օրթոդոնտիկան ապահովագրված չէ:

21. Ֆիքսված օրթոդոնտիկ սարքերի հեռացումը բուժման ավարտից բացի այլ պատճառներով ապահովագրված նպաստ չէ:

E. Նպաստներ, որոնք ծածկված են մեր ծրագրից դուրս

Մենք չենք ապահովագրում հետևյալ ծառայությունները, բայց դրանք հասանելի են Original Medicare կամ Medi-Cal fee-for service-ի միջոցով:

E1. California Community Transitions (CCT)

California Community Transitions (CCT) ծրագիրն օգտագործում է տեղական առաջատար կազմակերպությունները՝ օգնելու Medi-Cal-ի իրավունակ այն շահառուներին, ովքեր առնվազն 90 օր անընդմեջ ապրել են ստացիոնար հաստատությունում, վերադառնալ և ապահով մնալ համայնքային միջավայրում: CCT ծրագիրը ֆինանսավորում է անցումային համակարգման ծառայությունները նախաանցումային ժամանակահատվածում և անցումից հետո 365 օրվա ընթացքում՝ օգնելու շահառուներին համայնքային միջավայր վերադառնալու ընթացքում:

Դուք կարող եք ստանալ անցումային համակարգման ծառայություններ ցանկացած CCT առաջատար կազմակերպությունից, որը սպասարկում է այն վարչաշրջանը, որտեղ Դուք ապրում եք: CCT առաջատար կազմակերպությունների և նրանց կողմից սպասարկվող վարչաշրջանների ցանկը կարող եք գտնել Առողջապահական խնամքի ծառայությունների վարչության կայքում՝ www.dhcs.ca.gov/services/ltc/Pages/CCT.

CCT անցումային համակարգման ծառայություններ

Medi-Cal-ը վճարում է անցումային համակարգման ծառայությունների համար: Դուք ոչինչ չեք վճարում այս ծառայությունների համար:

Ծառայությունների համար, որոնք չեն առնչվում Ձեր CCT անցման հետ

Մատակարարը մեզ հաշիվ է ուղարկում Ձեր ծառայությունների համար: Մեր ծրագիրը վճարում է Ձեր անցումից հետո մատուցվող ծառայությունների համար: Դուք ոչինչ չեք վճարում այս ծառայությունների համար:

Մինչ Դուք ստանում եք CCT անցման համակարգման ծառայություններ, մենք վճարում ենք **Բաժին D**-ի Նպաստների աղյուսակում նշված ծառայությունների համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 151



Դեղերի ապահովագրման նպաստի փոփոխություն չկա

CCT ծրագիրը չի ապահովագրում դեղերը: Դուք շարունակում եք ստանալ դեղերի Ձեր սովորական նպաստը մեր ծրագրի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք Անդամի ձեռնարկի **Գլուխ 5**-ը:

Նշում. Եթե Ձեզ անհրաժեշտ է ոչ CCT անցումային խնամք, զանգահարեք Ձեր խնամքի համակարգողին՝ ծառայությունները կազմակերպելու համար: Ոչ CCT անցումային խնամքն այնպիսի խնամք է, որը չի առնչվում հաստատությունից Ձեր անցման հետ:

E2. Medi-Cal Dental Program

Որոշ ատամնաբուժական ծառայություններ հասանելի են Medi-Cal Dental Program-ի միջոցով, որը ներառում, բայց չի սահմանափակվում այնպիսի ծառայություններով, ինչպիսիք են

- նախնական հետազոտությունները, ռենտգենյան ճառագայթները, մաքրումները և ֆտորով բուժումները,
- վերականգնումները և պսակները,
- ատամնաբուժական խողովակի թերապիան,
- ատամների մասնակի և ամբողջական պրոթեզները, շտկումները, վերանորոգումները և պրոթեզների կրկին կրկին տեղադրումը:

Ատամնաբուժական նպաստները հասանելի են Medi-Cal Dental Fee-For-Service Program-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար կամ եթե օգնության կարիք ունեք Medi-Cal-ն ընդունող ատամնաբույժ գտնելու համար, դիմեք հաճախորդների սպասարկման գիծ՝ 1-800-322-6384 հեռախոսահամարով (TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-800-735-2922 հեռախոսահամարով): Հեռախոսազանգն անվճար է: Medi-Cal Dental Services Program-ի ներկայացուցիչները հասանելի են Ձեզ օգնելու 8:00-ից մինչև 17:00, երկուշաբթիից ուրբաթ: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք նաև այցելել www.dental.dhcs.ca.gov կայքը:

Բացի Medi-Cal Dental Fee-For-Service Program-ից, Դուք կարող եք ատամնաբուժական նպաստներ ստանալ ատամնաբուժական կառավարվող խնամքի ծրագրի միջոցով: Ատամների կառավարվող խնամքի ծրագրերը հասանելի են Sacramento և Los Angeles վարչաշրջաններում: Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ ատամնաբուժական ծրագրերի մասին կամ ցանկանում եք փոխել ատամնաբուժական ծրագրերը, դիմեք Health Care Options-ին՝ 1-800-430-4263 հեռախոսահամարով (TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-800-430-7077 հեռախոսահամարով), երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Զանգն անվճար է:

Նշում. մեր ծրագիրն առաջարկում է լրացուցիչ ատամնաբուժական ծառայություններ: Լրացուցիչ տեղեկությունների համար տես **Բաժին D**-ի նպաստների աղյուսակը:

E3. Հոսփիսի (անբուժելի հիվանդների) խնամք

Դուք իրավունք ունեք ընտրելու հոսփիս, եթե Ձեր մատակարարը և հոսփիսի բժշկական տնօրենը որոշեն, որ Դուք մահացու կանխատեսում ունեք: Սա նշանակում է, որ Դուք ունեք մահացու հիվանդություն և ակնկալվում է, որ Դուք կունենաք 6 կամ ավելի քիչ ամիս ապրելու համար: Դուք կարող եք բուժօգնություն ստանալ Medicare-ի կողմից վկայագրված ցանկացած հոսփիս ծրագրից: Ծրագիրը պետք է օգնի Ձեզ գտնել Medicare-ի կողմից վկայագրված հոսփիսային ծրագրեր: Ձեր հոսփիսի բժիշկը կարող է լինել ցանցի մատակարար կամ ցանցից դուրս մատակարար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 152



Տե՛ս **Բաժին D**-ի նպաստների աղյուսակը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու այն մասին, թե ինչի համար ենք մենք վճարում, մինչ Դուք ստանում եք հոսփիսի խնամքի ծառայություններ:

Հոսփիսի ծառայությունները և այն ծառայությունները, որոնք ծածկվում են Medicare Part A-ով կամ Medicare Part B-ով, որոնք վերաբերում են Ձեր մահացու կանխատեսմանը:

- Հոսփիսի մատակարարը Ձեր ծառայությունների համար հաշիվ է ներկայացնում Medicare-ին: Medicare-ը վճարում է հոսփիսային ծառայությունների համար, որոնք առնչվում են Ձեր մահացու կանխատեսմանը: Դուք ոչինչ չեք վճարում այս ծառայությունների համար:

Medicare Part A-ով կամ Medicare Part B-ով ապահովագրված ծառայությունների համար, որոնք չեն առնչվում Ձեր մահացու կանխատեսմանը

- Մատակարարը Ձեր ծառայությունների համար հաշիվ կներկայացնի Medicare-ին: Medicare-ը կվճարի Medicare Part A-ով կամ Medicare Part B-ով ապահովագրված ծառայությունների համար: Դուք ոչինչ չեք վճարում այս ծառայությունների համար:

Դեղերի համար, որոնք կարող են ապահովագրվել մեր ծրագրի Medicare Part D-ի նպաստով

- Դեղերը երբեք միաժամանակ չեն ապահովագրվում և՛ հոսփիսի և՛ մեր ծրագրի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք *Ձեր Անդամի տեղեկագրի Գլուխ 5*-ը:

Նշում. Եթե Ձեզ անհրաժեշտ է ոչ հոսփիսային խնամք, զանգահարեք Ձեր խնամքի համակարգողին՝ ծառայությունները կազմակերպելու համար: Ոչ հոսփիսային խնամքն այն խնամքն է, որը կապված չէ Ձեր մահացու կանխատեսման հետ:

E4. Տնային աջակցության ծառայություններ (In-Home Supportive Services (IHSS))

- IHSS Program-ը կօգնի վճարել Ձեզ մատուցվող ծառայությունների համար, որպեսզի Դուք կարողանաք ապահով լինել Ձեր սեփական տանը: IHSS-ը համարվում է տանից դուրս խնամքի այլընտրանք, ինչպիսիք են ծերանոցները կամ գիշերօթիկ և խնամքի հաստատությունները:
- Ծառայությունների տեսակները, որոնք կարող են լիազորվել IHSS-ի միջոցով հետևյալն են՝ տան մաքրում, ճաշի պատրաստում, լվացք, մթերային գնումներ, անձնական խնամքի ծառայություններ (օրինակ՝ աղիների և միզապարկի խնամք, լոզանք, հարդարանք և պարափժշկական ծառայություններ), փժշկական այցերի ուղեկցում և պաշտպանական հսկողություն մտավոր խնդիրներ ունեցողների համար:
- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել Ձեզ դիմել IHSS-ի համար Ձեր վարչաշրջանի սոցիալական ծառայության գործակալությանը: Դիմելու համար կարող եք նաև դիմել Los Angeles-ի IHSS գրասենյակ՝ (888) 944-4477 և San Diego-ի IHSS գրասենյակ (800) 339-4661 հեռախոսահամարով:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



E5. 1915(c) Տնային և համայնքահեն ծառայություններից (HCBS) հրաժարվելու ծրագրեր

Assisted Living Waiver (ALW)

- Assisted Living Waiver-ը (ALW) Medi-Cal-ի իրավունակ շահառուներին առաջարկում է աջակցվող բնակավայրում բնակվելու ընտրություն՝ որպես ծերանոցում երկարատև տեղավորման այլընտրանք: ALW-ի նպատակն է հեշտացնել ծերանոցից անցումը դեպի տնային և համայնքային միջավայր կամ կանխել հմուտ բուժքույրական հաստատություններ ընդունելությունն այն շահառուների համար, ովքեր ծերանոց տեղավորվելու անմիջական կարիք ունեն:
- Անդամները, ովքեր ընդգրկված են LAW-ում և տեղափոխվել են Medi-Cal Կառավարվող խնամքին, կարող են մնալ LAW-ում ընդգրկված՝ միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրն աշխատում է Ձեր ALW խնամքի համակարգող գործակալության հետ՝ Ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:
- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել Ձեզ դիմել ALW-ի համար: Դուք կարող եք գտնել տեղական գործակալություններ, որոնք կարող են համակարգել Ձեր խնամքը ALW ծրագրի համար այստեղ՝ dhcs.ca.gov/services/ltc/Documents/Care-Coordination-Agencies.pdf.

HCBS Waiver Զարգացմանն առնչվող հաշմանդամություն ունեցող Կալիֆորնիայի բնակիչների համար (HCBS-DD)

California Self-Determination Program (SDP) Waiver զարգացմանն առնչվող հաշմանդամություն ունեցող անձանց համար

- Գոյություն ունի 1915(c) երկու հրաժարում՝ HCBS-DD Waiver-ը և SDP Waiver-ը, որոնք ծառայություններ են մատուցում այն մարդկանց, ում մոտ ախտորոշվել է զարգացմանն առնչվող հաշմանդամություն, որը սկսվում է մինչև անհատի 18-ամյակը լրանալը և ակնկալվում է, որ այն կշարունակվի անորոշ ժամանակով: Երկու հրաժարումները որոշակի ծառայություններ ֆինանսավորելու միջոց են, որոնք թույլ են տալիս զարգացմանն առնչվող հաշմանդամություն ունեցող անձանց ապրել տանը կամ համայնքում, այլ ոչ թե բնակվել լիցենզավորված առողջապահական հաստատությունում: Այս ծառայությունների ծախսերը համատեղ ֆինանսավորվում են դաշնային կառավարության Medicaid ծրագրի և Կալիֆորնիա նահանգի կողմից: Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել Ձեզ կապվել DD Waive-ի ծառայություններին:

Տնային և համայնքահեն այլընտրանքից (HCBA) հրաժարում

- HCBA Waiver-ը խնամքի կառավարման ծառայություններ է տրամադրում ծերանոցում կամ հաստատությունում տեղակայման ռիսկի տակ գտնվող անձանց: Խնամքի կառավարման ծառայությունները տրամադրվում են բազմամասնագիտական խնամքի կառավարման թիմի կողմից, որը բաղկացած է բուժքույրից և սոցիալական աշխատողից: Թիմը համակարգում է հրաժարման և նահանգային ծրագրի ծառայությունները (ինչպես օրինակ՝ բժշկական, վարքագծային առողջություն, Տնային աջակցության ծառայություններ և այլն) և կազմակերպում է տեղական համայնքում

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



հասանելի այլ երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն: Խնամքի կառավարման և հրաժարման ծառայությունները տրամադրվում են մասնակցի համայնքում հիմնված բնակության վայրում: Այս բնակավայրը կարող է լինել մասնավոր սեփականություն, ապահովված լինել վարձակալի վարձակալության պայմանագրով կամ մասնակցի ընտանիքի անդամի բնակության վայրը լինել:

- Անդամները, ովքեր ընդգրկված են HCBA Waiver-ում և անցել են Medi-Cal Managed Care-ին, կարող են մնալ HCBA Waiver-ում գրանցված միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրը համագործակցում է Ձեր HCBA-ի հրաժարման գործակալության հետ՝ Ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:
- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել Ձեզ դիմել ALW-ի համար: Դուք կարող եք գտնել տեղական գործակալություններ, որոնք կարող են համակարգել Ձեր խնամքը ALW ծրագրի համար այստեղ dhcs.ca.gov/services/ltc/Documents/Care-Coordination-Agencies.pdf:

Medi-Cal Waiver Program (MCWP)

- Medi-Cal Waiver Program-ն (MCWP) ապահովում է դեպքերի համապարփակ կառավարում և խնամքի անմիջական ծառայություններ ՄԻԱՎ-ով ապրող անձանց՝ որպես ձերանոցի խնամքի կամ հոսպիտալացման այլընտրանք: Գործի կառավարումը մասնակցակենտրոն, թիմային մոտեցում է, որը բաղկացած է գրանցված բուժքույրից և սոցիալական աշխատանքի մենեջերից: Գործի կառավարիչներն աշխատում են մասնակցի և առաջնային խնամքի մատակարար(ներ)ի, ընտանիքի, խնամակալ(ներ)ի և այլ ծառայություններ մատուցողների հետ՝ գնահատելու խնամքի կարիքները՝ մասնակցին պահելու իր տանը և համայնքում:
- MCWP-ի նպատակներն են. (1) տնային և համայնքային ծառայություններ տրամադրել ՄԻԱՎ-ով վարակված անձանց, ովքեր այլ կերպ կարող են պահանջել ինստիտուցիոնալ ծառայություններ, (2) ՄԻԱՎ-ով մասնակցներին աջակցել առողջության կառավարման հարցում. (3) բարելավել սոցիալական և վարքագծային առողջության աջակցության հասանելիությունը և (4) համակարգել ծառայություններ մատուցողներին և վերացնել ծառայությունների կրկնօրինակումը:
- Այն անդամները, ովքեր ընդգրկված են MCWP Waiver-ում և անցել են Medi-Cal Managed Care-ին, կարող են մնալ MCWP Waiver-ում գրանցված միաժամանակ նաև ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրն աշխատում է Ձեր MCWP-ի հրաժարման գործակալության հետ՝ Ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:
- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել Ձեզ դիմել MCWP-ի համար: ՉԻԱՀ-ի տարածաշրջանային տեղեկատվական և գնահատման համակարգը (ARIES) բաց է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից մինչև 17:00 (խաղաղօվկիանոսյան ժամանակով): Help Desk-ի հետ կապ հաստատելու համար.
 - Ձանգահարեք 1-866-411-ARIES (2743) հեռախոսահամարով կամ
 - ARIES Help Desk-ի հարցում ուղարկեք aries@cdph.ca.gov հասցեով և ներառեք Ձեր անունը, գործակալությունը, հեռախոսահամարը, հարցը/խնդիրը: ՄԻ ներառեք հաճախորդի որևէ տվյալ:



Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիր (Multipurpose Senior Services Program, MSSP)

- Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիրը (MSSP) տրամադրում է ն՝ սոցիալական և՝ առողջապահական խնամքի կառավարման ծառայություններ՝ օգնելու անհատներին մնալ իրենց տներում և համայնքներում:
- Մինչ ծրագրի մասնակիցների մեծ մասը նաև ստանում է Տնային աջակցության ծառայություններ, MSSP-ն ապահովում է շարունակական խնամքի համակարգում, մասնակիցներին կապում է այլ անհրաժեշտ համայնքային ծառայությունների և ռեսուրսների հետ, համակարգում է առողջապահական ծառայություններ մատուցողների հետ և գնում է որոշ անհրաժեշտ ծառայություններ, որոնք այլ կերպ հասանելի չեն ինստիտուցիոնալացումը կանխելու կամ հետաձգելու համար: Խնամքի կառավարման և այլ ծառայությունների ընդհանուր տարեկան համակցված արժեքը պետք է ավելի ցածր լինի, քան հմուտ բուժքույրական հաստատությունում խնամք ստանալու արժեքը:
- Առողջապահության և սոցիալական ծառայությունների մասնագետների թիմը MSSP-ի յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է առողջության և հոգեբանա-սոցիալական ամբողջական գնահատում՝ անհրաժեշտ ծառայությունները որոշելու համար: Այնուհետև թիմն աշխատում է MSSP-ի մասնակցի, նրա բժշկի, ընտանիքի և այլոց հետ՝ անհատական խնամքի ծրագիր մշակելու համար: Ծառայություններն ընդգրկում են՝
 - խնամքի կառավարում
 - չափահասի ցերեկային խնամք
 - տան աննշան վերանորոգում/սպասարկում
 - լրացուցիչ տնային աշխատանք, անձնական խնամք և պաշտպանիչ հսկողության ծառայություններ
 - հանգստի ծառայություններ
 - փոխադրման ծառայություններ
 - խորհրդատվական և թերապևտիկ ծառայություններ
 - ճաշի ծառայություններ
 - հաղորդակցական ծառայություններ:
- Անդամները, ովքեր ընդգրկված են MSSP Waiver-ում և անցել են Medi-Cal Managed Care-ին, կարող են մնալ MSSP Waiver-ում գրանցված միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված արտոնությունները: Մեր ծրագիրը համագործակցում է Ձեր MSSP-ի մատակարարի հետ՝ Ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 156



- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել Ձեզ դիմել MSSP-ի համար: Դուք կարող եք MSSP մատակարար գտնել Ձեր տարածքում՝ զանգահարելով Կալիֆոռնիայի Տարեցների բաժին՝ 1-800-510-2020 հեռախոսահամարով կամ Կալիֆոռնիայի Տարեցներին վարչության կայքի «Գտնել ծառայություններ իմ վարչաշրջանում» էջում ընտրելով Ձեր վարչաշրջանը https://aging.ca.gov/Find_Services_in_My_County/#tblServicesInMyCounty

F. Նպաստներ, որոնք չեն ծածկվում մեր ծրագրով, Medicare-ով կամ Medi-Cal-ով

Այս բաժինը Ձեզ տեղեկություններ է տրամադրում մեր ծրագրի կողմից բացառված նպաստների մասին: «Բացառված» նշանակում է, որ մենք չենք վճարում այս նպաստների համար: Medicare-ը և Medi-Cal-ը նույնպես չեն վճարում դրանց համար:

Ստորև բերված ցանկը նկարագրում է որոշ ծառայություններ և ապրանքներ, որոնք ոչ մի պայմանով չեն փոխհատուցվում մեր կողմից, իսկ որոշները բացառված են միայն որոշ դեպքերում:

Մենք չենք վճարում այս բաժնում նշված բացառված բժշկական նպաստների համար (կամ այս *Անդամի տեղեկագրի ցանկացած այլ հատվածում*), բացառությամբ թվարկված առանձնահատուկ պայմանների: Նույնիսկ եթե Դուք ծառայություններ եք ստանում շտապ օգնության հաստատությունում, ծրագիրը չի վճարի այդ ծառայությունների համար: Եթե կարծում եք, որ մեր ծրագիրը պետք է վճարի չծածկվող ծառայության համար, կարող եք բողոքարկել: Բողոքարկման մասին տեղեկությունների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրի Գլուխ 9-ը*:

Բացի նպաստների աղյուսակում նկարագրված ցանկացած բացառումներից կամ սահմանափակումներից, մեր ծրագիրը չի ծածկում հետևյալ պարագաները և ծառայությունները.

- համաձայն Medicare-ի և Medi-Cal-ի՝ ծառայությունները չեն համարվում «հիմնավորված և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ», քանի դեռ մենք դրանք չենք նշել որպես ապահովագրվող ծառայություններ:
- փորձարարական բժշկական և վիրաբուժական բուժումները, պարագաները և դեղամիջոցները, քանի դեռ Medicare-ը կամ Medicare-ի կողմից հաստատված կլինիկական գիտական հետազոտություններ անցկացնող հաստատությունը, կամ մեր ծրագիրը չի ծածկում դրանք: Կլինիկական գիտական հետազոտությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրի Գլուխ 3-ը*: Փորձարարական բուժումը և պարագաները տարբերվում են նրանով, որ դրանք ընդհանուր առմամբ ընդունված չեն բժշկական հանրության կողմից:
- պաթոլոգիկ գիրության վիրաբուժական բուժում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, և Medicare-ը վճարում է դրա համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



- առանձին սենյակ հիվանդանոցում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է
- մասնավոր հերթապահ բուժքույրեր
- անձնական իրերի առկայությունը հիվանդանոցի կամ ծերանոցի Ձեր սենյակում, օրինակ՝ հեռախոս կամ հեռուստացույց
- լրիվ դրույքով բուժքույրական խնամք Ձեր տանը
- վճարներ, որոնք գանձվում են Ձեր անմիջական հարազատների կամ Ձեր ընտանիքի անդամների կողմից
- Ձեր տուն առաքվող սնունդ
- ընտրովի կամ կամավոր բարելավման բուժգործողություններ կամ ծառայություններ (ներառյալ քաշի կորուստը, մազերի աճը, սեռական ակտիվությունը, մարզական ակտիվությունը, կոսմետիկ նպատակները, ծերության կանխարգելման և մտավոր ակտիվություն), բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է
- կոսմետիկ վիրաբուժություն կամ այլ կոսմետիկ աշխատանք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է պատահարի վնասվածքի պատճառով կամ մարմնի այն հատվածի բարելավման համար, որը ճիշտ ձևավորված չէ: Մակայն, մենք վճարում ենք մաստէկտոմիայից հետո կրծքագեղձի վերականգնման և մյուս կրծքի բուժման համար՝ դրան համապատասխանելու նպատակով
Եթե կարծում եք, որ մենք սխալ ենք թույլ տվել, համաձայն չեք, որ դեղատոմսով դեղերի չարաշահման վտանգի տակ եք, կամ համաձայն չեք սահմանափակման հետ, Դուք և Ձեզ դեղ նշանակողը կարող եք բողոքարկել: Եթե բողոքարկեք, մենք կվերանայենք Ձեր գործը և կներկայացնենք մեր որոշումը: Եթե մենք շարունակենք մերժել Ձեր բողոքարկման որևէ մասը կապված այս դեղերի հասանելիության սահմանափակումների հետ, մենք Ձեր գործն ավտոմատ կերպով կուղարկենք Անկախ վերանայման կազմակերպությանը (IRO): (Բողոքարկումների և IRO-ի մասին հավելյալ տեղեկությունների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի* **Գլուխ 9-ը**):

DMP-ն կարող է Ձեզ չվերաբերել, եթե Դուք՝

- ունեք որոշակի առողջական խնդիրներ, ինչպիսիք են քաղցկեղը կամ մանգաղաբջջային հիվանդությունը,
- ստանում եք հոսփիս, պալիատիվ կամ կյանքի վերջի խնամք, **կամ**
- ապրում եք երկարաժամկետ խնամքի հաստատությունում:



Գլուխ 6. Ինչ էք վճարում Ձեր Medicare-ի և Medi-Cal Medicaid-ի դեղատոմսով դեղերի համար

Ներածություն

Այս գլուխը պատմում է, թե ինչ էք վճարում Ձեր ամբուլատոր դեղատոմսով դեղերի համար: «Դեղեր» ասելով մենք նկատի ունենք.

- Medicare Part D-ում ներառված դեղատոմսով դեղեր, և
- Դեղեր և ապարագաներ, որոնք ապահովագրված են Medi-Cal Rx-ի ներքո:

Քանի որ Դուք իրավունակ եք Medi-Cal ստանալու համար, Դուք կստանաք «Լրացուցիչ օգնություն» Medicare-ից՝ օգնելու վճարել Ձեր Medicare Part D դեղատոմսով դեղերի համար: Մենք ուղարկել ենք Ձեզ առանձին ներդիր, որը կոչվում է «Ապացույցներ ապահովագրության մասին այն մարդկանց համար, ովքեր հավելյալ օգնություն են ստանում դեղատոմսով դեղերի համար վճարելիս» (նաև հայտնի է որպես «Ցածր եկամուտների սուբսիդիաների լրացում» կամ «LIS լրացում»), որը պատմում է Ձեր դեղերի ապահովագրության մասին: Եթե Դուք չունեք այս ներդիրը, խնդրում ենք զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժին և խնդրել «LIS լրացումը»:

Extra Help-ը Medicare ծրագիր է, որն օգնում է սահմանափակ եկամուտներ և ռեսուրսներ ունեցող մարդկանց նվազեցնել Medicare Part D-ի դեղատոմսով դեղերի ծախսերը, ինչպիսիք են հավելավճարները, չհատուցվող գումարները և համավճարները: Extra Help-ը կոչվում է նաև «Ցածր եկամուտների սուբսիդիա» կամ «LIS»:

Այլ հիմնական եզրույթները և դրանց սահմանումները ներկայացված են այբբենական կարգով՝ *Անդամի տեղեկագրքի* վերջին գլխում:

Դեղատոմսով դեղերի մասին հավելյալ տեղեկությունների համար կարող եք նայել այս հատվածները.

- *Մեր ապահովագրված դեղերի ցանկը*
 - Մենք սա անվանում ենք «Դեղերի ցանկ»: Այն տեղեկացնում է Ձեզ.
 - Որ դեղերի համար ենք մենք վճարում
 - Հինգ մակարդակներից որում է գտնվում յուրաքանչյուր դեղը
 - Եթե կա դեղերի որևէ սահմանափակումներ



- Եթե Ձեզ անհրաժեշտ է մեր Դեղերի ցանկի պատճենը, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին: Դուք կարող էք նաև գտնել մեր Դեղերի ցանկի ամենաթարմ պատճենը մեր կայքում՝ blueshieldca.com/medformulary2024:
- Դեղատոմսով դեղերի մեծ մասը, որոնք Դուք ստանում եք դեղատնից, ապահովագրված են Blue Shield TotalDual Plan-ի կողմից: Այլ դեղերը, ինչպիսիք են որոշ առանց դեղատոմսի (OTC) դեղեր և որոշ վիտամիններ, կարող են ապահովագրվել Medi-Cal Rx-ով: Խնդրում ենք այցելել [Medi-Cal Rx կայքը \(medi-calrx.dhcs.ca.gov/\)](https://medi-calrx.dhcs.ca.gov/) լրացուցիչ տեղեկությունների համար: Կարող եք նաև զանգահարել Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկման կենտրոն 800-977-2273 հեռախոսահամարով: Խնդրում ենք բերել Ձեր Medi-Cal-ի շահառուի նույնականացման քարտը (BIC) Medi-Cal Rx-ի միջոցով դեղատոմսեր ստանալու ժամանակ:
- Անդամի ձեռնարկ Գլուխ 5-ը:
 - Այն պատմում է, թե ինչպես ստանալ Ձեր ամբուլատոր դեղատոմսով դեղերը մեր ծրագրի միջոցով:
 - Այն ներառում է կանոններ, որոնց Դուք պետք է հետևեք: Այն նաև տեղեկացնում է, թե դեղատոմսով դեղերի որ տեսակները մեր ծրագիրը չի ապահովագրում:
 - Երբ Դուք օգտագործում եք ծրագրի «Իրական ժամանակում նպաստների գործիքը» դեղերի ծածկույթը փնտրելու համար (տես Գլուխ 5, Բաժին B2), ցուցադրված ծախսերը տրամադրվում են «իրական ժամանակում», այսինքն՝ գործիքում ցուցադրվող արժեքն արտացոլում է ժամանակի մի պահ՝ տրամադրելու Ձեր գրպանից ակնկալվող ծախսերի գնահատումը: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Ձեր խնամքի համակարգողին կամ Հաճախորդների սպասարկման բաժին
- *Մեր մատակարարների և դեղատնների տեղեկատու:*
 - Շատ դեպքերում, Դուք պետք է օգտագործեք ցանցային դեղատուն՝ Ձեր ապահովագրված դեղերը ստանալու համար: Ցանցային դեղատներն այն դեղատներն են, որոնք համաձայնում են աշխատել մեզ հետ:
 - *Մատակարարների և դեղատների գրացուցակում* թվարկված են մեր ցանցի դեղատները: Ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 5-ը* հավելյալ տեղեկություններ ստանալու ցանցային դեղատների մասին:



Բովանդակություն

A. Նպաստների բացատրությունը (EOB).....	184
B. Ինչպես հետևել Ձեր դեղերի ծախսերին	185
C. Դեղերի վճարման փուլերը Medicare Part D դեղերի համար.....	186
D. Փուլ 1. Ծածկույթի սկզբնական փուլ	187
D1. Ձեր դեղատոմսի ընտրությունը.....	188
D2. Դեղի երկարաժամկետ մատակարարում ստանալը	188
D3. Ինչ էք վճարելու	188
D4. Ծածկույթի սկզբնական փուլի ավարտը	190
E. Փուլ 2. Ծածկույթի խիստ հրատապ փուլ	190
F. Ձեր դեղի արժեքը, եթե Ձեր բժիշկը նշանակի մեկ ամսից պակաս պաշար.....	191
G. ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց համար դեղատոմսի ծախսերի բաշխման աջակցություն	191
G1. ՁԻԱՀ-ի դեմ Դեղերի աջակցության ծրագիր (ADAP).....	191
G2. Եթե Դուք ներառված չեք ADAP-ում	192
G3. Եթե Դուք ներառված եք ADAP-ում	192
H. Պատվաստումներ	192
H1. Ինչ պետք է իմանաք նախքան պատվաստում ստանալը.....	192
H2. Ինչ էք վճարում Medicare Part D-ով ծածկվող պատվաստման համար	193

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413

(TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:

183



A. Նպաստների բացատրությունը (EOB)

Մեր ծրագիրը հետևում է Ձեր դեղատոմսով դեղերին: Մենք հետևում ենք երկու տեսակի ծախսերին.

- **Ձեր գրպանից արված ծախսերը:** Սա այն գումարն է, որը Դուք կամ Ձեր անունից մյուսները վճարում եք Ձեր դեղատոմսերի համար:
- **Ձեր դեղերի ընդհանուր ծախսերը:** Սա այն գումարն է, որը Դուք կամ Ձեր անունից մյուսները վճարում եք Ձեր դեղատոմսերի համար, գումարած այն գումարը, որը մենք վճարում ենք:

Երբ Դուք դեղատոմսով դեղեր եք ստանում մեր ծրագրի միջոցով, մենք Ձեզ ուղարկում ենք ամփոփագիր, որը կոչվում է *Նպաստների բացատրություն*: Մենք այն կարճ անվանում ենք EOB: EOB-ն հաշիվ չէ: EOB-ն ավելի շատ տեղեկություններ ունի Ձեր ընդունած դեղերի մասին, ինչպիսիք են գների բարձրացումը և ծախսերի ավելի ցածր բաշխման այլ դեղեր, որոնք կարող են մատչելի լինել: Դուք կարող եք խոսել Ձեզ դեղ նշանակողի հետ այս ավելի ցածր գնով տարբերակների մասին: EOB-ն ներառում է.

- **Տեղեկություններ ամսվա համար:** Ամփոփագիրը պատմում է, թե ինչ դեղատոմսով եք դեղեր ստացել նախորդ ամսվա համար: Այն ցույց է տալիս դեղերի ընդհանուր ծախսերը, այն, ինչ մենք վճարել ենք, և ինչ եք վճարել Դուք և մյուսները, ովքեր վճարում են Ձեզ համար:
- **Տեղեկություններ մինչ օրս կատարված ծախսերի մասին:** Սա Ձեր դեղերի ընդհանուր ծախսն է, ինչպես նաև հունվարի 1-ից կատարած ընդհանուր վճարումները:
- **Դեղերի գնին վերաբերող տեղեկատվություն:** Սա դեղի ընդհանուր գինն է, և դեղի գնի ցանկացած տոկոսային փոփոխություն առաջին լիցքավորումից հետո:
- **Ավելի ցածր գնով այլընտրանքներ:** Երբ դրանք հասանելի են, դրանք հայտնվում են Ձեր ընթացիկ դեղերի ներքևում գտնվող ամփոփագրում: Դուք կարող եք խոսել Ձեր դեղատոմսը նշանակողի հետ՝ հավելյալ տեղեկություններ ստանալու համար:

Մենք առաջարկում ենք դեղերի ծածկույթ, որոնք ապահովագրված չեն Medicare-ով:

- Այս դեղերի համար կատարված վճարումները չեն հաշվվում Ձեր գրպանից վճարվող ծախսերի նկատմամբ:
- Դեղատոմսով դեղերի մեծ մասը, որոնք Դուք ստանում եք դեղատնից, ապահովագրված են ծրագրի կողմից: Այլ դեղերը, ինչպիսիք են որոշ առանց դեղատոմսի (OTC) դեղեր և որոշ վիտամիններ, կարող են ապահովագրվել Medi-Cal Rx-ով: Medi-Cal-ով ապահովագրված դեղերի համար այցելեք (www.medi-calrx.dhcs.ca.gov)՝ լրացուցիչ տեղեկությունների համար: Կարող եք նաև զանգահարել Medi-Cal-ի հաճախորդների սպասարկման կենտրոն 800-977-2273 հեռախոսահամարով: Խնդրում ենք բերել Ձեր Medi-Cal-ի շահառուի նույնականացման քարտը (BIC) Medi-Cal Rx-ի միջոցով դեղատոմսեր ստանալու ժամանակ:
- Պարզելու համար, թե որ դեղերն է ընդգրկում մեր ծրագիրը, տես մեր Դեղերի ցանկը:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



B. Ինչպես հետևել Ձեր դեղերի ծախսերին

Ձեր դեղերի ծախսերին և Ձեր կատարած վճարումներին հետևելու համար մենք օգտագործում ենք Ձեր և Ձեր դեղատնից ստացված գրառումները: Ահա թե ինչպես կարող էք օգնել մեզ.

1. Օգտագործեք Ձեր Անդամի նույնականացման (ID) քարտը:

Ցույց տվեք Ձեր Անդամի նույնականացման քարտը ամեն անգամ, երբ դեղատոմս էք լրացնում: Սա օգնում է մեզ իմանալ, թե ինչ դեղատոմսեր էք լրացնում և ինչ էք վճարում:

2. Համոզվեք, որ մենք ունենք մեզ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Մեզ տվեք ապահովագրված դեղերի անդորրագրերի պատճենները, որոնց համար վճարել էք: Դուք կարող էք խնդրել մեզ փոխհատուցել Ձեզ դեղամիջոցի արժեքի մեր բաժինը:

Ահա որոշ դեպքեր, երբ Դուք պետք է մեզ տրամադրեք Ձեր անդորրագրերի պատճենները.

- Երբ Դուք գնում էք ապահովագրված դեղ ցանցային դեղատնից հատուկ գնով կամ օգտագործում էք զեղչի քարտ, որը մեր ծրագրի նպաստների մաս չէ:
- Երբ Դուք համավճար էք վճարում դեղերի համար, որոնք Դուք ստանում էք դեղեր արտադրողի հիվանդների աջակցության ծրագրի ներքո
- Երբ Դուք ապահովագրված դեղեր էք գնում ցանցից դուրս դեղատնից
- Երբ վճարում էք ապահովագրված դեղի ամբողջ գինը

Լրացուցիչ տեղեկությունների համար մեզնից դեղի արժեքի մեր մասնաբաժնի համար փոխհատուցում խնդրելու համար ուսումնասիրեք Ձեր Անդամի տեղեկագրքի **Գլուխ 7-ը**:

3. Մեզ տեղեկություններ ուղարկեք ուրիշների կողմից Ձեզ համար կատարած վճարումների մասին:

Որոշ այլ անձանց և կազմակերպությունների կողմից կատարված վճարումները նույնպես հաշվի են առնվում Ձեր գրպանից վճարվող ծախսերի համար: Օրինակ, ՁԻԱՀ-ի դեմ դեղերի աջակցության ծրագրի (ADAP), Հնդկական Առողջապահական Ծառայության և բարեգործական կազմակերպությունների մեծ մասի կողմից կատարված վճարումները հաշվի են առնվում Ձեր գրպանից վճարվող ծախսերի համար: Սա կարող է օգնել Ձեզ որակավորվել աղետալի ապահովագրման համար: Երբ հասնում էք Աղետալի ապահովագրման փուլ, մեր ծրագիրը վճարում է Ձեր Medicare Part D դեղերի բոլոր ծախսերը տարվա մնացած ժամանակահատվածի համար:

4. Ստուգեք EOB-ները, որոնք մենք Ձեզ ենք ուղարկում:

Երբ Դուք ստանում էք EOB փոստով, համոզվեք, որ այն ամբողջական և ճիշտ է:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



- **Դուք ճանաչո՞ւմ եք յուրաքանչյուր դեղատան անունը:** Ստուգեք ժամկետները: Այդ օրը դեղ ստացա՞ք:
- **Դուք ստացե՞լ եք նշված դեղերը:** Արդյո՞ք դրանք համընկնում են Ձեր անդորրագրերում նշվածների հետ: Արդյո՞ք դեղերը համընկնում են Ձեր բժշկի նշանակածի հետ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Blue Shield TotalDual Plan-ի հաճախորդների սպասարկման բաժին կամ կարդալ Blue Shield TotalDual Plan *Անդամի տեղեկագիրքը*: Շատ հարցերի պատասխաններ կարող եք գտնել նաև մեր կայքում blueshieldca.com/medicare:

Ի՞նչ կլինի, եթե այս ամփոփագրում սխալներ գտնեք:

Եթե ինչ-որ բան շփոթեցնող է կամ ճիշտ չի թվում այս EOB-ում, խնդրում ենք զանգահարել մեզ [Blue Shield TotalDual Plan](http://blueshieldca.com/medicare) Հաճախորդների սպասարկման բաժին: Շատ հարցերի պատասխաններ կարող եք գտնել նաև մեր կայքում blueshieldca.com/medicare.

Ի՞նչ կասեք հնարավոր խարդախության մասին:

Եթե այս ամփոփագիրը ցույց է տալիս դեղեր, որոնք Դուք չեք ընդունում կամ որևէ այլ բան, որը Ձեզ կասկածելի է թվում, խնդրում ենք կապվել մեզ հետ:

- Չանգահարեք մեզ՝ [Blue Shield TotalDual Plan](http://blueshieldca.com/medicare) Հաճախորդների սպասարկման բաժին:
- Կամ զանգահարեք Medicare՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով: Այս հեռախոսահամարներով կարող եք զանգահարել անվճար՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
- Եթե կասկածում եք, որ մատակարարը կամ Medi-Cal ստացող անձը խարդախություն, վատնում կամ չարաշահում է կատարել, Ձեր իրավունքն է այդ մասին հաղորդել զանգահարելով գաղտնի, անվճար 1-800-822-6222 հեռախոսահամարով: Medi-Cal-ի խարդախության մասին հայտնելու այլ մեթոդներ կարելի է գտնել հետևյալ հասցեով՝ www.dhcs.ca.gov/individuals/Pages/StopMedi-CalFraud.aspx.

Եթե կարծում եք, որ ինչ-որ բան այն չէ կամ բացակայում է, կամ եթե հարցեր ունեք, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին: Պահպանեք այս EOB-ները: Դրանք Ձեր դեղորայքի ծախսերի կարևոր արձանագրությունն են:

C. Դեղերի վճարման փուլերը Medicare Part D դեղերի համար

Մեր ծրագրի համաձայն, Ձեր Medicare Part D դեղատոմսով դեղերի ապահովագրության վճարման երկու փուլ կա: Վճարման չափը կախված է նրանից, թե որ փուլում եք Դուք գտնվում, երբ դեղատոմսը առաջին անգամ կամ կրկին լրացվում է: Այդ երկու փուլերը հետևյալն են:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել [Blue Shield TotalDual Plan](http://blueshieldca.com/medicare)՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 186



Փուլ 1. Ծածկույթի սկզբնական փուլ	Փուլ 2. Ծածկույթի խիստ հրատապ փուլ
<p>Այս փուլում մենք վճարում ենք Ձեր դեղերի ծախսերի մի մասը, իսկ Դուք վճարում եք Ձեր բաժինը: Վճարման Ձեր բաժինը կոչվում է համավճար:</p> <p>Դուք սկսում եք այս փուլում, երբ լրացնում եք տարվա Ձեր առաջին դեղատոմսը:</p>	<p>Այս փուլի ընթացքում մենք վճարում ենք Ձեր դեղերի բոլոր ծախսերը մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>Դուք սկսում եք այս փուլը, երբ Դուք վճարել եք որոշակի քանակությամբ Ձեր գրպանից:</p>

D. Փուլ 1. Ծածկույթի սկզբնական փուլ

Ապահովագրության սկզբնական փուլում մենք վճարում ենք դեղատոմսով դեղերի ապահովագրությունով ծածկվող արժեքի մասնաբաժինը, իսկ Դուք վճարում եք Ձեր բաժինը: Վճարման Ձեր բաժինը կոչվում է համավճար: Համավճարի չափը կախված է նրանից, թե ծախսերի բաշխման որ կարգում է գտնվում դեղը և որտեղից եք այն գնում:

Ծախսերի բաշխման մակարդակները նույն համավճարով դեղերի խմբեր են: Մեր ծրագրի Դեղերի ցանկի յուրաքանչյուր դեղամիջոց գտնվում է ծախսերի բաշխման հինգ մակարդակներից մեկում: Ընդհանուր առմամբ, որքան բարձր է մակարդակի թիվը, այնքան բարձր է համավճարը: Ձեր դեղերի համար ծախսերի բաշխման մակարդակները գտնելու համար այցելեք մեր Դեղերի ցանկը:

- Ծախսերի բաշխման մակարդակ 1. Նախընտրելի ջեներիկ դեղեր (ծախսերի բաշխման ամենացածր խումբ)
Ներառում է նախընտրելի ջեներիկ դեղեր
- Ծախսերի բաշխման մակարդակ 2. Ջեներիկ դեղեր
Ներառում է ջեներիկ դեղեր և կենսահամանման դեղերը
- Ծախսերի բաշխման մակարդակ 3. Նախընտրելի ապրանքանիշով դեղեր
Ներառում է նախընտրելի ապրանքանիշի անվանումը, կենսահամանման նյութերը և որոշ ջեներիկ դեղեր:
- Ծախսերի բաշխման մակարդակ 4. Ոչ նախընտրելի դեղեր
Ներառում է ոչ նախընտրելի ապրանքանիշի անվանումը, կենսահամանման նյութերը և որոշ ջեներիկ դեղեր:
- Ծախսերի բաշխման մակարդակ 5. Առանձնահատուկ մակարդակի դեղեր (ծախսերի բաշխման ամենաբարձր մակարդակ)
Ներառում է շատ թանկ ապրանքանիշի անվանումը, կենսահամանման նյութերը և ջեներիկ դեղերը, որոնք կարող են պահանջել հատուկ մշակում և/կամ մանրակրկիտ մոնիտորինգ:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք գանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



D1. Ձեր դեղատան ընտրությունը

Դեղամիջոցի համար վճարելու չափը կախված է նրանից, թե արդյոք դեղը ստանում եք հետևյալից.

- Ցանցային դեղատնից **կամ**
- Արտացանցային դեղատնից:

Սահմանափակ դեպքերում մենք ապահովագրում ենք ցանցից դուրս դեղատներում ստացված դեղատոմսերը: Ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի 5-րդ գլուխը*՝ պարզելու, թե երբ ենք մենք դա անում:

Այս ընտրությունների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 5-ը* և մեր *Մատակարարների և Դեղատների Գրացուցակը*:

D2. Դեղի երկարաժամկետ մատակարարում ստանալը

Որոշ դեղերի համար Դուք կարող եք ստանալ երկարաժամկետ պաշար (նաև կոչվում է «ընդլայնված պաշար»), երբ լրացնում եք Ձեր դեղատոմսը: Երկարաժամկետ պաշարը 1-ին մակարդակի դեղերի 100-օրյա մատակարարումն է և 2-րդ, 3-րդ և 4-րդ մակարդակի դեղերի 90-օրյա պաշարը: Այն Ձեզ համար արժե նույնը, ինչ մեկ ամսվա պաշարը:

Մանրամասների համար, թե որտեղ և ինչպես ստանալ դեղի երկարաժամկետ պաշար, ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 5-ը* կամ մեր ծրագրի *Մատակարարների և Դեղատների Գրացուցակը*:

D3. Ինչ եք վճարելու

Ապահովագրման սկզբնական փուլի ընթացքում Դուք կարող եք վճարել համավճար ամեն անգամ, երբ դեղատոմս եք լրացնում: Եթե ապահովագրությամբ ծածկվող Ձեր դեղն արժե ավելի քիչ, քան համավճարի չափն է, Դուք կվճարեք ավելի քիչ գումար:

Դիմեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ պարզելու, թե որքան է Ձեր համավճարը ապահովագրված ցանկացած դեղամիջոցի համար:

Ծախսերի Ձեր մասնաբաժինը, երբ Դուք մեկամսյա կամ երկարաժամկետ ապահովագրված դեղատոմսով դեղի պաշար եք ստանում հետևյալից.



	Ցանցային դեղատնից	Մեր ծրագրի փոստային սպասարկմամբ դեղատան ծառայությունից	Ցանցի երկարատև խնամքի դեղատնից	Արտացանցային դեղատնից
	Մեկամսյա կամ մինչև 30 օրվա պաշարի համար	Մեկամսյա կամ մինչև 30 օրվա պաշարի համար	Մինչև 31 օրվա պաշար	Մինչև 30 օրվա պաշար: Ծածկույթը սահմանափակվում է որոշակի դեպքերով: Մանրամասների համար ուսումնասիրեք Ձեր <i>Անդամի տեղեկագրքի</i> Գլուխ 5-ը :
Ծախսերի բաշխում Մակարդակ 1 (Նախընտրելի ջեներիկ դեղեր)	\$0			
Ծախսերի բաշխում Մակարդակ 2 (Ջեներիկ դեղեր)	Ձեր համավճարը կախված է Ձեր ստացած լրացուցիչ օգնության մակարդակից. \$0, \$1.55, կամ \$4.50			
Ծախսերի բաշխում Մակարդակ 3 (Նախընտրելի ապրանքանիշով դեղեր)	Ձեր համավճարը կախված է Ձեր ստացած լրացուցիչ օգնության մակարդակից. \$0, \$4.60, կամ \$11.20			
Ծախսերի բաշխում Մակարդակ 4 (Ոչ նախընտրելի դեղեր)	Ձեր համավճարը կախված է Ձեր ստացած լրացուցիչ օգնության մակարդակից. \$0, \$4.60, կամ \$11.20			

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



	Ցանցային դեղատնից	Մեր ծրագրի փոստային սպասարկմամբ դեղատան ծառայությունից	Ցանցի երկարատև խնամքի դեղատնից	Արտացանցային դեղատնից
	Մեկամսյա կամ մինչև 30 օրվա պաշարի համար	Մեկամսյա կամ մինչև 30 օրվա պաշարի համար	Մինչև 31 օրվա պաշար	Մինչև 30 օրվա պաշար: Ծածկույթը սահմանափակվում է որոշակի դեպքերով: Մանրամասների համար ուսումնասիրեք Ձեր <i>Անդամի տեղեկագրքի</i> Գլուխ 5-ը :
Ծախսերի բաշխում Մակարդակ 5 (Առանձնահատուկ մակարդակի դեղեր)	Ձեր համավճարը կախված է Ձեր ստացած լրացուցիչ օգնության մակարդակից. \$0, \$4.60, կամ \$11.20			

Տեղեկությունների համար, թե որ դեղատները կարող են Ձեզ երկարաժամկետ պաշարներ տրամադրել, ուսումնասիրեք մեր *Մատակարարների և դեղատների տեղեկատուն*:

D4. Ծածկույթի սկզբնական փուլի ավարտը

Ծածկույթի սկզբնական փուլն ավարտվում է, երբ Ձեր գրպանից վճարվող ծախսերը հասնում են \$8.000-ի: Այդ պահից սկսվում է ապահովագրության հրատապ փուլը: Մենք ծածկում ենք Ձեր դեղերի բոլոր ծախսերը այդ պահից մինչև տարեվերջ:

Ձեր EOB-ն օգնում է Ձեզ հետևել, թե որքան եք վճարել Ձեր դեղերի համար տարվա ընթացքում: Մենք Ձեզ տեղյակ կպահենք, եթե հասնեք \$8.000 սահմանաչափին: Շատերը մեկ տարում դրան չեն հասնում:

E. Փուլ 2. Ծածկույթի խիստ հրատապ փուլ

Երբ հասնեք Ձեր գրպանից վճարվող գումարի սահմանաչափին՝ \$8.000, կմեկնարկի ծածկույթի խիստ հրատապ փուլը: Դուք կմնաք ծածկույթի խիստ հրատապ փուլում մինչև օրացուցային տարվա վերջ: Այս փուլում մեր ծրագիրը կվճարի Ձեր Medicare դեղերի բոլոր ծախսերը:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 190



F. Ձեր դեղի արժեքը, եթե Ձեր բժիշկը նշանակի մեկ ամսից պակաս պաշար

Որոշ դեպքերում, Դուք վճարում եք համավճար՝ ապահովագրված դեղի ամբողջ ամսվա պաշարը ծածկելու համար: Սակայն, Ձեր բժիշկը կարող է նշանակել ավելի քիչ, քան մեկ ամսվա համար դեղի պաշարն է:

- Կարող են լինել դեպքեր, երբ Դուք կցանկանաք խնդրել Ձեր բժշկին մեկ ամսից պակաս դեղի պաշար նշանակել (օրինակ, երբ Դուք առաջին անգամ եք փորձում դեղը, որը հայտնի է լուրջ կողմնակի ազդեցություններով):
- Եթե Ձեր բժիշկը համաձայնի, Դուք չեք վճարի որոշակի դեղերի ամբողջ ամսվա պաշարի համար:

Երբ Դուք ստանաք դեղի մեկ ամսից պակաս պաշար, Ձեր վճարած գումարը հիմնված կլինի Ձեր ստացած դեղի օրերի քանակի վրա: Մենք հաշվարկում ենք այն գումարը, որը Դուք վճարում եք օրական Ձեր դեղի համար («օրական ծախսերի բաշխման դրույքաչափ») և այն բազմապատկում ենք Ձեր ստացած դեղի օրերի քանակով:

- Ահա մեկ օրինակ. ենթադրենք, Ձեր դեղի համավճարը մեկ ամսվա պաշարի համար (30 օրվա պաշար) կազմում է \$1.35: Սա նշանակում է, որ Ձեր դեղի համար վճարվող գումարը օրական \$0.05-ից պակաս է: Եթե Դուք ստանում եք դեղի 7 օրվա պաշար, Ձեր վճարումը կազմում է օրական \$.05 պակաս՝ բազմապատկած 7 օրով, \$0.35 պակաս ընդհանուր վճարման դեպքում:
- Ամենօրյա ծախսերի բաշխումը թույլ է տալիս Ձեզ համոզվել, որ դեղը գործում է Ձեզ համար՝ նախքան կվճարեք ամբողջ ամսվա պաշարի համար:
- Դուք կարող եք նաև խնդրել Ձեր մատակարարին նշանակել դեղի մեկ ամսից պակաս պաշար՝ Ձեզ օգնելու կատարել հետևյալը.
 - Ավելի լավ պլանավորել, թե երբ պետք է լիցքավորել Ձեր դեղերը,
 - Համակարգել լիցքավորումները Ձեր ընդունած այլ դեղերի հետ, և
 - Ավելի քիչ այցելել դեղատուն:

G. ՄԻԱՎ/ՉԻԱՀ ունեցող անձանց համար դեղատոմսի ծախսերի բաշխման աջակցություն

G1. ՉԻԱՀ-ի դեմ Դեղերի աջակցության ծրագիր (ADAP)

ADAP-ն օգնում է ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով ապրող իրավունակ անձանց հասանելիություն ունենալ կյանք փրկող ՄԻԱՎ-ի դեղամիջոցներին: Ամբուլատոր Medicare Part D-ի դեղատոմսով դեղերը, որոնք նույնպես ապահովագրված են ADAP-ի կողմից, իրավասու են դեղատոմսով ծախսերի բաշխման աջակցության համար Կալիֆորնիայի հանրային առողջության դեպարտամենտի, ՉԻԱՀ-ի գրասենյակի միջոցով ADAP-ում ընդգրկված անհատների համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



G2. Եթե Դուք ներառված չեք ADAP-ում

Համապատասխանության չափանիշների, ապահովագրված դեղերի կամ ծրագրում գրանցվելու մասին տեղեկությունների համար զանգահարեք 1-844-421-7050 հեռախոսահամարով կամ ստուգեք ADAP կայքը՝ www.cdph.ca.gov/Programs/CID/DOA/Pages/OA_adap_eligibility.aspx.

G3. Եթե Դուք ներառված եք ADAP-ում

ADAP-ը կարող է շարունակել ADAP-ի հաճախորդներին տրամադրել Medicare Part D-ի դեղատոմսով ծախսերի բաշխման օգնություն ADAP-ի դեղագիտական տեղեկատուում ընդգրկված դեղերի համար: Որպեսզի համոզվեք, որ Դուք կշարունակեք ստանալ այս օգնությունը, տեղեկացրեք Ձեր տեղական ADAP գրանցման համար պատասխանատու աշխատողին Ձեր Medicare Part D ծրագրի անվանման կամ ապահովագրի համարի ցանկացած փոփոխության մասին: Եթե օգնության կարիք ունեք ADAP-ի գրանցման մոտակա կենտրոն և/կամ գրանցման համար պատասխանատու աշխատող գտնելու հարցում, զանգահարեք 1-844-421-7050 հեռախոսահամարով կամ ստուգեք վերոնշյալ կայքը:

H. Պատվաստումներ

Կարևոր հաղորդագրություն այն մասին, թե ինչ եք վճարում պատվաստումների համար. որոշ պատվաստանյութեր համարվում են բժշկական նպաստներ: Մյուս պատվաստանյութերը համարվում են Medicare Part D դեղեր: Դուք կարող եք գտնել այս պատվաստանյութերը ծրագրի *Ապահովագրված դեղերի ցանկում (դեղացանկ):* Մեր ծրագիրը Ձեզ համար անվճար ծածկում է չափահասների համար նախատեսված Medicare Part D պատվաստանյութերի մեծ մասը: Ուսումնասիրեք Ձեր *Ապահովագրված դեղերի ցանկը (դեղացանկ)* կամ կապվեք Հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ կոնկրետ պատվաստանյութերի վերաբերյալ ապահովագրության և ծախսերի բաշխման մանրամասների համար:

Medicare Part D պատվաստումների մեր ծածկույթը երկու մաս ունի.

1. Ծածկույթի առաջին մասը վերաբերում է **պատվաստանյութին արժեքին:** Պատվաստանյութը դեղատոմսով տրվող դեղ է:
2. Ծածկույթի երկրորդ մասը վերաբերում է **պատվաստանյութը Ձեզ տալու** ծախսերին: Օրինակ, երբեմն Դուք կարող եք պատվաստում ստանալ Ձեր բժշկի կողմից Ձեզ տրված սրսկման տեսքով:

H1. Ինչ պետք է իմանաք նախքան պատվաստում ստանալը

Խորհուրդ ենք տալիս Ձեզ զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժնի, եթե նախատեսում եք պատվաստում ստանալ:

- Մենք կարող ենք ներկայացնել Ձեզ, թե ինչպես է մեր ծրագիրը ապահովագրում Ձեր պատվաստումը և բացատրել ծախսերի Ձեր մասնաբաժինը:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



- Մենք կարող ենք Ձեզ տեղեկացնել, թե ինչպես նվազեցնել Ձեր ծախսերը՝ օգտագործելով ցանցային դեղատները և մատակարարները: Ցանցի դեղատները և մատակարարները համաձայն են աշխատել մեր ծրագրով: Ցանցի մատակարարն աշխատում է մեզ հետ՝ համոզվելու, որ Դուք չունեք Medicare Part D պատվաստանյութի նախնական ծախսեր:

H2. Ինչ էք վճարում Medicare Part D-ով ծածկվող պատվաստման համար

Պատվաստման համար վճարվող գումարը կախված է պատվաստանյութի տեսակից (ինչի համար էք պատվաստվում):

- Որոշ պատվաստանյութեր համարվում են առողջապահական նպաստներ, քան թե դեղեր: Այս պատվաստանյութերն անվճար ծածկվում են Ձեզ համար: Այս պատվաստանյութերի ծածկույթի մասին իմանալու համար ուսումնասիրեք Ձեր Անդամի տեղեկագրքի **Գլուխ 4-ի** նպաստների աղյուսակը:
- Մյուս պատվաստանյութերը համարվում են Medicare Part D դեղեր: Դուք կարող էք գտնել այս պատվաստանյութերը մեր ծրագրի Դեղերի ցանկում: Հնարավոր է, որ ստիպված լինեք համավճար վճարել Medicare Part D պատվաստանյութերի համար: Եթե **«Խորհրդատվական հանձնաժողով կամ վարակազերծման գործելակերպեր» (Advisory Committee or Immunization Practices (ACIP))** կոչվող կազմակերպությունը պատվաստանյութն առաջարկում է չափահասների համար, այդ դեպքում պատվաստանյութը Ձեզ անվճար կտրվի:

Ահա երեք ընդհանուր եղանակ, որոնցով Դուք կարող էք ստանալ Medicare Part D պատվաստում:

1. Դուք ստանում էք Medicare Part D պատվաստանյութը և Ձեր պատվաստումը ցանցի դեղատնից:
 - Չափահասների Part D պատվաստանյութերի մեծ մասի համար Դուք ոչինչ չեք վճարի:
 - Part D-ի մյուս պատվաստանյութերի համար Դուք կվճարեք համավճար պատվաստանյութի համար:
2. Դուք կստանաք Medicare Part D պատվաստանյութը Ձեր բժշկի ընդունարանում, և Ձեր բժիշկը Ձեզ կպատվաստի:
 - Դուք բժշկին կվճարեք համավճար պատվաստանյութի համար:
 - Մեր ծրագիրը վճարում է Ձեր պատվաստումն ստանալու ծախսերը:
 - Բժշկի ընդունարանից պետք է զանգահարեն մեր ծրագրին այս իրավիճակում, որպեսզի մենք կարողանանք համոզվել, որ նրանք տեղյակ են, որ Դուք պետք է վճարեք միայն պատվաստանյութի համավճարը:



3. Դուք կստանաք Medicare Part D պատվաստանյութի դեղը դեղատոմսից և այն կտանեք Ձեր բժշկի ընդունարան՝ պատվաստումը ստանալու համար:
- Չափահասների Part D պատվաստանյութերի մեծ մասի համար Դուք ոչինչ չեք վճարի գուտ պատվաստանյութի համար:
 - Part D-ի մյուս պատվաստանյութերի համար Դուք կվճարեք պատվաստանյութի համավճարը:
 - Մեր ծրագիրը վճարում է Ձեր պատվաստումն ստանալու ծախսերը:



Գլուխ 7. Մեզ ուղղված խնդրանք՝ վճարելու հաշվի մեր մասնաբաժինը, որը Դուք ստացել եք ապահովագրված ծառայությունների կամ դեղերի համար

Ներածություն

Այս գլուխը պատմում է Ձեզ, թե ինչպես և երբ պետք է մեզ հաշիվ ուղարկել՝ վճարում խնդրելու համար: Այն նաև պատմում է Ձեզ, թե ինչպես բողոքարկել, եթե համաձայն չեք ապահովագրության որոշման հետ: Հիմնական եզրույթները և դրանց սահմանումները ներկայացված են այբբենական կարգով՝ *Անդամի տեղեկագրքի* վերջին գլխում:

Բովանդակություն

A. Մեզ ուղղված խնդրանք՝ վճարելու Ձեր ծառայությունների կամ դեղերի համար	196
B. Մեզ վճարման հարցում ուղարկելը	200
C. Ապահովագրության վերաբերյալ որոշումներ	201
D. Բողոքարկումներ	201



A. Մեզ ուղղված խնդրանք՝ վճարելու Ձեր ծառայությունների կամ դեղերի համար

Մեր ցանցի մատակարարները պետք է վճարեն ծրագրին Ձեր ապահովագրված ծառայությունների և դեղերի համար դրանք ստանալուց հետո: Ցանցի մատակարարն այն մատակարարն է, ով աշխատում է առողջապահական ծրագրի հետ:

Մենք թույլ չենք տալիս Blue Shield TotalDual Plan-ի մատակարարներին Ձեզ հաշիվ ուղարկել այս ծառայությունների կամ դեղերի համար: Մենք ուղղակիորեն վճարում ենք մեր մատակարարներին և պաշտպանում ենք Ձեզ ցանկացած վճարից:

Եթե Դուք հաշիվ եք ստանում առողջապահական խնամքի կամ դեղերի ողջ արժեքի համար, մի վճարեք հաշիվը և ուղարկեք այն մեզ: Մեզ հաշիվ ուղարկելու համար այցելեք Բաժին B:

- Եթե մենք ապահովագրում ենք ծառայությունները կամ դեղերը, մենք անմիջապես կվճարենք մատակարարին:
- Եթե մենք ապահովագրում ենք ծառայությունները կամ դեղերը, և Դուք արդեն վճարել եք ծախսերի Ձեր մասնաբաժինից ավելին, Ձեր իրավունքն է, որ Ձեզ հետ վճարեն:
 - Եթե Դուք վճարել եք Medicare-ի կողմից ապահովագրված ծառայությունների համար, մենք Ձեզ հետ կվճարենք:
 - Եթե Դուք վճարել եք Medi-Cal-ի ծառայությունների համար, որոնք արդեն ստացել եք, կարող եք իրավասու լինել փոխհատուցման (հետ վճարման) համար, եթե բավարարեք հետևյալ բոլոր պայմանները.
 - Ձեր ստացած ծառայությունը Medi-Cal-ի կողմից ծածկված ծառայություն է, որի վճարման համար մենք պատասխանատու ենք: Մենք Ձեզ չենք փոխհատուցի այն ծառայության համար, որը չի փոխհատուցվում Blue Shield TotalDual Plan-ով:
 - Դուք ստացել եք ապահովագրված ծառայությունը Blue Shield TotalDual Plan-ի իրավունակ անդամ դառնալուց հետո:
 - Դուք խնդրում եք հետ վճարել գումարը ապահովագրված ծառայությունը ստանալու ամսաթվից մեկ տարվա ընթացքում:
 - Դուք տրամադրում եք ապացույց, որ վճարել եք ապահովագրված ծառայության համար, օրինակ՝ մանրամասն անդորրագիր մատակարարից:
 - Դուք ստացել եք ապահովագրված ծառայությունը Blue Shield TotalDual Plan-ի ցանցում գրանցված Medi-Cal-ի մատակարարից: Դուք կարիք չունեք բավարարելու այս պայմանը, եթե ստացել եք արտակարգ իրավիճակի խնամք, ընտանիքի պլանավորման ծառայություններ կամ մեկ այլ ծառայություն, որը Medi-Cal-ը թույլ է տալիս ցանցից դուրս մատակարարներին մատուցել առանց նախավերացման (նախնական լիազորում):

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



- Եթե ապահովագրված ծառայությունը սովորաբար պահանջում է նախավավերացում (նախնական լիազորում), Դուք պետք է մատակարարից ապացույց տրամադրեք, որը ցույց է տալիս ապահովագրված ծառայության բժշկական կարիքը:
- Blue Shield TotalDual Plan-ը Ձեզ կտեղեկացնի Ձեզ փոխհատուցելու իր որոշման մասին նամակով, որը կոչվում է Գործողության ծանուցագիր (Notice of Action): Եթե Դուք համապատասխանում եք վերը նշված բոլոր պայմաններին, Medi-Cal-ում անդամագրված մատակարարը պետք է Ձեզ հետ վճարի Ձեր վճարած ամբողջ գումարի համար: Եթե մատակարարը հրաժարվի Ձեզ հետ վճարել, Blue Shield TotalDual Plan-ը կվերադարձնի Ձեզ վճարած ողջ գումարը: Մենք Ձեզ կփոխհատուցենք հայցը ստանալուց հետո 45 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե մատակարարը անդամագրված է Medi-Cal-ում, բայց մեր ցանցում չէ և հրաժարվում է Ձեզ փոխհատուցել, Blue Shield TotalDual Plan-ը Ձեզ հետ կվճարի, բայց միայն մինչև այն գումարը, որը կվճարեր FFS Medi-Cal-ը: Blue Shield TotalDual Plan-ը Ձեզ հետ կվճարի շտապ օգնության ծառայությունների, ընտանիքի պլանավորման ծառայությունների կամ այլ ծառայության համար, որը Medi-Cal-ը թույլ է տալիս տրամադրել ցանցից դուրս մատակարարների կողմից՝ առանց նախնական հաստատման: Եթե Դուք չեք համապատասխանում վերոնշյալ պայմաններից որևէ մեկին, մենք Ձեզ հետ չենք վճարի:
- Մենք Ձեզ հետ չենք վճարի, եթե՝
 - Դուք խնդրել և ստացել եք ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից, օրինակ՝ կոսմետիկ ծառայություններ:
 - Ծառայությունն ապահովագրված ծառայություն չէ Blue Shield TotalDual Plan-ի համար:
 - Դուք գնացել եք բժշկի մոտ, ով չի ընդունում Medi-Cal, և ստորագրել եք մի ձևաթուղթ, որտեղ նշվում էր, որ այնուամենայնիվ ցանկանում եք հետագոտվել, և որ Դուք ինքներդ կվճարեք ծառայությունների համար:
- Եթե մենք չձեռնարկենք ծառայությունները կամ դեղերը, մենք Ձեզ կտեղեկացնենք:

Հարցերի դեպքում դիմեք Հաճախորդների սպասարկման բաժին կամ Ձեր խնամքի համակարգողին: Եթե չգիտեք, թե ինչ պետք է վճարեք, կամ եթե հաշիվ եք ստանում, և չգիտեք, թե ինչ պետք է անել դրա համար, մենք կարող ենք օգնել: Կարող եք նաև զանգահարել, եթե ցանկանում եք մեզ տեղեկություններ հայտնել վճարման խնդրանքի մասին, որը Դուք արդեն ուղարկել եք մեզ:

Ահա այն դեպքերի օրինակները, երբ հնարավոր է, որ կարիք ունենաք խնդրել մեզ հետ վճարելու Ձեզ կամ վճարելու Ձեր ստացած հաշիվը.

1. Երբ Դուք շտապ կամ հրատապ բուժօգնություն եք ստանում ցանցից դուրս մատակարարից

Խնդրեք մատակարարին հաշիվ ուղարկել մեզ:

- Եթե Դուք վճարում եք ամբողջ գումարը, երբ խնամք եք ստանում, խնդրեք մեզ փոխհատուցել Ձեզ ծախսերի մեր մասնաբաժինը: Մեզ ուղարկեք հաշիվը և Ձեր կատարած վճարման որևէ ապացույց:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



- Դուք կարող եք հաշիվ ստանալ մատակարարից, որը պահանջում է վճարում, որ Դուք կարծում եք պարտք չեք: Մեզ ուղարկեք հաշիվը և Ձեր կատարած վճարման որևէ ապացույց:
 - Եթե մատակարարին պետք է վճարել, մենք անմիջապես կվճարենք նրան:
 - Եթե Դուք արդեն վճարել եք ավելին, քան Medicare ծառայության ծախսերի Ձեր մասնաբաժինը, մենք կպարզենք, թե որքան եք պարտք և կվերադարձնենք Ձեզ ծախսերի մեր բաժնի համար:

2. Երբ ցանցի մատակարարը Ձեզ հաշիվ է ուղարկում

Ցանցի մատակարարները միշտ պետք է մեզ հաշիվ ուղարկեն: Կարևոր է ցույց տալ Ձեր Անդամի նույնականացման (ID) քարտը, երբ Դուք որևէ ծառայություն կամ դեղատոմս եք ստանում: Բայց երբեմն նրանք սխալներ են թույլ տալիս և խնդրում են, որ վճարեք Ձեր ծառայությունների համար կամ ավելին, քան ծախսերի Ձեր բաժինն է: **Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին** կամ Ձեր խնամքի համակարգողին այս էջի ներքևում գտնվող հեռախոսահամարով, եթե որևէ հաշիվ ստանաք:

- Որպես ծրագրի անդամ՝ Դուք վճարում եք համավճարը միայն այն դեպքում, երբ ստանում եք մեր կողմից ապահովագրված ծառայությունները: Մենք թույլ չենք տալիս մատակարարներին այս գումարից ավելին հաշիվ ներկայացնել Ձեզ: Սա ճշմարիտ է, նույնիսկ եթե մենք մատակարարին վճարում ենք ավելի քիչ, քան մատակարարին վճարված ծառայության համար: Նույնիսկ եթե մենք որոշենք չվճարել որոշ գանձումների համար, Դուք, միևնույն է, նրանց չեք վճարի:
- Ամեն անգամ, երբ Դուք հաշիվ եք ստանում ցանցային մատակարարից, որը, Ձեր կարծիքով, ավելին է, քան Դուք պետք է վճարեիք, ուղարկեք մեզ այդ հաշիվը: Մենք ուղղակիորեն կապ կհաստատենք մատակարարի հետ և կլուծենք խնդիրը:
- Եթե Դուք արդեն վճարել եք ցանցի մատակարարից ստացած հաշիվը Medicare-ով ապահովագրված ծառայությունների համար, բայց կարծում եք, որ չափազանց շատ եք վճարել, ուղարկեք մեզ հաշիվը և Ձեր կատարած վճարման ապացույցը: Մենք Ձեզ հետ կվճարենք Ձեր վճարած գումարի և մեր ծրագրի շրջանակներում ունեցած պարտքի տարբերության համար:

3. Եթե Դուք հետադարձ կերպով գրանցված եք մեր ծրագրում

Երբեմն ծրագրում Ձեր գրանցումը կարող է հետադարձ ուժ ունենալ: (Սա նշանակում է, որ Ձեր գրանցման առաջին օրն անցել է: Հնարավոր է, որ դա եղած լինի նույնիսկ անցյալ տարի):

- Եթե Դուք գրանցվել եք հետադարձ ուժով, և գրանցման ամսաթվից հետո վճարել եք ստացած հաշվի համար, կարող եք խնդրել մեզ հետ վճարել այն Ձեզ:
- Մեզ ուղարկեք հաշիվը և Ձեր կատարած վճարման որևէ ապացույց:



4. Երբ Դուք օգտագործում եք ցանցից դուրս դեղատոմս՝ դեղատոմսը լիցքավորելու համար

Եթե Դուք օգտվում եք ցանցից դուրս դեղատոմսից, Դուք կվճարեք Ձեր դեղատոմսի ողջ արժեքը:

- Միայն մի քանի դեպքերում ենք մենք փոխհատուցում ցանցից դուրս գտնվող դեղատոմսերում ստացված դեղատոմսերը: Ուղարկեք մեզ Ձեր անդորրագրի պատճենը, երբ խնդրեք մեզ փոխհատուցել Ձեզ արժեքի մեր մասնաբաժինը:
- Ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 5-ը*՝ ցանցից դուրս գտնվող դեղատոմսերի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար:

5. Երբ Դուք վճարում եք դեղատոմսի ամբողջական արժեքը, քանի որ Ձեր Անդամի նույնականացման (ID) քարտը Ձեզ հետ չէ

Եթե Դուք չունեք Ձեր Անդամի նույնականացման (ID) քարտը Ձեզ հետ, կարող եք խնդրել դեղատոմսը գանգահարել մեզ կամ փնտրել Ձեր ծրագրի գրանցման մասին տեղեկությունները:

- Եթե դեղատոմսը չկարողանա անմիջապես ստանալ տեղեկատվությունը, Դուք կարող եք ստիպված լինել ինքներդ վճարել դեղատոմսի ամբողջ արժեքը կամ վերադառնալ դեղատոմս Ձեր Անդամի նույնականացման (ID) քարտով:
- Ուղարկեք մեզ Ձեր անդորրագրի պատճենը, երբ խնդրեք մեզ փոխհատուցել Ձեզ արժեքի մեր մասնաբաժինը:

6. Երբ Դուք վճարում եք դեղատոմսի ողջ արժեքը չապահովագրվող դեղի համար

Դուք կարող եք վճարել դեղատոմսի ողջ արժեքը, քանի որ դեղն ապահովագրված չէ:

- Դեղը կարող է չլինել մեր կայքէջի *Ապահովագրված դեղերի ցանկում (դեղացանկ)*, կամ կարող է ունենալ այնպիսի պահանջ կամ սահմանափակում, որի մասին Դուք չգիտեք կամ չեք կարծում, որ վերաբերում է Ձեզ: Եթե Դուք որոշեք ձեռք բերել դեղը, հնարավոր է, որ կարիք ունենաք վճարել ողջ արժեքը:
 - Եթե Դուք չեք վճարում դեղի համար, բայց կարծում եք, որ մենք պետք է ապահովագրենք այն, կարող եք ապահովագրության որոշում խնդրել (ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 9-ը*):
 - Եթե Դուք և Ձեր բժիշկը կամ այլ նշանակող կարծում եք, որ դեղը Ձեզ անհապաղ անհրաժեշտ է (24 ժամվա ընթացքում), կարող եք արագ ապահովագրման որոշում խնդրել (ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 9-ը*):
- Ուղարկեք մեզ Ձեր անդորրագրի պատճենը, երբ խնդրեք մեզ փոխհատուցել Ձեզ: Որոշ դեպքերում մեզ կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ տեղեկություններ ստանալ Ձեր բժշկից կամ այլ նշանակողից դեղի արժեքի մեր մասնաբաժինը Ձեզ փոխհատուցելու համար:



Եթե Դուք մեզ վճարման հարցում ուղարկեք, մենք կվերանայենք այն և կորոշենք արդյոք ծառայությունը կամ դեղը պետք է սպահովագրվեն: Մա կոչվում է «սպահովագրման որոշում»: Եթե մենք որոշում ենք, որ ծառայությունը կամ դեղը պետք է սպահովագրվի, մենք վճարում ենք դրա արժեքի մեր բաժինը:

Եթե մենք մերժենք վճարման Ձեր խնդրանքը, Դուք կարող եք բողոքարկել մեր որոշումը: Բողոքարկում ներկայացնելու մասին տեղեկություններ ստանալու համար տեսեք Ձեր *Անդամի տեղեկագրքի* **Գլուխ 9-ը**:

B. Մեզ վճարման հարցում ուղարկելը

Ուղարկեք մեզ Ձեր հաշիվը և Medicare-ի ծառայությունների համար կատարած վճարման ապացույցը կամ զանգահարեք մեզ: Վճարման ապացույցը կարող է լինել Ձեր գրած չեկի պատճենը կամ մատակարարի անդորրագիրը: **Լավ գաղափար է պատճենել Ձեր հաշիվը և անդորրագրերը Ձեր արձանագրությունների համար:** Դուք կարող եք օգնություն խնդրել Ձեր խնամքի համակարգողից: Դուք պետք է մեզ ուղարկեք Ձեր բժշկական տեղեկատվությունը՝ ծառայությունը, ապրանքը կամ դեղը ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում: Դուք պետք է մեզ ուղարկեք Ձեր Part D-ի դեղատոմսով դեղերի մասին տեղեկությունները՝ ծառայությունը, ապրանքը կամ դեղը ստանալու օրվանից երեք տարվա ընթացքում:

Որպեսզի համոզվեք, որ Դուք մեզ տրամադրում եք բոլոր այն տեղեկությունները, որոնց կարիքն ունենք որոշում կայացնելու համար, կարող եք լրացնել մեր պահանջի ձևաթուղթը՝ վճարում խնդրելու համար:

- Ձեզնից չի պահանջվում օգտագործել ձևաթուղթը, բայց այն օգնում է մեզ ավելի արագ մշակել տեղեկատվությունը:
- Դուք կարող եք ձևաթուղթն ստանալ մեր կայքում (blueshieldca.com), կամ կարող եք զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժին և խնդրել այն:

Փոստով ուղարկեք Ձեր վճարման հայտը ցանկացած հաշվի կամ անդորրագրի հետ միասին հետևյալ հասցեով.

Բժշկական հայցեր՝
Blue Shield TotalDual Plan
Medicare Customer Service
P.O. Box 927
Woodland Hills, CA 91365-9856

Դեղատոմսով դեղերի հայցեր՝
Blue Shield of California
P.O. Box 52066
Phoenix, AZ 85072-20

Դուք պետք է ներկայացնեք Ձեր բժշկական հայցը մեր ծառայությունը, ապրանքը կամ դեղը ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում: Դուք պետք է մեզ ներկայացնեք Ձեր Part D դեղատոմսով դեղերի պահանջը, ծառայությունը, ապրանքը կամ դեղը ստանալու օրվանից երեք տարվա ընթացքում:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 200



C. Ապահովագրության վերաբերյալ որոշումներ

Երբ մենք ստանանք Ձեր վճարման հարցումը, մենք ապահովագրության վերաբերյալ որոշում կկայացնենք: Սա նշանակում է, որ մենք ենք որոշում, թե արդյոք մեր ծրագիրը ապահովագրում է Ձեր ծառայությունը, ապրանքը կամ դեղը: Մենք նաև որոշում ենք գումարի չափը, եթե այդպիսիք կան, որը Դուք պետք է վճարեք:

- Մենք Ձեզ տեղյակ կպահենք, եթե Ձեզնից ավելի շատ տեղեկությունների կարիք ունենանք:
- Եթե մենք որոշենք, որ մեր ծրագիրը ապահովագրում է ծառայությունը, ապրանքը կամ դեղը, և Դուք հետևել եք այն ստանալու բոլոր կանոններին, մենք կվճարենք դրա արժեքի մեր բաժինը: Եթե Դուք արդեն վճարել եք ծառայության կամ դեղամիջոցի համար, մենք Ձեզ փոստով չեկ կուղարկենք ծախսերի մեր մասնաբաժնի համար: Եթե Դուք չեք վճարել, մենք ուղղակիորեն կվճարենք մատակարարին:
- Ձեր *Անդամի տեղեկագրքի 3-րդ գլուխը* բացատրում է Ձեր ծառայություններն ապահովագրելու կանոնները: Ձեր *Անդամի տեղեկագրքի 5-րդ գլուխը* բացատրում է Ձեր Medicare Part D-ի դեղատոմսով դեղերի ապահովագրման կանոնները:
- Եթե մենք որոշենք չվճարել ծառայության կամ դեղամիջոցի արժեքի մեր մասնաբաժինը, մենք Ձեզ նամակ կուղարկենք պատճառները ներկայացնելով: Նամակում նաև կբացատրվեն բողոքարկելու Ձեր իրավունքները:
- Ապահովագրության որոշումների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար ուսումնասիրեք Գլուխ 9-ը:

D. Բողոքարկումներ

Եթե կարծում եք, որ մենք սխալ ենք թույլ տվել՝ մերժելով վճարման Ձեր հայտը, կարող եք խնդրել մեզ փոխել մեր որոշումը: Սա կոչվում է «բողոքարկում»: Դուք կարող եք նաև բողոքարկել, եթե համաձայն չեք մեր վճարած գումարի հետ:

Բողոքարկման պաշտոնական գործընթացն ունի մանրամասն ընթացակարգեր և ժամկետներ: Բողոքարկումների մասին հավելյալ տեղեկությունների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 9-ը*:

- Առողջապահական խնամքի ծառայության համար փոխհատուցում ստանալու վերաբերյալ բողոքարկելու համար ուսումնասիրեք **Բաժին F-ը**:
- Դեղամիջոցի համար փոխհատուցում ստանալու վերաբերյալ բողոքարկում ներկայացնելու համար ուսումնասիրեք **Բաժին G-ն**:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



Գլուխ 8. Ձեր իրավունքներն ու պարտավորությունները

Ներածություն

Այս գլուխը ներառում է Ձեր իրավունքները և պարտականությունները՝ որպես մեր ծրագրի անդամ: Մենք պետք է հարգենք Ձեր իրավունքները: Հիմնական եզրույթները և դրանց սահմանումները ներկայացված են այբբենական կարգով՝ *Անդամի տեղեկագրքի* վերջին գլխում:

Բովանդակություն

- A. Ծառայությունները և տեղեկությունները ցանկացած ձևով ստանալու Ձեր իրավունքը, որը համապատասխանում է Ձեր կարիքներին..... 203
- B. Մեր պատասխանատվությունն է ապահովագրված ծառայությունների և դեղերի ժամանակին հասանելիության ապահովումը Ձեզ համար..... 204
- C. Մեր պատասխանատվությունն է պաշտպանել Ձեր անձնական առողջական տվյալները (PHI)..... 205
 - C1. Ինչպես ենք պաշտպանում Ձեր PHI-ը 206
 - C2. Ձեր բժշկական արձանագրությունները նայելու Ձեր իրավունքը 207
- D. Ձեզ տեղեկատվություն տրամադրելու մեր պատասխանատվությունը 207
- E. Ցանցային մատակարարների անկարողությունը՝ Ձեզ ուղղակիորեն հաշիվ ուղարկելու համար 209
- F. Մեր ծրագրից դուրս գալու Ձեր իրավունքը..... 209
- G. Ձեր առողջապահական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնելու Ձեր իրավունքը..... 209
 - G1. Ձեր բուժման ընտրանքների մասին տեղյակ լինելու և որոշումներ կայացնելու Ձեր իրավունքը..... 209
 - G2. Ձեր իրավունքն է ասել, թե ինչ էք ցանկանում, որ տեղի ունենա, եթե չէք կարողանում ինքներդ առողջապահական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնել Ձեզ համար..... 210
 - G3. Ինչ անել, եթե Ձեր հրահանգները չկատարվեն 211
- H. Ձեր իրավունքը՝ բողոքներ ներկայացնելու և մեզ խնդրելու վերանայել մեր որոշումները 212
 - H1. Ինչ անել անարդար վերաբերմունքի կամ Ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար..... 212
- I. Ձեր պարտականությունները որպես ծրագրի անդամ 212

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



A. Ծառայությունները և տեղեկությունները ցանկացած ձևով ստանալու Ձեր իրավունքը, որը համապատասխանում է Ձեր կարիքներին

Մենք պետք է ապահովենք, որ **բոլոր** ծառայությունները Ձեզ մատուցվեն մշակութային առումով գրագետ և մատչելի ձևով: Մենք պետք է նաև տեղեկացնենք Ձեզ մեր ծրագրի նպաստների և Ձեր իրավունքների մասին այնպես, որ Դուք կարողանաք հասկանալ: Մենք պետք է Ձեզ տեղեկացնենք Ձեր իրավունքների մասին յուրաքանչյուր տարի, երբ Դուք մեր ծրագրում եք:

- Ձեզ հասկանալի ձևով տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք Ձեր խնամքի համակարգողին կամ *Հաճախորդների սպասարկման բաժին*: Մեր ծրագիրն ունի անվճար թարգմանչական ծառայություններ՝ տարբեր լեզուներով հարցերին պատասխանելու համար:
- Մեր ծրագիրը կարող է նաև Ձեզ անվճար նյութեր տրամադրել՝ անգլերենից բացի այլ լեզուներով և ձևաչափերով, ինչպիսիք են խոշոր տպագիր, բրայլյան այբուբենը աուդիո կամ այլընտրանքային ձևաչափերը, եթե Դուք դրա կարիքը ունեք: Նյութերը կարող են հասանելի լինել նաև հայերեն, կամբոջերեն, չինարեն, պարսկերեն, հինդի, հինդերեն, ճապոներեն, կորեերեն, լատներեն, միեն, փենջաբերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալոգերեն, թայերեն, ուկրաիներեն և վիետնամերեն: Այս այլընտրանքային ձևաչափերից որևէ մեկով նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժին:
- Եթե որևէ դժվարություն ունեք մեր ծրագրից Ձեզ համար մատչելի և համապատասխան ձևաչափով տեղեկատվություն ստանալու համար, խնդրում ենք զանգահարել՝ բողոք ներկայացնելու համար՝

Blue Shield of California Civil Rights Coordinator
P.O. Box 629007
El Dorado Hills, CA 95762- 9007

Հեռախոս՝ (844) 831-4133 (TTY՝ 711)

Ֆաքս՝ (844) 696-6070

Էլ. փոստ՝ BlueShieldCivilRightsCoordinator@blueshieldca.com

- Դուք միշտ կարող եք հարցում ներկայացնել այս փաստաթուղթը անգլերենից բացի մեկ այլ լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով ստանալու համար՝ այս պահին և հետագայում: Հայտ ներկայացնելու համար խնդրում ենք դիմել Blue Shield TotalDual Plan-ի Հաճախորդների սպասարկման կենտրոն:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 203



- Blue Shield TotalDual Customer Service-ը կպահի Ձեր նախընտրած լեզուն և ձևաչափը ֆայլում՝ հետագա հաղորդակցության համար: Ձեր նախապատվությունների վերաբերյալ թարմացումներ կատարելու համար խնդրում ենք դիմել Blue Shield TotalDual Plan-ի Հաճախորդների սպասարկման բաժին:

Եթե լեզվական խնդիրների կամ հաշմանդամության պատճառով մեր ծրագրից տեղեկություններ ստանալու դժվարություն ունեք, և ցանկանում եք բողոք ներկայացնել, գանգահարեք.

- Medicare՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: Դուք կարող եք գանգահարել օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտվողները պետք է գանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Medi-Cal-ի քաղաքացիական իրավունքների գրասենյակ (Office of Civil Rights)՝ 916-440-7370 հեռախոսահամարով: TTY օգտվողները պետք է գանգահարեն 711:
- ԱՄՆ Առողջապահության և մարդկային ծառայությունների դեպարտամենտ, Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ 1-800-368-1019 հեռախոսահամարով: TTY օգտվողները պետք է գանգահարեն 1-800-537-7697 հեռախոսահամարով:

B. Մեր պատասխանատվությունն է ապահովագրված ծառայությունների և դեղերի ժամանակին հասանելիության ապահովումը Ձեզ համար

Դուք իրավունքներ ունեք որպես մեր ծրագրի անդամ:

- Դուք իրավունք ունեք ընտրել առաջնային խնամքի մատակարար (PCP) մեր ցանցում: Ցանցի մատակարարն այն մատակարարն է, ով աշխատում է մեզ հետ: Դուք կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել այն մասին, թե ինչ տեսակի մատակարարներ կարող են հանդես գալ որպես PCP և ինչպես ընտրել PCP Ձեր *Անդամի տեղեկագրքի* **Գլուխ 3-ում**:
 - Զանգահարեք Ձեր խնամքի համակարգողին կամ Հաճախորդների սպասարկման բաժին կամ փնտրեք *Մատակարարների և դեղատների տեղեկատու*՝ հավելյալ տեղեկություններ ստանալու ցանցի մատակարարների և այն բժիշկների մասին, որոնք նոր հիվանդներ են ընդունում:
- Դուք իրավունք ունեք օգտվելու կանանց առողջության մասնագետից՝ առանց ուղեգիր ստանալու: Ուղեգիրը Ձեր PCP-ի կողմից հաստատումն է՝ օգտվելու մատակարարից, որը Ձեր PCP-ն չէ:
- Դուք իրավունք ունեք ստանալ ապահովագրված ծառայություններ ցանցի մատակարարներից ողջամիտ ժամկետում:
 - Սա ներառում է մասնագետներից ժամանակին ծառայություններ ստանալու իրավունքը:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք գանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



- Եթե Դուք չեք կարող ծառայություններ ստանալ ողջամիտ ժամկետում, մենք պետք է վճարենք ցանցից դուրս խնամքի համար:
- Դուք իրավունք ունեք ստանալու շտապ օգնության ծառայություններ կամ խնամք, որը շտապ անհրաժեշտ է առանց նախնական հաստատման (PA):
- Դուք իրավունք ունեք առանց երկար ուշացումների ստանալ Ձեր դեղատոմսերը մեր ցանցի դեղատներից որևէ մեկում:
- Դուք իրավունք ունեք իմանալու, թե երբ կարող եք օգտվել ցանցից դուրս մատակարարից: Ցանցից դուրս մատակարարների մասին տեղեկություններ ստանալու համար ուսումնասիրեք Ձեր Անդամի տեղեկագրքի **Գլուխ 3-ը**:
- Երբ Դուք առաջին անգամ միանում եք մեր ծրագրին, Դուք իրավունք ունեք պահպանել Ձեր ընթացիկ մատակարարներին և ծառայությունների թույլտվությունները մինչև 12 ամիս, եթե որոշակի պայմաններ բավարարվեն: Ձեր մատակարարների և ծառայությունների թույլտվությունների պահպանման մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 1-ը*:
- Դուք իրավունք ունեք Ձեր սեփական առողջապահական որոշումները կայացնել Ձեր խնամքի թիմի և խնամքի համակարգողի օգնությամբ:

Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 9-ը* տեղեկություններ է տրամադրում, թե ինչ կարող եք անել, եթե կարծում եք, որ Ձեր ծառայությունները կամ դեղերը ողջամիտ ժամկետում չեք ստանում: Այն նաև պատմում է, թե ինչ կարող եք անել, եթե մենք մերժենք Ձեր ծառայությունների կամ դեղերի ապահովագրությունը, իսկ Դուք համաձայն չլինեք մեր որոշման հետ:

C. Մեր պատասխանատվությունն է պաշտպանել Ձեր անձնական առողջական տվյալները (PHI)

Մենք պաշտպանում ենք Ձեր PHI-ն ինչպես պահանջվում է դաշնային և նահանգային օրենքներով:

Ձեր PHI-ը ներառում է այն տեղեկությունները, որոնք Դուք տրամադրել եք մեզ մեր ծրագրում գրանցվելիս: Այն նաև ներառում է Ձեր բժշկական արձանագրությունները և այլ բժշկական և առողջապահական տեղեկություններ:

Դուք իրավունքներ ունեք, երբ խոսքը վերաբերում է Ձեր տեղեկատվությանը և Ձեր PHI-ի օգտագործմանը վերահսկելուն: Մենք Ձեզ գրավոր ծանուցում ենք տալիս, որը պատմում է այս իրավունքների մասին և բացատրում, թե ինչպես ենք մենք պաշտպանում Ձեր PHI-ի գաղտնիությունը: Ծանուցումը կոչվում է «Գաղտնիության գործելակերպի ծանուցագիր»:

Այն անդամներից, ովքեր կարող են համաձայնել զգայուն ծառայություններ ստանալ, չի պահանջվում ստանալ որևէ այլ անդամի թույլտվությունը զգայուն ծառայություններ ստանալու կամ զգայուն ծառայությունների համար պահանջ ներկայացնելու համար: Blue Shield TotalDual Plan-ը կուղղորդի զգայուն ծառայությունների վերաբերյալ հաղորդակցությունները անդամի այլընտրանքային նշանակված փոստային հասցեին, էլ.

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 205



փոստի հասցեին կամ հեռախոսահամարին, կամ նշանակման բացակայության դեպքում՝ անդամի անունով ֆայլում նշված հասցեով կամ հեռախոսահամարով: Blue Shield TotalDual Plan-ը որևէ այլ անդամի չի բացահայտի զգայուն ծառայությունների հետ կապված բժշկական տվյալները՝ առանց խնամք ստացող անդամի գրավոր թույլտվության: Blue Shield TotalDual Plan-ը կբավարարի գաղտնի հաղորդակցության հարցումները ձևաթղթում և պահանջվող ձևաչափը, եթե այն հեշտությամբ արտադրվում է պահանջվող ձևով և ձևաչափով կամ այլընտրանքային վայրերում: Անդամի խնդրանքը գաղտնի ծառայությունների հետ կապված գաղտնի հաղորդակցությունների վերաբերյալ վավեր կլինի այնքան ժամանակ, մինչև անդամը չեղարկի հարցումը կամ չներկայացնի նոր հարցում գաղտնի հաղորդակցության համար: Մեր Գաղտնիության գործելակերպի մասին ծանուցման պատճենը պահանջելու կամ Ձեր ֆայլում Գաղտնի հաղորդակցություն տեղադրելու խնդրանքով կարող եք կամ:

1. Այցելել blueshieldca.com և սեղմել Գաղտնիության(Privacy) հղումը գլխավոր էջի ներքևում: Այնտեղ կարող եք գտնել Գաղտնիության գործելակերպի մասին ծանուցումը և Գաղտնի հաղորդակցությունների ձևաթուղթը:
2. Չանգահարել Ձեր Blue Shield անդամի նույնականացման քարտի Հաճախորդների սպասարկման բաժնի հեռախոսահամարով:
3. Չանգահարել Blue Shield of California-ի գաղտնիության հարցերով գրասենյակի անվճար (888) 266-8080 հեռախոսահամարով: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 711 համարով:
4. Էլ.նամակ ուղարկել մեզ հետևյալ հասցեով՝ privacy@blueshieldca.com

C1. Ինչպես ենք պաշտպանում Ձեր PHI-ը

Մենք երաշխավորում ենք, որ ոչ մի չարտոնված մարդ չի նայի կամ չի փոխի Ձեր արձանագրությունները:

Բացառությամբ ստորև նշված դեպքերի, մենք Ձեր PHI-ը չենք տա որևէ մեկին, որը չի տրամադրի Ձեր խնամքը կամ չի վճարի Ձեր խնամքի համար: Եթե մենք դա անենք, մենք պետք է նախ Ձեզնից գրավոր թույլտվություն ստանանք: Դուք կամ որևէ մեկը, որը օրինականորեն լիազորված է որոշումներ կայացնել Ձեր փոխարեն, կարող եք գրավոր թույլտվություն տալ:

Երբեմն մենք կարիք չունենք նախապես Ձեր գրավոր թույլտվությունը ստանալու համար: Այս բացառությունները թույլատրվում կամ պահանջվում են օրենքով.

- Մենք պետք է PHI-ն հրապարակենք պետական մարմիններին, որոնք ստուգում են մեր ծրագրի խնամքի որակը:
 - Դատարանի որոշմամբ պետք է հրապարակենք PHI-ը:
 - Մենք պետք է Medicare-ին տանք Ձեր PHI-ը: Եթե Medicare-ը հրապարակի Ձեր PHI-ը հետազոտության կամ այլ օգտագործման համար, նրանք դա կանեն դաշնային օրենքների համաձայն:
- Մենք պետք է տրամադրենք Ձեր Medi-Cal PHI-ը, քանի որ մենք՝

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 206



- Օգնում ենք կառավարել առողջապահական բուժումը, որն ստանում եք
- Ղեկավարում ենք մեր կազմակերպությունը
- Վճարում ենք Ձեր առողջական ծառայությունների համար
- Կառավարում ենք Ձեր առողջապահական ծրագիրը
- Օգնում ենք հանրային առողջապահության և ապահովության հարցերում
- Հետազոտություն ենք անցկացնում
- Համապատասխանում ենք օրենքներին
- Պատասխանում ենք օրգանների և հյուսվածքի նվիրատվության խնդրանքներին և աշխատում ենք բժշկական քննչի կամ թաղման տնօրենի հետ
- Ջբաղվում ենք աշխատողների փոխհատուցումներով, օրենքի պարտադիր կիրառման հարցերով և այլ պետական խնդրանքներով
- Պատասխանում ենք դատական հայցերին և իրավական գործողություններին

C2. Ձեր բժշկական արձանագրությունները նայելու Ձեր իրավունքը

- Դուք իրավունք ունեք նայել Ձեր բժշկական փաստաթղթերը և ստանալ Ձեր արձանագրությունների պատճենը:
- Դուք իրավունք ունեք խնդրել մեզ թարմացնել կամ ուղղել Ձեր բժշկական արձանագրությունները: Եթե Դուք խնդրեք մեզ դա անել, մենք կաշխատենք Ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ՝ որոշելու, թե արդյոք փոփոխություններ պետք է կատարվեն:
- Դուք իրավունք ունեք իմանալու, թե արդյոք և ինչպես ենք մենք համօգտագործում Ձեր PHI-ն ուրիշների հետ:

Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք Ձեր PHI-ի գաղտնիության վերաբերյալ, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին:

D. Ձեզ տեղեկատվություն տրամադրելու մեր պատասխանատվությունը

Որպես մեր ծրագրի անդամ՝ Դուք իրավունք ունեք մեզնից տեղեկություններ ստանալ մեր ծրագրի, մեր ցանցի մատակարարների և Ձեր ապահովագրված ծառայությունների մասին:

Եթե Դուք անգլերեն չեք խոսում, մենք թարգմանչական ծառայություններ ունենք՝ մեր ծրագրի վերաբերյալ Ձեր հարցերին պատասխանելու համար: Թարգմանիչ ստանալու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին: Սա անվճար ծառայություն է Ձեզ համար: *Անդամի տեղեկագիրքը* և այլ կարևոր նյութեր հասանելի են անգլերենից բացի այլ

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 207



լեզուներով: Նյութերը կարող են հասանելի լինել նաև հայերեն, կամբոջերեն, չինարեն, պարսկերեն, հինդի, հինդերեն, ճապոներեն, կորեերեն, լատներեն, միեն, փենջաբերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալոգերեն, թայերեն, ուկրաիներեն և վիետնամերեն: Մենք կարող ենք նաև Ձեզ տեղեկատվություն տրամադրել խոշոր տպագիր, բրայլյան այբուբենով կամ աուդիո տարբերակով: Մեզնից պահանջվում է Ձեզ տեղեկատվություն տրամադրել ծրագրի առավելությունների մասին Ձեզ համար մատչելի և համապատասխան ձևաչափով: Ձեզ համար հարմար եղանակով մեզնից տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժին:

Եթե տեղեկություններ ցանկանաք ստորև նշվածներից որևէ մեկի մասին, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին.

- Ինչպես ընտրել կամ փոխել ծրագրերը
- Մեր ծրագիրը, ներառում է.
 - Ֆինանսական տեղեկատվություն
 - ինչպես են մեզ գնահատել ծրագրի անդամները
 - անդամների կողմից արված դիմում-բողոքների քանակը
 - ինչպես դուրս գալ մեր ծրագրից
- Մեր ցանցի մատակարարները և մեր ցանցային դեղատները, ներառյալ՝
 - ինչպես ընտրել կամ փոխել առաջնային խնամքի մատակարարներին
 - մեր ցանցի մատակարարների և դեղատների որակավորումները
 - ինչպես ենք մենք վճարում մատակարարներին մեր ցանցում
- Ապահովագրված ծառայությունները և դեղերը, ներառյալ՝
 - ծառայություններ (ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի 3-րդ և 4-րդ գլուխները*) և դեղերը (ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի 5-րդ և 6-րդ գլուխները*), որոնք ապահովագրված են մեր ծրագրի կողմից
 - Ձեր ապահովագրության և դեղերի սահմանափակումները
 - կանոններ, որոնց պետք է հետևեք ապահովագրված ծառայություններ և դեղեր ստանալու համար
- Ինչու ինչ-որ բան չի փոխհատուցվում և ինչ կարող եք անել դրա առնչությամբ (ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 9-ը*), ներառյալ մեզ խնդրելով հետևյալը.
 - գրավոր տեղեկացնել, թե ինչու ինչ-որ բան չի փոխհատուցվում
 - փոխել մեր կայացրած որոշումը
 - վճարել Ձեր ստացած հաշվի համար

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 808



E. Ցանցային մատակարարների անկարողությունը՝ Ձեզ ուղղակիորեն հաշիվ ուղարկելու համար

Բժիշկները, հիվանդանոցները և մեր ցանցի այլ մատակարարները չեն կարող Ձեզ ստիպել վճարել ապահովագրված ծառայությունների համար: Նրանք նաև չեն կարող հաշվեկշռել հաշիվը կամ Ձեզնից գանձել, եթե մենք վճարենք մատակարարի կողմից գանձված գումարից ավելի քիչ: Տեղեկություններ ստանալու այն մասին, թե ինչ պետք է անել, եթե ցանցի մատակարարը փորձի Ձեզնից վճարումներ գանձել ապահովագրված ծառայությունների համար, ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 7-ը*:

F. Մեր ծրագրից դուրս գալու Ձեր իրավունքը

Ոչ ոք չի կարող Ձեզ ստիպել մնալ մեր ծրագրում, եթե Դուք չեք ցանկանում:

- Դուք իրավունք ունեք ստանալ Ձեր առողջապահական ծառայությունների մեծ մասը Original Medicare-ի կամ Medicare Advantage-ի (MA) մեկ այլ ծրագրի միջոցով:
- Դուք կարող եք ստանալ Ձեր Medicare Part D դեղատոմսով դեղերի նպաստները դեղատոմսով դեղերի ծրագրով կամ մեկ այլ MA ծրագրով:
- Ուսումնասիրեք *Անդամի տեղեկագրքի Գլուխ 10-ը*.
 - Լրացուցիչ տեղեկություններ ստանալու այն մասին, թե երբ կարող եք միանալ նոր MA-ի կամ դեղատոմսով դեղերի նպաստների ծրագրին:
 - Տեղեկություններ ստանալու այն մասին, թե ինչպես Դուք կստանաք Ձեր Medi-Cal-ի նպաստները, եթե հեռանաք մեր ծրագրից:

G. Ձեր առողջապահական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնելու Ձեր իրավունքը

Դուք իրավունք ունեք լիարժեք տեղեկատվություն ստանալու Ձեր բժիշկներից և առողջապահական այլ ծառայություններ մատուցողներից, որոնք կօգնեն Ձեզ որոշումներ կայացնել Ձեր առողջապահական խնամքի վերաբերյալ:

G1. Ձեր բուժման ընտրանքների մասին տեղյակ լինելու և որոշումներ կայացնելու Ձեր իրավունքը

Ձեր մատակարարները պետք է բացատրեն Ձեր առողջական խնդիրը և Ձեր բուժման ընտրություններն այնպես, որ Դուք կարողանաք հասկանալ: Դուք իրավունք ունեք.

- **Տեղյակ լինել Ձեր ընտրությունների մասին:** Դուք իրավունք ունեք տեղեկացվելու բուժման բոլոր տարբերակների մասին:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք գանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 209



- **Տեղյակ լինել վտանգների մասին:** Դուք իրավունք ունեք տեղեկանալու ցանկացած վտանգի մասին: Մենք պետք է նախապես տեղեկացնենք Ձեզ, եթե որևէ ծառայություն կամ բուժում հետազոտական փորձի մաս է կազմում: Դուք իրավունք ունեք հրաժարվել փորձարարական բուժումից:
- **Երկրորդ կարծիք ստանալ:** Դուք իրավունք ունեք օգտվել մեկ այլ բժշկի ծառայությունից նախքան բուժման որոշում կայացնելը:
- **Ոչ ասել:** Դուք իրավունք ունեք հրաժարվել ցանկացած բուժումից: Սա ներառում է հիվանդանոցից կամ այլ բժշկական հաստատությունից դուրս գալու իրավունքը, նույնիսկ եթե Ձեր բժիշկը Ձեզ խորհուրդ չի տալիս դա անել: Դուք իրավունք ունեք դադարեցնել նշանակված դեղի ընդունումը: Եթե Դուք հրաժարվեք բուժումից կամ դադարեցնեք նշանակված դեղամիջոցի ընդունումը, մենք Ձեզ չենք հանի մեր ծրագրից: Սակայն, եթե Դուք հրաժարվեք բուժումից կամ դադարեցնեք դեղի ընդունումը, Դուք կկրեք ողջ պատասխանատվությունը Ձեզ հետ կատարվածի համար:
- **Խնդրեք մեզ բացատրել, թե ինչու է մատակարարը մերժել խնամքը:** Դուք իրավունք ունեք մեզնից բացատրություն ստանալ, եթե մատակարարը մերժել է այն խնամքը, որը Դուք կարծում եք, որ պետք է ստանայիք:
- **Խնդրեք մեզ ապահովագրել այն ծառայությունը կամ դեղը, որը մենք մերժել ենք կամ սովորաբար չենք ապահովագրում:** Սա կոչվում է ապահովագրական որոշում: Ձեր *Անդամի տեղեկագրքի* **Գլուխ 9-ը** բացատրում է, թե ինչպես մեզնից ապահովագրության որոշում խնդրել:

G2. Ձեր իրավունքն է ասել, թե ինչ եք ցանկանում, որ տեղի ունենա, եթե չեք կարողանում ինքներդ առողջապահական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնել Ձեզ համար

Երբեմն մարդիկ չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել առողջապահական խնամքի վերաբերյալ: Մինչ դա Ձեզ հետ տեղի կունենա, Դուք կարող եք.

- Լրացրնել գրավոր ձևաթուղթ, որը ինչ-որ մեկին իրավունք կտա առողջապահական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնել Ձեր փոխարեն:
- **Ձեր բժիշկներին գրավոր հրահանգներ** սովեք այն մասին, թե ինչպես վարվել Ձեր առողջապահական խնամքի հետ, եթե Դուք ի վիճակի չեք որոշումներ կայացնել ինքներդ Ձեզ համար, ներառյալ խնամքը, որը **չեք** ցանկանում:

Իրավաբանական փաստաթուղթը, որը Դուք օգտագործում եք Ձեր ցուցումները տալու համար, կոչվում է «նախնական հրահանգ»: Կան տարբեր տեսակի նախնական հրահանգներ և դրանց համար տարբեր անուններ: Օրինակներն են ապրելու կամքը և առողջապահական լիազորագիրը:

Ձեզնից չի պահանջվում նախնական հրահանգ ունենալ, բայց կարող եք: Ահա թե ինչ պետք է անել, եթե ցանկանում եք օգտագործել նախնական հրահանգը.

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413

(TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:

210



- **Ստացեք ձևաթուղթը:** Ձևաթուղթը կարող եք ստանալ Ձեր բժշկից, իրավաբանից, իրավաբանական ծառայությունների գործակալությունից կամ սոցիալական աշխատողից: Դեղատները և մատակարարների ընդունարանները հաճախ ունեն այդ ձևաթղթերը: Կարող եք անվճար առցանց ձևաթուղթ գտնել և ներբեռնել այն: Կարող եք նաև կապվել Հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ ձևաթուղթը խնդրելու համար:
- **Լրացրեք ձևաթուղթը և ստորագրեք այն:** Ձևաթուղթն օրինական փաստաթուղթ է: Դուք պետք է մտածեք այն մասին, որ փաստաբանը կամ մեկ ուրիշը, ում վստահում եք, օրինակ ընտանիքի անդամը կամ Ձեր PCP-ն, կօգնի Ձեզ լրացնել այն:
- **Տվեք պատճեններն այն մարդկանց, ովքեր պետք է իմանան:** Դուք պետք է Ձեր բժշկին տրամադրեք ձևաթղթի պատճենը: Դուք նաև պետք է պատճենը տաք այն անձին, ում նշանակել եք, որպեսզի Ձեր փոխարեն որոշումներ կայացնի: Դուք կարող եք պատճենները տալ մտերիմ ընկերներին կամ ընտանիքի անդամներին: Մեկ օրինակ պահեք տանը:
- Եթե Դուք հոսպիտալացվում եք և ունեք ստորագրված նախնական հրահանգ, **դրա պատճենը տարեք հիվանդանոց:**
 - Հիվանդանոցում կհարցնեն, թե արդյոք ունեք ստորագրված նախնական հրահանգի ձևաթուղթ, և արդյոք այն Ձեզ մոտ է:
 - Եթե Դուք չունեք ստորագրված նախնական հրահանգի ձևաթուղթ, հիվանդանոցում կան ձևաթղթեր և Ձեզ կհարցնեն, թե արդյոք ցանկանում եք ստորագրել այն:

Դուք իրավունք ունեք.

- Որ Ձեր նախնական հրահանգը դրվի Ձեր բժշկական արձանագրություններում:
- Ցանկացած ժամանակ փոխել կամ չեղարկել Ձեր նախնական հրահանգը:
- Տեղյակ լինել նախնական հրահանգի օրենքների փոփոխության մասին: Blue Shield TotalDual Plan-ը Ձեզ կտեղեկացնի նահանգային օրենքի փոփոխությունների մասին փոփոխությունից հետո ոչ ուշ քան 90 օրվա ընթացքում:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին:

G3. Ինչ անել, եթե Ձեր հրահանգները չկատարվեն

Եթե Դուք ստորագրել եք նախնական հրահանգը և կարծում եք, որ բժիշկը կամ հիվանդանոցը չի հետևել դրա ցուցումներին, կարող եք բողոք ներկայացնել Livanta-ին (California's Quality Improvement Organization)՝ (877) 588-1123 (TTY՝ (855) 887-6668) հեռախոսահամարով կամ գրեք հետևյալ հասցեին. Livanta BFCC-QIO Program 10820 Guilford Rd, Ste. 202, Annapolis Junction, MD 20701

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 211



Ի. Ձեր իրավունքը բողոքներ ներկայացնելու և մեզ խնդրելու վերանայել մեր որոշումները

Ձեր *Անդամի տեղեկագրքի 9-րդ գլխում* ասվում է, թե ինչ կարող եք անել, եթե որևէ խնդիր կամ մտահոգություն ունեք Ձեր ապահովագրված ծառայությունների կամ խնամքի առնչությամբ: Օրինակ, Դուք կարող եք խնդրել մեզ ընդունել ապահովագրության որոշում, բողոքարկել ապահովագրության որոշումը՝ փոխելու կամ բողոք ներկայացնելու համար:

Դուք իրավունք ունեք տեղեկություններ ստանալ բողոքարկումների և բողոքների մասին, որոնք մեր դեմ ներկայացրել են ծրագրի այլ անդամներ: Այս տեղեկատվությունը ստանալու համար գանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին:

Ի1. Ինչ անել անարդար վերաբերմունքի կամ Ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար

Եթե կարծում եք, որ մենք Ձեզ հետ անարդար ձևով ենք վերաբերվել, և դա Ձեր *Անդամի տեղեկագրքի 11-րդ գլխում* թվարկված պատճառներով խտրականության մասին չէ, կամ ցանկանում եք հավելյալ տեղեկություններ ստանալ Ձեր իրավունքների մասին, կարող եք գանգահարել

- Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով:
- The Health Insurance Counseling and Advocacy Program (HICAP)՝ 1-800-434-0222 (TTY՝ 711): HICAP-ի մասին լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Գլուխ 2 Բաժին E:
- The Ombuds Program-ը՝ 1-888-452-8609 հեռախոսահամարով: Այս ծրագրի մասին լրացուցիչ մանրամասների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 2-ը*:
- Medicare՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտվողները պետք է գանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով: (Դուք կարող եք նաև կարդալ կամ ներբեռնել «Medicare Rights & Protections»-ը, որը գտնվում է Medicare-ի կայքում www.medicare.gov/Pubs/pdf/11534-Medicare-Rights-and-Protections.pdf.)

Ի. Ձեր պարտականությունները որպես ծրագրի անդամ

Որպես ծրագրի անդամ, Դուք պարտավոր եք անել ստորև թվարկված բաները: Հարցերի դեպքում գանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին:

- **Կարդացեք Անդամի տեղեկագրքը՝** տեղեկություններ ստանալու այն մասին, թե ինչ է ընդգրկում մեր ծրագիրը և այն կանոնները, որոնց պետք է հետևել ապահովագրված ծառայություններ և դեղեր ստանալու համար: Մանրամասներ Ձեր
 - ապահովագրված ծառայությունների մասին, ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի 3-րդ և 4-րդ գլուխները*: Այդ գլուխները Ձեզ տեղեկացնում են, թե ինչն է ծածկվում, ինչը չի ծածկվում, ինչ կանոնների պետք է հետևել և ինչի համար եք վճարելու:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք գանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



- Ապահովագրված դեղերի համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի 5-րդ և 6-րդ գլուխները*:
- **Տեղեկացրեք մեզ Ձեր ցանկացած այլ առողջապահական կամ դեղատոմսով դեղերի ապահովագրության վերաբերյալ**: Մենք պետք է համոզվենք, որ Դուք օգտագործում եք Ձեր ապահովագրության բոլոր տարբերակները, երբ Դուք ստանում եք առողջապահական խնամք: Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին, եթե ունեք այլ ապահովագրություն:
- **Ձեր բժշկին և առողջապահական խնամքի այլ մատակարարներին տեղեկացրեք**, որ մեր ծրագրի անդամ եք: Ցույց տվեք Ձեր Անդամի նույնականացման (ID) քարտը, երբ ծառայություններ կամ դեղեր եք ստանում:
- **Օգնեք Ձեր բժիշկներին և առողջապահական խնամքի այլ մատակարարներին՝ Ձեզ լավագույն խնամք տրամադրելու**:
 - Ձեր և Ձեր առողջության մասին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրեք նրանց: Հնարավորինս շատ տեղեկություններ ստացեք Ձեր առողջական խնդիրների մասին: Հետևեք բուժման պլաններին և հրահանգներին, որոնց շուրջ Դուք և Ձեր մատակարարները համաձայնության եք եկել:
 - Համոզվեք, որ Ձեր բժիշկները և այլ մատակարարները գիտեն Ձեր ընդունած բոլոր դեղերի մասին: Մա ներառում է դեղատոմսով դեղեր, առանց դեղատոմսի դեղեր, վիտամիններ և հավելումներ:
 - Տվեք ցանկացած հարց, որ ունեք: Ձեր բժիշկները և այլ մատակարարները պետք է բացատրեն ամեն ինչ այնպես, որ Դուք կարողանաք հասկանալ: Եթե հարց եք տալիս և չեք հասկանում պատասխանը, նորից հարցրեք:
- **Աշխատեք Ձեր խնամքի համակարգողի հետ** այդ թվում՝ լրացնելով առողջության ռիսկերի տարեկան գնահատումը:
- **Ուշադիր եղեք**: Մենք ակնկալում ենք, որ ծրագրի բոլոր անդամները հարգեն այլոց իրավունքները: Մենք նաև ակնկալում ենք, որ Դուք հարգանքով կվարվեք Ձեր բժշկի ընդունարանում, հիվանդանոցներում և այլ մատակարարների ընդունարաններում:
- **Վճարեք այն ամենի համար, ինչի համար պարտավոր եք վճարել**: Որպես ծրագրի անդամ, Դուք պատասխանատու եք հետևյալ վճարումների համար.
 - Medicare Part A և Medicare Part B ապահովագրական վճարներ: Blue Shield TotalDual Plan-ի անդամների մեծամասնության համար Medi-Cal-ը վճարում է Ձեր Medicare Part A ապահովավճարի և Medicare Part B-ի ապահովավճարի համար:
 - Ձեր որոշ երկարաժամկետ ծառայությունների և աջակցության կամ ծրագրով ապահովագրված դեղերի համար Դուք պետք է վճարեք ծախսերի Ձեր մասնաբաժինը, երբ ստանում եք ծառայությունը կամ դեղը: Մա կլինի համավճարում/համավճար (ֆիքսված գումար): Գլուխ 4-ում

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



տեղեկություններ են տրամադրվում այն մասին, թե ինչ պետք է վճարեք Ձեր երկարաժամկետ ծառայությունների և աջակցության համար: Գլուխ 6-ում տեղեկություններ են տրամադրվում, թե ինչ պետք է վճարեք Ձեր դեղերի համար:

- **Եթե Դուք ստանում եք ծառայություններ կամ դեղեր, որոնք չեն ապահովագրվում մեր ծրագրի կողմից, Դուք պետք է վճարեք ամբողջ արժեքը:** (Նշում. եթե համաձայն չեք ծառայության կամ դեղի չփոխհատուցման մեր որոշման հետ, կարող եք բողոքարկել: Խնդրում ենք ծանոթանալ Գլուխ 9-ին՝ տեղեկություններ ստանալու այն մասին, թե ինչպես պետք է բողոքարկել:)
- **Տեղեկացրեք մեզ, եթե տեղափոխվում եք:** Եթե մտադիր եք տեղափոխվել, անմիջապես տեղեկացրեք մեզ: Զանգահարեք Ձեր խնամքի համակարգողին կամ Հաճախորդների սպասարկման բաժին:
- **Եթե Դուք տեղափոխվում եք մեր սպասարկման տարածքից դուրս, Դուք չեք կարող մնալ մեր ծրագրում:** Այս ծրագրի անդամ կարող են լինել միայն այն մարդիկ, ովքեր ապրում են մեր սպասարկման տարածքում: Ձեր *Անդամի տեղեկագրի 1-ին գլուխը* տեղեկացնում է մեր սպասարկման տարածքի մասին:
- Մենք կարող ենք օգնել Ձեզ պարզել, թե արդյոք Դուք տեղափոխվում եք մեր սպասարկման տարածքից դուրս: Գրանցման հատուկ ժամանակահատվածում Դուք կարող եք անցնել Original Medicare-ին կամ գրանցվել Ձեր նոր տարածքի Medicare առողջապահական կամ դեղատոմսով դեղերի ծրագրում: Մենք կարող ենք Ձեզ տեղեկացնել, թե արդյոք մենք ծրագրիրը ունենք Ձեր նոր տարածքում:
- Medicare-ին և Medi-Cal-ին տեղեկացրեք Ձեր նոր հասցեն, երբ տեղափոխվեք: Medicare-ի և Medi-Cal-ի հեռախոսահամարների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրի Գլուխ 2-ը*:
- **Եթե Դուք տեղափոխվեք և մնաք մեր ծառայության տարածքում, մենք պետք է տեղյակ լինենք այդ մասին:** Մենք պետք է թարմացված պահենք Ձեր անդամակցության արձանագրությունը և տեղյակ լինենք, թե ինչպես կապվել Ձեզ հետ:
- **Տեղեկացրեք մեզ, եթե ունեք նոր հեռախոսահամար** կամ Ձեզ հետ կապվելու ավելի լավ միջոցի մասին:
- **Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք, օգնության համար զանգահարեք** Ձեր խնամքի համակարգողին կամ Հաճախորդների սպասարկման բաժին:



Գլուխ 9. Ինչ անել, եթե ունեք խնդիր կամ բողոք (փոխհատուցման որոշումներ, բողոքարկումներ, բողոքներ)

Ներածություն

Այս գլուխը պարունակում է տեղեկատվություն Ձեր իրավունքների մասին: Կարդացեք այս գլուխը պարզելու, թե ինչ անել, եթե.

- Դուք խնդիր կամ բողոք ունեք Ձեր ծրագրի առնչությամբ:
- Ձեզ անհրաժեշտ է ծառայություն, ապրանք կամ դեղամիջոց, որի համար Ձեր պլանում ասվում է, որ այն չի վճարի:
- Դուք համաձայն չեք Ձեր խնամքի վերաբերյալ Ձեր ծրագրի կայացրած որոշման հետ:
- Դուք կարծում եք, որ Ձեր ապահովագրված ծառայությունները շատ շուտ են ավարտվում:
- Դուք խնդիր կամ բողոք ունեք Ձեր երկարաժամկետ ծառայությունների և աջակցության առնչությամբ, որոնք ներառում են Չափահասների համայնքահեն ծառայությունները (CBAS) և ծերանոցի (NF) ծառայությունները:

Այս գլուխը բաղկացած է տարբեր բաժիններից՝ օգնելու Ձեզ հեշտությամբ գտնել այն, ինչ փնտրում եք: **Եթե խնդիր կամ մտահոգություն ունեք, կարդացեք այս գլխի այն հատվածները, որոնք վերաբերում են Ձեր իրավիճակին:**

Դուք պետք է ստանաք այն առողջական խնամքը, դեղերը և երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը, որոնք Ձեր բժիշկը և այլ մատակարարները կորոշեն, որ անհրաժեշտ են Ձեր խնամքի համար՝ որպես Ձեր խնամքի ծրագրի մաս:

Եթե Ձեր խնամքի առնչությամբ խնդիր ունեք, օգնության համար կարող եք զանգահարել Medicare Medi-Cal Ombuds Program՝ 1-855-501-3077

հեռախոսահամարով: Այս գլուխը բացատրում է տարբեր ընտրանքներ, որոնք Դուք ունեք տարբեր խնդիրների և բողոքների համար, բայց միշտ կարող եք զանգահարել Ombuds Program, որպեսզի Ձեզ օգնեն Ձեր խնդիրը լուծելու համար: Ձեր մտահոգությունները լուծելու համար լրացուցիչ ռեսուրսների և դրանց հետ կապ հաստատելու ուղիների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի* **Գլուխ 2-ը:**



Բովանդակություն

A. Ինչ անել, եթե խնդիր կամ մտահոգություն ունեք	218
A1. Իրավաբանական տերմինների մասին.....	218
B. Որտեղ օգնություն ստանալ	218
B1. Լրացուցիչ տեղեկությունների և օգնության համար.....	218
C. Հասկանալ Medicare-ի և Medi-Cal-ի բողոքներն ու բողոքարկումները մեր ծրագրում	220
D. Ձեր նպաստներին առնչվող խնդիրներ.....	220
E. Ապահովագրման որոշումներ և բողոքարկումներ.....	221
E1. Ապահովագրության որոշումներ.....	221
E2. Բողոքարկումներ	222
E3. Օգնություն ապահովագրման որոշումների և բողոքարկումների հարցում.....	222
E4. Այս գլխի ո՞ր բաժինը կարող է օգնել Ձեզ	223
F. Բժշկական խնամք.....	224
F1. Այս բաժնից օգտվելը	224
F2. Ապահովագրության որոշում խնդրելը	225
F3. 1-ին մակարդակի բողոքարկման գործընթացը.....	227
F4. 2-ին մակարդակի բողոքարկում ներկայացնելը	231
F5. Վճարման խնդիրներ.....	238
G. Medicare Part B-ում ներառված դեղատոմսով դեղեր.....	239
G1. Medicare-ի Part D՝ ապահովագրության որոշումներ և բողոքարկումներ	240
G2. Medicare Part D-ի բացառություններ	241
G3. Կարևոր բաներ, որոնք պետք է իմանալ բացառություն խնդրելու մասին	243
G4. Ապահովագրման որոշում, ներառյալ բացառություն խնդրելը	244
G5. 1-ին մակարդակի բողոքարկման գործընթացը	247
G6. 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնելը.....	249



H. Խնդրանք՝ ապահովագրել հիվանդանոցում ավելի երկար մնալը	251
H1. Ձեր Medicare իրավունքների մասին իմանալը.....	252
H2. 1-ին մակարդակի բողոքարկում ներկայացնելը	253
H3. 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնելը.....	255
H4. 1-ին մակարդակի այլընտրանքային բողոքարկում ներկայացնելը	256
H5. 2-րդ մակարդակի այլընտրանքային բողոքարկում ներկայացնելը	257
I. Որոշակի բժշկական ծառայությունների ապահովագրությունը շարունակելու խնդրանք.....	258
I1. Նախնական ծանուցում նախքան Ձեր ապահովագրության ավարտը	259
I2. 1-ին մակարդակի բողոքարկում ներկայացնելը	259
I3. 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնելը	261
I4. 1-ին մակարդակի այլընտրանքային բողոքարկում ներկայացնելը	262
I5. 2-րդ մակարդակի այլընտրանքային բողոքարկման գործընթացը	263
J. Ձեր բողոքարկումը 2-րդ մակարդակից դուրս.....	264
J1. Հաջորդ քայլերը Medicare-ի ծառայությունների և ապրանքների համար	264
J2. Լրացուցիչ Medi-Cal բողոքարկումներ.....	266
J3. Բողոքարկման 3-րդ, 4-րդ և 5-րդ մակարդակները՝ Medicare Part D-ի դեղերի հայտերի համար	266
K. Ինչպես բողոք ներկայացնել.....	268
K1. Ինչ տեսակի խնդիրների վերաբերյալ պետք է լինեն բողոքները	268
K2. Ներքին գանգատներ	270
K3. Արտաքին գանգատներ.....	272



A. Ինչ անել, եթե խնդիր կամ մտահոգություն ունեք

Այս գլուխը բացատրում է, թե ինչպես կարգավորել խնդիրները և մտահոգությունները: Գործընթացը, որից Դուք օգտվում եք, կախված է Ձեր ունեցած խնդրի տեսակից: Օգտագործեք մեկ գործընթաց **ապահովագրական որոշումների և բողոքարկումների համար** և մեկ այլ գործընթաց **զանգասներ ներկայացնելու համար**. նաև կոչվում են բողոքներ:

Արդարություն և արագություն ապահովելու համար յուրաքանչյուր գործընթաց ունի մի շարք կանոններ, ընթացակարգեր և ժամկետներ, որոնց մենք և Դուք պետք է հետևենք:

A1. Իրավաբանական տերմինների մասին

Այս գլխում կան իրավաբանական տերմիններ որոշ կանոնների և վերջնաժամկետների համար: Այս տերմիններից շատերը կարող են դժվար հասկանալի լինել, այնպես որ մենք օգտագործում ենք ավելի պարզ բառեր որոշակի իրավաբանական տերմինների փոխարեն, այնտեղ որտեղ կարող ենք: Մենք հնարավորինս քիչ ենք օգտագործում հապավումները:

Օրինակ, մենք ասում ենք.

- «Գանգատ»՝ «բողոք ներկայացնելու» փոխարեն
- «Ապահովագրման որոշում»՝ «կազմակերպության որոշման» փոխարեն, «նպաստի որոշում», «ռիսկի որոշման» կամ «ապահովագրության վճռի»-ի փոխարեն:
- «Արագ ապահովագրման որոշում»՝ «արագացված որոշման» փոխարեն
- «Անկախ վերանայման կազմակերպություն» (IRO)՝ «Անկախ վերանայող կազմակերպության» (IRE) փոխարեն

Ճիշտ իրավաբանական տերմինների իմացությունը կարող է օգնել Ձեզ ավելի հստակ հաղորդակցվել, ուստի մենք տրամադրում ենք նաև դրանք:

B. Որտեղ օգնություն ստանալ

B1. Լրացուցիչ տեղեկությունների և օգնության համար

Երբեմն շփոթեցնող է խնդրի լուծման գործընթաց սկսելը կամ հետևելը: Մա կարող է հատկապես ճիշտ լինել, եթե Դուք լավ չեք զգում կամ ունեք սահմանափակ էներգիա: Այլ դեպքերում, Դուք կարող եք չունենալ այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է հաջորդ քայլն անելու համար:

Օգնություն Health Insurance Counseling and Advocacy Program-ից (Առողջական ապահովագրության խորհրդատվության և պաշտպանության ծրագիր)

Կարող եք զանգահարեք Health Insurance Counseling and Advocacy Program ((HICAP) Առողջական ապահովագրության խորհրդատվության և պաշտպանության ծրագիր)): HICAP-ի խորհրդատուները կարող են պատասխանել Ձեր հարցերին և օգնել Ձեզ հասկանալ, թե ինչ անել Ձեր խնդիրը լուծելու համար: HICAP-ը կապված չէ մեզ հետ

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



կամ որևէ այլ ապահովագրական ընկերության կամ առողջապահական ծրագրի հետ: HICAP-ն ունի վերապատրաստված խորհրդատուներ յուրաքանչյուր վարչական շրջանում, և նրանց ծառայություններն անվճար են: HICAP-ի հեռախոսահամարն է՝ 1-800-434-0222:

Օգնություն Medicare Medi-Cal Ombuds Program-ից

Դուք կարող եք զանգահարել Medicare Medi-Cal Ombuds Program և խոսել փաստաբանի հետ Ձեր առողջական ապահովագրության հարցերի մասին: Նրանք առաջարկում են անվճար իրավաբանական օգնություն: Ombuds Program-ը կապ չունի մեզ հետ կամ որևէ ապահովագրական ընկերության կամ առողջապահական ծրագրի հետ: Նրանց հեռախոսահամարն է 1-888-804-3536, իսկ կայքը՝ www.healthconsumer.org:

Օգնություն և տեղեկատվություն Medicare-ից

Լրացուցիչ տեղեկությունների և օգնության համար կարող եք կապվել Medicare-ի հետ: Ահա Medicare-ից օգնություն ստանալու երկու եղանակ.

- Զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Այցելեք Medicare-ի կայքը (www.medicare.gov):

Օգնություն և տեղեկատվություն Medi-Cal-ից

Օգնություն Կալիֆորնիայի առողջապահության ծառայությունների բաժանմունքից

Կալիֆորնիայի առողջապահական խնամքի սպասարկման բաժնի (DHCS) Medi-Cal-ի Կառավարվող խնամքի Օմբուդսմենը կարող է օգնել: Նրանք կարող են օգնել, եթե դժվարություն ունեք միանալու, փոխելու կամ հեռանալու առողջապահական ծրագրից: Նրանք նաև կարող են օգնել, եթե տեղափոխվել եք և դժվարություն ունեք Ձեր Medi-Cal-ը Ձեր նոր վարչաշրջան փոխանցելու առնչությամբ: Օմբուդսմենին կարող եք զանգահարել երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 17:00-ը, 1-888-452-8609 հեռախոսահամարով:

Օգնություն Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի բաժնից

Անվճար օգնության համար դիմեք Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի բաժնի (DMHC): DMHC-ն պատասխանատու է առողջապահական ծրագրերի վերահսկման համար: DMHC-ն օգնում է մարդկանց Medi-Cal-ի ծառայությունների կամ հաշիվներին առնչվող խնդիրների վերաբերյալ բողոքարկումների դեպքում: Հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219: Այն անհատները, ովքեր խուլ են, լսողության կամ խոսքի խնդիրներ ունեն, կարող են օգտվել անվճար TDD համարից՝ 1-877-688-9891: Կարող եք նաև այցելել DMHC-ի կայքը՝ www.HealthHelp.ca.gov:

Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժնի պատասխանատու է առողջական խնամքի սպասարկման ծրագրերի կարգավորման համար: Եթե Ձեր առողջապահական ծրագրի դեմ բողոք ունեք, նախ պետք է զանգահարեք Ձեր առողջապահական ծրագրին՝ 1-800-452-4413 հեռախոսահամարով (TTY՝ 711), և օգտագործեք Ձեր առողջապահական ծրագրով սահմանված բողոքարկման գործընթացը՝ նախքան բաժնի հետ կապվելը: Բողոքի այս գործընթացից օգտվելը չի արգելի որևէ հնարավոր օրինական իրավունք կամ միջոց, որը կարող է հասանելի

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 219



լինել Ձեզ: Շտապ օգնության հետ կապված բողոքի, Ձեր առողջապահական ծրագրի կողմից անբավարար լուծում ստացած բողոքի կամ 30 օրվա ժամկետում չլուծված բողոքի կապակցությամբ օգնության համար կարող եք զանգահարել բաժին: Կարող եք նաև Անկախ բժշկական վերանայման (Independent Medical Review, IMR) համար իրավունակ լինել: Եթե IMR-ից օգտվելու համար իրավունակ եք, ապա IMR-ի գործընթացը Ձեզ կընձեռի առողջապահական ծրագրի կողմից կայացված բժշկական որոշումների անաչառ վերանայման հնարավորություն՝ առաջարկված ծառայության կամ բուժման բժշկական անհրաժեշտության, փորձնական կամ հետազոտական բնույթի բուժումն ապահովագրելու որոշումների, ինչպես նաև արտակարգ իրավիճակի կամ հրատապ բժշկական ծառայությունները փոխհատուցելու վեճերի առնչությամբ: Բաժինը նաև ունի անվճար հեռախոսահամար՝ **(1-888-466-2219)** և TDD հեռախոսագիծ՝ **(1-877-688-9891)**՝ լսողության կամ խոսքի դժվարություններ ունեցող անձանց համար: Բաժնի համացանցային կայքը՝ www.dmhca.gov, ունի գանգատի ձևաթղթեր, IMR-ի դիմումի ձևաթղթեր և առցանց հրահանգներ:

C. Հասկանալ Medicare-ի և Medi-Cal-ի բողոքներն ու բողոքարկումները մեր ծրագրում

Դուք ունեք Medicare և Medi-Cal: Այս գլխի տեղեկատվությունը վերաբերում է Medicare-ի և Medi-Cal-ի Ձեր բոլոր նպաստներին: Սա երբեմն կոչվում է «ինտեգրված գործընթաց», քանի որ այն համատեղում կամ ինտեգրում է Medicare և Medi-Cal գործընթացները:

Երբեմն Medicare-ի և Medi-Cal-ի գործընթացները հնարավոր չէ համատեղել: Այդ իրավիճակներում Դուք օգտվում եք մի գործընթացից Medicare-ի նպաստի համար, և մեկ այլ գործընթացից՝ Medi-Cal նպաստի համար: **F4 բաժում** բացատրվում են այս իրավիճակները:

D. Ձեր նպաստներին առնչվող խնդիրներ

Եթե խնդիր կամ մտահոգություն ունեք, կարդացեք այս գլխի այն հատվածները, որոնք վերաբերում են Ձեր իրավիճակին: Հետևյալ աղյուսակը կօգնի Ձեզ գտնել այս գլխի ճիշտ բաժինը խնդիրների կամ բողոքների համար:



<p>Արդյո՞ք Ձեր խնդիրը կամ մտահոգությունը Ձեր նպաստների կամ ապահովագրությանն է առնչվում:</p> <p>Սա ներառում է խնդիրներ այն մասին, թե կոնկրետ բժշկական օգնությունը կամ դեղատոմսով դեղերը ապահովագրված են, թե ոչ, դրանց ապահովագրման ձևը և բժշկական օգնության կամ դեղատոմսով դեղերի վճարմանն առնչվող խնդիրները:</p>	
<p>Այո:</p> <p>Իմ խնդիրը վերաբերում է նպաստներին կամ ապահովագրությանը:</p> <p>Ուսումնասիրեք բաժին E-ն՝ «Ապահովագրման որոշումներ և բողոքարկումներ»:</p>	<p>Ոչ:</p> <p>Իմ խնդիրը չի վերաբերում նպաստներին կամ ապահովագրությանը:</p> <p>Ուսումնասիրեք բաժին K-ն՝ «Ինչպես բողոք ներկայացնել»:</p>

E. Ապահովագրման որոշումներ և բողոքարկումներ

Ապահովագրության որոշում խնդրելու և բողոքարկում ներկայացնելու գործընթացը վերաբերում է Ձեր նպաստներին և ապահովագրությանն առնչվող խնդիրներին: Այն ներառում է նաև վճարմանն առնչվող խնդիրներ:

E1. Ապահովագրության որոշումներ

Ապահովագրության որոշումն այն որոշումն է, որը մենք կայացնում ենք Ձեր նպաստների և ապահովագրության կամ այն գումարի վերաբերյալ, որը մենք կվճարենք Ձեր բժշկական ծառայությունների և դեղերի համար: Օրինակ, Ձեր ծրագրի ցանցի բժիշկը Ձեզ համար (բարենպաստ) ապահովագրական որոշում է կայացնում, երբ Դուք նրանից բժշկական օգնություն եք ստանում (ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի* Գլուխ 4, Բաժին H-ը):

Դուք կամ Ձեր բժիշկը նույնպես կարող եք ապահովագրության որոշում խնդրել: Դուք կամ Ձեր բժիշկը կարող եք վստահ չլինել, թե արդյոք մենք ապահովագրում ենք կոնկրետ բժշկական ծառայություն, թե մենք կարող ենք հրաժարվել բժշկական օգնություն տրամադրելուց, որը Դուք կարծում եք, որ Ձեզ անհրաժեշտ է: **Եթե ցանկանում եք իմանալ, թե արդյոք մենք ապահովագրելու ենք բժշկական ծառայությունը նախքան այն ստանալը, կարող եք խնդրել մեզ ապահովագրական որոշում կայացնել Ձեզ համար:**

Մենք ապահովագրության որոշում ենք կայացնում ամեն անգամ, երբ որոշում ենք, թե ինչն է ապահովագրված Ձեզ համար և որքան ենք վճարում: Որոշ դեպքերում մենք կարող ենք որոշել, որ ծառայությունը կամ դեղը ապահովագրված չէ կամ այլևս ապահովագրված չէ Medicare-ի կամ Medi-Cal-ի կողմից: Եթե համաձայն չեք այս ապահովագրության որոշման հետ, կարող եք բողոքարկել:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 821



E2. Բողոքարկումներ

Եթե մենք ապահովագրական որոշում կայացնենք, և Դուք բավարարված չլինեք այս որոշումից, կարող եք «բողոքարկել» որոշումը: Բողոքարկումը մեզնից պահանջելու պաշտոնական եղանակ է՝ վերանայելու և փոխելու մեր կողմից ընդունված ապահովագրության որոշումը:

Երբ առաջին անգամ եք բողոքարկում որոշումը, դա կոչվում է 1-ին մակարդակի բողոքարկում: Այս բողոքարկմանը մենք վերանայում ենք մեր կողմից ընդունված ապահովագրության որոշումը՝ ստուգելու, թե արդյոք մենք պատշաճ կերպով ենք հետևել բոլոր կանոններին: Բացի սկզբնական անբարենպաստ որոշում կայացնողներից, Ձեր բողոքարկումն ուսումնասիրում են տարբեր վերանայողներ:

Շատ դեպքերում, Դուք պետք է սկսեք Ձեր բողոքարկումը 1-ին մակարդակից: Եթե Ձեր առողջական խնդիրը հրատապ է կամ անմիջական և լուրջ վտանգ է ներկայացնում Ձեր առողջությանը, կամ եթե Դուք ուժեղ ցավ ունեք և անհապաղ որոշման կարիք ունեք, կարող եք IMR բժշկական վերանայում խնդրել Կառավարվող առողջապահական խնամքի բաժնից www.dmhca.gov հասցեով: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս էջ 222:

Երբ մենք ավարտենք վերանայումը, մենք Ձեզ կտանք մեր որոշումը: Որոշակի հանգամանքներում, որոնք հետագայում բացատրվում են այս գլխի Բաժին F2-ում, Դուք կարող եք խնդրել արագացված կամ «արագ ապահովագրական որոշում» կամ «արագ բողոքարկում» ապահովագրական որոշման համար:

Եթե մենք Ոչ ասենք Ձեր խնդրանքի մի մասին կամ ամբողջին, մենք Ձեզ նամակ կուղարկենք: Եթե Ձեր խնդիրն առնչվում է Medicare-ի բժշկական ծառայության կամ ապրանքի կամ Part B դեղերի ապահովագրմանը, նամակը Ձեզ կտեղեկացնի, որ մենք Ձեր գործն ուղարկել ենք Անկախ վերանայման կազմակերպությանը (Independent Review Organization)(IRO)՝ 2-րդ մակարդակի բողոքարկման համար: Եթե Ձեր խնդիրը վերաբերում է Medicare Part D-ի կամ Medicaid ծառայության կամ ապրանքի ապահովագրմանը, նամակը կտեղեկացնի Ձեզ, թե ինչպես ինքներդ 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնեք: 2-րդ մակարդակի բողոքարկումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **բաժին F4-ը**: Եթե Ձեր խնդիրը կապված է Medicare-ի և Medicaid-ի կողմից ապահովագրվող ծառայության կամ ապրանքի ապահովագրման հետ, նամակով Ձեզ տեղեկատվություն կտրամադրվի 2-րդ մակարդակի բողոքարկման երկու տեսակների վերաբերյալ:

Եթե Ձեզ չի բավարարում 2-րդ մակարդակի բողոքարկման որոշումը, կարող եք բողոքարկման լրացուցիչ մակարդակների անցնել:

E3. Օգնություն ապահովագրման որոշումների և բողոքարկումների հարցում

Դուք կարող եք օգնություն խնդրել հետևյալից որևէ մեկից.

- **Հաճախորդների սպասարկման բաժնի** էջի ներքևի մասում գտնվող հեռախոսահամարներով
- **Medicare Medi-Cal Ombuds Program` 1-855-501-3077** հեռախոսահամարով:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 222



- The Health Insurance Counseling and Advocacy Program (HICAP)¹ 1-800-434-0222 հեռախոսահամարով:
- Անվճար օգնության համար դիմեք՝ **Կառավարվող առողջապահական խնամքի բաժնի (DMHC) օգնության կենտրոն:** DMHC-ն պատասխանատու է առողջապահական ծրագրերի վերահսկման համար: DMHC-ն օգնում է մարդկանց Medi-Cal-ի ծառայություններին կամ հաշիվներին առնչվող խնդիրների վերաբերյալ բողոքարկումների դեպքում: Հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219: Այն անհատները, ովքեր խուլ են, լսողության կամ խոսքի խնդիրներ ունեն, կարող են օգտվել անվճար TDD համարից՝ 1-877-688-9891: Կարող եք նաև այցելել DMHC-ի կայքը՝ www.HealthHelp.ca.gov:
- **Ձեր բժիշկը կամ այլ մատակարար:** Ձեր բժիշկը կամ այլ մատակարարը կարող է Ձեր անունից ապահովագրական որոշում կամ բողոքարկում խնդրել:
- **Ընկեր կամ ընտանիքի անդամ:** Դուք կարող եք նշել մեկ այլ անձի, ով կգործի Ձեր փոխարեն որպես Ձեր «ներկայացուցիչ» և կխնդրի ապահովագրական որոշում կամ բողոքարկում ներկայացնել:
- **Իրավաբան:** Դուք իրավունք ունեք փաստաբան ունենալու, բայց **Ձեզինից չի պահանջվում ունենալ փաստաբան՝** ապահովագրական որոշում պահանջելու կամ բողոքարկելու համար:
 - Չանգահարեք Ձեր անձնական փաստաբանին կամ ձեռք բերեք փաստաբանի անունը տեղական փաստաբանների ասոցիացիայից կամ ուղղորդող այլ ծառայությունից: Որոշ իրավաբանական խմբեր Ձեզ կտրամադրեն անվճար իրավաբանական ծառայություններ, եթե Դուք համապատասխանեք:
 - Խնդրեք իրավաբանական օգնության փաստաբան Medicare Medi-Cal Ombuds Program-ից 1-888-804-3536 հեռախոսահամարով:

Լրացրեք Ներկայացուցչի նշանակման ձևաթուղթը, եթե ցանկանում եք, որ փաստաբանը կամ մեկ ուրիշը հանդես գա որպես Ձեր ներկայացուցիչ: Ձևաթուղթը թույլ է տալիս այլ անձին գործել Ձեր անունից:

Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ էջի ներքևում նշված հեռախոսահամարներով և խնդրեք «Ներկայացուցչի նշանակման» ձևաթուղթը: Ձևաթուղթը կարող եք նաև ստանալ՝ այցելելով www.cms.gov/Medicare/CMS-Forms/CMS-Forms/downloads/cms1696.pdf կայք: **Դուք պետք է մեզ տրամադրեք ստորագրված ձևաթղթի պատճենը:**

E4. Այս գլխի ո՞ր բաժինը կարող է օգնել Ձեզ

Կան չորս իրավիճակներ, որոնք ներառում են ապահովագրական որոշումներ և բողոքարկումներ: Յուրաքանչյուր իրավիճակ ունի տարբեր կանոններ և

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 223



վերջնաժամկետներ: Այս գլխի առանձին բաժնում մենք տալիս ենք մանրամասներ յուրաքանչյուրի համար: Տե՛ս այն բաժինը, որը կիրառելի է.

- **Բաժին F**, «Բուժխնամք»
- **Բաժին G**, «Medicare Part D դեղատոմսով տրվող դեղեր»
- **Բաժին H**, «Խնդրանք՝ ապահովագրել հիվանդանոցում ավելի երկար մնալը»
- **Բաժին I**, «Խնդրանք՝ շարունակել ապահովագրել որոշակի բժշկական ծառայություններ» (Այս բաժինը վերաբերում է միայն հետևյալ ծառայություններին՝ տնային առողջապահական խնամք, հմուտ բուժքույրական հաստատության խնամք և համապարփակ ամբուլատոր վերականգնողական հաստատության (CORF) ծառայություններ:

Եթե վստահ չեք, թե որ բաժինն օգտագործել, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ էջի ներքևի հեռախոսահամարներով: Կարող եք նաև ստանալ օգնություն կամ տեղեկատվություն կառավարական կազմակերպություններից, օրինակ՝ առողջապահական ապահովագրության աջակցության նահանգային ծրագրից (State Health Insurance Assistance Program):

F. Բժշկական խնամք

Այս բաժինը բացատրում է, թե ինչ անել, եթե բժշկական օգնության համար ապահովագրություն ստանալու հետ կապված խնդիրներ ունեք, կամ եթե ցանկանում եք, որ մենք Ձեզ փոխհատուցենք Ձեր խնամքի ծախսերի մեր բաժինը:

Այս բաժինը վերաբերում է Ձեր բժշկական խնամքի և ծառայությունների նպաստներին, որոնք նկարագրված են Ձեր *Անդամի տեղեկագրի Գլուխ 4-ում*: Այս բաժնի մնացած մասում մենք սովորաբար ակնարկում ենք «բժշկական խնամքի ծածկույթ» կամ «բժշկական խնամք»: «Բժշկական խնամք» տերմինը ներառում է բժշկական ծառայություններ և պարագաներ, ինչպես նաև Medicare Part B դեղատոմսով դեղեր, որոնք Ձեր բժշկի կամ բուժաշխատողի կողմից տրամադրվող դեղեր են: Տարբեր կանոններ կարող են կիրառվել Medicare Part B դեղատոմսով դեղերի նկատմամբ: Այդ դեպքում մենք բացատրում ենք, թե ինչպես են Medicare Part B դեղատոմսով դեղերի կանոնները տարբերվում բժշկական ծառայությունների և ապրանքների կանոններից:

F1. Այս բաժնից օգտվելը

Այս բաժինը բացատրում է, թե ինչ կարող եք անել հետևյալ իրավիճակներից որևէ մեկում.

1. Դուք կարծում եք, որ մենք ապահովագրում ենք Ձեզ անհրաժեշտ բժշկական օգնությունը, որը սակայն չեք ստանում:

Ինչ կարող եք անել. Դուք կարող եք խնդրել մեզ ապահովագրության որոշում կայացնել: Տե՛ս **Բաժին F2-ը**:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 224



- 2. Մենք չենք հաստատել այն բժշկական խնամքը, որը Ձեր բժիշկը կամ այլ առողջապահական ծառայություններ մատուցողը ցանկանում է տրամադրել Ձեզ, իսկ Դուք կարծում եք, որ մենք պետք է դա անենք:

Ինչ կարող եք անել. Դուք կարող եք բողոքարկել մեր որոշումը: Տե՛ս **Բաժին F3-ը**:

- 3. Դուք ստացել եք բժշկական խնամք, որը կարծում եք, որ մենք ապահովագրում ենք, բայց մենք չենք վճարելու:

Ինչ կարող եք անել. Դուք կարող եք բողոքարկել մեր չվճարելու որոշումը: Տե՛ս **Բաժին F5-ը**:

- 4. Դուք ստացել և վճարել եք բժշկական խնամքի համար, որը կարծում էիք, որ մենք ապահովագրում ենք, և ցանկանում եք, որ մենք Ձեզ հետ վճարենք:

Ինչ կարող եք անել. Դուք կարող եք խնդրել մեզ հետ վճարել: Տե՛ս **Բաժին F5-ը**:

- 5. Մենք կրճատել կամ դադարեցրել ենք Ձեր ապահովագրությունը որոշակի բժշկական խնամքի համար, բայց Դուք կարծում եք, որ մեր որոշումը կարող է վնասել Ձեր առողջությանը:

Ինչ կարող եք անել. Դուք կարող եք բողոքարկել մեր՝ բժշկական խնամքը կրճատելու կամ դադարեցնելու որոշումը: Տե՛ս **Բաժին F4-ը**:

- Եթե ապահովագրությունը հիվանդանոցային խնամքի, տնային առողջապահական խնամքի, մասնագիտացված բուժքույրական հաստատության խնամքի կամ համապարփակ ամբուլատոր վերականգնողական հաստատության (Comprehensive Outpatient Rehabilitation Facility, CORF) ծառայությունների համար է, կիրառվում են հատուկ կանոններ: Տե՛ս **Բաժին H-ը** կամ **Բաժին I-ը**՝ հավելյալ տեղեկություններ ստանալու համար:
- Բոլոր այլ իրավիճակների համար, որոնք կապված են որոշակի բժշկական օգնության համար Ձեր ապահովագրության կրճատման կամ դադարեցման հետ, օգտագործեք այս բաժինը (**Բաժին F**) որպես Ձեր ուղեցույց:

- 6. Դուք խնամքի հետաձգում եք ակնկալում կամ չեք կարողանում բժիշկ գտնել:

Ինչ կարող եք անել. Դուք կարող եք գանգատ ներկայացնել: Տե՛ս **Բաժին K2-ը**:

F2. Ապահովագրության որոշում խնդրելը

Երբ ապահովագրության որոշումը ներառում է Ձեր բժշկական խնամքը, այն կոչվում է «**ինտեգրված կազմակերպության որոշում**»:

Դուք, Ձեր բժիշկը կամ Ձեր ներկայացուցիչը կարող եք մեզնից խնդրել ապահովագրական որոշում՝

- զանգահարելով (800) 452-4413, TTY՝ 711 հեռախոսահամարով:
- ֆաքս ուղարկելով՝ (877) 251-6671 համարին:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 225



- գրավոր՝

Blue Shield TotalDual Plan
 P.O. Box 927
 Woodland Hills, CA 91365-9856

Ապահովագրության ստանդարտ որոշում

Երբ մենք Ձեզ տալիս ենք մեր որոշումը, մենք օգտագործում ենք «ստանդարտ» ժամկետները, եթե մենք համաձայն չենք օգտագործել «արագ» ժամկետները: Ստանդարտ ապահովագրության որոշումը նշանակում է մենք Ձեզ պատասխան ենք տալիս հետևյալի մասին.

- Բժշկական ծառայության կամ ապրանքի մասին՝ Ձեր հարցումը ստանալուց հետո 14 օրացուցային օրվա ընթացքում: Knox-Keene ծրագրերի մասին՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում և ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում, Ձեր հարցումը ստանալուց հետո:
- Medicare Part B-ում ներառված դեղատոմսով դեղերի մասին՝ Ձեր հարցումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:

Արագ ապահովագրական որոշում

«Արագ ապահովագրական որոշման» իրավաբանական տերմինն է «**արագացված որոշում**»:

Երբ Դուք խնդրում եք մեզ ապահովագրական որոշում կայացնել Ձեր բժշկական օգնության վերաբերյալ, և Ձեր առողջական վիճակը պահանջում է արագ արձագանք, խնդրեք մեզ կայացնել «արագ ապահովագրման որոշում»: Արագ ապահովագրության որոշումը նշանակում է, որ մենք Ձեզ պատասխան ենք տալիս հետևյալի մասին.

- Բժշկական ծառայության կամ ապրանքի մասին՝ Ձեր հարցումը ստանալուց հետո 72 օրացուցային օրվա ընթացքում կամ ավելի շուտ, եթե Ձեր առողջական վիճակը պահանջում է ավելի արագ արձագանք:
- Medicare Part B-ում ներառված դեղատոմսով դեղերի մասին՝ Ձեր հարցումը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում:

Արագ ապահովագրության որոշումը ստանալու համար Դուք պետք է բավարարեք երկու պահանջ.

- Դուք ապահովագրություն եք խնդրում բժշկական օգնության համար, որը Դուք **չեք ստացել**: Դուք չեք կարող արագ ապահովագրական որոշում խնդրել Ձեր արդեն ստացած բժշկական խնամքի վճարման համար:
- Ստանդարտ ժամկետների կիրառումը **կարող է լուրջ վնաս հասցնել Ձեր առողջությանը** կամ վնասել Ձեր գործունակությանը:



Մենք ավտոմատ կերպով Ձեզ արագ ապահովագրական որոշում ենք տալիս, եթե Ձեր բժիշկն ասի, որ Ձեր առողջական վիճակը դա պահանջում է: Եթե Դուք հայտ եք ներկայացնում առանց Ձեր բժշկի աջակցության, մենք որոշում ենք, թե արդյոք Դուք արագ ապահովագրման որոշում կարող եք ստանալ:

- Եթե մենք որոշենք, որ Ձեր առողջական վիճակը չի համապատասխանում արագ ապահովագրության որոշման պահանջներին, մենք Ձեզ նամակ կուղարկենք որտեղ կտեղեկացնենք այդ մասին, և փոխարենը կկիրառենք ստանդարտ ժամկետները: Այս նամակը Ձեզ կտեղեկացնի.
 - Մենք ավտոմատ կերպով Ձեզ համար արագ ապահովագրական որոշում ենք կայացնում, եթե Ձեր բժիշկը դա խնդրի:
 - Ինչպես կարող եք «արագ բողոք» ներկայացնել մեր որոշման դեմ՝ արագ ապահովագրման որոշման փոխարեն Ձեզ ստանդարտ ապահովագրման որոշում կայացնելու մասին: Բողոք ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար, ներառյալ արագ բողոքը, տե՛ս **Բաժին K-ն**:

Եթե մենք Ոչ ասենք Ձեր խնդրանքի մի մասին կամ ամբողջին, մենք Ձեզ նամակ կուղարկենք բացատրելով պատճառները:

- Եթե **Ոչ** ասենք Դուք իրավունք ունեք բողոքարկել: Եթե կարծում եք, որ մենք սխալ ենք թույլ տվել, բողոքարկումը պաշտոնական միջոց է մեզնից պահանջելու վերանայել մեր որոշումը և փոխել այն:
- Եթե որոշեք բողոքարկել, Դուք կանցնեք բողոքարկման գործընթացի 1-ին մակարդակին (տե՛ս **Բաժին F3-ը**):

Սահմանափակ հանգամանքներում մենք կարող ենք մերժել ապահովագրության որոշման Ձեր հայտը, ինչը նշանակում է, որ մենք չենք վերանայելու հայտը: Օրինակներ, երբ հայտը մերժվելու է, ներառում են.

- եթե հայտը թերի է,
- եթե ինչ-որ մեկը Ձեր անունից հայտ է ներկայացնում, բայց իրավաբանորեն լիազորված չէ դա անելու **կամ**
- եթե խնդրում եք հետ կանչել Ձեր հայտը:

Եթե մենք մերժենք ապահովագրության որոշման հայտը, մենք Ձեզ ծանուցում կուղարկենք բացատրելով, թե ինչու է հայտը մերժվել և ինչպես խնդրել մերժման վերանայում: Այս վերանայումը կոչվում է բողոքարկում: Բողոքարկումները քննարկվում են հաջորդ բաժնում:

F3. 1-ին մակարդակի բողոքարկման գործընթացը

Բողոքարկում սկսելու համար Դուք, Ձեր բժիշկը կամ Ձեր ներկայացուցիչը պետք է կապվեք մեզ հետ: Խնդրում ենք զանգահարել մեզ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով :

Խնդրեք ստանդարտ բողոքարկում կամ արագ բողոքարկում գրավոր կամ մեզ զանգահարելով՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով :

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 227



- Եթե Ձեր բժիշկը կամ այլ նշանակողը խնդրում է շարունակել ծառայությունը կամ ապրանքը, որը Դուք արդեն ստանում եք Ձեր բողոքարկման ընթացքում, Դուք կարող եք նրանց ներկայացնել որպես Ձեր ներկայացուցիչ՝ Ձեր անունից հանդես գալու համար:
- Եթե որևէ մեկը, բացի Ձեր բժշկից, բողոքարկում է Ձեր փոխարեն, ներառեք Ներկայացուցչի նշանակման ձևաթուղթ, որը լիազորում է այդ անձին ներկայացնել Ձեզ: Ձևաթուղթը կարող եք նաև ստանալ այցելելով www.cms.gov/Medicare/CMS-Forms/CMS-Forms/downloads/cms1696.pdf կայք:
- Մենք կարող ենք ընդունել բողոքարկման հայտն առանց ձևաթղթի, բայց մենք չենք կարող սկսել կամ ավարտել մեր վերանայումը, մինչև չստանանք այն: Եթե մենք չստանանք ձևաթուղթը Ձեր բողոքարկման հայտը ստանալուց հետո 44 օրացուցային օրվա ընթացքում՝
 - Մենք կմերժենք Ձեր խնդրանքը, և
 - Ձեզ գրավոր ծանուցում կուղարկենք՝ բացատրելով Ձեր իրավունքը՝ խնդրելու IRO-ին վերանայել Ձեր բողոքարկումը մերժելու մեր որոշումը:
- Դուք պետք խնդրեք բողոքարկումը մեր կողմից մեր որոշումը բացատրող նամակն ուղարկելու ամսաթվին հաջորդող 60 օրացուցային օրվա ընթացքում:
- Եթե Դուք բաց թողնեք վերջնաժամկետը և հարգելի պատճառ ունենաք այն բաց թողնելու համար, մենք կարող ենք Ձեզ ավելի շատ ժամանակ տրամադրել Ձեր բողոքարկումը ներկայացնելու համար: Հարգելի պատճառների օրինակներ են այնպիսի բաներ, ինչպիսիք են, օրինակ՝ Դուք լուրջ հիվանդություն եք ունեցել կամ մենք Ձեզ սխալ տեղեկատվություն ենք տվել վերջնաժամկետի վերաբերյալ: Բացատրեք, թե ինչու է Ձեր բողոքարկումն ուշանում, երբ բողոքարկում եք:
- Դուք իրավունք ունեք մեզնից պահանջել Ձեր բողոքարկման մասին տեղեկատվության անվճար պատճենը: Դուք և Ձեր բժիշկը կարող եք նաև մեզ ավելի շատ տեղեկություններ տրամադրել՝ Ձեր բողոքարկմանն աջակցելու համար:

Եթե Ձեր առողջական վիճակը դա պահանջում է, խնդրեք արագ բողոքարկում:

«Արագ բողոքարկման» իրավական տերմինը «արագացված վերանայումն է»:

- Եթե Դուք բողոքարկում եք մեր կայացրած որոշումը խնամքի ապահովագրության մասին, որը Դուք չեք ստացել, Դուք և/կամ Ձեր բժիշկը որոշում եք, թե արդյոք Դուք արագ բողոքարկման կարիք ունեք:

Մենք ավտոմատ կերպով Ձեզ արագ բողոքարկում կտրամադրենք, եթե Ձեր բժիշկն ասի, որ Ձեր առողջական վիճակը դա պահանջում է: Եթե Դուք հայտ ներկայացնեք առանց Ձեր բժշկի աջակցության, մենք կորոշենք, թե արդյոք Դուք արագ բողոքարկում կարող եք ստանալ:



- Եթե մենք որոշենք, որ Ձեր առողջական վիճակը չի համապատասխանում արագ բողոքարկման պահանջներին, մենք Ձեզ նամակ կուղարկենք, որտեղ այդ մասին կտեղեկացնենք և փոխարենը կկիրառենք ստանդարտ ժամկետները: Այս նամակը տեղեկացնում է Ձեզ.
 - Մենք ավտոմատ կերպով Ձեզ համար արագ բողոքարկում կապահովենք, եթե Ձեր բժիշկը դա խնդրի:
 - Ինչպես կարող եք «արագ բողոք» ներկայացնել մեր որոշման դեմ՝ արագ բողոքարկման փոխարեն Ձեզ ստանդարտ բողոքարկում ապահովելու մասին: Բողոք ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար, ներառյալ արագ բողոքը, տե՛ս **Բաժին K-ն**:

Եթե մենք Ձեզ տեղեկացնենք, որ դադարեցնում կամ կրճատում ենք ծառայությունները կամ ապրանքները, որոնք Դուք արդեն ստանում եք, Դուք կարող եք շարունակել այդ ծառայությունները կամ ապրանքները ստանալ Ձեր բողոքարկման ընթացքում:

- Եթե մենք որոշենք փոխել կամ դադարեցնել Ձեր ստացած ծառայության կամ ապրանքի ապահովագրությունը, մենք Ձեզ ծանուցում կուղարկենք նախքան որևէ գործողություն ձեռնարկելը:
- Եթե համաձայն չեք մեր որոշման հետ, կարող եք 1-ին մակարդակի բողոքարկում ներկայացնել:
- Մենք կշարունակենք ծառայության կամ ապրանքի ապահովագրությունը, եթե Դուք խնդրեք 1-ին մակարդակի բողոքարկում մեր նամակում նշված ամսաթվից 10 օրացուցային օրվա ընթացքում կամ գործողության ուժի մեջ մտնելու նախատեսվող ամսաթվից, որն ավելի ուշ լինի:
 - Եթե Դուք այս վերջնաժամկետը չիսախտեք, Դուք կստանաք ծառայությունը կամ ապրանքը առանց փոփոխության, քանի դեռ Ձեր 1-ին մակարդակի բողոքարկումը քննվում է:
 - Դուք նաև կստանաք բոլոր մյուս ծառայությունները կամ ապրանքները (որոնք Ձեր բողոքարկման առարկան չեն) առանց փոփոխության:
 - Եթե Դուք չբողոքարկեք մինչև այս ժամկետները, ապա Ձեր ծառայությունը կամ ապրանքը չի շարունակվի, քանի դեռ սպասում եք Ձեր բողոքարկման որոշմանը:

Մենք կքննենք Ձեր բողոքը և կտանք մեր պատասխանը:

- Երբ մենք վերանայենք Ձեր բողոքարկումը, մենք ևս մեկ անգամ ուշադիր կուսումնասիրենք բժշկական խնամքի փոխհատուցման Ձեր հայտի վերաբերյալ բոլոր տեղեկությունները:
- Մենք կստուգենք, թե արդյոք հետևել ենք բոլոր կանոններին, երբ **Ոչ** ասացինք Ձեր խնդրանքին:



- Մենք լրացուցիչ տեղեկություններ կհավաքենք, եթե դրա կարիքն ունենանք: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար մենք կարող ենք կապվել Ձեր կամ Ձեր բժշկի հետ:

Արագ բողոքարկման վերջնաժամկետներ կան:

- Երբ մենք օգտագործում ենք արագ ժամկետները, մենք պետք է Ձեզ պատասխան տանք **Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում, կամ ավելի շուտ, եթե Ձեր առողջությունը պահանջում է ավելի արագ արձագանք:** Մենք Ձեզ ավելի շուտ կտանք մեր պատասխանը, եթե Ձեր առողջական վիճակը դա պահանջի:
 - Եթե մենք Ձեզ չպատասխանենք 72 ժամվա ընթացքում, մենք պետք է Ձեր հարցումն ուղարկենք բողոքարկման գործընթացի 2-րդ մակարդակ: IRO-ն այնուհետև կվերանայի այն: Այս գլխում այնուհետև մենք Ձեզ կպատմենք այս կազմակերպության մասին և կբացատրենք 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացը: Եթե Ձեր խնդիրը կապված է Medicaid ծառայության կամ ապրանքի ապահովագրման հետ, Դուք կարող եք 2-րդ մակարդակի նահանգային լսումների հայտ ներկայացնել նահանգին, երբ որ ժամանակը սպառվի: Կալիֆորնիայում նահանգային լսումները կոչվում են Նահանգային լսումներ: Նահանգային լսումի դիմելու համար տե՛ս **Բաժին F4-ը:**
- **Եթե մենք «Այո» ասենք Ձեր խնդրանքի մի մասին կամ ամբողջին,** մենք պետք է լիազորենք կամ տրամադրենք ապահովագրությունը, որը մենք համաձայնել ենք տրամադրել Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում, կամ ավելի շուտ, եթե Ձեր առողջական վիճակը դա պահանջում է:
- **Եթե մենք «Ոչ» ասենք Ձեր խնդրանքի մի մասին կամ ամբողջին,** մենք Ձեր բողոքարկումը կուղարկենք IRO՝ 2-րդ մակարդակի բողոքարկման համար:

Ստանդարտ բողոքարկման վերջնաժամկետներ կան:

- Երբ մենք օգտագործում ենք ստանդարտ ժամկետները, մենք պետք է Ձեզ պատասխան տանք չստացված ծառայությունների համար ապահովագրության Ձեր բողոքարկումը ստանալուց հետո **30 ժամվա ընթացքում:**
- Եթե Ձեր խնդրանքը վերաբերում է Medicare Part B-ի դեղատոմսով դեղորայքի, որը Դուք չեք ստացել, մենք Ձեզ մեր պատասխանը **պետք է տանք 7 օրացուցային օրվա ընթացքում** Ձեր բողոքարկումը ստանալուց հետո կամ ավելի շուտ, եթե Ձեր առողջությունը դա պահանջում է:
 - Եթե մենք Ձեզ չպատասխանենք մինչև վերջնաժամկետի ավարտը, մենք պետք է Ձեր հարցումն ուղարկենք բողոքարկման գործընթացի 2-րդ մակարդակ: IRO-ն այնուհետև կվերանայի այն: Այս **F4 բաժնում** մենք Ձեզ տեղեկություններ կտրամադրենք այս կազմակերպության մասին և կբացատրենք 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացը: Եթե Ձեր խնդիրը կապված է Medicaid ծառայության կամ ապրանքի ապահովագրման հետ, Դուք կարող եք 2-րդ մակարդակի նահանգային լսումների հայտ ներկայացնել նահանգին, երբ որ ժամանակը սպառվի: Կալիֆորնիայում նահանգային լսումները կոչվում են Նահանգային լսումներ: Նահանգային լսումի դիմելու համար տե՛ս **Բաժին F4-ը:**

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 230



Եթե մենք «Այո» ասենք Ձեր հարցման մի մասի կամ ամբողջի համար, մենք պետք է լիազորենք կամ տրամադրենք այն ապահովագրությունը, որը մենք համաձայնել ենք տրամադրել Ձեր բողոքարկման հայտը ստանալու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում կամ ըստ Ձեր առողջական վիճակի, և այն օրվանից 72 ժամվա ընթացքում, երբ մենք փոխում ենք մեր որոշումը, կամ 7 օրացուցային օրվա ընթացքում, երբ մենք ստացել ենք Ձեր բողոքարկումը, եթե Ձեր խնդրանքը վերաբերում է Medicare-ի Part B դեղատոմսով դեղերին:

Եթե մենք Ոչ ասենք Ձեր խնդրանքի մի մասին կամ ամբողջին, Դուք լրացուցիչ բողոքարկման իրավունք կունենաք.

- Եթե մենք **Ոչ** ասենք Ձեր խնդրանքի մի մասին կամ ամբողջին, մենք Ձեզ նամակ կուղարկենք:
- Եթե Ձեր խնդիրն առնչվում է Medicare ծառայության կամ ապրանքի ապահովագրմանը, նամակը Ձեզ տեղեկություններ կտրամադրի, որ մենք Ձեր գործն ուղարկել ենք IRO` 2-րդ մակարդակի բողոքարկման համար:
- Եթե Ձեր խնդիրն առնչվում է Medi-Cal ծառայության կամ ապրանքի ծածկույթի հետ, նամակը Ձեզ կհուշի, թե ինչպես ինքնուրույն 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել:

F4. 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնելը

Եթե մենք **Ոչ** ասենք Ձեր 1-ին մակարդակի բողոքարկման մի մասին կամ ամբողջին, մենք Ձեզ նամակ կուղարկենք: Այս նամակը Ձեզ կտեղեկացնի, թե արդյոք Medicare, Medi-Cal կամ երկու ծրագրերը սովորաբար ապահովագրական ծածկույթ ունեն ծառայության կամ ապրանքի համար:

- Եթե Ձեր խնդիրն առնչվում է ծառայությանը կամ ապրանքին, որը **Medicare-ը** սովորաբար ծածկում է, մենք Ձեր գործն ավտոմատ կերպով կուղարկենք բողոքարկման գործընթացի 2-րդ մակարդակ, հենց որ 1-ին մակարդակի բողոքարկումն ավարտվի:
- Եթե Ձեր խնդիրն առնչվում է ծառայությանը կամ ապրանքին, որը **Medi-Cal-ը** սովորաբար ծածկում է, կարող եք ինքներդ 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել: Այս նամակը տեղեկացնում է Ձեզ, թե ինչպես դա անել: Մենք նաև լրացուցիչ տեղեկություններ կներառենք այս գլխում:
- Եթե Ձեր խնդիրն առնչվում է ծառայությանը կամ ապրանքին, որը **և՛ Medicare-ը, և՛ Medi-Cal-ը** կարող են ծածկել, Դուք ավտոմատ կերպով կստանաք 2-րդ մակարդակի բողոքարկում IRO-ի միջոցով: Բացի 2-րդ մակարդակի ավտոմատ բողոքարկման, Դուք կարող եք նաև Նահանգային լսումներ և Անկախ բժշկական վերանայում խնդրել նահանգից: Մակայն, Անկախ բժշկական վերանայումը հասանելի չէ, եթե Դուք արդեն ապացույցներ եք ներկայացրել նահանգային լսումների ժամանակ:

Եթե Ձեր 1-ին մակարդակի բողոքարկումը ներկայացնելիս Դուք որակավորվել եք նպաստները շարունակելու համար, ապա բողոքարկվող ծառայության, ապրանքի կամ դեղի Ձեր նպաստները կարող են շարունակվել նաև 2-րդ մակարդակի

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 831



ընթացքում: Ուսումնասիրեք **Բաժին F3-ը**՝ 1-ին մակարդակի բողոքարկումների ընթացքում Ձեր նպաստները շարունակելու մասին տեղեկությունների համար:

- Եթե Ձեր խնդիրն առնչվում է ծառայությանը, որը սովորաբար փոխհատուցվում է միայն Medicare-ի կողմից, ապա այդ ծառայության Ձեր նպաստները չեն շարունակվում IRO-ի միջոցով 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացում:
- Եթե Ձեր խնդիրն առնչվում է ծառայությանը, որը սովորաբար փոխհատուցվում է միայն Medi-Cal-ի կողմից, ապա այդ ծառայության Ձեր նպաստները կշարունակվեն, եթե Դուք 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնեք մեր որոշումը ստանալուց հետո 10 օրացուցային օրվա ընթացքում:

Երբ Ձեր խնդիրն առնչվում է ծառայության կամ ապրանքի, որը սովորաբար ապահովագրում է Medicare-ը

IRO-ն քննում է Ձեր բողոքարկումը: Դա Medicare-ի կողմից վարձված անկախ կազմակերպություն է:

«Անկախ վերանայման կազմակերպության» (Independent Review Organization, IRO) պաշտոնական անվանումն է «**Անկախ վերանայման կազմակերպություն**», որը երբեմն կոչվում է «**IRE**» (**Independent Review Entity, IRE**):

- Այս կազմակերպությունը կապված չէ մեզ հետ և պետական գործակալություն չէ: Medicare-ն ընտրել է ընկերությունը որպես IRO, և Medicare-ը վերահսկում է նրանց աշխատանքը:
- Մենք Ձեր բողոքարկման մասին տեղեկությունները (Ձեր «գործի ֆայլը») ուղարկում ենք այս կազմակերպությանը: Դուք իրավունք ունեք անվճար պատճենել Ձեր գործի ֆայլը:
- Դուք իրավունք ունեք IRO-ին տրամադրել լրացուցիչ տեղեկություններ՝ Ձեր բողոքարկմանը սատարելու համար:
- IRO-ի վերանայողներն ուշադիր կուսումնասիրեն Ձեր բողոքարկմանն առնչվող բոլոր տեղեկությունները:

Եթե Դուք արագ բողոքարկում եք ունեցել 1-ին մակարդակում, Դուք նաև արագ բողոքարկում ունեք 2-րդ մակարդակում:

- Եթե Դուք արագ բողոքարկում եք ունեցել 1-ին մակարդակում մեզ մոտ, Դուք նաև արագ բողոքարկում ունեք 2-րդ մակարդակում: IRO-ն պետք է պատասխան տա Ձեր 2-րդ մակարդակի բողոքարկմանը Ձեր բողոքարկումը ստանալուց հետո **72 ժամվա ընթացքում**:

Եթե Դուք ստանդարտ բողոքարկում եք ունեցել 1-ին մակարդակում, Դուք նաև ստանդարտ բողոքարկում ունեք 2-րդ մակարդակում:

- Եթե Դուք ստանդարտ բողոքարկում եք ունեցել 1-ին մակարդակում մեզ մոտ, Դուք նաև ստանդարտ բողոքարկում ունեք 2-րդ մակարդակում:



- Եթե Ձեր խնդրանքն առնչվում է բժշկական ապրանքին կամ ծառայությանը, IRO-ն պետք է Ձեզ պատասխան տա Ձեր 2-րդ մակարդակի բողոքարկմանը՝ Ձեր բողոքարկումը ստանալուց հետո **30 օրացուցային օրվա ընթացքում**:
- Եթե Ձեր խնդրանքը վերաբերում է Medicare Part B-ի դեղատոմսով դեղերին, IRO-ն պետք է Ձեզ պատասխան տա Ձեր 2-րդ մակարդակի բողոքարկմանը՝ Ձեր բողոքարկումը ստանալուց հետո **7 օրացուցային օրվա ընթացքում** :

Եթե IRO-ն Ձեզ պատասխանի գրավոր և բացատրի պատճառները:

- **Եթե IRO-ն «Այո» է ասում բժշկական ապրանքի կամ ծառայության խնդրանքին մասնակի կամ ամբողջությամբ**, մենք պետք է անհապաղ իրականացնենք որոշումը.
 - Լիազորել բժշկական խնամքի ապահովագրությունը **72 ժամվա ընթացքում, կամ**
 - Ծառայությունը մատուցել **5 աշխատանքային օրվա ընթացքում** այն բանից հետո, երբ մենք կստանանք IRO-ի որոշումը **ստանդարտ հայտերի վերաբերյալ, կամ**
 - Ծառայությունը մատուցել **72 աշխատանքային օրվա ընթացքում** այն բանից հետո, երբ մենք կստանանք IRO-ի որոշումը **արագացված հայտերի վերաբերյալ:**
- **Եթե IRO-ն «Այո» է ասում Medicare-ի Part B դեղատոմսով դեղամիջոցին մասնակի կամ ամբողջությամբ**, մենք պետք է լիազորենք կամ տրամադրենք Medicare-ի Part B դեղատոմսով վիճարկվող դեղը.
 - **72 ժամվա ընթացքում** այն բանից հետո, երբ մենք կստանանք IRO-ի որոշումը **ստանդարտ հայտերի վերաբերյալ, կամ**
 - **24 ժամվա ընթացքում** այն ամսաթվից, երբ մենք կստանանք IRO-ի որոշումը **արագացված հայտերի վերաբերյալ:**
- **Եթե IRO-ն «Ոչ» է ասում Ձեր բողոքարկմանը մասնակի կամ ամբողջությամբ**, դա նշանակում է, որ նրանք համաձայն են, որ մենք չպետք է հաստատենք Ձեր խնդրանքը (կամ Ձեր խնդրանքի մի մասը) բժշկական օգնության ապահովագրման համար: Սա կոչվում է «որոշումը ուժի մեջ թողնել» կամ «բողոքը մերժել»:
 - Եթե Ձեր գործը համապատասխանում է պահանջներին, Դուք ընտրում եք, թե արդյոք ցանկանում եք շարունակել Ձեր բողոքարկումը:
 - Բողոքարկման գործընթացում 2-րդ մակարդակից հետո կա երեք լրացուցիչ մակարդակ՝ ընդհանուր հինգ մակարդակ:
 - Եթե Ձեր 2-րդ մակարդակի բողոքարկումը մերժվում է, և Դուք բավարարում եք բողոքարկման գործընթացը շարունակելու պահանջները, Դուք պետք է որոշեք՝ անցնել 3-րդ մակարդակ և երրորդ բողոքարկում կատարել: Մանրամասները, թե ինչպես դա անել, ներկայացված են գրավոր ծանուցման մեջ, որը Դուք ստանում եք Ձեր 2-րդ մակարդակի բողոքարկումից հետո:



- Վարչական իրավունքի դատավորը (Administrative Law Judge, ALJ) կամ հաշտարար դատավորը վարում է 3-րդ մակարդակի բողոքարկումը: 3-րդ, 4-րդ և 5-րդ մակարդակների բողոքարկումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **Բաժին J**-ը:

Երբ Ձեր խնդիրն առնչվում է ծառայությանը կամ ապրանքին, որը սովորաբար ապահովագրում է Medi-Cal-ը

Medi-Cal-ի ծառայությունների և ապրանքների համար 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնելու երկու եղանակ կա. (1) Բողոք կամ Անկախ բժշկական վերանայում կամ (2) Նահանգային լսումներ:

(1) Անկախ բժշկական վերանայում

Դուք կարող եք բողոք ներկայացնել կամ խնդրել Անկախ բժշկական վերանայում (Independent Medical Review, IMR) Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի բաժնի (Department of Managed Health Care, DMHC) օգնության կենտրոնից: Բողոք ներկայացնելով՝ DMHC-ը կվերանայի մեր որոշումը և որոշում կկայացնի: IMR-ը հասանելի է Medi-Cal-ի ապահովագրված ցանկացած ծառայության կամ ապրանքի համար, որը բժշկական բնույթ ունի: IMR-ը Ձեր գործի վերանայումն է բժիշկների կողմից, ովքեր մեր ծրագրի կամ DMHC-ի մաս չեն կազմում: Եթե IMR-ը որոշվի Ձեր օգտին, մենք պետք է Ձեզ տրամադրենք Ձեր պահանջած ծառայությունը կամ ապրանքը: IMR-ն անվճար է Ձեզ համար:

Դուք կարող եք բողոք ներկայացնել կամ դիմել IMR-ի համար, եթե մեր ծրագիրը.

- Մերժում, փոխում կամ հետաձգում է Medi-Cal-ի ծառայությունը կամ բուժումը, քանի որ մեր ծրագիրը որոշում է, որ դա բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չէ:
- Չի ծածկում Medi-Cal-ի փորձագիտական կամ հետազոտական բուժումը լուրջ առողջական վիճակի համար:
- Վիճարկում է, թե արդյոք վիրաբուժական ծառայությունը կամ բուժգործողությունը կոսմետիկ կամ վերականգնողական բնույթ են կրում:
- Չի վճարում շտապ կամ հրատապ Medi-Cal ծառայությունների համար, որոնք Դուք արդեն ստացել եք:
- Չի լուծել Ձեր 1-ին մակարդակի բողոքարկումը Medi-Cal ծառայության վերաբերյալ 30 օրացուցային օրվա ընթացքում ստանդարտ բողոքարկման դեպքում, կամ 72 ժամվա ընթացքում կամ ավելի շուտ, եթե Ձեր առողջական վիճակը դա պահանջում է, արագ բողոքարկման համար:

ՆՇՈՒՄ. Եթե Ձեր մատակարարը բողոքարկում է Ձեզ համար, բայց մենք չենք ստանում Ձեր «Ներկայացուցչի նշանակման» ձևաթուղթը, Դուք պետք է նորից ներկայացնեք Ձեր բողոքարկումը մեզ մոտ, նախքան 2-րդ մակարդակի IMR-ի համար Կառավարվող առողջական խնամքի բաժնի դիմելը, եթե Ձեր բողոքարկումը չի ներառում անմիջական և լուրջ սպառնալիք Ձեր առողջությանը, որը ներառում, բայց չի սահմանափակվում ծանր ցավով, կյանքի հնարավոր կորստով, վերջույթները կամ օրգանիզմի հիմնական գործառույթը:



Դուք իրավունք ունեք ն՝ IMR-ի, ն՝ նահանգային լսումների, բայց Դուք իրավունք չունեք IMR-ի, եթե Դուք արդեն ապացույցներ եք ներկայացրել նույն հարցի վերաբերյալ Նահանգային լսումների ժամանակ:

Շատ դեպքերում Դուք պետք է բողոքարկեք մեզ՝ նախքան IMR հայցելը: Մեր 1-ին մակարդակի բողոքարկման գործընթացի մասին տեղեկությունների համար տե՛ս էջ 230-ը: Եթե համաձայն չեք մեր որոշման հետ, կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին կամ IMR խնդրել DMHC Օգնության կենտրոնից:

Եթե Ձեր բուժումը մերժվել է, քանի որ այն եղել է փորձնական կամ հետազոտական, Դուք պարտավոր չեք մասնակցել մեր բողոքարկման գործընթացին, նախքան IMR-ի համար դիմելը:

Եթե Ձեր խնդիրը հրատապ է կամ Ձեր առողջությանը սպառնացող անմիջական և լուրջ վտանգ է պարունակում, կամ եթե սուր ցավ եք զգում, կարող եք այն անմիջապես ներկայացնել DMHC-ի ուշադրությանը՝ առանց նախապես մեր բողոքարկման գործընթացն անցնելու:

Դուք պետք է **դիմեք IMR-ի համար 6 ամսվա ընթացքում** այն բանից հետո, երբ մենք Ձեզ գրավոր որոշում կուղարկենք Ձեր բողոքարկման վերաբերյալ: DMHC-ը կարող է ընդունել Ձեր դիմումը 6 ամիս հետո հարգելի պատճառներով, օրինակ՝ Դուք ունեցել եք բժշկական խնդիր, որը խանգարել է Ձեզ IMR խնդրել 6 ամսվա ընթացքում, կամ Դուք մեզնից պատշաճ ծանուցում չեք ստացել IMR գործընթացի մասին:

Խնդրել IMR.

- Լրացրեք Անկախ բժշկական վերանայման դիմումի/բողոքի ձևաթուղթը, որը հասանելի է հետևյալ հասցեով՝ www.dmhc.ca.gov/FileaComplaint/IndependentMedicalReviewComplaintForms.aspx կամ զանգահարեք DMHC օգնության կենտրոն՝ 1-888-466-2219: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-688-9891:
- Եթե ունեք դրանք, կցեք նամակների կամ այլ փաստաթղթերի պատճենները ծառայության կամ ապրանքի մասին, որը մենք մերժել ենք: Սա կարող է արագացնել IMR գործընթացը: Ուղարկեք փաստաթղթերի պատճենները, այլ ոչ թե բնօրինակները: Օգնության կենտրոնը չի կարող վերադարձնել որևէ փաստաթուղթ:
- Լրացրեք լիազորված օգնականի ձևաթուղթը, եթե ինչ-որ մեկն օգնում է Ձեզ Ձեր IMR-ի հարցում: Ձևաթուղթը կարող եք ներբեռնել www.dmhc.ca.gov/FileaComplaint/IndependentMedicalReviewComplaintForms.aspx կայքում կամ զանգահարել Բաժնի օգնության կենտրոն՝ 1-888-466-2219 հեռախոսահամարով: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-688-9891:
- Փոստով կամ ֆաքսով ուղարկեք Ձեր ձևաթղթերը և հավելվածները հետևյալ հասցեով

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:

235



Help Center

Department of Managed Health Care
980 Ninth Street, Suite 500
Sacramento, CA 95814-2725
ՖԱՔՍ՝ 916-255-5241

- Դուք կարող եք նաև ուղարկել Ձեր Անկախ բժշկական վերանայման դիմումի/բողոքի ձևաթուղթը և Լիազորված օգնականի ձևաթուղթն առցանց www.dmhc.ca.gov/FileaComplaint.aspx

Եթե որակավորվեք IMR-ի համար, DMHC-ը կվերանայի Ձեր գործը և Ձեզ նամակ կուղարկի 7 օրվա ընթացքում, տեղեկացնելու, որ որակավորվում եք IMR-ի համար: Ձեր դիմումը և գորակցող փաստաթղթերը Ձեր ծրագրից ստացվելուց հետո, IMR-ի որոշումը կկայացվի 30 օրացուցային օրվա ընթացքում: IMR-ի որոշումը պետք է ստանաք 45 օրացուցային օրվա ընթացքում լրացված դիմումի ներկայացումից հետո:

Եթե Ձեր գործը հրատապ է և որակավորվեք IMR-ի համար, DMHC-ը կվերանայի Ձեր գործը և Ձեզ նամակ կուղարկի 2 օրացուցային օրվա ընթացքում, տեղեկացնելու, որ որակավորվում եք IMR-ի համար: Ձեր դիմումը և օժանդակ փաստաթղթերը Ձեր ծրագրից ստանալուց հետո IMR որոշումը կկայացվի 3 օրացուցային օրվա ընթացքում: IMR-ի որոշումը պետք է ստանաք 7 օրացուցային օրվա ընթացքում՝ լրացված դիմումի ներկայացումից հետո: Եթե IMR-ի արդյունքը Ձեզ չգոհացնի, այնուամենայնիվ, կարող եք Նահանգային լսում խնդրել:

IMR-ը կարող է ավելի երկար տևել, եթե DMHC-ն չստանա Ձեզնից կամ Ձեր բուժող բժշկից անհրաժեշտ բոլոր բժշկական արձանագրություններ: Եթե Դուք օգտվում եք մի բժշկից, ով Ձեր առողջապահական ծրագրի ցանցում չէ, կարևոր է, որ Դուք ստանաք և ուղարկեք մեզ Ձեր բժշկական արձանագրություններն այդ բժշկից: Ձեր առողջապահական ծրագիրը պետք է ստանա Ձեր առողջական արձանագրությունների պատճենները ցանցի բժիշկներից:

Եթե DMHC-ը որոշի, որ Ձեր գործը իրավունակ չէ IMR-ի համար, DMHC-ը կվերանայի Ձեր գործը սպառողների բողոքների իր կանոնավոր գործընթացի միջոցով: Ձեր բողոքը պետք է լուծվի լրացված դիմումը ներկայացնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե Ձեր բողոքը հրատապ է, այն ավելի շուտ կլուծվի:

(2) Նահանգային լսում

Դուք կարող եք նահանգային լսում խնդրել Medi-Cal-ի ապահովագրված ծառայությունների և ապրանքների համար: Եթե Ձեր բժիշկը կամ այլ մատակարար խնդրում է ծառայություն կամ ապրանք, որը մենք չենք հաստատի, կամ մենք չենք շարունակի վճարել ծառայության կամ ապրանքի համար, որը Դուք արդեն ունեք, և եթե մենք մերժել ենք Ձեր 1-ին մակարդակի բողոքարկումը, Դուք իրավունք ունեք նահանգային լսում խնդրելու:

Շատ դեպքերում **Դուք ունեք 120 օր նահանգային լսումներ խնդրելու համար** «Բողոքարկման որոշման նամակի» ծանուցումը Ձեզ ուղարկելուց հետո:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 236



ՆՇՈՒՄ. Եթե նահանգային լսում եք խնդրում, քանի որ մենք Ձեզ ասել ենք, որ ծառայությունը, որը ներկայումս ստանում եք, կփոխվի կամ կդադարեցվի, **Դուք ավելի քիչ օրեր ունեք Ձեր հարցումը ներկայացնելու համար**, եթե ցանկանում եք շարունակել ստանալ այդ ծառայությունը, մինչ Ձեր նահանգային լսումն առկախ է: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք «Իմ նպաստները կշարունակվեն 2-րդ մակարդակի բողոքարկումների ժամանակ» բաժինը 236 էջում:

Նահանգային լսում խնդրելու երկու եղանակ կա.

1. Դուք կարող եք լրացնել «Նահանգային լսումների հայտը» գործողության ծանուցման հետևի էջում: Դուք պետք է տրամադրեք բոլոր պահանջվող տեղեկությունները, ինչպիսիք են Ձեր ամբողջական անունը, հասցեն, հեռախոսահամարը, ծրագրի կամ վարչաշրջանի անվանումը, որը Ձեր դեմ գործողություններ է իրականացրել, ներգրավված օգնության ծրագիր(ներ)ը և մանրամասն պատճառը, թե ինչու եք լսում ցանկանում: Այնուհետև կարող եք Ձեր հայտը ներկայացնել հետևյալ եղանակներից մեկով.

- Վարչաշրջանի բարեկեցության վարչություն՝ ծանուցման վրա նշված հասցեով:
- Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների բաժին (California Department of Social Services)

State Hearings Division
P.O. Box 944243, Mail Station 9-17-37
Sacramento, California 94244-2430

- Նահանգային լսումների բաժին ֆաքսով՝ 916-651-5210 կամ 916-651-2789 հեռախոսահամարով:

2. Կարող եք զանգահարել Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների բաժին (California Department of Social Services)՝ 1-800-743-8525 հեռախոսահամարով: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-800-952-8349 հեռախոսահամարով: Եթե որոշեք Նահանգային լսում խնդրել հեռախոսով, պետք է իմանաք, որ հեռախոսագծերը շատ զբաղված են լինում:

Նահանգային լսումների բաժինը Ձեզ գրավոր որոշում կտրամադրի և կբացատրի պատճառները:

- Եթե նահանգային լսումների բաժինը մասնակիորեն կամ ամբողջովին **«Այո»** է ասում բժշկական ապրանքին կամ ծառայությանը, մենք պետք է լիազորենք կամ տրամադրենք ծառայությունը կամ ապրանքը **72 ժամվա ընթացքում** նրանց որոշումը ստանալուց հետո:
- Եթե նահանգային լսումների բաժինը մասնակիորեն կամ ամբողջովին **«Ոչ»** է ասում Ձեր բողոքարկմանը, դա նշանակում է, որ նրանք համաձայն են, որ մենք չպետք է հաստատենք Ձեր խնդրանքը (կամ Ձեր խնդրանքի մի մասը) բժշկական օգնության ապահովագրման համար: Մա կոչվում է «որոշումը ուժի մեջ թողնել» կամ «բողոքը մերժել»:

Եթե IRO-ի կամ Նահանգային լսումների որոշումը **«Ոչ»** է Ձեր հայտի ամբողջի կամ մի մասի համար, Դուք ունեք բողոքարկման լրացուցիչ իրավունքներ:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 237



Եթե Ձեր 2-րդ մակարդակի բողոքարկումն ուղարկվել է **IRO**, Դուք կարող եք կրկին բողոքարկել միայն այն դեպքում, եթե Ձեր ուզած ծառայության կամ ապրանքի դրվարային արժեքը համապատասխանում է որոշակի նվազագույն գումարին: **ALJ**-ը կամ հաշտարար դատավորը վարում է 3-րդ մակարդակի բողոքարկումը: **Նամակը, որը Դուք ստանում եք IRO-ից, բացատրում է բողոքարկման լրացուցիչ իրավունքները, որոնք Դուք կարող եք ունենալ:**

Նամակը, որը Դուք ստանում եք Նահանգային լսումների բաժնից, նկարագրում է բողոքարկման հաջորդ տարբերակը:

2-րդ մակարդակի բողոքարկումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **Բաժին J**-ը:

F5. Վճարման խնդիրներ

Մենք թույլ չենք տալիս մեր ցանցային մատակարարներին հաշիվ ուղարկել Ձեզ ապահովագրված ծառայությունների համար: Սա ճշմարիտ է, նույնիսկ եթե մենք մատակարարին վճարում ենք ավելի քիչ, քան մատակարարի ծախսերն են ապահովագրված ծառայության կամ ապրանքի համար: Ձեզնից երբեք չի պահանջվում վճարել որևէ հաշվի մնացորդը: Միակ գումարը, որը Դուք պետք է վճարեք, դա 2-րդ մակարդակի համավճարն է՝ Ձեներիկ դեղեր, 3-րդ մակարդակ. Նախընտրելի ապրանքանիշով դեղեր, 4-րդ մակարդակ՝ Ոչ նախընտրելի դեղեր և 5-րդ մակարդակ՝ Առանձնահատուկ մակարդակի դեղեր:

Եթե Դուք հաշիվ եք ստանում, որը գերազանցում է Ձեր համավճարը ապահովագրված ծառայությունների և ապրանքների համար, ուղարկեք հաշիվը մեզ: Դուք չպետք է վճարեք հաշիվը: Մենք ուղղակիորեն կապ կհաստատենք մատակարարի հետ և կլուծենք խնդիրը: Եթե Դուք վճարում եք հաշիվը, կարող եք փոխհատուցում ստանալ մեր ծրագրից, եթե հետևել եք ծառայություններ կամ ապրանքներ ստանալու կանոններին:

Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք *Անդամի տեղեկագրքի Գլուխ 7*-ը: Այն նկարագրում է իրավիճակներ, երբ Դուք կարող եք պահանջել մեզ հետ վճարել Ձեզ կամ վճարել այն հաշիվը, որը ստացել եք մատակարարից: Այն նաև պատմում է, թե ինչպես մեզ ուղարկել փաստաթղթերը, որոնք մեզնից վճարում են պահանջում:

Եթե Դուք խնդրում եք Ձեզ հետ վճարել, Դուք ապահովագրության որոշում եք խնդրում: Մենք կստուգենք՝ արդյոք Ձեր վճարած ծառայությունը կամ ապրանքը ապահովագրված է, և արդյոք հետևել եք Ձեր ապահովագրությունն օգտագործելու բոլոր կանոններին:

- Եթե Ձեր վճարած ծառայությունը կամ ապրանքը ապահովագրված է, և Դուք հետևել եք բոլոր կանոններին, մենք Ձեզ կուղարկենք ծառայության կամ ապրանքի արժեքի մեր բաժինը՝ Ձեր հարցումը ստանալուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում:
- Եթե Դուք դեռ չեք վճարել ծառայության կամ ապրանքի համար, մենք վճարումը կուղարկենք անմիջապես մատակարարին: Երբ մենք վճարում ենք ուղարկում, դա նույնն է, ինչ ասեք **Այո** ապահովագրության որոշման Ձեր խնդրանքին:



- Եթե ծառայությունը կամ ապրանքը ապահովագրված չէ, կամ Դուք չեք հետևել բոլոր կանոններին, մենք Ձեզ նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ չենք վճարելու ծառայության կամ ապրանքի համար և կբացատրենք, թե ինչու:

Եթե համաձայն չեք չվճարելու մեր որոշման հետ, **կարող եք բողոքարկել**: Հետևեք բողոքարկման գործընթացին, որը նկարագրված է **Բաժին F3**-ում: Երբ հետևում եք այս հրահանգներին, հիշեք.

- Եթե բողոքարկում եք մեզ՝ Ձեզ փոխհատուցելու համար, մենք պետք է Ձեզ պատասխան տանք Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
- Եթե Դուք խնդրում եք մեզ փոխհատուցել Ձեր ստացած և Ձեր համար վճարած բժշկական օգնության խնամքը, Դուք չեք կարող արագ բողոքարկում խնդրել:

Եթե Ձեր բողոքարկմանը մեր պատասխանը **Ոչ է**, և **Medicare-ը** սովորաբար ծածկում է ծառայությունը կամ ապրանքը, մենք Ձեր գործը կուղարկենք **IRO**: Մենք Ձեզ նամակ կուղարկենք, եթե դա տեղի ունենա:

- Եթե **IRO-ն** չեղարկի մեր որոշումը և ասի, որ մենք պետք է վճարենք Ձեզ, մենք պետք է վճարումը ուղարկենք Ձեզ կամ մատակարարին 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե Ձեր բողոքարկման պատասխանը **Այո է** 2-րդ մակարդակից հետո բողոքարկման գործընթացի ցանկացած փուլում, մենք պետք է վճարումը ուղարկենք Ձեզ կամ առողջապահական խնամքի մատակարարին 60 օրացուցային օրվա ընթացքում:
- Եթե **IRO-ն Ոչ է** ասում Ձեր բողոքարկմանը, դա նշանակում է, որ նրանք համաձայն են, որ մենք չպետք է հաստատենք Ձեր խնդրանքը: Սա կոչվում է «որոշումը ուժի մեջ թողնել» կամ «բողոքը մերժել»: Դուք կստանաք նամակ, որտեղ կբացատրվեն բողոքարկման լրացուցիչ իրավունքները, որոնք Դուք կարող եք ունենալ: Բողոքարկման լրացուցիչ մակարդակների մասին հավելյալ տեղեկությունների համար տե՛ս **Բաժին J**:

Եթե Ձեր բողոքարկման մեր պատասխանը **Ոչ է**, և **Medi-Cal-ը** սովորաբար փոխհատուցում է ծառայությունը կամ ապրանքը, կարող եք ինքներդ 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել: Տե՛ս **Բաժին F4**-ը լրացուցիչ տեղեկությունների համար:

G. Medicare Part B-ում ներառված դեղատոմսով դեղեր

Որպես մեր ծրագրի անդամ Ձեր առավելությունները ներառում են շատ դեղատոմսով դեղերի ապահովագրում: Դրանցից շատերը Medicare Part D-ի դեղերն են: Կան մի քանի դեղամիջոցներ, որոնք Medicare Part D-ն չի ծածկում, որոնք Medi-Cal-ը կարող է փոխհատուցել: **Այս բաժինը վերաբերում է միայն Medicare Part D-ի դեղերի բողոքարկումներին**: Այս բաժնի մնացած հատվածում մենք կօգտագործենք «դեղ» տերմինն ամեն անգամ «Medicare Part D դեղ» ասելու փոխարեն: Միայն Medi-Cal-ով փոխհատուցվող դեղերի համար տես 222-րդ էջի **Բաժին E** գործընթացը:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 239



Ապահովագրվելու համար դեղը պետք է օգտագործվի բժշկական տեսանկյունից ընդունված ցուցումների համար: Դա նշանակում է, որ դեղը հաստատված է Մենդի և դեղերի վարչության կողմից (Food and Drug Administration, FDA) կամ աջակցվում է որոշակի բժշկական հղումներով: Բժշկական տեսանկյունից ընդունված ցուցումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի* **Գլուխ 5-ը**:

G1. Medicare-ի Part D` ապահովագրության որոշումներ և բողոքարկումներ

Ահա ապահովագրական որոշումների օրինակներ, որոնք Դուք խնդրում եք մեզ ընդունել Ձեր Medicare Part D դեղերի վերաբերյալ.

- Դուք մեզ խնդրում եք բացատրություն անել, այդ թվում` խնդրելով.
 - Փոխհատուցել Medicare Part D-ի դեղը, որը մեր ծրագրի Դեղերի ցանկում չէ կամ
 - Բացատրություն անել դեղերի մեր ապահովագրության սահմանափակման վերաբերյալ (օրինակ` Ձեր ստացած քանակի սահմանափակումները)
- Դուք մեզ հարցնում եք, թե արդյոք դեղն ապահովագրված է Ձեզ համար (օրինակ, երբ Ձեր դեղը գտնվում է մեր ծրագրի Դեղերի ցանկում, բայց մենք պետք է այն հաստատենք այն Ձեզ համար` նախքան այն ապահովագրելը)

ՆՇՈՒՄ. Եթե Ձեր դեղատունը Ձեզ ասի, որ Ձեր դեղատոմսը չի կարող լրացվել այնպես, ինչպես գրված է, դեղատունը Ձեզ գրավոր ծանուցում կտա, որտեղ կբացատրվի, թե ինչպես կապվել մեզ հետ ապահովագրության որոշում խնդրելու համար:

Ձեր Medicare Part D-ի դեղերի վերաբերյալ նախնական ապահովագրման որոշումը կոչվում է «ապահովագրական որոշում»:

- Դուք կարող եք խնդրել մեզ վճարել արդեն գնված դեղի համար: Սա վճարման վերաբերյալ ապահովագրական որոշում է պահանջում:

Եթե համաձայն չեք մեր կողմից ընդունված ապահովագրական որոշման հետ, կարող եք բողոքարկել մեր որոշումը: Այս բաժինը պատմում է Ձեզ, թե ինչպես խնդրել ապահովագրական որոշումներ և ինչպես բողոքարկել: Օգտագործեք ստորև բերված աղյուսակը օգնության համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413

(TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



Այս իրավիճակներից ո՞ր մեկում եք Դուք:

<p>Ձեզ անհրաժեշտ է դեղամիջոց, որը չկա մեր Դեղերի ցանկում կամ պետք է, որ մենք մի կողմ դնենք կանոն կամ սահմանափակում մեր կողմից ապահովագրված դեղի վերաբերյալ:</p>	<p>Դուք ցանկանում եք, որ մենք ապահովագրենք դեղը մեր Դեղերի ցանկում, և կարծում եք, որ համապատասխանում եք ծրագրի կանոններին կամ սահմանափակումներին (օրինակ նախապես հաստատում ստանալը) Ձեզ անհրաժեշտ դեղի համար:</p>	<p>Դուք ցանկանում եք խնդրել մեզ փոխհատուցել Ձեզ մի դեղի համար, որը Դուք արդեն ստացել և որի համար վճարել եք:</p>	<p>Մենք Ձեզ ասել ենք, որ մենք չենք ապահովագրելու կամ վճարելու դեղի համար այնպես, ինչպես Դուք եք ցանկանում:</p>
<p>Դուք կարող եք մեզ խնդրել բացառություն անել: (Սա ապահովագրական որոշման տեսակ է:)</p>	<p>Դուք կարող եք մեզնից խնդրել ապահովագրության որոշում:</p>	<p>Դուք կարող եք խնդրել մեզ փոխհատուցել Ձեզ: (Սա ապահովագրական որոշման տեսակ է:)</p>	<p>Կարող եք բողոքարկել: (Սա նշանակում է, որ Դուք խնդրում եք մեզ վերանայել):</p>
<p>Սկսեք Բաժին G2-ից, այնուհետև ուսումնասիրեք Բաժիններ G3-ը և G4-ը:</p>	<p>Ուսումնասիրեք Բաժին G4-ը:</p>	<p>Ուսումնասիրեք Բաժին G4-ը:</p>	<p>Ուսումնասիրեք Բաժին G5-ը:</p>

G2. Medicare Part D-ի բացառություններ

Եթե մենք չենք ապահովագրում դեղը Ձեր ուզած ձևով, կարող եք խնդրել մեզ «բացառություն» անել: Եթե մենք մերժենք բացառության Ձեր խնդրանքը, Դուք կարող եք բողոքարկել մեր որոշումը:

Երբ Դուք բացառություն եք խնդրում, Ձեր բժիշկը կամ այլ դեղատոմս դուրս գրողը պետք է բացատրի բժշկական պատճառները, թե ինչու է Ձեզ անհրաժեշտ այդ բացառությունը:



Մեր Դեղերի ցանկում չգրանցված դեղամիջոցի ապահովագրման կամ դեղամիջոցի սահմանափակումը վերացնելու հայտը երբեմն կոչվում է **«դեղացանկի բացառություն»** խնդրել:

Ահա մի քանի բացառությունների օրինակներ, որոնք Դուք կամ Ձեր բժիշկը կամ դեղատոմս դուրս գրող այլ անձ կարող եք խնդրել մեզ անել.

1. Դեղի ապահովագրում, որը մեր Դեղերի ցանկում չէ

- Եթե մենք համաձայնենք բացառություն անել և ապահովագրել դեղը, որը մեր Դեղերի ցանկում չէ, Դուք կվճարեք համավճար, որը վերաբերում է 4-րդ մակարդակի դեղերին՝ Ոչ նախընտրելի դեղեր:
- Դուք չեք կարող բացառություն ստանալ դեղամիջոցի համար պահանջվող համավճարի գումարից:

2. Ապահովագրված դեղի սահմանափակումը հանելը

- Լրացուցիչ կանոններ կամ սահմանափակումներ են կիրառվում մեր Դեղերի ցանկի որոշ դեղերի նկատմամբ (հավելյալ տեղեկությունների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 5-ը*):
- Որոշ դեղերի համար լրացուցիչ կանոններն ու սահմանափակումները ներառում են.
 - Պահանջվում է օգտագործել դեղամիջոցի ջեներիկ տարբերակը ապրանքանիշային անվամբ դեղի փոխարեն:
 - Նախապես ստանալ մեր հաստատումը, նախքան մենք կհամաձայնենք ապահովագրել դեղը Ձեզ համար: Սա երբեմն կոչվում է «նախնական լիազորում (PA)»:
 - Պահանջվում է նախ փորձել այլ դեղամիջոց, նախքան մենք համաձայնենք ապահովագրել Ձեր խնդրած դեղը: Սա երբեմն կոչվում է «փուլային բուժում»:
 - Քանակի սահմանափակումներ: Որոշ դեղերի համար կան սահմանափակումներ այն դեղի քանակի վերաբերյալ, որը Դուք կարող եք ունենալ:
- Եթե մենք համաձայնենք Ձեզ համար բացառության և մի կողմ դնենք սահմանափակումը, Դուք կարող եք խնդրել բացառություն համավճարի գումարից, որը Դուք պետք է վճարեք:

3. Դեղերի ապահովագրությունը ծախսերի բաշխման ավելի ցածր մակարդակի փոխելը: Մեր Դեղերի ցանկի յուրաքանչյուր դեղ գտնվում է համավճարի հինգ մակարդակներից մեկում: Ընդհանուր առմամբ, որքան ցածր է համավճարի մակարդակի համարը, այնքան քիչ է Ձեզնից պահանջվող համավճարի գումարը:



Ապահովագրված ոչ նախընտրելի դեղամիջոցի համար ավելի ցածր գին վճարելու խնդրանքը երբեմն կոչվում է **«մակարդակների բացառություն»**:

- Մեր Դեղերի ցանկը հաճախ ներառում է մեկից ավելի դեղեր՝ կոնկրետ առողջական խնդրի բուժման համար: Դրանք կոչվում են «այլընտրանքային» դեղեր:
- Եթե Ձեր առողջական խնդրի համար այլընտրանքային դեղը համավճարի ավելի ցածր մակարդակ ունի, քան Ձեր ընդունած դեղը, կարող եք խնդրել մեզ այն փոխհատուցել այլընտրանքային դեղամիջոցի համար համավճարի գումարով: Սա կնվազեցնի Ձեր համավճարի չափը դեղամիջոցի համար:
 - Եթե Ձեր ընդունած դեղը կենսաբանական արտադրանք է, Դուք կարող եք խնդրել մեզ փոխհատուցել այն համավճարի գումարի չափով՝ Ձեր առողջական խնդրի համար կենսաբանական արտադրանքի այլընտրանքների ամենացածր մակարդակի համար:
 - Եթե Ձեր ընդունած դեղը ապրանքանիշային անվամբ արտադրանք է, Դուք կարող եք խնդրել մեզ ապահովագրել այն համավճարի գումարի չափով՝ Ձեր առողջական խնդրի համար ապրանքանիշային անվամբ արտադրանքի այլընտրանքների ամենացածր մակարդակի համար:
 - Եթե Ձեր ընդունած դեղը ջեներիկ արտադրանք է, Դուք կարող եք խնդրել մեզ ապահովագրել այն համավճարի գումարի չափով՝ Ձեր առողջական խնդրի համար կամ ապրանքանիշային անվամբ, կամ ջեներիկ արտադրանքի այլընտրանքների ամենացածր մակարդակի համար:
- Դուք չեք կարող մեզ խնդրել փոխել 5-րդ մակարդակի որևէ դեղամիջոցի ծախսերի բաշխման մակարդակը: Առանձնահատուկ մակարդակի դեղեր:
- Եթե մենք հաստատում ենք Ձեր մակարդակի բացառության հայտը, և կա մեկից ավելի ցածր ծախսերի բաշխման մակարդակ այլընտրանքային դեղերի համար, որոնք Դուք չեք կարող ընդունել, Դուք սովորաբար վճարում եք նվազագույն գումարը:

G3. Կարևոր բաներ, որոնք պետք է իմանալ բացառություն խնդրելու մասին

Ձեր բժիշկը կամ դեղատոմս գրող պետք է մեզ ասեն բժշկական պատճառները:

Ձեր բժիշկը կամ այլ դեղատոմս նշանակողը պետք է մեզ հաշվետվություն տա՝ բացատրելով բացառություն խնդրելու բժշկական պատճառները: Ավելի արագ որոշում կայացնելու համար ներառեք այս բժշկական տեղեկատվությունը Ձեր բժշկից կամ այլ նշանակողից, երբ Դուք բացառություն եք խնդրում:

Մեր Դեղերի ցանկը հաճախ ներառում է մեկից ավելի դեղեր՝ կոնկրետ առողջական խնդրի բուժման համար: Դրանք կոչվում են «այլընտրանքային» դեղեր: Եթե այլընտրանքային դեղը նույնքան արդյունավետ է, որքան Ձեր խնդրած դեղը և չի առաջացնի ավելի շատ կողմնակի ազդեցություններ կամ այլ առողջական խնդիրներ,

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



մենք սովորաբար **չենք** հաստատի Ձեր բացառության հայտը: Եթե Դուք մեզնից պահանջեք մակարդակի բացառություն, մենք սովորաբար **չենք** հաստատի Ձեր բացառության հայտը, եթե ցածր համավճարի մակարդակ(ներ)ում բոլոր այլընտրանքային դեղերը Ձեզ համար նույնպես չգործեն կամ անբարենպաստ ռեակցիա կամ այլ վնաս առաջացնեն:

Մենք կարող ենք Այո կամ Ոչ ասել Ձեր խնդրանքին:

- Եթե մենք «Այո» ասենք Ձեր բացառության խնդրանքին, ապա բացառությունը սովորաբար ուժի մեջ կմնա մինչև օրացուցային տարվա ավարտը: Մա ճիշտ է այնքան ժամանակ, քանի դեռ Ձեր բժիշկը շարունակում է դեղը նշանակել Ձեզ համար, և այդ դեղը շարունակում է անվտանգ և արդյունավետ լինել Ձեր առողջական խնդիրը բուժելու համար:
- Եթե մենք «Ոչ» ասենք Ձեր բացառության խնդրանքին, Դուք կարող եք բողոքարկել: Տե՛ս **Բաժին G5**-ը բողոքարկում ներկայացնելու տեղեկությունների համար, եթե «**Ոչ**» ասենք:

Հաջորդ բաժինը պատմում է Ձեզ, թե ինչպես խնդրել ապահովագրության որոշում, ներառյալ բացառությունը:

G4. Ապահովագրման որոշում, ներառյալ բացառություն խնդրելը

- Խնդրեք ապահովագրության որոշման տեսակը, որը ցանկանում եք՝ զանգահարելով 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, գրելով կամ ֆաքսով ուղարկելով մեզ: Դուք, Ձեր ներկայացուցիչը կամ Ձեր բժիշկը (կամ այլ դեղատոմս նշանակող) կարող եք դա անել: Խնդրում ենք ներառել Ձեր անունը, կոնտակտային տվյալները և հայտի մասին տեղեկությունները:
- Դուք կամ Ձեր բժիշկը (կամ այլ դեղատոմս նշանակող) կամ Ձեր անունից գործող մեկ այլ անձ կարող եք ապահովագրության որոշում խնդրել: Դուք կարող եք նաև տալ փաստաբանի լիազորագիր Ձեր անունից:
- Ուսումնասիրեք **Բաժին E3**-ը՝ պարզելու, թե ինչպես կարելի է ինչ-որ մեկին նշանակել Ձեր ներկայացուցիչ:
- Ձեզ հարկավոր չէ գրավոր թույլտվություն տալ Ձեր բժշկին կամ այլ նշանակողի՝ Ձեր անունից ապահովագրական որոշում խնդրելու համար:
- Եթե ցանկանում եք խնդրել մեզ փոխհատուցել Ձեզ դեղամիջոցի համար, ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 7*-ը:
- Եթե Դուք բացառություն եք խնդրում, մեզ «աջակցող տեղեկանք» տրամադրեք: Աջակցող տեղեկանքը ներառում է Ձեր բժշկի կամ այլ նշանակողի բժշկական պատճառները բացառության խնդրանքի համար:
- Ձեր բժիշկը կամ այլ դեղատոմս նշանակողը կարող է ֆաքսով կամ փոստով ուղարկել մեզ աջակցող հայտարարություն: Նրանք կարող են նաև մեզ հայտնել հեռախոսով, ապա տեղեկանքը ֆաքսով կամ փոստով ուղարկել:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 244



- Ապահովագրական որոշման հայտերը կարող եք էլեկտրոնային եղանակով ներկայացնել անդամների անվտանգ հարթակի միջոցով հետևյալ հասցեով https://www.blueshieldca.com/bzca/bsc/wcm/connect/sites/sites_content/en/medicare/resources/request_exceptions/exceptions
 - Անդամների ձևաթղթեր ընտրեք
 - Սկսեք ապահովագրական որոշման հայտն առցանց
 - Դուք կարող եք սկսել գործընթացը՝ նախնական թույլտվություն կամ բացառություն ստանալու համար:

Եթե Ձեր առողջությունը դա պահանջում է, խնդրեք մեզինից «արագ ապահովագրման որոշում»:

Մենք օգտագործում ենք «ստանդարտ ժամկետները», եթե չհամաձայնենք օգտագործել «արագ ժամկետները»:

- **Ապահովագրության ստանդարտ որոշումը** նշանակում է, որ մենք Ձեզ պատասխանում ենք Ձեր բժշկի տեղեկանքը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:
- **Ապահովագրության արագ որոշումը** նշանակում է, որ մենք Ձեզ պատասխանում ենք Ձեր բժշկի հայտարարությունը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում:

«Ապահովագրության արագ որոշումը» կոչվում է «արագացված ապահովագրության որոշում»:

- Դուք կարող եք արագ ապահովագրության որոշում ստանալ, եթե՝
 - Դա դեղամիջոցի համար է, որը Դուք չեք ստացել: Դուք չեք կարող արագ ապահովագրության որոշում ստանալ, եթե խնդրում եք մեզ փոխհատուցել Ձեզ արդեն գնված դեղի համար:
 - Ձեր առողջությունը կամ գործելու կենսագործունեությունը լրջորեն կվնասվի, եթե մենք օգտագործենք ստանդարտ ժամկետները:

Մենք ավտոմատ կերպով Ձեզ համար արագ ապահովագրության որոշում ենք կայացնում, եթե Ձեր բժիշկն ասի, որ Ձեր առողջական խնդիրը դա պահանջում է: Մենք Ձեզ նամակ ենք ուղարկում, որում ասվում է.

- Եթե Դուք արագ փոխհատուցման որոշում եք խնդրում առանց Ձեր բժշկի կամ այլ դեղատոմս նշանակողի աջակցության, մենք որոշում ենք, թե արդյոք Դուք արագ ապահովագրական որոշում եք ստանում:
- Եթե մենք որոշենք, որ Ձեր առողջական խնդիրը չի համապատասխանում արագ փոխհատուցման որոշման պահանջներին, փոխարենը մենք կօգտագործենք ստանդարտ ժամկետները:
 - Մենք Ձեզ նամակ ենք ուղարկում, որում ասվում է. Նամակում նաև բացատրվում է, թե ինչպես բողոքարկել մեր որոշումը:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք [blueshieldca.com/medicare](https://www.blueshieldca.com/medicare): 245



- Դուք կարող եք արագ բողոք ներկայացնել և ստանալ պատասխանը 24 ժամվա ընթացքում: Բողոքարկման, ներառյալ արագ բողոքարկման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք **Բաժին K-ը**:

Ապահովագրության արագ որոշման վերջնաժամկետներ

- Եթե մենք օգտագործում ենք արագ ժամկետները, մենք պետք է Ձեզ պատասխանենք Ձեր հայտը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Եթե Դուք բացառություն եք խնդրում, մենք Ձեզ մեր պատասխանը կտանք Ձեր բժշկի աջակցող տեղեկանքը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Մենք Ձեզ ավելի շուտ կտանք մեր պատասխանը՝ ելնելով Ձեր առողջական վիճակից:
- Եթե մենք չպահպանենք այս վերջնաժամկետը, մենք Ձեր հարցումը կուղարկենք բողոքարկման գործընթացի 2-րդ մակարդակ՝ IRO-ի կողմից վերանայման համար: 2-րդ մակարդակի բողոքարկման մասին լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք **Բաժին G6-ը**:
- Եթե մենք «Այո» ասենք Ձեր հայտի մի մասին կամ ամբողջին, մենք Ձեզ ապահովագրություն կտրամադրենք Ձեր հարցումը կամ Ձեր բժշկի աջակցող հայտարարությունը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում:
- Եթե մենք «Ոչ» ասենք Ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջի համար, մենք Ձեզ նամակ կուղարկենք պատճառներով: Նամակում նաև բացատրվում է, թե ինչպես կարող եք բողոքարկել:

Ձեր չստացած դեղամիջոցի վերաբերյալ ստանդարտ ապահովագրության որոշման վերջնաժամկետներ

- Եթե մենք օգտագործում ենք ստանդարտ ժամկետները, մենք պետք է Ձեզ պատասխան տանք Ձեր հարցումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում: Եթե Դուք բացառություն եք խնդրում, մենք Ձեզ մեր պատասխանը կտանք Ձեր բժշկի աջակցող տեղեկանքը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում: Մենք Ձեզ ավելի շուտ կտանք մեր պատասխանը՝ ելնելով Ձեր առողջական խնդրից:
- Եթե մենք չպահպանենք այս վերջնաժամկետը, մենք Ձեր հարցումը կուղարկենք բողոքարկման գործընթացի 2-րդ մակարդակ՝ IRO-ի կողմից վերանայման համար:
- Եթե մենք «Այո» ասենք Ձեր խնդրանքի մի մասին կամ ամբողջին, մենք Ձեզ ապահովագրություն կտրամադրենք Ձեր հայտը կամ Ձեր բժշկի կողմից բացառության դեպքում աջակցող տեղեկանքը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:
- Եթե մենք «Ոչ» ասենք Ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջի համար, մենք Ձեզ նամակ կուղարկենք պատճառներով: Նամակում նաև բացատրվում է, թե ինչպես բողոքարկել մեր որոշումը:

Արդեն գնված դեղի վերաբերյալ ստանդարտ ապահովագրության որոշման վերջնաժամկետներ

- Մենք պետք է Ձեզ պատասխան տանք Ձեր հարցումը ստանալուց հետո 14 օրացուցային օրվա ընթացքում:

- Բողոքարկման գործընթացն ավարտվում է:
- Մենք պետք է թույլատրենք կամ տրամադրենք դեղի հաստատված ապահովագրական ծածկույթը 72 ժամվա ընթացքում (կամ 24 ժամ արագացված բողոքարկման համար) կամ վճարում կատարենք ոչ ուշ, քան որոշումը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Եթե ALJ կամ հաշտարար դատավորը «Ոչ» ասի Ձեր բողոքարկմանը, բողոքարկման գործընթացը կարող է ավարտված չլինել:

- Եթե որոշեք **ընդունել** Ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, բողոքարկման գործընթացն ավարտված է:
- Եթե որոշեք **չընդունել** այս որոշումը, որը մերժում է Ձեր բողոքարկումը, կարող եք շարունակել վերանայման գործընթացի հաջորդ մակարդակը: Ձեր ստացած ծանուցումը Ձեզ կասի, թե ինչ անել 4-րդ մակարդակի բողոքարկման համար:

4-րդ մակարդակի բողոքարկում

Խորհուրդը վերանայում է Ձեր բողոքը և Ձեզ պատասխան է տալիս: Խորհուրդը դաշնային կառավարության մի մասն է:

Եթե Խորհուրդն ասում է «Այո» Ձեր բողոքարկմանը.

- Բողոքարկման գործընթացն ավարտվում է:
- Մենք պետք է թույլատրենք կամ տրամադրենք դեղի հաստատված ապահովագրական ծածկույթը 72 ժամվա ընթացքում (կամ 24 ժամ արագացված բողոքարկման համար) կամ վճարում կատարենք ոչ ուշ, քան որոշումը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Եթե Խորհուրդը «Ոչ» է ասում Ձեր բողոքարկմանը, բողոքարկման գործընթացը կարող է ավարտված չլինել:

- Եթե որոշեք **ընդունել** Ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, բողոքարկման գործընթացն ավարտված է:



- Եթե որոշեք **չընդունել** այս որոշումը, որը մերժում է Ձեր բողոքարկումը, կարող եք անցնել վերանայման գործընթացի հաջորդ մակարդակը: Ձեր ստացած ծանուցման մեջ Ձեզ կտեղեկացվի, թե արդյոք կարող եք շարունակել 5-րդ մակարդակի բողոքարկումը և ինչ անել:

5-րդ մակարդակի բողոքարկում

- Դաշնային շրջանային դատարանի դատավորը կքննարկի Ձեր բողոքարկումը և ամբողջ տեղեկատվությունը և կորոշի **Այո** կամ **Ոչ**: Սա վերջնական որոշում է: Դաշնային շրջանային դատարանից դուրս բողոքարկման այլ մակարդակներ չկան:

K. Ինչպես բողոք ներկայացնել

K1. Ինչ տեսակի խնդիրների վերաբերյալ պետք է լինեն բողոքները

Բողոքի գործընթացն օգտագործվում է միայն որոշակի տեսակի խնդիրների համար, օրինակ՝ խնդիրներ խնամքի որակի, սպասման ժամանակի, խնամքի համակարգման և հաճախորդների սպասարկման առնչությամբ: Ահա բողոքարկման գործընթացում լուծվող խնդիրների տեսակների օրինակներ:

Գանգատ	Օրինակ
Բժշկական խնամքի որակ	<ul style="list-style-type: none"> • Դուք դժգոհ եք խնամքի որակից, օրինակ՝ հիվանդանոցում ստացած խնամքից:
Ձեր գաղտնիության պահպանումը	<ul style="list-style-type: none"> • Դուք կարծում եք, որ ինչ-որ մեկը խախտել է Ձեր գաղտնիության իրավունքը կամ կիսվել է Ձեր մասին գաղտնի տեղեկություններով:
Անհարգալից վերաբերմունք, հաճախորդների վատ սպասարկում կամ այլ բացասական վարքագիծ	<ul style="list-style-type: none"> • Առողջապահության մատակարարը կամ անձնակազմը կոպիտ կամ անհարգալից են եղել Ձեր հանդեպ: • Մեր անձնակազմը Ձեզ վատ է վերաբերվել: • Դուք կարծում եք, որ Ձեզ դուրս են մղում մեր ծրագրից:



Գանգատ	Օրինակ
Լեզվական օգնության հասանելիություն	<ul style="list-style-type: none"> • Ձեզ ֆիզիկապես հասանելի չեն բժշկի կամ մատակարարի ընդունարանի առողջապահական ծառայություններն ու հաստատությունները: • Ձեր բժիշկը կամ մատակարարը թարգմանիչ չի տրամադրում անգլերենից բացի այն լեզվի համար, որով Դուք խոսում եք (օրինակ՝ ամերիկյան ժեստերի լեզուն կամ իսպաներենը): • Ձեր մատակարարը Ձեզ չի տալիս այլ ողջամիտ հարմարեցումներ, որոնց կարիքն ունեք և խնդրում եք:
Սպասման ժամանակ	<ul style="list-style-type: none"> • Դուք դժվարանում եք այց ստանալ կամ շատ երկար եք սպասել այն ստանալու համար: • Բժիշկները, դեղագործները կամ առողջապահական այլ մասնագետները, Հաճախորդների սպասարկումը կամ ծրագրի այլ աշխատակիցները Ձեզ շատ երկար են սպասեցնում:
Մաքրություն	<ul style="list-style-type: none"> • Դուք կարծում եք, որ կլինիկան, հիվանդանոցը կամ բժշկի ընդունարանը մաքուր չէ:
Տեղեկատվություն, որը Դուք ստանում եք մեզնից	<ul style="list-style-type: none"> • Դուք կարծում եք, որ մենք չենք կարողացել Ձեզ ծանուցում կամ նամակ տրամադրել, որը Դուք պետք է ստանայիք: • Դուք կարծում եք, որ մեր ուղարկած գրավոր տեղեկատվությունը չափազանց դժվար է հասկանալ:



Գանգատ	Օրինակ
<p>Ծածկույթի կամ բողոքարկումների վերաբերյալ որոշումների ժամանակին ընդունումը</p>	<ul style="list-style-type: none"> • Դուք կարծում եք, որ մենք չենք պահպանում ապահովագրության որոշում կայացնելու կամ Ձեր բողոքարկմանը պատասխանելու մեր ժամկետները: • Դուք կարծում եք, որ Ձեր օգտին փոխհատուցման կամ բողոքարկման որոշում ստանալուց հետո մենք չենք պահպանում ծառայությունը հաստատելու կամ տրամադրելու կամ որոշակի բժշկական ծառայությունների համար Ձեզ փոխհատուցելու ժամկետները: • Դուք չեք կարծում, որ մենք Ձեր գործը ժամանակին ենք ուղարկել IRO:

Կան տարբեր տեսակի բողոքներ: Դուք կարող եք ներքին և/կամ արտաքին բողոք ներկայացնել: Ներքին բողոք է ներկայացվում և վերանայվում մեր ծրագրի կողմից: Արտաքին բողոքը ներկայացվում և վերանայվում է մեր ծրագրին չփոխկապակցված կազմակերպության կողմից: Եթե ներքին և/կամ արտաքին բողոք ներկայացնելու համար օգնության կարիք ունեք, կարող եք զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով:

«Գանգատի» իրավաբանական տերմինը **«բողոք» է:**

«Գանգատ ներկայացնելու» իրավաբանական տերմինը **«բողոք ներկայացնելն է»:**

K2. Ներքին գանգատներ

Ներքին բողոք ներկայացնելու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով: Դուք կարող եք բողոք ներկայացնել ցանկացած ժամանակ, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը վերաբերում է Medicare Part D դեղերին: Եթե բողոքը վերաբերում է Medicare Part D դեղերին, ապա Դուք պետք է այն ներկայացնեք **60 օրացուցային** օրվա ընթացքում, երբ խնդիրը սկսել է, որի մասին ցանկանում եք բողոքել:

- Եթե կա որևէ այլ բան, որը Դուք պետք է անեք, Հաճախորդների սպասարկման բաժինը Ձեզ կասի:
- Կարող եք նաև գրել Ձեր բողոքը և ուղարկել մեզ: Եթե Ձեր բողոքը գրավոր ներկայացնեք, մենք Ձեր բողոքին գրավոր կպատասխանենք:
- Ահա, թե ինչպես.

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 270



• **Քայլ 1. Բողոք ներկայացրեք**

- Գործընթացը սկսելու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման ներկայացուցչին դեպքից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում և խնդրեք բողոք ներկայացնել: Դուք կարող եք նաև գրավոր բողոք ներկայացնել դեպքից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում՝ այն ուղարկելով հետևյալ հասցեին

- Blue Shield TotalDual Plan Appeals & Grievances Department
- P.O. Box 927
- Woodland Hills CA 91365-9856
- ՖԱԶՍ՝ (916) 350-6510

- Եթե մեզ հետ կապվում եք ֆաքսով կամ փոստով, խնդրում ենք զանգահարել մեզ Blue Shield TotalDual Plan-ի բողոքարկման և բողոքների ձևաթուղթը խնդրելու համար: Մենք Ձեզ նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ մենք ստացել ենք Ձեր մտահոգության մասին ծանուցումը 5 օրացուցային օրվա ընթացքում և Ձեզ կտրամադրենք այն անձի անունը, ով աշխատում է դրա վրա: Մենք սովորաբար այն կլուծենք 30 օրացուցային օրվա ընթացքում:

- Եթե Դուք խնդրում եք «արագացված բողոք», քանի որ մենք որոշել ենք չտալ Ձեզ «արագ որոշում» կամ «արագ բողոքարկում», մենք Ձեր հարցումը կուղարկենք բժշկական տնօրենին, որը ներգրավված չի եղել մեր սկզբնական որոշման մեջ: Մենք կարող ենք հարցնել՝ արդյոք ունեք լրացուցիչ տեղեկություններ, որոնք հասանելի չեն եղել «արագ նախնական որոշում» կամ «արագ բողոքարկում» խնդրելու պահին: Բժշկական տնօրենը կուսումնասիրի Ձեր հարցումը և կորոշի, թե արդյոք մեր սկզբնական որոշումը տեղին էր: Մենք մեր որոշումը Ձեզ նամակ կուղարկենք «արագացված բողոքի» վերաբերյալ Ձեր խնդրանքից հետո 24 ժամվա ընթացքում: Մենք պետք է անդրադառնանք Ձեր բողոքին այնքան արագ, որքան պահանջում է Ձեր գործը՝ ելնելով Ձեր առողջական վիճակից, բայց ոչ ուշ, քան Ձեր բողոքը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

• **2-րդ քայլ. Բողոքի լսում**

- Եթե Դուք գոհ չեք խնամքի որակի հետ կապված Ձեր բողոքի լուծումից, կարող եք գրավոր հարցում ներկայացնել Blue Shield Medicare-ի բողոքարկման և բողոքների բաժին՝ բողոքի լսման համար: Ձեր գրավոր հարցումից հետո 31 օրացուցային օրվա ընթացքում մենք կհավաքենք երդվյալ ատենակալների կազմ՝ Ձեր գործը լսելու համար: Դուք կհրավիրվեք մասնակցելու լսումներին, որոնք ներառում են չներգրավված բժիշկ և Բողոքարկման և բողոքների լուծման բաժնի ներկայացուցիչ: Կարող եք մասնակցել անձամբ կամ հեռակոնֆերանսի միջոցով: Լսումից հետո մենք Ձեզ կուղարկենք վերջնական որոշման նամակ:

- Եթե Դուք գոհ չեք Ձեր բողոքի լուծումից, որը չի ներառում խնամքի որակը, ինչպիսիք են սպասման ժամանակը, անհարգալից վերաբերմունքը, հաճախորդների սպասարկումը կամ մաքրությունը, կարող եք կապվել Blue Shield TotalDual Plan-ի Հաճախորդների սպասարկման բաժին՝ լրացուցիչ վերանայում խնդրելու համար:



«Արագ բողոքի» իրավական տերմինը «արագացված բողոքն է»:

Հնարավորության դեպքում մենք Ձեզ անմիջապես կպատասխանենք: Եթե Դուք զանգահարեք մեզ բողոքելու, մենք կարող ենք պատասխանել Ձեզ նույն հեռախոսազանգի սահմաններում: Եթե Ձեր առողջական վիճակը պահանջում է, որ մենք արագ պատասխանենք, մենք դա կանենք:

- Բողոքների մեծ մասին մենք պատասխանում ենք 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե մենք որոշում չընդունենք 30 օրացուցային օրվա ընթացքում, քանի որ մեզ անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ, մենք Ձեզ գրավոր ծանուցում ենք: Մենք նաև տրամադրում ենք կարգավիճակի թարմացում և պատասխանը ստանալու գնահատված ժամանակը:
- Եթե Դուք բողոք ներկայացնեք, քանի որ մենք մերժել ենք «արագ ապահովագրական որոշման» կամ «արագ բողոքարկման» Ձեր խնդրանքը, մենք ավտոմատ կերպով Ձեզ «արագ բողոք» կտանք և կպատասխանենք Ձեր բողոքին 24 ժամվա ընթացքում:
- Եթե Դուք բողոք ներկայացնեք, քանի որ մենք լրացուցիչ ժամանակ ենք պահանջել ապահովագրական որոշում կայացնելու կամ բողոքարկելու համար, մենք ավտոմատ կերպով Ձեզ «արագ բողոք» կտանք և կպատասխանենք Ձեր բողոքին 24 ժամվա ընթացքում:

Եթե մենք համաձայն չլինենք Ձեր բողոքի մի մասի կամ ամբողջի հետ, մենք Ձեզ կպատմենք և կներկայացնենք մեր պատճառները: Մենք կարձագանքենք՝ համաձայն ենք բողոքի հետ, թե՛ ոչ:

K3. Արտաքին զանգատներ

Medicare

Դուք կարող եք տեղեկացնել Medicare-ին Ձեր բողոքի մասին կամ ուղարկել այն Medicare-ին: Medicare-ի բողոքարկման ձևաթուղթը հասանելի է հետևյալ հասցեով՝ www.medicare.gov/MedicareComplaintForm/home.aspx: Դուք կարիք չունեք բողոք ներկայացնել Blue Shield TotalDual Plan-ին նախքան Medicare-ում բողոք ներկայացնելը:

Medicare-ը լրջորեն է վերաբերվում Ձեր բողոքներին և օգտագործում է այս տեղեկատվությունը Medicare ծրագրի որակը բարելավելու համար:

Եթե ունեք որևէ այլ կարծիք կամ մտահոգություն, կամ եթե կարծում եք, որ առողջապահական ծրագիրը չի լուծում Ձեր խնդիրը, կարող եք նաև զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է:

Medi-Cal

Դուք կարող եք բողոք ներկայացնել Կալիֆորնիայի առողջապահության ծառայությունների վարչության (California Department of Health Care Services, DHCS) Medi-Cal Managed Care Ombudsman-ին՝ զանգահարելով 1-888-452-8609 հեռախոսահամարով: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 711: Զանգահարեք երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-ից 17:00:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



Դուք կարող եք բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժին (California Department of Managed Health Care, DMHC): DMHC-ն պատասխանատու է առողջապահական ծրագրերի կարգավորման համար: Դուք կարող եք զանգահարել DMHC Օգնության կենտրոն Medi-Cal ծառայությունների վերաբերյալ բողոքներին առնչվող օգնության համար: Ոչ հրատապ հարցերի դեպքում Դուք կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե համաձայն չեք Ձեր 1-ին մակարդակի բողոքարկման որոշման հետ, կամ եթե ծրագիրը չի լուծել Ձեր բողոքը 30 օրացուցային օր հետո: Սակայն, Դուք կարող եք կապվել DMHC-ի հետ առանց 1-ին մակարդակի բողոքարկում ներկայացնելու, եթե օգնության կարիք ունեք որևէ հրատապ խնդրի կամ այն բողոքի առնչությամբ, որը անմիջական և լուրջ վտանգ է ներկայացնում Ձեր առողջությանը, եթե Դուք սուր ցավ ունեք, եթե համաձայն չեք մեր ծրագրի որոշման հետ Ձեր բողոքի վերաբերյալ, կամ եթե մեր ծրագիրը չի լուծել Ձեր բողոքը 30 օրացուցային օր հետո:

Ահա Օգնության կենտրոնից աջակցություն ստանալու երկու եղանակ.

- Զանգահարեք 1-888-466-2219 հեռախոսահամարով: Այն անհատները, ովքեր խուլ են, լսողության կամ խոսքի խնդիրներ ունեն, կարող են օգտվել անվճար TTY համարից՝ 1-877-688-9891: Հեռախոսազանգն անվճար է:
- Այցելեք Կառավարվող առողջապահական խնամքի դեպարտամենտի կայքը՝ www.dmhc.ca.gov:

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ (Office for Civil Rights, OCR)

Դուք կարող եք բողոք ներկայացնել Առողջապահության և մարդկային ծառայությունների բաժանմունքի (Department of Health and Human Services, HHS) OCR-ին, եթե կարծում եք, որ Ձեզ արդար չեն վերաբերվել: Օրինակ, Դուք կարող եք բողոք ներկայացնել հաշմանդամության հասանելիության կամ լեզվական օգնության վերաբերյալ: OCR-ի հեռախոսահամարն է՝ 1-800-368-1019: TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-800-537-7697 հեռախոսահամարով: Այցելեք www.hhs.gov/ocr ավելին իմանալու համար:

Կարող եք նաև դիմել տեղական OCR գրասենյակ հետևյալ հասցեով՝

Office for Civil Rights
U.S. Department of Health and Human Services
90 7th Street, Suite 4-100
San Francisco, CA 94103

Հաճախորդի արձագանքման կենտրոն՝ (800) 368-1019 հեռախոսահամարով

Ֆաքս՝ (202) 619-3818
(TTY՝ (800) 537-7697 հեռախոսահամարով
Էլ. փոստ՝ ocrmail@hhs.gov

Դուք կարող եք նաև իրավունքներ ունենալ հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի (Disability Act, ADA) և 2008 թվականի Փոփոխությունների մասին (Amendments Act) օրենքի համաձայն (P.L. 110-325): Օգնության համար կարող եք կապվել Medi-Cal Ombuds Program-ի հետ: Հեռախոսահամարն է՝ 1-888-452-8609:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 273



Որակի բարելավման կազմակերպություն (Quality Improvement Organization, QIO)

Երբ Ձեր բողոքը վերաբերում է խնամքի որակին, Դուք ունեք երկու ընտրություն.

- Դուք կարող եք խնամքի որակի վերաբերյալ Ձեր բողոքը ներկայացնել անմիջապես QIO-ին:
- Դուք կարող եք Ձեր բողոքը ներկայացնել QIO-ին և մեր ծրագրին: Եթե Դուք բողոք եք ներկայացնում QIO-ին, մենք աշխատում ենք նրանց հետ լուծելու Ձեր բողոքը:

QIO-ն պրակտիկ բժիշկների և առողջապահական այլ փորձագետների խումբ է, որը վարձատրվում է դաշնային կառավարության կողմից ստուգելու և բարելավելու Medicare հիվանդներին տրվող խնամքը: QIO-ի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար այցելեք **Բաժին H2** կամ ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրի Գլուխ 2-ը*:

Կալիֆոռնիայում QIO-ն կոչվում է Livanta: Livanta-ի հեռախոսահամարն է (877) 588-1123 [TTY՝ (855) 887-6668]:



Գլուխ 10. Մեր ծրագրում Ձեր անդամությունը դադարեցնելը

Ներածություն

Այս գլուխը բացատրում է, թե ինչպես կարող եք դադարեցնել Ձեր անդամակցությունը մեր ծրագրին և Ձեր առողջության ապահովագրման տարբերակներին՝ մեր ծրագրից դուրս գալուց հետո: Եթե դուրս գաք մեր ծրագրից, Դուք դեռ կմնաք Medicare և Medi-Cal ծրագրերում, քանի դեռ իրավասու եք: Հիմնական եզրույթները և դրանց սահմանումները ներկայացված են այբբենական կարգով՝ *Անդամի տեղեկագրքի* վերջին գլխում:

Բովանդակություն

- A. Երբ կարող եք դադարեցնել Ձեր անդամակցությունը մեր ծրագրին 276
- B. Ինչպես դադարեցնել Ձեր անդամակցությունը մեր ծրագրին 277
- C. Ինչպես ստանալ Medicare և Medi-Cal ծառայություններ առանձին..... 278
 - C1. Ձեր Medicare ծառայությունները 278
 - C2. Ձեր Medi-Cal ծառայությունները..... 281
- D. Ձեր բժշկական ծառայություններն ու դեղերը մինչև մեր ծրագրին Ձեր անդամակցության ավարտը 282
- E. Այլ իրավիճակներ, երբ ավարտվում է Ձեր անդամակցությունը մեր ծրագրին..... 282
- F. Առողջությանն առնչվող ցանկացած պատճառով մեր ծրագիրը լքելուց հրաժարվելու կանոններ 284
- G. Ձեր իրավունքը՝ բողոք ներկայացնելու, եթե մենք դադարեցնենք Ձեր անդամակցությունը մեր ծրագրին 284
- H. Ինչպե՞ս ավելի շատ տեղեկություններ ստանալ Ձեր ծրագրի անդամակցության դադարեցման մասին..... 284



A. Երբ կարող եք դադարեցնել Ձեր անդամակցությունը մեր ծրագրին

Medicare-ից օգտվող մարդկանց մեծամասնությունը կարող է դադարեցնել իրենց անդամակցությունը տարվա որոշակի ժամանակահատվածներում: Քանի որ Դուք ունեք Medi-Cal, կարող եք դադարեցնել Ձեր անդամակցությունը մեր ծրագրին կամ անցնել այլ ծրագրի մեկ անգամ հետևյալ **Հատուկ Գրանցման Ժամանակաշրջանների** յուրաքանչյուրի ընթացքում

- հունվար-մարտ
- ապրիլ-հունիս
- հուլիս-սեպտեմբեր

Ի հավելումն այս երեք գրանցման հատուկ ժամանակաշրջանների, Դուք կարող եք դադարեցնել Ձեր անդամակցությունը մեր ծրագրին հետևյալ ժամանակահատվածներում ամեն տարի

- **Տարեկան գրանցման շրջան**, որը տևում է հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 7-ը: Եթե այս ժամանակահատվածում ընտրեք նոր ծրագիր, ապա մեր ծրագրին Ձեր անդամակցությունը կավարտվի դեկտեմբերի 31-ին, իսկ Ձեր անդամակցությունը նոր ծրագրին ուժի մեջ կմտնի հունվարի 1-ից:
- **Medicare Advantage (MA) գրանցման բաց շրջան**, որը տևում է հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը: Եթե այս ժամանակահատվածում ընտրեք նոր ծրագիր, ապա նոր ծրագրին Ձեր անդամակցությունը կսկսվի հաջորդ ամսվա առաջին օրը:

Կարող են լինել այլ իրավիճակներ, երբ Դուք հնարավորություն կունենաք փոփոխություն կատարել Ձեր անդամակցության մեջ: Օրինակ, այն դեպքում, եթե.

- Դուք տեղափոխվեք մեր սպասարկման տարածքից դուրս,
- Medi-Cal-ին կամ Extra Help-ին Ձեր իրավունակությունը փոխվել է կամ,
- Եթե վերջերս եք տեղափոխվել, ներկայումս խնամք եք ստանում կամ պարզապես դուրս եք գրվել խնամքի հաստատությունից կամ հիվանդությունից՝ երկարատև բուժում ստանալուց հետո:

Ձեր անդամակցությունը կավարտվի ամսվա վերջին օրը, երբ մենք ստանանք Ձեր ծրագիրը փոխելու Ձեր հայտը: Օրինակ, եթե մենք ստանանք Ձեր հարցումը հունվարի 18-ին, ապա մեր ծրագրում Ձեր ապահովագրական ծածկույթը կավարտվի հունվարի 31-ին: Ձեր նոր ծածկույթը կսկսվի հաջորդ ամսվա առաջին օրվանից (այս օրինակում՝ փետրվարի 1-ին):

Եթե դուրս գաք մեր ծրագրից, ապա կարող եք ստանալ հետևյալ տեղեկությունները.

- Medicare-ի տարբերակների մասին՝ Բաժին C1 :
- Medi-Cal-ի տարբերակների և ծառայությունների մասին՝ Բաժին C2 :

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 276



Դուք կարող եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ այն մասին, թե ինչպես կարող եք դադարեցնել Ձեր անդամակցությունը՝ զանգահարելով. Հաճախորդների սպասարկման բաժին այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով: TTY օգտվողների հեռախոսահամարը նույնպես նշված է:

- Medicare՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Կալիֆոռնիայի առողջապահական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (Health Insurance Counseling and Advocacy Program, HICAP)՝ 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից մինչև 17:00-ը: Լրացուցիչ տեղեկությունների կամ Ձեր տարածքում HICAP տեղական գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/HICAP:
- Health Care Options՝ 1-844-580-7272 հեռախոսահամարով՝ երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից մինչև 18:00: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-800-430-7077 հեռախոսահամարով:
- Medi-Cal Managed Care Ombudsman՝ 1-888-452-8609 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան 8:00-ից մինչև 17:00 կամ էլփոստով՝ MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov:

ՆՇՈՒՄ. Եթե Դուք թմրամիջոցների կառավարման ծրագրում եք (DMP), հնարավոր է չկարողանաք փոխել ծրագրերը: Թմրամիջոցների կառավարման ծրագրերի մասին տեղեկությունների համար ուսումնասիրեք Ձեր Անդամի տեղեկագրքի Գլուխ 5-ը:

B. Ինչպես դադարեցնել Ձեր անդամակցությունը մեր ծրագրին

Եթե որոշեք դադարեցնել Ձեր անդամակցությունը, կարող եք գրանցվել Medicare-ի մեկ այլ ծրագրի կամ անցնել Original Medicare-ին: Սակայն, եթե Դուք ցանկանում եք անցնել մեր ծրագրից Original Medicare-ի, բայց չեք ընտրել Medicare դեղատոմսով դեղերի առանձին ծրագիր, Դուք պետք է խնդրեք, որ Ձեզ դուրս հանեն մեր ծրագրից: Կա երկու եղանակ, որոնցով կարող եք խնդրել, որ Ձեր անդամակցությունը դադարեցվի.

- Դուք կարող եք մեզ գրավոր հարցում ուղարկել: Կապվեք Հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով, եթե դա անելու եղանակի մասին լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք:
- Չանգահարեք Medicare 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտվողները (մարդիկ, ովքեր դժվարանում են լսել կամ խոսել) պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով: Երբ զանգահարում եք 1-800-MEDICARE, կարող եք նաև գրանցվել Medicare-ի մեկ այլ առողջապահական կամ դեղորայքային պլանում: Մեր պլանից դուրս գալուց Ձեր Medicare ծառայությունները ստանալու մասին լրացուցիչ տեղեկություններ տրված են 280-րդ էջի գծապատկերում:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 277



- Ձանգահարեք Health Care Options՝ 1-844-580-7272 հեռախոսահամարով՝ երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից մինչև 18:00: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-800-430-7077 հեռախոսահամարով:
- Ստորև C բաժինը ներառում է քայլեր, որոնք Դուք կարող եք ձեռնարկել այլ պլանում գրանցվելու համար, ինչը նույնպես կավարտի Ձեր անդամակցությունը մեր ծրագրին:

C. Ինչպես ստանալ Medicare և Medi-Cal ծառայություններ առանձին

Դուք ունեք Ձեր Medicare և Medi-Cal ծառայությունները ստանալու ընտրություն, եթե որոշեք դադարեցնել Ձեր մասնակցությունը մեր ծրագրին:

C1. Ձեր Medicare ծառայությունները

Դուք ունեք ստորև թվարկված երեք տարբերակ՝ Ձեր Medicare ծառայություններից օգտվելու համար: Ընտրելով այս տարբերակներից մեկը՝ Դուք ավտոմատ կերպով դադարեցնում եք Ձեր անդամակցությունը մեր ծրագրին:



<p>1. Դուք կարող եք ընտրել հետևյալ փոփոխությունները.</p> <p>Medicare-ի մեկ այլ առողջապահական ծրագիր, ներառյալ ծրագիր, որը համատեղում է Ձեր Medicare-ի և Medi-Cal-ի ապահովագրությունը</p>	<p>Ահա թե ինչ է անհրաժեշտ անել.</p> <p>Ջանգահարեք Medicare 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:</p> <p>Տարեցների համապարփակ խնամքի ծրագրի (Program of All-Inclusive Care for the Elderly, PACE) վերաբերյալ հարցերի դեպքում զանգահարեք 1-855-921-PACE (7223) հեռախոսահամարով:</p> <p>Եթե օգնության կամ լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք.</p> <ul style="list-style-type: none"> • Ջանգահարեք Կալիֆորնիայի առողջապահական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (Health Insurance Counseling and Advocacy Program, HICAP)՝ 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից մինչև 17:00-ը: Լրացուցիչ տեղեկությունների կամ Ձեր տարածքում HICAP տեղական գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/HICAP/: <p>ԿԱՄ</p> <p>Գրանցվեք Medicare-ի նոր ծրագրում:</p> <p>Դուք ավտոմատ կերպով հեռացվում եք մեր Medicare ծրագրից, երբ ուժի մեջ է մտնում Ձեր նոր ծրագրի ծածկույթը: Ձեր Medi-Cal ծրագիրը կարող է փոխվել:</p>
--	--



<p>2. Դուք կարող եք ընտրել հետևյալ փոփոխությունները.</p> <p>Original Medicare` Medicare-ի դեղատոմսով դեղերի առանձին ծրագրով</p>	<p>Ահա թե ինչ է անհրաժեշտ անել.</p> <p>Զանգահարեք Medicare 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով` օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:</p> <p>Եթե օգնության կամ լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք.</p> <ul style="list-style-type: none"> • Զանգահարեք Կալիֆորնիայի առողջապահական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (Health Insurance Counseling and Advocacy Program, HICAP)` 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից մինչև 17:00-ը: Լրացուցիչ տեղեկությունների կամ Ձեր տարածքում HICAP տեղական գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/HICAP/: <p>ԿԱՍ</p> <p>Գրանցվեք Medicare-ի դեղատոմսով դուրս գրվող դեղերի նոր ծրագրում:</p> <p>Դուք ավտոմատ կերպով հեռացվում եք մեր ծրագրից, երբ սկսում է գործել Ձեր Original Medicare-ի ապահովագրությունը:</p>
---	---



<p>3. Դուք կարող եք ընտրել հետևյալ փոփոխությունները.</p> <p>Original Medicare` առանց Medicare-ի դեղատոմսով դեղերի առանձին ծրագրի</p> <p>ՆՇՈՒՄ. Եթե Դուք անցնեք Original Medicare-ին և չգրանցվեք Medicare-ի դեղատոմսով տրվող դեղերի առանձին ծրագրում, Medicare-ը կարող է գրանցել Ձեզ դեղերի ծրագրում, քանի դեռ չեք հայտնել իրենց, որ չեք ցանկանում միանալ այդ ծրագրում:</p> <p>Դուք պետք է դեղատոմսով դեղերի ծածկույթից հրաժարվեք միայն այն դեպքում, եթե դեղերի ապահովագրություն ունեք այլ աղբյուրից, օրինակ՝ գործատուից կամ արհմիությունից: Եթե հարցեր ունեք այն մասին, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է դեղերի ապահովագրություն, զանգահարեք Կալիֆորնիայի առողջապահական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (Health Insurance Counseling and Advocacy Program, HICAP)` 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից մինչև 17:00: Լրացուցիչ տեղեկությունների կամ Ձեր տարածքում HICAP տեղական գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/HICAP/ .</p>	<p>Ահա թե ինչ է անհրաժեշտ անել.</p> <p>Զանգահարեք Medicare 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով` օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:</p> <p>Եթե օգնության կամ լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք.</p> <ul style="list-style-type: none"> • Զանգահարեք Կալիֆորնիայի առողջապահական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (Health Insurance Counseling and Advocacy Program, HICAP)` 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից մինչև 17:00-ը: Լրացուցիչ տեղեկությունների կամ Ձեր տարածքում HICAP տեղական գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/HICAP/: <p>Դուք ավտոմատ կերպով հեռացվում եք մեր ծրագրից, երբ սկսում է գործել Ձեր Original Medicare-ի ապահովագրությունը:</p>
--	--

C2. Ձեր Medi-Cal ծառայությունները

Մեր ծրագրից դուրս գալուց հետո Medi-Cal-ի Ձեր ծառայություններն ստանալու հետ կապված հարցերի վերաբերյալ դիմեք Health Care Options-ին 1-844-580-7272 հեռախոսահամարով՝ երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից մինչև 18:00: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-800-430-7077 հեռախոսահամարով: Խնդրում ենք ճշտել, թե ինչպես է մեկ այլ ծրագրին միանալը կամ Original Medicare-ին վերադառնալը ազդում Ձեր Medi-Cal-ի ապահովագրությունը ստանալու վրա:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 281



D. Ձեր բժշկական ծառայություններն ու դեղերը մինչև մեր ծրագրին Ձեր անդամակցության ավարտը

Եթե Դուք լքեք մեր ծրագիրը, կարող է ժամանակ պահանջվել, մինչև Ձեր անդամակցությունն ավարտվի և սկսվի Ձեր նոր Medicare-ի և Medi-Cal-ի ապահովագրությունը: Այս ընթացքում Դուք կշարունակեք ստանալ Ձեր դեղատոմսով դեղերը և առողջապահական խնամքը մեր ծրագրի միջոցով, մինչև սկսվի Ձեր նոր ծրագիրը:

- Բժշկական օգնություն ստանալու համար օգտվեք մեր ցանցի մատակարարների ծառայություններից:
- Օգտագործեք մեր ցանցի դեղատները, ներառյալ մեր փոստային ծառայության դեղատնային ծառայությունների միջոցով, որպեսզի լրացնեք Ձեր դեղատոմսերի դեղերը:
- Եթե Դուք հոսպիտալացվեք Blue Shield TotalDual Plan-ի Ձեր անդամակցության ավարտի օրը, մեր ծրագիրը կփոխհատուցի Ձեր հիվանդանոցում մնալը մինչև դուրս գրվելը: Դա տեղի կունենա, նույնիսկ եթե Ձեր նոր առողջական ապահովագրությունը սկսվի նախքան դուրս գրվելը:

E. Այլ իրավիճակներ, երբ ավարտվում է Ձեր անդամակցությունը մեր ծրագրին

Սրանք այն դեպքերն են, երբ մենք պետք է դադարեցնենք Ձեր անդամակցությունը մեր ծրագրին.

- Եթե Ձեր Medicare Part A-ի և Medicare Part B-ի ապահովագրության մեջ դադար կա:
- Եթե Դուք այլևս չեք համապատասխանում Medi-Cal-ի պահանջներին: Մեր ծրագիրը նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր համապատասխանում են և՛ Medicare-ին, և՛ Medi-Cal-ին:
- Medicare-ի շահառուները, ովքեր ընդգրկված են Blue Shield TotalDual ծրագրում, պետք է իրավասու լինեն և՛ Medicare Part A-ի և՛ Part B-ի, նաև Medi-Cal-ի (Medicaid) համար: Եթե Դուք այլևս իրավունակ չեք Medi-Cal (Medicaid) ստանալու համար, մենք Ձեզ կտեղեկացնենք Medi-Cal (Medicaid) կարգավիճակի կորստի մասին և կշարունակենք վճարել Ձեր Medicare նպաստները, մինչև որ կարողանաք վերադարձվել Medi-Cal (Medicaid) համար հատուկ կարիքների կարգավիճակի կորստի մասին ծանուցումից հետո հաջորդող 6 ամսվա ընթացքում: Դուք կարող եք տեսնել Ձեր սեփական ծախսերի ավելացում (համաապահովագրություն, համավճար, հավելավճարներ կամ նվազեցումներ) այն 6 ամիսների ընթացքում, երբ Դուք դեռ ծրագրում եք, բայց չունեք Medi-Cal ծածկույթ:
- Մենք ընդլայնում ենք մեր ոչ HMO D-SNP պլաններից մեկին անցնելու հնարավորությունը: Ոչ HMO D-SNP պլանն առաջարկվում է այն շահառուներին, ովքեր իրավունք ունեն և՛ Medicare Part A-ի, և՛ Medicare Part B-ի, բայց չունեն Medi-Cal (Medicaid) նպաստների իրավունք: Medicare-ը թույլ է տալիս Հատուկ գրանցման ժամանակաշրջան (SEP) Medicare-ի շահառուների համար, ովքեր այլևս իրավասու չեն Medi-Cal (Medicaid) ստանալու համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



- Եթե Դուք չեք վերադարձվել Medi-Cal-ի (Medicaid) կամ ընդունում եք հնարավորություն անցնելու ոչ HMO D-SNP ծրագրին հատուկ կարիքների կարգավիճակի կորստի մասին ծանուցումից հետո 6 ամսվա ընթացքում, Դուք ականա դուրս կգրվեք Blue Shield TotalDual Plan-ից:
- Եթե Դուք տեղափոխվեք մեր սպասարկման տարածքից դուրս:
- Եթե Դուք բացակայեք մեր սպասարկման տարածքից ավելի քան 6 ամիս:
 - Եթե տեղափոխվում եք կամ երկար ճանապարհորդում եք, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ պարզելու, թե արդյոք ուր տեղափոխվում կամ ճանապարհորդում եք մեր ծրագրի սպասարկման տարածքում է:
- Եթե Դուք բանտ գնաք քրեական հանցագործության համար:
- Եթե Դուք ստեք կամ թաքցնեք այլ ապահովագրության մասին տեղեկությունները, որոնք ունեք դեղատոմսով դեղերի համար:
- Եթե Դուք Միացյալ Նահանգների քաղաքացի չեք կամ օրինական կերպով չեք գտնվում Միացյալ Նահանգներում:
 - Մեր ծրագրի անդամ լինելու համար Դուք պետք է լինեք Միացյալ Նահանգների քաղաքացի կամ օրինական կերպով ներկա գտնվեք Միացյալ Նահանգներում:
 - Medicare և Medicaid ծառայությունների կենտրոնները (CMS) տեղեկացնում են մեզ, եթե Դուք իրավունակ չեք այս հիմքով անդամ մնալ:
 - Եթե Դուք չբավարարեք այս պահանջը, մենք պետք է հեռացնենք Ձեզ:

Մենք կարող ենք Ձեզ ստիպել լքել մեր ծրագիրը հետևյալ պատճառներով միայն այն դեպքում, եթե նախ թույլտվություն ստանանք Medicare-ից և Medi-Cal-ից.

- Եթե Դուք միտումնավոր սխալ տեղեկատվություն եք տալիս մեզ, երբ գրանցվում եք մեր ծրագրում, և այդ տեղեկատվությունը ազդում է մեր ծրագրին Ձեր իրավունակության վրա:
- Եթե Դուք շարունակաբար այնպիսի վարքագիծ եք դրսևորում, որը խանգարում է Ձեզ և մեզ համար դժվարացնում է Ձեր և մեր ծրագրի այլ անդամներին բժշկական օգնություն ցուցաբերելը:
- Եթե թույլ եք տալիս մեկ ուրիշին օգտագործել Ձեր Անդամի նույնականացման (ID) քարտը բժշկական օգնություն ստանալու համար: (Medicare-ը կարող է խնդրել Գլխավոր տեսուչին հետաքննել Ձեր գործը, եթե մենք դադարեցնենք Ձեր անդամակցությունն այս պատճառով):



F. Առողջությանն առնչվող ցանկացած պատճառով մեր ծրագիրը լքելուց հրաժարվելու կանոններ

Մենք չենք կարող Ձեզ խնդրել լքել մեր ծրագիրը Ձեր առողջությանն առնչվող որևէ պատճառով: Եթե կարծում եք, որ մենք խնդրում ենք Ձեզ լքել մեր ծրագիրը առողջությանն առնչվող պատճառներով, **զանգահարեք Medicare` 1-800-MEDICARE (1-800-633-4227):** TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով: Կարող եք զանգահարել օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

G. Ձեր իրավունքը՝ բողոք ներկայացնելու, եթե մենք դադարեցնենք Ձեր անդամակցությունը մեր ծրագրին

Եթե մենք դադարեցնենք Ձեր անդամակցությունը մեր ծրագրին, մենք պետք է գրավոր տեղեկացնենք Ձեր անդամակցությունը դադարեցնելու մեր պատճառները: Մենք պետք է նաև բացատրենք, թե ինչպես կարող եք բողոք ներկայացնել կամ բողոքարկել Ձեր անդամակցությունը դադարեցնելու մեր որոշումը: Դուք կարող եք նաև ուսումնասիրել Ձեր *Անդամի տեղեկագրքի* **Գլուխ 9**-ը բողոք ներկայացնելու մասին տեղեկությունների համար:

H. Ինչպե՞ս ավելի շատ տեղեկություններ ստանալ Ձեր ծրագրի անդամակցության դադարեցման մասին

Եթե ունեք հարցեր կամ ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ անդամակցության դադարեցման վերաբերյալ, կարող եք զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժին՝ այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 284



Գլուխ 11. Իրավաբանական ծանոթագրություններ

Ներածություն

Այս գլուխը ներառում է իրավական ծանոթագրություններ, որոնք վերաբերում են մեր ծրագրին Ձեր անդամակցությանը: Հիմնական եզրույթները և դրանց սահմանումները ներկայացված են այբբենական կարգով՝ *Անդամի ձեռնարկի* վերջին գլխում:

Բովանդակություն

A. Օրենքների մասին ծանոթագրություն	286
B. Ծանուցում ոչ խտրականության մասին	286
C. Ծանուցում Medicare-ի՝ որպես երկրորդ վճարողի և Medi-Cal-ի որպես վերջին միջոցի վճարողի մասին	287
D. Ծանուցում Medi-Cal-ի գույքի վերականգնման մասին	288
E. Ապահովագրության ապացույցի կառավարում	288
F. Անդամների համագործակցություն	288
G. Լիազորում	288
H. Գործատուի պատասխանատվությունը	288
I. Կառավարական գործակալության պատասխանատվությունը	289
J. ԱՄՆ Վետերանների գործերի վարչություն	289
K. Աշխատողի փոխհատուցումը կամ գործատուի պատասխանատվության նպաստները	289
L. Գերավճարի վերականգնում	289
M. Երբ երրորդ կողմը Ձեզ վնասվածներ է պատճառում	290
N. Ծանուցում առողջապահական տեղեկատվության փոխանակմանը մասնակցության մասին	291
O. Խարդախության, վատնման և չարաշահման մասին հայտնելը	292

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413

(TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:

285



A. Օրենքների մասին ծանոթագրություն

Շատ օրենքներ են կիրառվում այս Անդամի տեղեկագրքի նկատմամբ: Այս օրենքները կարող են ազդել Ձեր իրավունքների և պարտավորությունների վրա, նույնիսկ եթե օրենքներն *Անդամի տեղեկագրքում* չեն ներառված կամ չեն բացատրված: Գործող հիմնական օրենքները դաշնային և նահանգային օրենքներն են Medicare և Medi-Cal ծրագրերի վերաբերյալ: Այլ դաշնային և նահանգային օրենքներ նույնպես կարող են կիրառվել:

B. Ծանուցում ոչ խտրականության մասին

Մենք Ձեզ խտրականության չենք ենթարկում կամ այլ կերպ չենք վերաբերվում Ձեր ռասայի, էթնիկ պատկանելության, ազգային պատկանելության, մաշկի գույնի, կրոնի, սեռի, գենդերի, տարիքի, սեռական կողմնորոշման, մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության, առողջական վիճակի, պահանջների պատմության, բժշկական պատմության, գենետիկական տեղեկատվության, ապահովագրության հնարավորության ապացույցների կամ աշխարհագրական դիրքի սպասարկման տարածքի հիման վրա: Բացի այդ, մենք ապօրինի խտրականություն չենք դնում, չենք բացառում մարդկանց կամ այլ կերպ չենք վերաբերվում նրանց ծագման, էթնիկ խմբի նույնականացման, գենդերային ինքնության, ամուսնական կարգավիճակի կամ առողջական խնդրի պատճառով:

Եթե ցանկանում եք ավելի շատ տեղեկություններ ստանալ կամ մտահոգություններ ունեք խտրականության կամ անարդար վերաբերմունքի մասին.

- Չանգահարեք Առողջապահության և մարդկային ծառայությունների բաժնի քաղաքացիական իրավունքների գրասենյակ 1-800-368-1019 հեռախոսահամարով: TTY-ից օգտվողները կարող են զանգահարել 1-800-537-7697: Հավելյալ տեղեկությունների համար կարող եք նաև այցելել www.hhs.gov/ocr կայքը:
- Չանգահարեք Առողջապահական խնամքի ծառայությունների բաժին, Քաղաքացիական իրավունքների գրասենյակ 916-440-7370 հեռախոսահամարով: TTY օգտվողները կարող են զանգահարել 711 (Հեռահաղորդակցության հեռարձակման ծառայություն):
- Նամակ ուղարկեք հետևյալ հասցեով՝ CivilRights@dhcs.ca.gov:
- Լրացրեք գանգատի ձևաթուղթ կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեին՝

Deputy Director, Office of Civil Rights
Department of Health Care Services
Office of Civil Rights
P.O. Box 997413, MS 0009
Sacramento, CA 95899-7413
Գանգատների ձևաթղթերը հասանելի են՝ dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 286



Եթե Ձեր բողոքը վերաբերում է Medi-Cal ծրագրի խտրականությանը, կարող եք նաև բողոք ներկայացնել Առողջապահական ծառայությունների վարչություն, Քաղաքացիական իրավունքների գրասենյակ հեռախոսով, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով.

- Հեռախոսով. գանգահարեք 916-440-7370: Եթե չեք կարող լավ խոսել կամ լսել, խնդրում ենք գանգահարել 711 (Հեռահաղորդակցման հեռարձակման ծառայություն):
- Գրավոր՝ լրացրեք գանգատի ձևաթուղթ կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեին

Deputy Director, Office of Civil Rights
Department of Health Care Services
Office of Civil Rights
P.O. Box 997413, MS 0009
Sacramento, CA 95899-7413

Բողոքի ձևաթղթերը հասանելի են

այստեղ՝ www.dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx:

- Էլեկտրոնային միջոցով՝ Նամակ ուղարկեք հետևյալ հասցեով՝ CivilRights@dhcs.ca.gov:

Եթե ունեք հաշմանդամություն և օգնության կարիք ունեք առողջապահական ծառայություններից կամ մատակարարից օգտվելու համար, գանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին: Եթե ունեք որևէ բողոք, ինչպիսին է անվասայլակի մատչելիության խնդիրը, ապա Հաճախորդների սպասարկման բաժինը կարող է օգնել:

C. Ծանուցում Medicare-ի՝ որպես երկրորդ վճարողի և Medi-Cal-ի որպես վերջին միջոցի վճարողի մասին

Երբեմն մեկ ուրիշը պետք է նախ վճարի այն ծառայությունների համար, որոնք մենք տրամադրում ենք Ձեզ: Օրինակ, եթե Դուք ավտովթարի եք ենթարկվել կամ եթե վնասվածք եք ստացել աշխատանքի ժամանակ, ապա ապահովագրությունը կամ աշխատողների փոխհատուցումը պետք է վճարեն առաջինը:

Մենք իրավունք և պատասխանատվություն ունենք հավաքագրելու ապահովագրված Medicare ծառայությունների համար, որոնց համար Medicare-ը առաջին վճարողը չէ:

Մենք հետևում ենք դաշնային և նահանգային օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են անդամներին առողջապահական ծառայությունների դիմաց երրորդ անձանց իրավական պատասխանատվությանը: Մենք ձեռնարկում ենք բոլոր ողջամիտ միջոցները, որպեսզի համոզվենք, որ Medi-Cal-ը վերջին միջոցի վճարողն է:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք գանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 287



D. Ծանուցում Medi-Cal-ի գույքի վերականգնման մասին

Medi-Cal ծրագիրը պետք է փոխհատուցում պահանջի որոշ մահացած անդամների վավերացված գույքից Medi-Cal նպաստների համար, որոնք ստացվել են նրանց 55-ամյակի օրը կամ դրանից հետո: Փոխհատուցումը ներառում է Ծառայության վճար և կառավարվող խնամքի հավելավճարներ/կապիտալ վճարումներ բուժքույրական հաստատության ծառայությունների, տնային և համայնքային ծառայությունների և հարակից հիվանդանոցային և դեղատոմսով դեղերի ծառայությունների համար, որոնք ստացվել են, երբ անդամը ստացիոնար բուժքույրական հաստատությունում էր կամ ստանում էր տնային և համայնքահեն ծառայություններ: Փոխհատուցումը չի կարող գերազանցել անդամի վավերացված գույքի արժեքը:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի գույքի վերականգնման կայք՝ www.dhcs.ca.gov/er կամ զանգահարեք 916-650-0590:

E. Ապահովագրության ապացույցի կառավարում

Մենք կարող ենք ընդունել ողջամիտ քաղաքականություն, ընթացակարգեր և մեկնաբանություններ՝ խթանելու այս *Ապահովագրության ապացույցի* կանոնավոր և արդյունավետ կառավարումը:

F. Անդամների համագործակցություն

Դուք պետք է լրացնեք ցանկացած դիմում, ձևաթուղթ, հայտարարություններ, հրապարակումներ, թույլտվություններ, գրավադրման ձևեր և ցանկացած այլ փաստաթուղթ, որոնք մենք պահանջում ենք գործունեության բնականոն ընթացքի ժամանակ կամ ինչպես նշված է այս *Ապահովագրության ապացույցում*:

G. Լիազորում

Դուք չեք կարող տրամադրել այս *Ապահովագրության ապացույցը* կամ որևէ իրավունք, շահ, պահանջ գումարի դիմաց, նպաստներ կամ պարտավորություններ սույնով առանց մեր նախնական գրավոր համաձայնության:

H. Գործատուի պատասխանատվությունը

Ցանկացած ծառայության համար, որը օրենքը պահանջում է գործատուից մատուցել, մենք չենք վճարի գործատուին, իսկ երբ մենք ապահովագրում ենք որևէ այդպիսի ծառայություն, մենք կարող ենք փոխհատուցել ծառայությունների արժեքը գործատուից:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 888



I. Կառավարական գործակալության պատասխանատվությունը

Ցանկացած ծառայության համար, որն օրենքը պահանջում է, որ մատուցվի միայն կամ ստացվի միայն պետական գործակալությունից, մենք չենք վճարի պետական գործակալությանը, իսկ երբ մենք ապահովագրում ենք որևէ այդպիսի ծառայություն, մենք կարող ենք փոխհատուցել ծառայությունների արժեքը պետական գործակալությունից:

J. ԱՄՆ Վետերանների գործերի վարչություն

Պայմանների ցանկացած ծառայությունների համար, որոնք օրենքը պահանջում է Վետերանների գործերի վարչությունից տրամադրել, մենք չենք վճարի Վետերանների գործերի վարչությանը, և երբ մենք ապահովագրում ենք որևէ այդպիսի ծառայություն, մենք կարող ենք փոխհատուցել ծառայությունների արժեքը Վետերանների գործերի վարչությունից:

K. Աշխատողի փոխհատուցումը կամ գործատուի պատասխանատվության նպաստները

Դուք կարող եք իրավունակ լինել վճարումների կամ այլ արտոնությունների համար՝ համաձայն աշխատողների փոխհատուցման կամ գործատուի պատասխանատվության օրենքի: Մենք կտրամադրենք ապահովագրված Part D-ի դեղերը, նույնիսկ եթե պարզ չէ, թե արդյոք Դուք իրավունք ունեք նպաստների, բայց մենք կարող ենք վերականգնել ցանկացած Ապահովագրված ծառայությունների արժեքը հետևյալ աղբյուրներից.

1. Նպաստներ տրամադրող ցանկացած աղբյուրից կամ ումից պետք է վճարվի նպաստը:

2. Ձեզնից՝ այնքանով, որքանով նպաստը տրամադրվում է կամ վճարվում է կամ կպահանջվեր տրամադրվել կամ վճարվեր, եթե Դուք ջանասիրաբար ձգտել եք հաստատել նպաստների Ձեր իրավունքները՝ համաձայն աշխատողների փոխհատուցման կամ գործատուի պատասխանատվության օրենքի:

L. Գերավճարի վերականգնում

Մենք կարող ենք փոխհատուցել ցանկացած գերավճար, որը մենք կատարում ենք ծառայությունների համար ցանկացած անձից, ով ստանում է այդպիսի գերավճար կամ որևէ անձից կամ կազմակերպությունից, որը պարտավոր է վճարել ծառայությունների համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



M. Երբ երրորդ կողմը Ձեզ վնասվածքներ է պատճառում

Եթե Դուք վնասվել եք կամ հիվանդացել եք այլ անձի («երրորդ կողմի») գործողության կամ անգործության պատճառով, Blue Shield-ը պետք է հաշվի առնի դրա արդյունքում պահանջվող ծառայությունները. տրամադրի Ծրագրի նպաստները և ունենա փոխհատուցման կամ այլ հասանելի միջոց վերադարձնելու Blue Shield-ի Ձեզ տրամադրված Ծառայությունների համար վճարված գումարները ցանկացած վերականգնումից (սահմանված է ստորև), որը ստացվել է Ձեր կողմից կամ Ձեր անունից, կամ երրորդ կողմի անունից, որը պատասխանատու է վնասվածքի կամ հիվանդության կամ չապահովագրված/թերապահովագրված ավտովարորդների ապահովագրական ծածկույթի համար:

Վերականգնման, փոխհատուցման կամ այլ հասանելի միջոցի այս իրավունքը հակասում է ցանկացած վերականգնմանը, որը Դուք ստանում եք վնասվածքի կամ հիվանդության հետևանքով, ներառյալ ցանկացած գումար, որը տրվել կամ ստացվել է դատարանի վճռով, արբիտրաժային վճռով, կարգավորման կամ որևէ այլ պայմանավորվածությամբ, ցանկացած երրորդ անձից կամ երրորդ կողմը ապահովագրողից, կամ չապահովագրված կամ թերապահովագրված ավտովարորդների ապահովագրությունից՝ կապված հիվանդության կամ վնասվածքի հետ («Վերականգնում»), առանց հաշվի առնելու, թե արդյոք Դուք «ապաքինվել եք» Վերականգնման միջոցով: Իրավունքների վերականգնման, փոխհատուցման կամ այլ հասանելի միջոցների իրավունքը վերաբերում է ընդհանուր Վերականգնման այն մասին, որը վճարվում է նման վնասվածքի կամ հիվանդության հետ կապված վճարվող Նպաստների համար, որոնք հաշվարկվում են Կալիֆորնիայի Քաղաքացիական օրենսգրքի 3040 բաժնի համաձայն:

Ձեզնից պահանջվում է.

1. Գրավոր տեղեկացնել Blue Shield-ին ցանկացած փաստացի կամ հնարավոր պահանջի կամ իրավական հայցի մասին, որը Դուք ակնկալում եք ներկայացնել կամ հարուցել երրորդ կողմի դեմ, որը բխում է վնասվածք կամ հիվանդություն առաջացնող ենթադրյալ գործողություններից կամ բացթողումներից, հայց ներկայացնելուց կամ երրորդ կողմի դեմ դատական գործողություններ կատարելուց ոչ ուշ, քան 30 օր հետո և,
2. Համաձայնել լիովին համագործակցել և տրամադրել ցանկացած ձևաթուղթ կամ փաստաթուղթ, որն անհրաժեշտ է այս իրավունքը վերականգնելու, փոխհատուցելու կամ այլ հասանելի վերականգնման միջոցների համար և,
3. Գրավոր համաձայնել Blue Shield-ին փոխհատուցել Blue Shield-ի կողմից վճարված նպաստները ցանկացած Վերականգնումից, երբ Վերականգնումը ձեռք է բերվել երրորդ կողմից կամ երրորդ կողմի ապահովագրողի անունից, կամ չապահովագրված կամ թերապահովագրված ավտովարորդների ծածկույթից և,
4. Տրամադրել գրավ, որը հաշվարկված է Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսգրքի 3040 բաժնի համաձայն: Գրավը կարող է ներկայացվել երրորդ կողմին, երրորդ կողմի գործակալին կամ փաստաբանին կամ դատարանին, եթե այլ բան արգելված չէ օրենքով և,

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:



5. Պարբերաբար պատասխանել երրորդ կողմի դեմ պահանջի վերաբերյալ տեղեկատվության հարցումներին և գրավոր տեղեկացնել Blue Shield-ին ցանկացած Վերականգնում ստանալուց հետո տասը (10) օրվա ընթացքում:

Ձեր կողմից վերոնշյալ 1-ից մինչև 5-ը չկատարելը որևէ կերպ չպետք է գործի որպես Blue Shield-ի իրավունքների հրաժարում, ազատում կամ զիջում:

N. Ծանուցում առողջապահական տեղեկատվության փոխանակմանը մասնակցության մասին

Blue Shield-ը մասնակցում է Manifest MedEx Health Information Exchange-ին («HIE»)՝ իր անդամների առողջության մասին տեղեկությունները հասանելի դարձնելով Manifest MedEx-ին՝ նրանց լիազորված առողջապահական ծառայություններ մատուցողների համար: Manifest MedEx-ը անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը պահպանում է հիվանդների էլեկտրոնային գրառումների տվյալների բազա, որը ներառում է բժիշկների, առողջապահական հաստատությունների, առողջապահական ծառայությունների ծրագրերի և առողջապահական ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրված առողջապահական տեղեկությունները: Լիազորված առողջապահական ծառայություններ մատուցողները (ներառյալ բժիշկները, բուժքույրերը և հիվանդանոցները) կարող են ապահով կերպով մուտք գործել իրենց հիվանդների առողջության մասին տեղեկատվություն Manifest MedEx HIE-ի միջոցով՝ աջակցելու անվտանգ, բարձրորակ խնամքի տրամադրմանը:

Manifest MedEx-ը հարգում է Անդամների գաղտնիության իրավունքը և հետևում է գաղտնիության պահպանման գործող նահանգային և դաշնային օրենքներին: Manifest MedEx-ն օգտագործում է առաջադեմ անվտանգության համակարգեր և տվյալների գաղտնագրման ժամանակակից տեխնիկա՝ Անդամների գաղտնիությունը և նրանց անձնական տեղեկատվության անվտանգությունը պաշտպանելու համար:

Blue Shield-ի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի հրահանգելու Manifest MedEx-ին չփոխանցել իր առողջական տեղեկությունները իրենց առողջապահական ծառայություններ մատուցողներին: Չնայած Manifest MedEx-ից հրաժարվելը կարող է սահմանափակել Ձեր առողջապահական խնամքի մատակարարի հնարավորությունը՝ արագորեն մուտք գործելու Ձեր մասին կարևոր առողջապահական տեղեկատվություն, անդամի առողջության ապահովագրության կամ առողջապահական ծրագրի նպաստների ծածկույթը չի ազդի Manifest MedEx-ից հրաժարվելու ընտրության վրա: Manifest MedEx-ին մասնակցող ոչ մի բժիշկ կամ հիվանդանոց չի մերժի բժշկական օգնությունը այն հիվանդին, ով կընտրի չմասնակցել Manifest MedEx HIE-ին:

Անդամներն, ովքեր չեն ցանկանում ցուցադրել իրենց առողջապահական տեղեկությունները Manifest MedEx-ում, պետք է լրացնեն առցանց ձևաթուղթը <https://www.manifestmedex.org/opt-out> հասցեով կամ զանգահարեն Manifest MedEx (888) 510-7142, 7:00-ից մինչև 19:00, PST ժամանակով, երկուշաբթիից ուրբաթ: (TTY՝ 711) լսողության դժվարություն ունեցողների համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 891



O. Խարդախության, վատնման և չարաշահման մասին հայտները

Ի՞նչ է խարդախությունը, վատնումը և չարաշահումը (FWA):

- **Խարդախությունը** դիտավորյալ խեղաթյուրում է, որը կարող է հանգեցնել առողջապահական ծրագրի չթույլատրված ծախսերի:
- **Վատնումը** առողջապահական միջոցների կամ ռեսուրսների ոչ պատշաճ օգտագործումն է՝ առանց դրա համար արդարացված անհրաժեշտության:
- **Չարաշահումը** պրակտիկա է, որը անհամատեղելի է առողջ բժշկական կամ բիզնես գործելակերպին, որը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնել առողջապահական ծրագրի անհարկի ծախսերի:

Պաշտպանք ինքներդ Ձեզ և Ձեր նպաստները

- Երբեք մի՛ տրամադրեք Ձեր Սոցիալական ապահովության, Medicare-ի կամ առողջապահական ծրագրի համարները կամ բանկային տեղեկությունները որևէ մեկին, ում չեք ճանաչում:
- Մի՛ համաձայնվեք որևէ լաբորատոր թեստերի անցկացմանն՝ առանց Ձեր բժշկի հանձնարարականի:
- Բժշկական ծառայությունների դիմաց որևէ արժեքավոր բան ընդունելն անօրինական է:

Տեղյակ եղեք գենետիկական թեստավորման խարդախության մասին

Խաբեքները մոտենում են տեղական առողջապահական տոնավաճառների, տարեցների բնակարանային հաստատությունների, համայնքային կենտրոնների, տնային առողջապահական գործակալությունների և այլ վստահելի վայրերի չկասկածող գրանցվածներին՝ գենետիկական թեստավորման խարդախություններ իրականացնելու համար: Նրանք կեղծ խոստումներ են տալիս, որ Medicare-ը կվճարի թեստի համար, և Դուք պարզապես պետք է տրամադրեք այտերի նմուշառում, Ձեր նույնականացման համարը (ID) և Medicare-ի տվյալները՝ Ձեր թեստի արդյունքները ստանալու համար:

Ցավոք, այդ դեպքում այս խաբեքներն ունեն Ձեր առողջապահական ծրագիրը կամ Medicare համարը, և նրանք կարող են Medicare-ին հազարավոր դոլարների հաշիվ ներկայացնել թեստերի կամ նույնիսկ ծառայությունների համար, որոնք Դուք երբեք չեք ստանում: Նրանք նաև կստանան Ձեր անձնական գենետիկական տվյալները:

Կասկածելի խարդախության, վատնման և չարաշահման մասին հայտները համար դիմեք

• **Blue Shield of California’s Medicare խարդախության թեժ գիծ՝ (855) 331-4894 (TTY՝ 711) հեռախոսահամարով** կամ էլ.փոստով՝ MedicareStopFraud@blueshieldca.com:

• **Medicare 1-800 MEDICARE (1-800-633-4227)**, օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր (TTY օգտվողները պետք է զանգահարեն 1-877- 486-2048):

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



Գլուխ 12. Կարևոր բառերի սահմանումներ

Ներածություն

Այս գլուխը ներառում է հիմնական տերմինները, որոնք օգտագործվում են Ձեր *Անդամի տեղեկագրքում* իրենց սահմանումներով: Տերմինները թվարկված են այբբենական կարգով: Եթե չեք գտնում Ձեր փնտրած տերմինը, կամ եթե Ձեզ անհրաժեշտ է ավելի շատ տեղեկատվություն, քան սահմանումը ներառում է, դիմեք Հաճախորդների սպասարկման բաժնի:



Առօրյա գործունեություն (ADL). այն, ինչ մարդիկ անում են սովորական օրվա ընթացքում, օրինակ՝ ուտելը, զուգարանից օգտվելը, հագնվելը, լողանալը կամ ատամները խոզանակելը:

Վարչական իրավունքի դատավոր. դատավոր, որը քննում է 3-րդ մակարդակի բողոքարկումը:

ՁԻԱՀ-ի դեմ Դեղերի աջակցության ծրագիր (ADAP). ծրագիր, որն օգնում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող իրավասու անձանց օգտվել ՄԻԱՎ-ի կյանք փրկող դեղամիջոցներից:

Ամբուլատոր վիրաբուժական կենտրոն. հաստատություն, որը տրամադրում է ամբուլատոր վիրահատություն այն հիվանդներին, ովքեր հիվանդանոցային խնամքի կարիք չունեն և որոնցից 24 ժամից ավելի խնամքի կարիք չի ակնկալվում:

Բողոքարկում. միջոց, որով կարող եք վիճարկել մեր գործողությունները, եթե կարծում եք, որ մենք սխալ ենք թույլ տվել: Դուք կարող եք խնդրել մեզ փոխել ապահովագրական որոշումը բողոք ներկայացնելով: Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 9-ում* բացատրվում են բողոքարկումները, ներառյալ ինչպես բողոքարկել:

Վարքագծային առողջություն. ընդհանրական տերմին, որը վերաբերում է հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման խանգարման ծառայություններին:

Ապրանքանիշով դեղ. դեղատոմսով դուրս գրվող դեղամիջոց, որը պատրաստվում և վաճառվում է այն ընկերության կողմից, որն ի սկզբանե պատրաստել է դեղը: Ապրանքանիշով դեղամիջոցներն ունեն նույն բաղադրիչները, ինչ դեղերի ջեներիկ տարբերակները: Ջեներիկ դեղերը սովորաբար պատրաստվում և վաճառվում են այլ դեղագործական ընկերությունների կողմից:

Խնամքի համակարգող. մեկ հիմնական մարդ, ով աշխատում է Ձեզ հետ, առողջապահական ծրագրի և Ձեր խնամքի մատակարարների հետ՝ համոզվելու, որ Դուք ստանում եք Ձեզ անհրաժեշտ խնամքը:

Խնամքի ծրագիր. տե՛ս «Անհատական խնամքի պլան»:

Խնամքի ծրագրի ընտրանքային ծառայություններ (CPO ծառայություններ). լրացուցիչ ծառայություններ, որոնք ընտրովի են Ձեր Անհատական խնամքի ծրագրի (ICP) շրջանակներում: Այս ծառայությունները նախատեսված չեն փոխարինելու երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունները, որոնք Դուք լիազորված եք ստանալ Medi-Cal-ի շրջանակներում:

Խնամքի թիմ. տե՛ս «Բազմամասնագիտական խնամքի թիմը»:

«Ապահովագրության խիստ հրատապ փուլ». Medicare Part D-ի դեղերի նպաստի փուլը, որտեղ մեր ծրագիրը վճարում է Ձեր դեղերի բոլոր ծախսերը մինչև տարեվերջ: Դուք սկսում եք այս փուլը, երբ Դուք (կամ Ձեր անունից այլ լիազորված անձինք) տարվա ընթացքում ծախսել եք \$8,000 Part D-ի ապահովագրված դեղերի համար: Դուք ոչինչ չեք վճարում:

Medicare և Medicaid ծառայությունների կենտրոնները (CMS). Medicare-ի համար պատասխանատու դաշնային գործակալությունը: Ձեր *Անդամի տեղեկագրքի 2-րդ գլուխը* բացատրում է, թե ինչպես կապվել CMS-ի հետ:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 294



Չափահասների համայնքահեն ծառայությունների (CBAS). ամբուլատոր, հաստատության վրա հիմնված սպասարկման ծրագիր, որը տրամադրում է մասնագիտացված բուժքույրական խնամք, սոցիալական ծառայություններ, մասնագիտական և լոգոպեդներ, անձնական խնամք, ընտանիքի/խնամակալների ուսուցում և աջակցություն, սննդի ծառայություններ, տրանսպորտ և այլ ծառայություններ համապատասխան անդամներին, ովքեր համապատասխանում են իրավունակության համապատասխան չափանիշներին:

Գանգատ. գրավոր կամ բանավոր հայտարարություն, որում ասվում է, որ Դուք խնդիր կամ մտահոգություն ունեք ձեր ապահովագրված ծառայությունների կամ խնամքի վերաբերյալ: Սա ներառում է ցանկացած մտահոգություն ծառայության որակի, Ձեր խնամքի որակի, մեր ցանցի մատակարարների կամ մեր ցանցային դեղատների վերաբերյալ: «Գանգատ ներկայացնելու» պաշտոնական տերմինը «բողոք ներկայացնելն է»:

Համապարփակ ամբուլատոր վերականգնողական հաստատություն (CORF). հաստատություն, որը հիմնականում տրամադրում է վերականգնողական ծառայություններ հիվանդությունից, դժբախտ պատահարից կամ ծանր վիրահատությունից հետո: Այն տրամադրում է մի շարք ծառայություններ, այդ թվում՝ ֆիզիկական թերապիա, սոցիալական կամ հոգեբանական ծառայություններ, շնչառական թերապիա, աշխատանքային թերապիա, խոսքի թերապիա և տնային միջավայրի գնահատման ծառայություններ:

Համավճար. հաստատագրված գումար, որը Դուք վճարում եք որպես ծախսերի Ձեր բաժինն ամեն անգամ, երբ ստանում եք որոշակի ծառայություններ կամ դեղատոմսով դեղեր: Օրինակ, Դուք կարող եք վճարել \$2 կամ \$5 ծառայության կամ դեղատոմսով դեղերի համար:

Ծախսերի բաշխում. գումարներ, որոնք Դուք պետք է վճարեք որոշ ծառայություններ կամ դեղատոմսով դեղեր ստանալու դեպքում: Ծախսերի բաշխումը ներառում է համավճարը:

Ծախսերի բաշխման խումբ. դեղերի խումբ միևնույն համավճարով: Յուրաքանչյուր դեղամիջոց *Ապահովագրված դեղերի ցանկում* (հայտնի է նաև որպես Դեղերի ցանկ) գտնվում է հինգ ծախսերի բաշխման մակարդակներից մեկում: Ընդհանրապես, որքան բարձր է ծախսերի բաշխման մակարդակը, այնքան ավելի բարձր է Ձեր դեղի արժեքը:

Ապահովագրության որոշում. որոշում այն մասին, թե ինչ նպաստներ ենք մենք ծածկում: Սա ներառում է ապահովագրված դեղերի և ծառայությունների վերաբերյալ որոշումներ կամ այն գումարը, որը մենք վճարում ենք Ձեր առողջապահական ծառայությունների համար: Ձեր *Անդամի տեղեկագրքի 9-րդ գլուխը* բացատրում է, թե ինչպես մեզնից ապահովագրության որոշում խնդրել:

Ապահովագրված դեղեր. այն տերմինը, որը մենք օգտագործում ենք, նշանակում է բոլոր դեղատոմսերով և առանց դեղատոմսի (OTC) դեղերը, որոնք ապահովագրված են մեր ծրագրի կողմից:

Չապահովագրված ծառայություններ. ընդհանուր տերմինը, որը մենք օգտագործում ենք, նշանակում է ողջ առողջապահական խնամքը, երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը, պարագաները, դեղատոմսով դուրս գրվող և առանց դեղատոմսի դեղերը, սարքավորումները և այլ ծառայություններ, որոնք ընդգրկում են մեր ծրագիրը:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 295



Մշակութային իրավասությունների ուսուցում. դասընթաց, որը լրացուցիչ հրահանգում է տրամադրում մեր առողջապահական ծառայություններ մատուցողներին, որոնք օգնում են նրանց ավելի լավ հասկանալ ձեր ծագումը, արժեքները և համոզմունքները՝ ծառայությունները հարմարեցնելու Ձեր սոցիալական, մշակութային և լեզվական կարիքներին:

Հաճախորդների սպասարկում. մեր ծրագրի բաժինը, որը պատասխանատու է անդամակցության, նպաստների, բողոքների և բողոքարկումների վերաբերյալ Ձեր հարցերին պատասխանելու համար: Ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 2-ը* Հաճախորդների սպասարկման մասին լրացուցիչ տեղեկությունների համար:

Ծախսերի բաշխման օրական դրույքաչափը. դրույքաչափը, որը կարող է կիրառվել, երբ Ձեր բժիշկը Ձեզ համար նշանակի որոշակի դեղերի մեկ ամսից պակաս պաշար, և Ձեզնից պահանջվում է վճարել համավճար: Ծախսերի բաշխման օրական դրույքաչափը համավճարն է՝ բաժանված ամսվա մատակարարման օրերի քանակի վրա:

Ահա մի օրինակ. ենթադրենք, Ձեր դեղի համավճարը մեկ ամսվա պաշարի համար (30 օրվա պաշար) կազմում է \$1.35: Սա նշանակում է, որ Ձեր դեղի համար վճարվող գումարը օրական \$0,05-ից պակաս է: Եթե Դուք ստանում եք դեղի 7-օրյա պաշար, Ձեր վճարումը օրական \$0,05-ից պակաս է՝ բազմապատկած 7 օրով, 0,35 ԱՄՆ դոլարից պակաս ընդհանուր վճարման դեպքում:

Առողջական խնամքի սպասարկման բաժին (DHCS). Կալիֆորնիայի նահանգային վարչություն, որը ղեկավարում է Medicaid ծրագիրը (հայտնի է որպես Medi-Cal):

Կառավարվող առողջական խնամքի բաժին (DMHC). Կալիֆորնիայի նահանգային վարչությունը, որը պատասխանատու է առողջապահական ծրագրերի կարգավորման համար: DMHC-ն օգնում է մարդկանց Medi-Cal ծառայությունների վերաբերյալ բողոքների հարցում: DMHC-ն նաև իրականացնում է Անկախ բժշկական վերանայումներ (IMR):

Ապանդամագրում. մեր ծրագրին Ձեր անդամակցության դադարեցման գործընթացը: Ապանդամակցությունը կարող է լինել կամավոր (Ձեր ընտրությամբ) կամ ոչ կամավոր (ոչ Ձեր ընտրությամբ):

Դեղերի կառավարման ծրագիր (DMP). ծրագիր, որն օգնում է համոզվել, որ անդամներն ապահով կերպով օգտագործում են դեղատոմսով տրվող օփիոիդներ և հաճախակի չարաշահվող այլ դեղամիջոցներ:

Դեղերի խմբեր. դեղերի խմբերը մեր Դեղերի ցանկում: Ձեներիկ, ապրանքանիշով կամ առանց դեղատոմսի (OTC) դեղերը դեղերի խմբերի օրինակներ են: Դեղերի ցանկի յուրաքանչյուր դեղամիջոց գտնվում է հինգ խմբերից մեկում:

Երկակի իրավասության հատուկ խնամքի ծրագիր (D-SNP). առողջապահական ծրագիր, որը սպասարկում է այն անհատներին, ովքեր իրավասու են և՛ Medicare-ի, և՛ Medicaid-ի համար: Մեր ծրագիրը D-SNP է:



Տեսական օգտագործման բժշկական սարքեր (DME). որոշ ապրանքներ, որոնք Ձեր բժիշկը նշանակում է Ձեր սեփական տանը օգտագործելու համար: Այսպիսի ապրանքներ են հաշմանդամի սայլակները, հենակները, էլեկտրական ներքնակների համակարգեր, դիաբետիկ պարագաներ, մատակարարի կողմից պատվիրված հիվանդանոցային մահճակալներ տանը օգտագործելու համար, ներերակային (IV) ներարկման պոմպեր, խոսք առաջացնող սարքեր, թթվածնի սարքավորումներ և պարագաներ, հեղուկացրիչներ և քայլակներ:

Շտապ օգնություն. բժշկական շտապ օգնություն, երբ Դուք կամ որևէ այլ անձ, որը միջին գիտելիքներ ունի առողջության և բժշկության մասին, կարծում էք, որ ունեք բժշկական ախտանիշներ, որոնք անհապաղ բժշկական ուշադրության կարիք ունեն՝ կանխելու մահը, մարմնի մի մասի կորուստը կամ կորուստը կամ մարմնի ֆունկցիայի լուրջ խանգարում (և եթե հղի եք, ապա չծնված երեխայի կորուստ): Բժշկական ախտանշանները կարող են լինել հիվանդություն, վնասվածք, սուր ցավ կամ բժշկական վիճակ, որն արագորեն վատանում է:

Շտապ օգնություն. ապահովագրված ծառայություններ, որոնք տրամադրվում են մատակարարի կողմից, որը վերապատրաստվել է շտապ օգնության ծառայություններ մատուցելու համար և անհրաժեշտ է բժշկական կամ վարքագծային առողջության արտակարգ իրավիճակների բուժման համար:

Բացառություն. դեղամիջոցի համար, որը սովորաբար ապահովագրված չէ, կամ դեղն առանց որոշակի կանոնների և սահմանափակումների օգտագործելու թույլտվություն:

Բացառված ծառայություններ. ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում այս առողջապահական ծրագրով:

Լրացուցիչ օգնություն. Medicare-ի ծրագիր, որն օգնում է սահմանափակ եկամուտներ և ռեսուրսներ ունեցող մարդկանց նվազեցնել Medicare մաս D դեղատոմսով դեղերի ծախսերը, ինչպիսիք են հավելավճարները, նվազեցումները և համավճարները: Լրացուցիչ օգնությունը կոչվում է նաև «Ցածր եկամուտների սուբսիդիա» կամ «LIS»:

Ջեներիկ դեղեր. դեղատոմսով տրվող դեղ, որը հաստատված է դաշնային կառավարության կողմից, որն օգտագործվում է ապրանքանիշային դեղի փոխարեն: Ջեներիկ դեղն ունի նույն բաղադրիչները, ինչ ապրանքանիշային դեղը: Այն սովորաբար ավելի էժան է և աշխատում է նույնքան լավ, որքան ապրանքանիշային դեղը:

Բողոք. բողոք, որը Դուք ներկայացնում եք մեր կամ մեր ցանցի մատակարարներից կամ դեղատներից մեկի վերաբերյալ: Սա ներառում է բողոք Ձեր խնամքի որակի կամ ձեր առողջապահական ծրագրի կողմից մատուցվող ծառայության որակի վերաբերյալ:

Առողջության ապահովագրության խորհրդատվություն և շահերի պաշտպանության ծրագիր (Health Insurance Counseling and Advocacy, HICAP). ծրագիր, որն անվճար և օբյեկտիվ տեղեկատվություն և խորհրդատվություն է տրամադրում Medicare-ի մասին: Ձեր *Անդամի տեղեկագրի 2-րդ գլուխը* բացատրում է, թե ինչպես կապվել HICAP-ի հետ:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 297



Առողջապահական ծրագիր. կազմակերպություն, որը բաղկացած է բժիշկներից, հիվանդանոցներից, դեղատներից, երկարաժամկետ ծառայություններ մատուցողներից և այլ մատակարարներից: Այն նաև ունի խնամքի համակարգողներ, որոնք կօգնեն Ձեզ կառավարել ձեր բոլոր մատակարարներն ու ծառայությունները: Նրանք բոլորն աշխատում են միասին՝ ապահովելու Ձեզ անհրաժեշտ խնամքը:

Առողջության ռիսկերի գնահատում (HRA). Ձեր բժշկական պատմության և ընթացիկ վիճակի վերանայում: Այն օգտագործվում է իմանալու Ձեր առողջության մասին և ինչպես այն կարող է փոխվել ապագայում:

Տնային առողջապահության օգնականներ. անձը, ով մատուցում է այնպիսի ծառայություններ, որոնք կարիք չունեն լիցենզավորված բուժքրոջ կամ թերապևտի հմտությունների, ինչպես օրինակ՝ անձնական խնամքի հետ կապված օգնությունը (օրինակ՝ լողանալը, գուգարանից օգտվելը, հագնվելը կամ նշանակված վարժությունների կատարումը): Տնային բուժաշխատողները չունեն բուժքույրական լիցենզիա կամ թերապիա չեն տրամադրում:

Անբուժելի հիվանդությունների խնամք. խնամքի և աջակցության ծրագիր՝ օգնելու այն մարդկանց, ովքեր անբուժելի հիվանդության ախտորոշում ունեն, հարմարավետ ապրել: Անբուժելի հիվանդության ախտորոշում նշանակում է, որ անձը բժշկական էպիկրիզ է ստացել որպես անբուժելի հիվանդ, ինչը նշանակում է կյանքի սպասվող տևողությունը 6 ամիս կամ ավելի քիչ է:

- Ընդունված անդամն, ով ունի անբուժելի հիվանդության ախտորոշում, իրավունք ունի ընտրելու հոսփիս:
- Մասնագետների և խնամողների հատուկ պատրաստված թիմն ամբողջությամբ հոգ է տանում անձի համար՝ ներառյալ ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր կարիքները:
- Մեզնից պահանջվում է Ձեզ տրամադրել Ձեր աշխարհագրական տարածքում գտնվող հոսփիս ծառայություններ մատակարարողների ցուցակը:

Անպատշաճ/ անտեղի հաշիվ. իրավիճակ, երբ մատակարարը (օրինակ՝ բժիշկը կամ հիվանդանոցը) Ձեզ ավելի շատ հաշիվ է վճարում, քան ծառայությունների համար ծախսերի բաշխման մեր գումարը: Չանգահարեք Հաճախորդների սպասարկման ծառայություն, եթե Դուք անհասկանալի հաշիվներ եք ստանում:

Որպես ծրագրի անդամ՝ Դուք վճարում եք մեր ծրագրի ծախսերի բաշխման գումարները միայն այն դեպքում, երբ ստանաք մեր կողմից ապահովագրված ծառայությունները: Մենք թույլ չենք տալիս մատակարարներին այս գումարից ավելին հաշիվ ներկայացնել Ձեզ:



Տնային աջակցության ծառայություններ (In Home Support Services, IHSS).

IHSS ծրագիրը կօգնի վճարել Ձեզ մատուցվող ծառայությունների համար, որպեսզի Դուք կարողանաք ապահով լինել Ձեր իսկ տանը: IHSS-ը տնից դուրս խնամքի այլընտրանք է, ինչպիսիք են ծերանոցները կամ գիշերօթիկ և խնամքի հաստատությունները:

Ծառայությունների տեսակները, որոնք կարող են լիազորվել IHSS-ի միջոցով հետևյալն են՝ տան մաքրում, ճաշի պատրաստում, լվացք, մթերային գնումներ, անձնական խնամքի ծառայություններ (օրինակ՝ աղիների և միզապարկի խնամք, լոզանք, հարդարանք և պարաբժշկական ծառայություններ), բժշկական այցերի ուղեկցում և պաշտպանական հսկողություն մտավոր խնդիրներ ունեցողների համար: Վարչաշրջանի սոցիալական ծառայության գործակալությունները ղեկավարում են IHSS-ը:

Անկախ բժշկական վերանայում (IMR). Եթե մենք մերժենք բժշկական ծառայությունների կամ բուժման Ձեր խնդրանքը, Դուք կարող եք բողոքարկել: Եթե Դուք համաձայն չեք մեր որոշման հետ, և Ձեր խնդիրը վերաբերում է Medi-Cal ծառայությանը, ներառյալ DME-ի պարագաներն ու դեղերը, կարող եք IMR խնդրել Կալիֆոռնիայի Կառավարվող առողջապահության բաժանմունքից: IMR-ն Ձեր գործի վերանայումն է բժիշկների կողմից, ովքեր մեր ծրագրի մաս չեն կազմում: Եթե IMR-ի որոշումը Ձեր օգտին է, մենք պետք է Ձեզ տրամադրենք Ձեր պահանջած ծառայությունը կամ բուժումը: IMR-ն անվճար է Ձեզ համար:

Անկախ վերանայման կազմակերպություն (IRO). Medicare-ի կողմից վարձված անկախ կազմակերպություն, որը վերանայում է 2-րդ մակարդակի բողոքարկումը: Այն մեզ հետ կապված չէ և պետական գերատեսչություն չէ: Այս կազմակերպությունն է որոշում՝ արդյոք մեր կայացրած որոշումը ճիշտ է, թե այն պետք է փոխվի: Medicare-ը վերահսկում է դրա աշխատանքը:

Պաշտոնական անվանումն է՝ **Անկախ վերանայման կազմակերպություն:**

Անհատական խնամքի ծրագիր (ICP կամ Խնամքի ծրագիր). Ծրագիր, թե ինչ ծառայություններ կստանաք և ինչպես դրանք կստանաք: Ձեր ծրագիրը կարող է ներառել բժշկական ծառայություններ, վարքագծային առողջության ծառայություններ և երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն:

Ապահովագրության սկզբնական փուլ. այն փուլը, երբ Ձեր Medicare Part D-ի դեղերի ընդհանուր ծախսերը կհասնեն \$5,030: Սա ներառում է Ձեր վճարած գումարները, այն, ինչ վճարել է մեր ծրագիրը Ձեր անունից, և ցածր եկամուտ ունեցող սուբսիդիան: Դուք սկսում եք այս փուլում, երբ լրացնում եք տարվա Ձեր առաջին դեղատոմսը: Այս փուլում մենք վճարում ենք Ձեր դեղերի ծախսերի մի մասը, իսկ Դուք վճարում եք Ձեր բաժինը:

Ստացիոնար. տերմին, որն օգտագործվում է, երբ Դուք պաշտոնապես ընդունվում եք հիվանդանոց մասնագիտացված բժշկական ծառայություններ ստանալու համար: Եթե Դուք պաշտոնապես ընդունված չեք, Դուք դեռ կարող եք համարվել ամբուլատոր հիվանդ ստացիոնարի փոխարեն, նույնիսկ եթե գիշերում եք հիվանդանոցում:

Բազմամասնագիտական խնամքի խումբ (ICT կամ Խնամքի թիմ). խնամքի թիմը կարող է ներառել բժիշկներ, բուժքույրեր, խորհրդատուներ կամ առողջապահական այլ մասնագետներ, ովքեր այնտեղ են՝ օգնելու Ձեզ ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքը: Ձեր խնամքի թիմը նաև օգնում է Ձեզ խնամքի ծրագիր կազմել:

Ապահովագրված դեղերի ցանկ (Դեղերի ցանկ). դեղատոմսով և առանց դեղատոմսի (OTC) դեղերի ցանկ, որոնք մենք ապահովագրում ենք: Մենք ընտրում ենք այս ցանկի դեղերը բժիշկների և դեղագործների օգնությամբ: Դեղերի ցանկը Ձեզ տեղեկացում, որ կամ կանոններ, որոնց Դուք պետք է հետևեք, թե ոչ՝ Ձեր դեղերը ստանալու համար: Դեղերի ցանկը երբեմն կոչվում է «դեղացանկ»:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare: 299



Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություններ (LTSS). Երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունն օգնում են երկարաժամկետ բարելավել առողջական վիճակը: Այս ծառայությունների մեծ մասն օգնում է Ձեզ մնալ Ձեր տանը, որպեսզի ստիպված չլինեք գնալ ծերանոց կամ հիվանդանոց: LTSS-ը, որը ապահովագրված է մեր ծրագրով, ներառում է Համայնքահեն ծառայություններ, ծերանոցներ (Nursing Facilities, NF) և Համայնքային աջակցություն: IHSS և 1915(c) հրաժարման ծրագրերը Medi-Cal LTSS են, որոնք տրամադրվում են մեր պլանից դուրս:

Ցածր եկամուտների սուբսիդիա (LIS). ուսումնասիրեք «Լրացուցիչ օգնություն» բաժինը

Փոստի սպասարկմամբ դեղատան ծրագիր. որոշ պլաններ կարող են առաջարկել փոստային ծառայության դեղատների ծրագիր, որը թույլ է տալիս ստանալ Ձեր ապահովագրված դեղատոմսով դեղերի մինչև 3 ամսվա պաշար, որն ուղարկվում է անմիջապես Ձեր տուն: Սա կարող է լինել ծախսարդյունավետ և հարմար միջոց՝ Ձեր կանոնավոր ընդունած դեղատոմսերով դեղերի պաշարը լրացնելու համար:

Medi-Cal. սա California Medicaid ծրագրի անվանումն է: Medi-Cal-ը կառավարվում է նահանգի կողմից և վճարվում է նահանգի և դաշնային կառավարության կողմից:

- Այն օգնում է սահմանափակ եկամուտներով և ռեսուրսներով մարդկանց վճարել երկարաժամկետ ծառայությունների և աջակցության և բժշկական ծախսերի համար:
- Այն ծածկում է լրացուցիչ ծառայությունները և որոշ դեղերը, որոնք ապահովագրված չեն Medicare-ի կողմից:
- Medicaid-ի ծրագրերը տարբերվում են նահանգից նահանգ, սակայն առողջապահական ծախսերի մեծ մասը ապահովագրված է, եթե Դուք համապատասխանում եք և՛ Medicare-ին, և՛ Medi-Cal-ին:

Medi-Cal ծրագրեր. ծրագրեր, որոնք ներառում են միայն Medi-Cal-ի նպաստները, ինչպիսիք են երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը, բժշկական սարքավորումները և տրանսպորտը: Medicare-ի նպաստները առանձին են:

Medicaid (կամ բժշկական օգնություն). դաշնային կառավարության և նահանգի կողմից իրականացվող ծրագիր, որն օգնում է սահմանափակ եկամուտներով և ռեսուրսներով մարդկանց վճարել երկարաժամկետ ծառայությունների և աջակցության և բժշկական ծախսերի համար: Medi-Cal-ը Medicaid ծրագիրն է Կալիֆորնիա նահանգի համար:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ. սա նկարագրում է ծառայությունները, պարագաները կամ դեղերը, որոնք անհրաժեշտ են՝ կանխարգելելու, ախտորոշելու կամ բուժելու կամ Ձեր ընթացիկ առողջական վիճակը պահպանելու համար: Սա ներառում է խնամք, որը Ձեզ հետ է պահում հիվանդանոց կամ ծերանոց գնալուց: Դա նաև նշանակում է, որ ծառայությունները, պարագաները կամ դեղերը համապատասխանում են բժշկական պրակտիկայի ընդունված չափանիշներին:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 300



Medicare. առողջության ապահովագրության դաշնային ծրագիր 65 տարեկան և ավելի բարձր մարդկանց, 65-ից ցածր տարիքի որոշ հաշմանդամություն ունեցող մարդկանց և երիկամների վերջնական փուլի հիվանդ մարդկանց համար (ընդհանուր առմամբ նրանք, ովքեր ունեն մշտական երիկամային անբավարարություն, ովքեր դիալիզի կամ երիկամի փոխպատվաստման կարիք ունեն): Medicare ունեցող մարդիկ կարող են ստանալ իրենց Medicare-ի առողջապահական ապահովագրությունը Original Medicare-ի կամ կառավարվող խնամքի ծրագրի միջոցով (տես «Առողջապահական ծրագիր»):

Medicare Advantage. Medicare ծրագիր, որը նաև հայտնի է որպես «Medicare մաս C» կամ «MA», որն առաջարկում է MA ծրագրեր մասնավոր ընկերությունների միջոցով: Medicare-ը վճարում է այս ընկերություններին Ձեր Medicare նպաստները ծածկելու համար:

Medicare-ի բողոքարկման խորհուրդ (Խորհուրդ). Խորհուրդ, որը վերանայում է 4-րդ մակարդակի բողոքարկումը: Խորհուրդը դաշնային կառավարության մի մասն է:

Medicare-ի կողմից ապահովագրված ծառայություններ. ծառայություններ, որոնք ապահովագրված են Medicare Part A-ով և Medicare Part B-ով: Medicare-ի բոլոր առողջապահական ծրագրերը, ներառյալ մեր ծրագիրը, պետք է ծածկեն Medicare-ի Part A-ի և Medicare Part B-ի ապահովագրված բոլոր ծառայությունները:

Medicare-ի Շաքարախտի կանխարգելման ծրագիր (MDPP). առողջության վարքագծի փոփոխության կառուցվածքային ծրագիր, որն ապահովում է երկարաժամկետ սննդակարգի փոփոխության, ֆիզիկական ակտիվության բարձրացման և քաշի կորստի և առողջ ապրելակերպի պահպանման մարտահրավերները հաղթահարելու ուսուցում:

Medicare-Medi-Cal-ում ներգրավված անձ. անձ, ով համապատասխանում է Medicare-ի և Medicaid-ի ապահովագրության պահանջներին: Medicare-Medicaid-ում գրանցված անձը կոչվում է նաև «երկակի իրավասու անձ»:

Medicare Part A. Medicare ծրագիրը, որն ընդգրկում է բժշկական առումով անհրաժեշտ հիվանդանոցները, հմուտ բուժքույրական հաստատությունները, տնային առողջապահությունը և հոսփիսային խնամքը:

Medicare Part B. Medicare ծրագիր, որն ընդգրկում է ծառայություններ (օրինակ՝ լաբորատոր հետազոտություններ, վիրահատություններ և բժիշկների այցելություններ) և պարագաներ (օրինակ՝ հաշմանդամի սայլակներ և քայլակներ), որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են հիվանդության կամ առողջական վիճակի բուժման համար: Medicare Part B-ն նաև ներառում է բազմաթիվ կանխարգելիչ և սրբինիդային ծառայություններ:

Medicare Part C. Medicare ծրագիր, որը նաև հայտնի է որպես «Medicare Advantage» կամ «MA», որը թույլ է տալիս մասնավոր առողջապահական ապահովագրական ընկերություններին տրամադրել Medicare-ի նպաստներ MA ծրագրի միջոցով:

Medicare Part D. Medicare դեղատոմսով դեղերի նպաստների ծրագիր: Մենք այս ծրագիրը կարճ անվանում ենք «Part D»: Medicare Part D-ն ընդգրկում է ամբուլատոր դեղատոմսով դեղերը, պատվաստանյութերը և որոշ պարագաներ, որոնք չեն ապահովագրվում Medicare Part A-ով կամ Medicare Part B-ով կամ Medicaid-ով: Մեր ծրագիրը ներառում է Medicare Part D-ն:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք blueshieldca.com/medicare:



Medicare Part D դեղեր. դեղեր, որոնք ապահովագրված են Medicare Part D-ով: Կոնգրեսը մասնավորապես բացառում է դեղերի որոշ կատեգորիաներ Medicare Part D-ի շրջանակներում: Medicaid-ը կարող է ծածկել այդ դեղերից մի քանիսը:

Ղեղամիջոցներով թերապիայի կառավարում (MTM). ծառայությունների առանձին խումբ կամ ծառայությունների խումբ, որոնք տրամադրվում են առողջապահական ծառայություններ մատուցողների, ներառյալ դեղագործների կողմից, հիվանդների համար լավագույն թերապևտիկ արդյունքներ ապահովելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք *Անդամի տեղեկագրքի Գլուխ 5*-ը:

Անդամ (մեր ծրագրի անդամ կամ ծրագրի անդամ). Medicare և Medi-Cal ունեցող անձ, ով իրավասու է ստանալ ապահովագրված ծառայություններ, ով գրանցվել է մեր պլանում և ում գրանցումը հաստատվել է Medicare & Medicaid ծառայությունների կենտրոնների (CMS) և նահանգի կողմից:

Անդամների ձեռնարկ և բացահայտման մասին տեղեկություններ. այս փաստաթուղթը, ինչպես նաև Ձեր գրանցման ձևաթուղթը և ցանկացած այլ կցորդ, որը բացատրում է Ձեր ծածկույթը, այն, ինչ մենք պետք է անենք, Ձեր իրավունքները և այն, ինչ Դուք պետք է անեք որպես մեր ծրագրի անդամ:

Ցանցային դեղատուն. դեղատուն (դեղերի խանութ), որը համաձայնել է դեղատոմսերով դեղերի պաշար լրացնել մեր ծրագրի անդամների համար: Մենք դրանք անվանում ենք «ցանցային դեղատներ», քանի որ նրանք համաձայնել են աշխատել մեր ծրագրի հետ: Շատ դեպքերում մենք ապահովագրում ենք Ձեր դեղատոմսերը միայն այն դեպքում, երբ դրանք լրացվում են մեր ցանցի դեղատներից մեկում:

Ցանցի մատակարար. «Մատակարար» ընդհանուր տերմինն է, որը մենք օգտագործում ենք բժիշկների, բուժքույրերի և այլ մարդկանց համար, ովքեր ձեզ ծառայություններ և խնամք են տրամադրում: Տերմինը ներառում է նաև հիվանդանոցներ, տնային առողջապահական գործակալություններ, կլինիկաներ և այլ վայրեր, որոնք տրամադրում են ձեզ առողջապահական ծառայություններ, բժշկական սարքավորումներ և երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն:

- Նրանք լիցենզավորված կամ հավաստագրված են Medicare-ի և պետության կողմից առողջապահական ծառայություններ մատուցելու համար:
- Մենք նրանց անվանում ենք «ցանցային մատակարարներ», երբ նրանք համաձայնում են աշխատել մեր առողջապահական ծրագրի հետ, ընդունել մեր վճարումը և անդամներից լրացուցիչ գումար չեն գանձում:
- Քանի դեռ Դուք մեր ծրագրի անդամ եք, պետք է օգտվեք ցանցի մատակարարներից՝ ապահովագրված ծառայություններ ստանալու համար: Ցանցի մատակարարները կոչվում են նաև «ծրագրի մատակարարներ»:

Մերանոց. հաստատություն, որը խնամք է տրամադրում այն մարդկանց, ովքեր չեն կարող իրենց խնամքը ստանալ տանը, բայց հիվանդանոցում գտնվելու կարիք չունեն:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 302



Օմբուդսմեն. գրասենյակ Ձեր նահանգում, որը աշխատում է որպես փաստաբան Ձեր անունից: Նրանք կարող են պատասխանել հարցերին, եթե Դուք խնդիր կամ բողոք ունեք, և կարող են օգնել Ձեզ հասկանալ, թե ինչ պետք է անել: Օմբուդսմենի ծառայություններն անվճար են: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել Ձեր *Անդամի տեղեկագրքի* **Գլուխ 2 և 9**-ում:

Կազմակերպության որոշում. մեր պլանը որոշում է կազմակերպությունը, երբ մենք կամ մեր մատակարարներից մեկը որոշում է, թե արդյոք ծառայություններն ապահովագրված են կամ որքան եք վճարում ապահովագրված ծառայությունների համար: Կազմակերպության որոշումները կոչվում են «ապահովագրական ծածկույթի որոշումներ»: Ձեր *Անդամի տեղեկագրքի* **9-րդ գլուխը** բացատրում է ապահովագրական որոշումները:

Original Medicare (ավանդական Medicare կամ Medicare ծառայության համար վճար). կառավարությունն առաջարկում է Original Medicare: Original Medicare-ի շրջանակներում ծառայությունները ապահովագրվում են՝ բժիշկներին, հիվանդանոցներին և առողջապահական այլ ծառայություններ մատուցողներին վճարելով Կոնգրեսի որոշած գումարները:

- Դուք կարող եք օգտվել ցանկացած բժշկի, հիվանդանոցի կամ այլ առողջապահական մատակարարի ծառայություններից, որն ընդունում է Medicare-ը: Original Medicare-ն ունի երկու մաս. Medicare Part A (հիվանդանոցային ապահովագրություն) և Medicare Part B (բժշկական ապահովագրություն):
- Original Medicare-ը հասանելի է Միացյալ Նահանգներում ամենուր:
- Եթե Դուք չեք ցանկանում լինել մեր ծրագրում, կարող եք ընտրել Original Medicare-ը

Արտացանցային դեղատոմս. դեղատոմս, որը չի համաձայնել աշխատել մեր ծրագրի հետ՝ համակարգելու կամ ապահովագրված դեղեր տրամադրելու մեր ծրագրի անդամներին: Մեր ծրագիրը չի ներառում դեղերի մեծ մասը, որոնք Դուք ստանում եք ցանցից դուրս դեղատոմսերից, եթե որոշակի պայմաններ չեն կիրառվում:

Ցանցից դուրս մատակարար կամ Ցանցից դուրս հաստատություն. մատակարար կամ հաստատություն, որը աշխատող, սեփականատեր կամ շահագործվող չէ մեր ծրագրի կողմից և պայմանագիր չունի մեր ծրագրի անդամներին ապահովագրված ծառայություններ մատուցելու համար: Ձեր *Անդամի տեղեկագրքի* **3-րդ գլուխը** բացատրում է ցանցից դուրս մատակարարների կամ հաստատությունների մասին:

Բաշխված ծախսեր. անդամների կողմից ստացված ծառայությունների կամ դեղերի մի մասի համար վճարելու ծախսերի բաշխման պահանջը կոչվում է նաև «ծախսերի բաշխման» պահանջ: Տե՛ս վերոնշյալ «ծախսերի բաշխման» սահմանումը:

Առանց դեղատոմսի (Over-the-counter, OTC) դեղեր. առանց դեղատոմսի դեղերը դեղեր կամ դեղամիջոցներ են, որոնք անձը կարող է գնել առանց բժշկի դեղատոմսի:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 303



Part A. ուսումնասիրեք «Medicare Part A»:

Part B. ուսումնասիրեք «Medicare Part B»:

Part C. ուսումնասիրեք «Medicare Part C»:

Part D. ուսումնասիրեք «Medicare Part D»:

Part D դեղեր. ուսումնասիրեք «Medicare Part D դեղերը»:

Անձնական առողջապահական տվյալներ (նաև կոչվում է Պաշտպանված առողջապահական տվյալներ) (PHI). տեղեկություններ Ձեր և Ձեր առողջության մասին, ինչպիսիք են Ձեր անունը, հասցեն, սոցիալական ապահովության համարը, բժշկի այցելությունները և բժշկական պատմությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք մեր Գաղտնիության պրակտիկայի մասին ծանուցումը, թե ինչպես ենք մենք պաշտպանում, օգտագործում և բացահայտում Ձեր PHI-ը, ինչպես նաև Ձեր իրավունքները կապված Ձեր PHI-ի հետ:

Առաջնային խնամքի մատակարար (PCP). բժիշկ կամ այլ մատակարար, որին առաջինը դիմում եք առողջական խնդիրների մեծ մասի համար: Նրանք երաշխավորում են, որ Դուք ստանում եք այն խնամքը, որն անհրաժեշտ է առողջ մնալու համար:

- Նրանք կարող են նաև խոսել այլ բժիշկների և բուժաշխատողների հետ Ձեր խնամքի մասին և ուղեգրել Ձեզ իրենց մոտ:
- Medicare-ի բազմաթիվ առողջապահական ծրագրերում Դուք պետք է օգտագործեք Դեր առաջնային խնամքի մատակարարի ծառայությունը, նախքան որևէ այլ առողջապահական մատակարարին դիմելը:
- Ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 3-ը*՝ առաջնային խնամքի մատակարարներից խնամք ստանալու մասին տեղեկությունների համար:

Նախնական լիազորում (PA). հաստատում, որը Դուք պետք է ստանաք մեզնից՝ նախքան որոշակի ծառայություն կամ դեղ ստանալը կամ ցանցից դուրս մատակարարին դիմելը: Մեր ծրագիրը չի կարող ծածկել ծառայության կամ դեղի ապահովագրական վճարը, եթե նախ հաստատում չստանաք:

Մեր ծրագիրն ընդգրկում է որոշ ցանցային բժշկական ծառայություններ միայն այն դեպքում, եթե Ձեր բժիշկը կամ ցանցի այլ մատակարարը մեզնից PA ստանա:

- Ապահովագրված ծառայությունները, որոնք կարիք ունեն մեր ծրագրի PA-ի, նշված են Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 4-ում*:

Մեր ծրագիրն ընդգրկում է որոշ դեղեր միայն այն դեպքում, եթե Դուք մեզնից PA ստանաք:

- Ապահովագրված դեղերը, որոնք կարիք ունեն մեր ծրագրի PA-ի, նշված են *Ապահովագրված դեղերի ցանկում*:

Տարեցների համապարփակ խնամքի ծրագիր (Program of All-Inclusive Care for the Elderly, PACE). ծրագիր, որը ներառում է Medicare-ի և Medicaid-ի նպաստները միասին 55 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց համար, ովքեր կարիք ունեն ավելի բարձր մակարդակի խնամքի՝ տանը ապրելու համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan՝ 1-800-452-4413 (TTY՝ 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare: 304



Պրոթեզավորում և օրթեզավորում. Ձեր բժշկի կամ այլ բուժաշխատողի կողմից պատվիրված բժշկական սարքեր, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում ձեռքի, մեջքի և պարանոցի բրեկետներով, արհեստական վերջույթներ, արհեստական աչքեր, և սարքեր, որոնք անհրաժեշտ են մարմնի ներքին մասի կամ ֆունկցիայի փոխարինման համար, ներառյալ ստոմիայի մատակարարումները և էնտերալ ու պարէնտերալ սնուցման թերապիան:

Որակի բարելավման կազմակերպություն (Quality Improvement Organization, QIO). Բժիշկների և առողջապահության այլ փորձագետների խումբ, որոնք օգնում են բարելավել Medicare-ով մարդկանց խնամքի որակը: Դաշնային կառավարությունը վճարում է QIO-ին՝ հիվանդներին տրվող խնամքը ստուգելու և բարելավելու համար: QIO-ի մասին տեղեկությունների համար ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 2-ը*:

Քանակի սահմանափակումներ. դեղերի քանակի սահմանափակում, որը կարող էր ունենալ: Մենք կարող ենք սահմանափակել դեղամիջոցների քանակը, որը մենք ապահովագրում ենք մեկ դեղատոմսի համար:

Իրական ժամանակում նպաստների գործիք. հարթակ կամ համակարգչային հավելված, որտեղ գրանցվածները կարող են փնտրել ամբողջական, ճշգրիտ, ժամանակին, կլինիկական համապատասխան, գրանցվածներին հատուկ ապահովագրված դեղեր և նպաստների մասին տեղեկատվություն: Մա ներառում է ծախսերի բաշխման գումարները, այլընտրանքային դեղերը, որոնք կարող են օգտագործվել նույն առողջական վիճակի համար, ինչ տվյալ դեղամիջոցը, և ապահովագրության սահմանափակումները (նախնական թույլտվություն, փուլային թերապիա, քանակական սահմանափակումներ), որոնք կիրառվում են այլընտրանքային դեղերի նկատմամբ:

Ուղեգիր. ուղեգիրը Ձեր առաջնային խնամքի մատակարարի (PCP) կամ մեր հաստատումն է՝ Ձեր PCP-ից բացի այլ մատակարարին դիմելու համար: Եթե նախ հաստատում չստանաք, մենք կարող ենք չփոխհատուցել ծառայությունները: Որոշ մասնագետներին, օրինակ՝ կանանց առողջության մասնագետներին դիմելու համար ուղեգիր պետք չէ: Հղումների մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 3-ում և 4-ում*:

Վերականգնողական ծառայություններ. բուժում, որը Դուք ստանում եք, որը կօգնի Ձեզ վերականգնվել հիվանդությունից, դժբախտ պատահարից կամ լուրջ վիրահատությունից հետո: Ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի Գլուխ 4-ը*, որպեսզի հավելյալ տեղեկություններ ստանաք վերականգնողական ծառայությունների մասին:

Զգայուն ծառայություններ. ծառայություններ՝ կապված հոգեկան կամ վարքային առողջության, սեռական և վերարտադրողական առողջության, ընտանիքի պլանավորման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՄՄՎ), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռական ոտնձգությունների և աբորտների, թմրանյութերի օգտագործման չարաշահման, սեռը հաստատող խնամքի և ինտիմ գործընկերոջ կողմից բռնության հետ:

Սպասարկման տարածք. աշխարհագրական տարածք, որտեղ առողջապահական ծրագիրն ընդունում է անդամներ, եթե այն սահմանափակում է անդամակցությունը՝ հիմնվելով մարդկանց բնակության վայրի վրա: Այն ծրագրերի համար, որոնք սահմանափակում են, թե որ բժիշկներին ու հիվանդանոցները կարող եք դիմել, դա ընդհանուր առմամբ այն տարածքն է, որտեղ Դուք կարող եք սովորական (ոչ շտապ օգնության) ծառայություններ ստանալ: Միայն մարդիկ, ովքեր ապրում են մեր սպասարկման տարածքում, կարող են գրանցվել մեր ծրագրին:



Ցախսաբաժին. Ձեր առողջապահական ծախսերի այն մասը, որը Դուք կարող եք ստիպված լինել ամեն ամիս վճարել՝ նախքան նպաստների ուժի մեջ մտնելը: Ձեր ծախսաբաժնի գումարը տարբերվում է կախված է Ձեր եկամուտից և միջոցներից:

Մասնագիտացված բուժքույրական հաստատություն (SNF). բուժքույրական հաստատություն անձնակազմով և սարքավորումներով, որը տրամադրում է հմուտ բուժքույրական խնամք և, շատ դեպքերում, հմուտ վերականգնողական ծառայություններ և այլ հարակից առողջապահական ծառայություններ:

Հմուտ բուժքույրական հաստատության (SNF) խնամք. մասնագիտացված բուժքույրական խնամքի և վերականգնողական ծառայություններ, որոնք մատուցվում են շարունակական, ամենօրյա հիմունքներով, մասնագիտացված բուժքույրական հաստատությունում: Մասնագիտացված բուժքույրական հաստատության խնամքի օրինակները ներառում են ֆիզիկական թերապիա կամ ներերակային (IV) ներարկումներ, որոնք գրանցված բուժքույրը կամ բժիշկը կարող է անել:

Մասնագետ. բժիշկ, ով բժշկական օգնություն է ցուցաբերում որոշակի հիվանդության կամ մարմնի մասի համար:

Մասնագիտացված դեղատոմս. ուսումնասիրեք Ձեր *Անդամի տեղեկագրքի* Գլուխ 5-ը մասնագիտացված դեղատոմսերի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար:

Նահանգային լսում. եթե Ձեր բժիշկը կամ այլ մատակարար խնդրում է Medi-Cal ծառայություն, որը մենք չենք հաստատի, կամ մենք չենք շարունակի վճարել Medi-Cal ծառայության համար, որը Դուք արդեն ունեք, կարող եք խնդրել Նահանգային լսումներ: Եթե Նահանգային լսումը որոշվի Ձեր օգտին, մենք պետք է Ձեզ մատուցենք Ձեր պահանջած ծառայությունը:

Փուլային թերապիա. ապահովագրության կանոն, որը պահանջում է, որ Դուք փորձեք մեկ այլ դեղամիջոց, նախքան Ձեր պահանջած դեղը ապահովագրելը:

Լրացուցիչ ապահովության եկամուտ (Supplemental Security Income, SSI). սոցիալական ապահովության ամսական նպաստը վճարվում է սահմանափակ եկամուտներ և ռեսուրսներ ունեցող մարդկանց, ովքեր հաշմանդամ են, կույր կամ 65 և ավելի տարեկան: SSI-ի նպաստները նույնը չեն, ինչ սոցիալական ապահովության նպաստները:

Հրատապ անհրաժեշտ խնամք. խնամք, որը Դուք ստանում եք հանկարծակի հիվանդության, վնասվածքի կամ առողջական վիճակի դեպքում, որը արտակարգ իրավիճակ չէ, բայց անհապաղ խնամք է պահանջում: Դուք կարող եք անհապաղ անհրաժեշտ օգնություն ստանալ ցանցից դուրս մատակարարներից, երբ ցանցի մատակարարներն անհասանելի են կամ չեք կարող հասնել նրանց:



Blue Shield TotalDual Plan Ծառայությունների սպասարկման կենտրոն

ԶԱՆԳԱՀԱՐԵՔ	1-800-452-4413 հեռախոսահամարով: Այս համարին զանգերն անվճար են: Հաճախորդների սպասարկման կենտրոնը ունի նաև անվճար թարգմանչական ծառայություններ, որոնք հասանելի են անգլերեն չխոսողներին:
TTY`	711 Այս համարին զանգահարելու համար պահանջում են հատուկ հեռախոսային սարքավորումներ, քանի որ այն նախատեսված է միայն այն մարդկանց համար, ովքեր լսողության կամ խոսելու դժվարություններ ունեն: Այս համարին զանգերն անվճար են: 08:00-ից մինչև 20:00, շաբաթը յոթ օր:
ՖԱՔՍ	(877) 251-6671
ԳՐԵՔ	Blue Shield TotalDual Plan P.O. Box 927 Woodland Hills, CA 91365-9856
ԿԱՅՔԷԶ	blueshieldca.com/medicare

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Blue Shield TotalDual Plan` 1-800-452-4413 (TTY` 711) հեռախոսահամարով, 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսազանգն անվճար է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք blueshieldca.com/medicare:

